

Գիրքը լուսապատճենահանվել է  
"ՀամաՀայկական Էջ. Գրադարան"

կայքի՝ [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

կողմից եւ Շերկայացվում է իր  
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է  
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: [www.freebooks.do.am](http://www.freebooks.do.am)

ԴԱՐՄԱՆԱԳՈՐԾԻ ԿՈՂՈ, ԵՎ ՅԵՐ ՆԵՐՋՈՒՄԻ ԼԻՆԵԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒՅՆԻ ՏԱՐԱԾՈՒՅԹ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԽԵՆԵՐԻ  
ԸՆԴՌՈՒՅՑՎԱԾՈՒՅԹ ԳՐԵՐ:

Բայց պատմութեան առաջնահայր կողութեա  
ԽՈՎՈՅ, "ՀԱՅՈՒԹՎԱԿԻՆ ԽԵՎՈՐԺԱՆ ԳՈՐԾՈՒՄ" կույն

[www.freebooks.am](http://www.freebooks.am)

ԸՆԴՐՈՒՅՑ ԵՎ, ՈՐ ՕԳՏԱԼԻՇ ԵՔ ՄԵՐ ԿՈՎՃՈ:

ԸՆԿՈՆՈՒՄ ԵՔ ՀՈԽԵՐԻ ԸՆԴՐՈՒՅՑՎԱՆԻ:




ԳՐԵՐ ՄԵՐ՝ [freebooks@rambler.ru](mailto:freebooks@rambler.ru)

Գիլելութիւն  
Մագար  
ԹԵՍ  
ՀՅՈՒ

Հայոց հրամա

ԱՐ ԴՐ Ա Ռ Ա Վ Ա Մ Ա Խ Ա Մ Ա Խ

Ա Մ Ա Հ Ա Յ Ա Վ Ա Կ Ա Ր



Հայութիք հրապարակ  
Երևան 1961

Յանեսինից բարգմանեց  
ԱՐ. ՏԱՅԱՆ

GUY DE MAUPASSANT  
FORT COMME LA MORT

ГИ ДЕ МОПАССАН  
СИЛЬНА КАК СМЕРТЬ  
(На армянском языке)  
Мянское государственное издательство  
(Айпетрат), Ереван, 1961

## ԱԹԵՏԻՆ ՄԸՍ

I

Առաստաղի բաց պատուհանից լույսը լնկել էր ընդարձակ արվեստանոցը։ Դա պայծառ ու կապույտ լույսի մի մեծ բառակուսի էր, մի լուսանցիկ բացվածք լազուրե անհուն հեռաստանի վրա, որտեղով արագ անցնում էին թոշունների երամներ։

Բայց հազիվ թափանցած բարձր, խստաշունչ և գորգապատ սենյակը, երեկոյի զվարթ լույսը իսկույն թուլանում էր, մեղմանում, հանդշում էր պաստաների վրա, մարմրում դռան վարագույրի ծալքերում, հազիվ կայծկլտում մթին անկյուններում, ուր միայն ոսկե շրջանակներն էին բոցավառվում, ինչպիս կրակները թվում էր, թե քունն ու անգորրը ներփակված էին այստեղ, անգորրը՝ հատուկ արվեստագիտի տան, ուր ստեղծագործել է մարդկային հոգին։ Այս պատերի մեջ, ուր միարը ապրում է, ուր միտքը հուզվում է, սպառվում հզոր ճիգերի մեջ, ամեն ինչ պարագած, ճնշված է երեսում, երբ նա հանդարտվում է։ Կյանքի այգալիսի բռնկումներից հետո կարծես ամեն ինչ մահանում է, ամեն ինչ հանգստանում—Ա՛ կահկարասինները, Ա՛ օթոցները, և նշանալոր անձանց անավարս պորտրենները, կարծես ամրող բնակարանը տանջվել է տանտիրոց հոգնությունից, կարծես տքնել է նրա հետ, ամեն օր մասնակցելով նրա վերսկսվող պայքարին։ Ներկի, բենեկնի և ծխախոտի ընդարմացուցիչ տարտամ բույրը, ներթափանցելով դորդերի և բազկաթոռների մեջ, ծփում էր օդում։ Ժանր լուսիլունը խզվում էր միայն բաց պատուհանի վերելով սլացող

օրծեսնակների սուր ու կարծ ձիշերից և տանիքների վրայով հաղիվ լսվող փարիզյան երկար ու շփոթ ժխորից։ Ամեն ինչ ունցարժ էր. միայն, ժամանակ առ ժամանակ, դեպի առոտառող էր բարձրանում կապույտ ծխի մի ամպիկ. Ծիփիե թերտենը, բազմոցի վրա տարածված, դանդաղորեն զլանակ էր ծխում։

Հայացքը սուզած հեռավոր երկնքում, նա նյութ էր որոնում նոր նկարի համար։ Ի՞նչ էր նկարելու Նա դեռ չզիտեր։ Թերուենը վճռական, ինքնավոտահ նկարիչ չէր. նա անհանգիստ ընավորության տեր մարդ էր, որի անկայուն ոգեշնչությունը անընդհատ տատանվում էր արվեստի բոլոր արտահայտությունների միջնեւ նա հարուստ էր, նշանավոր, արժանացնել էր ամեն տեսակ պատիվների, բայց մինչև հիմա, արդեն կյանքի պառիվայրին, ճշտորեն չգիտեր, թե դեպի ինչ իդեալ էր ընթացել ։ Նա ստացել էր Հոռմի մրցանակը, սլաշտպանել էր տրադիցիաները, ուրիշ շատերի նման վերստեղծել էր պատմական մեծ տեսարաններ։ Հետո, արդիականացնելով իր ձգտումները, բայց չմոռանալով դասական ձեռքը, սկսել էր նկարել կինդամի մարդկանց։ Խելացի, խանդավառ, համաստշխատող, թե՛ երազներով տարված, սիրելով իր արվեստը, որին տիրապետում էր կատարելապես, օժոված նրբամտությամբ, նա հասել էր կատարման ակնհայտ վարպետության և տաղանդի մեծ նրբության, տաղանդ, որը մասամբ զարդացել էր իր տատանումների և բոլոր ժանրերում աշխատելու իր փորձերի շնորհիվ։ Գուցե հասարակության հանկարծական հիացումը նրա շրիգ, փայլուն ու նրբակերտ ստեղծագործություններով՝ նույնութեան ապղել էր նրա վրա և նրան արգելակել էր լինելու այն։ Ինչ որ նա կարող էր դառնալ ուրիշ պայմաններում։ Ասպարեզ գալու իր սկզբնական հաջողությունից հետո՝ դուր գալու ցանկությունը միշտ անհանգուտացնում էր նրան, աննկատելիորեն փոխում էր նրա ուղին, մեղմում էր նրա համոզումները։ Այնուամենայնիվ, դուր գալու այդ ցանկությունը նրա մոտ երևում էր բոլոր ձեռքերի մեջ և շատ էր նպաստել նրա փառքին։

Նրա սիրալիր շարժուձերը, կենցաղային սովորությունները, իր անձի նկատմամբ հոգատարությունը, ուժեղ ու ճարտար սուսերամարտիկի ու հեծյալի վաղեմի համբավը նույնպես նպաստել էին նրա աճող հոշակին։ Նրան անուն բերող ա-

ուազին կտավից, Կլեոպատրայից հետո, Փարիզը հանկարծ սիրահարվել էր նրան, որդեգրել էր, մեծարել, և նա միանդամից դարձել էր մեկը այն փայլուն աշխարհիկ նկարիչներից, որոնց կարելի է հանդիպել թուլոնյան անտառի զբոսավայրերում, որոնց մասին վիճում են սալոններում, որոնց դեռ երիտասարդ հասակում ընդունում են ինստիտուտ<sup>\*</sup>: Եվ նա այնտեղ մտել իբրև հաղթանակող, ամբողջ քաղաքի հավանության որ արժանացած:

Բախտը, այսպիս շոյելով ու գդելով, նրան հասցրել էր մինչև ծերության մերձավորությունը:

Հիմա նա, գրսում բացված գեղածիծաղ օրվա ազդեցության տակ, սլոեատական մի սյուժե էր որոնում: Մի քիչ ընդարձացած նախաճաշից ու ծխախոտից, նա անքզում էր նայելով տարածությանը, լազուր երկնքի ֆոնի վրա զծազրելով սիրունկանանց կերպարանքներ զբոսայգու ծառուղիում կամ փողոցի մայթի վրա, սիրահարված զույգեր գետի ափին, հաճելի տեսիլներ, որոնք գերում էին նրա միտքը: Մեկը մյուսի ետևից երկնքում զծագրվում էին հարափոփոխ պատկերներ, որոնք ինչպես զունեղ բանդապուշանքի մեջ, տարածվում ու փախչում էին, իսկ ծիծոնակները, արձակված նետերի նման, անընդհատ թռչքով ճեղքելով տարածությունը, կարծիս ուղում էին ցնցել այդ պատկերները, դրանք խազել թեևրի թափահարումով:

Նա ոչ մեկի վրա չէր կարողանում կանգ առնել: Թոլոր երեխացած դեմքերը նման էին նրանց, որոնց վաղուց արդեն նկարել էր, բոլոր ներկայացած կանայք դուստրերը կամ քուլրերն էին նրանց, որոնց ստեղծել էր նրա արվեստագետի քմահաճույքը, և վախը, գեռնս շփոթ, բայց որ մի ամբողջ տարի արդեն հետապնդում էր նրան, վախը այն բանից, որ ինքը ցամաքում է, որ բոլոր սյուժեներն սպառել է, որ իր ներշնչումը հատել է, զգալի էր դառնում իր երեակայած այս տեսիլքի առջե, նոր բան հորինելու, անհայտը հայտնագործելու անզորության առջե:

\* Ֆրանսիական ինստիտուտը բազկացած է հինգ ակադեմիաներից. Ֆրանսիական ակադեմիա, Արձանագրությունների և գեղարվեստական գրականության ակադեմիա, Գիտությունների ակադեմիա, Բարոյական ու քաղաքական գիտությունների ակադեմիա և Գեղարվեստների տեկադեմիա:

Նա ձուլորեւ վեր կտցավ, սրակեսզի ստվարաթղթերի մեջ անավարտ ուրվագծերի մեջ փհտրեր ինչ-որ բան, որ իրեն մի մտահղացում առար:

Մյսելով գլանակը, նա սկսեց թերթել ուրվագծերը, արուս հանակները, նկարները, որոնք փակված պահում էր մի մեծ ճին պահարանում. բայց շուտով ձանձրանալով այդ զուր որոնումներից, դեռ նետեց գլանակը, փողոցային ինչ-որ երգ շվացրեց և, կուանալով, աթոռի տակից դուրս բաշեց մի ծանր մարդագունդ:

Մյուս ձեռքով հանելով պաստառը մեծ հայելու վրայից, որը նրան ծառայում էր կեցվածքի ճշտությունը դիտելու, հեռանկարներն ստուգելու և նկարների իսկությունը որոշելու համար, նա կանգնեց հայելու առաջ և սկսեց վտրժություններ կատարել:

Մի ժամանակ նա արվեստանոցներում անուն էր հանել իր ուժով, ինչպես հետո հասարակության մեջ՝ իր գեղեցկությամբ։ Հիմա, տարիքն առնելով, նա ծանրացել էր Բարձրահասուկ, շայնաթիկունք, ուժեղ կրծքով, նա, ինչպես հնադարյան մարտիկ, փոր էր զցել, չնայած որ շարունակում էր ամեն օր համառոքն զբաղվել սրամարտությամբ ու ծիավարությամբ։ Դլուխը, ինչպես և առաջ, աշքի էր զարնում իր գեղեցկությամբ, թեև արդեն որոշ շափով փախվել էր։ Սպիտակ, խիտ ու կարճ մազերը կենդանացնում էին նրա սկ աշքերը թափ սպիտակ հոնքերի տակի երկար բեղերը, որոնք նման էին հին դինվորի բեղերին, դրեթե սկ էին մնացել և դեմքին տալիս էին հղորության ու հպարտության հազվագյուտ արտահայտություն։

Ուղիղ կանգնելով հայելու առաջ, կրունկները մոտեցնելով, նա թուզե մարզագունդով կատարում էր բոլոր պատվիրված վարժությունները, այն բռնելով մկանուտ բազկով, որի հանդարտ ու հզոր պրկմանը հետեւում էր գոհունակ հայացքով։

Բայց հանկարծ հայելու մեջ, ուր արտացոլված էր ամբողջ արվեստանոցը, նա տեսավ, թե ինչպես գոան վարագույրը շաբժվեց, իսկ հետո երկաց կանացի մի դեմք, որ նայում էր։ Նկարչի թիկունքում լսվեց մի ձայն.

— Այստեղ եք!

— Այո, — պատասխանեց նկարիչը, շուռ գալով։ Ապա մարդագունդը նետելով գորգի վրա, վազեց դեպի դուռը մի քիչ բռնազբոսիկ թեթևությամբ։

Ներս մտավ մի կին փայլուն հանդերձով։ Նրանք սեղ մեցին միմյանց ձեռքը։

— Մարմնամարդությամբ էիք զբաղվում, — հարցրեց կինը։

— Այո, — ասաց նկարիչը, — Ես սիրամարդություն էի անում, և դուք ինձ հանկարծակի բերեցիք։

Կինը ծիծաղեց և հարեց։

— Դոնապանի սենյակում ոչ ոք չկար. գիտեմ, որ դուք այս ժամին միշտ մենակ եք լինում, և ներս մտա առանց ազդարարության։

Նկարիչը նայում էր նրան։

— Սատանան տանի, ինչքա՞ն գեղեցիկ եք, ինչքա՞ն շիկ։

— Այո, նոր զգեստ եմ հագել։ Ինչպե՞ս եք դանում, սիրո՞ւն է։

— Հիանալի, շատ ներդաշնակ։ Կարելի է ասել, որ հիմա երանդների զգացողություն ունեն։

Նկարիչը պատելեց կնոջ շուրջը, գործվածքը շոշափեց։ Մատների ծայրով ուղղեց ծալքերի գասավորությունը, ինչպես մի դերձակ, որ գիտակ է կանացի արգուղարդին։ Իզուր չէ, որ իր ամբողջ կյանքի ընթացքում նա իր արվեստագետի միտքն ու մարդիկի մկանները գործադրել էր այն բանի վրա, որպես զի վրձինի նուրբ մորուքով տար փոփոխական ու քմահաճ մոդաները, բացահայտեր կանացի շնորհագեղությունը՝ մերթ ծածկված թափշե կամ մետաքսե զրահով, մերթ ժանյակների ձյունով։

Վերջապես նա հայտարարեց։

— Շատ հաջող է։ Ձեղ շատ է սազում։

Կինը նկարչին թույլ տվեց, որ հիանա իր անձով, գոհունակություն զգալով, որ ինքը սիրուն է և դուր է գալիս նրան։

Այլնս ոչ շատ երիտասարդ, բայց գեռ գեղեցիկ, ոչ շատ բարձրահասակ, բայց մի քիչ լիբը, կինը փայլում էր այն թարմությամբ, որ քառասնամյա մարմնին տալիս է հասունության համ, և նման է այն վարդին, որը հետզհետե փթթում է, մինչև որ շափից ավելի ծաղկելով, թափվում է մի ժամում։

Հինելով շիկաճեր, նա պահել էր կայտառ ու երիասարդական սիրունությունը այն փարիզուճիների, որոնք երբեք չեն պատառում, որոնք ունենալով գարմանալի կենսական ուժ, դիմագրականության անսպառ պաշտը, քսան տարվա ընթացքում մնում են նույնը, անխորտակելի ու անսպառութիւն, առաջին հերթին խնամելով իրենց մարմինը և պահպանելով իրենց առողջությունը:

Նա բարձրացրեց քովը և շշնչաց.  
— Ի՞նչ է, ինձ չե՞ն համբուրում:  
— Ես ծիսել եմ, — ասաց նկարիչը:  
— Փա՛ռ, — ասաց կինը, շրթունքները ոլարդելով: — Մի ենույն է:

Եվ նրանց բերանները իրար հանդիպեցին:

Նկարիչը նրա հովանոցը վերցրեց և նրա գարնանային ժակետը հանեց արագ, այդ մտերմական ծառայությանը սովոր վոտահ շարժումներով: Իսկ երբ կինը նստեց բազմոցի վրա, նկարիչը հողածությամբ հարցրեց.

— Ինչպե՞ս է ձեր ամուսինը:  
— Շատ լավ! Նա զուցե հիմա ձառ է արտասահում պալատում:  
— Օ՛: Ինչի՞ մասին:  
— Հավանաբար ճակնդեղի կամ կանճրակի յուղի մասին.

Ինչպես միշտ:

Կնոջ ամուսինը՝ կոմս զը Գիլուռան, էրի զեպարտամենտի ղեպուտատ, իրեն մաննազիտություն էր դարձրել գյուղատրնտեսության հարցերը:

Անկյունում նկատելով մի անձանոթ ուրվանկար, կինը արցեստանոցի միջով առաջացավ ու հարցրեց.

— Սա ի՞նչ է:  
— Սկսված մի պաստելանկար, իշխանուճի զը Պոնտեվի սլորդուն:  
— Գիտեք, — լրջորեն ասաց կինը, — եթե զուք նորից սկսեք կանանց պորտրեներ նկարել, ես կփակեմ ձեր արվեստանոցը: Ես շատ լավ զիտեմ, թե ուր կտանի այդպիսի աշխատանքը:

Օ՛, — ասաց նկարիչը, — Անիի պորտրեն երկու անգամ  
ահ նկարի:

— Հովս ունեմ:

Նա զինեց սկսված պաստելանկարը, ինչպես մի կին, որ  
հասկանում է արվեստի հարցերը: Մի քիչ հեռացավ, մոտե-  
ցավ, ձեռքը աշքերի վրա տարավ, փնտրեց տեղը, որտեղից  
որվանկարը ավելի լուսավոր կերեար, և ապա իր գոհունակու-  
թյունը հայտնեց.

— Ծատ լավ! Էւ Դուք շատ հաջող եք պաստելանկարի մեջ:  
Նկարիչը, շոշված, շշնչաց:

Կարծում եք:

Այս, դա նուրբ արվեստ է, որի համար հարկավոր է  
միրը ունենալ: Դա հասարակ նկարիչների գործ չէ:

Տասներկու տարուց ի վեր կինը իրախուսում էր նկարչի  
ուկումբր դեպի նրբագիղ արվեստը, թուլլ չեր տալիս նրա վե-  
րադարձը դեպի հասարակ իրականությունը և, գիտակցելով  
կիրթ ճաշակ ունենալու անհրաժեշտությունը, քնքորեն նրան  
ողղում էր դեպի փոքր-ինչ սեթենթ ու արվեստակյալ գեղեց-  
կությունը:

Կինը հարցրեց.

— Իսկ ինչպիսի՞ն է այդ իշխանութին:

Սկսելով արդուղարդի մասին գիտողություններից, նկարիչը  
անցավ մտքի գնահատման և հաղորդեց ամեն տեսակ մանրա-  
մասնություններ, այնպիսի չնշին մանրամասնություններ,  
որոնք գոհացնում են կանացի խանդուտ ու նրբագգաց հետա-  
ռրրրությունը:

Կինը հանկարծ հարցրեց.

Նա շի՞ կոտրատվում ձեզ հետ:

Նկարիչը ծիծաղեց և երդվեց, որ ոչ:

Այդ ժամանակ, երկու ձեռքերը դնելով նկարչի ուսերին,  
կինը սկսում հայացքով նայեց նրան: Կնոջ հայացքի մեջ մի  
անողիսի այրով հարց կար, որ թանաքի ցայտուքների նման  
նաղիկ նկատելի, սև բծերով պատկերված նրա կլոր բիբերը  
դոգում էին աշքերի կապույտ շրջանակի մեջ:

Կինը նորից շշնչաց:

Իսկապէ՞ս նա սիրաբանություն շի անում:

— Իսկապես:

Կինը ավելացրեց.

— Այնուամենայնիվ դա ինձ չի անհանգստացնում։ Հիմա զուք արդեն ինձանից բացի ոչ ոքի չեք սիրի։ Ոչ ոքի, վերջացավ։ Արդեն՝ շատ ուշ է, իմ խեղճ բարեկամ։

Նկարիչ Բերտենը զգաց այն անցողիկ ճմլող ցավը, որարձագանքում է տարեց մարդկանց սրտում, երբ նրանց հիշեցնում են իրենց հասակը, և մեղմորեն ասաց.

— Ոչ այսօր, ոչ վաղը, երբեք իմ կյանքում չի եղել և չի լինի ոչ ոք, բացի ձեղանից, Անի։

Անին բռնեց Բերտենի բազուկից և վերադառնալով դեպի բազմոցը, նրան նստեցրեց իր կողքին։

— Ինչի՞ մասին էիք մտածում։

— Նկարի համար նյութ էի որոնում։

— Ի՞նչ տեսակի։

— Ինքու էլ չպիտեմ, փնտրում եմ։

— Իսկ ի՞նչ էիք անում այս օրերին։

Բերտենը հարկադրվեց Անիին պատմել իր ընդունած բոլոր այցելությունների մասին, ճաշկերուցիթների ու երեկոյթների, զրուցների ու բամբասանքների մտածին։ Այնուամենայնիվ. նրանց Երկունին էլ հետաքրքրում էին աշխարհիկ կենցաղի այս բոլոր սնամեջ ու սովորական մանրութները։ Փոքրիկ մըրցակցությունները, բացահայտ կամ կասկածելի կապերը. նույն դեմքերի, նույն դեպքերի, նույն կարծիքների մասին. միանգամ ընդմիշտ հաստատված, հազար անգամ կրկն. ված, հազար անգամ լսված դատողությունները զբաղեցնուել էին նրանց մտքերը և նրանց ներքաշում այն պղտոր ու ալե ծուփ գետի մեջ, որ անվանում են փարիզյան կյանք։ Ճանա. շելով բոլորին, ճանաշվելով ամեն տեղ, Բերտենը իրեւ նկա. րիւ, որի առջե բաց էին բոլոր դռները, Անին՝ իրեւ վայելչագել կին պահպանողական դեպուտատի, նրանք վարժվել էին ֆրանսիական շակարատանքի այդ սպորտին, նուրբ, հասա. րակ, սիրալիբորեն շարյացակամ, զրորեն սրամիտ, գոեհկորեն նուրբ շաղակրատանքի, որ յուրատեսակ և շատ նախանձելի համբավ է տալիս նրանց, որոնց լեզուն նրբացած է այդ շարա. խոս դատարկաբանության մեջ։

— Ե՞րբ կգաք մեղ մոտ ճաշելու, — հանկարծ հարցրեց  
Ռոխն:

— Երբ ուզում եք: Որոշեցեք օրը:

— Ուրբաթ: Ինձ մոտ կլինեն դքսուհի զը Մորտմենը, Կոր-  
մեն և Մյուզադիեն. առնելու ենք աղջկանս վերադարձը. նա  
ուրիշ է այսօր երեկոյան: Բայց ոչ ոքի մի ասեք: Դա գաղտ-  
նիք է:

— Օ՛, ի՞շարկե, կը նդունեմ հրավերը: Ինձ համար շատ հա-  
մելի կլինի կրկին տեսնել Աննետին: Ես երեք տարի է նրան  
եմ տեսել:

— Ճիշտ է: Երեք տարի:

Աննետը, որ իր նախնական կրթությունն ստացել էր Փա-  
փուլում, ծնողների մոտ, դարձել էր վերջին ու կրքոտ փայփա-  
ռնիքի առարկան կիսով շափ կուրացած իր տատի, տիկին Պա-  
ռազենի, որը ամբողջ տարին ապրում էր իր փեսայի կալված-  
քում՝ երի դեպարտամենտում գտնվող Ծոնսիերի գաստակեր-  
ուում: Պառավը ժամանակի ընթացքում երեխային ավելի ու  
սիելի երկար էր պահում իր մոտ, և որովհետև Գիլոուա ամու-  
սինները իրենց կյանքի գրեթե կեսը անց էին կացնում այդ  
կալվածքում, ուր նրանց շարունակ կանչում էին գյուղատնտե-  
սության և ընտրության վերաբերող ամեն տեսակ գործերը,  
ուստի նրանք վերջ ի վերջո սկսեցին հաղվագեպորեն Փարիզ  
ունել աղջկան, որը, սակայն, գյուղի ազատ-արձակ կյանքը  
գլրադասում էր քաղաքի փակված կյանքից:

Աննետը երեք տարուց ի վեր ոչ մի անգամ չէր եկել քա-  
յար. կոմսուհին նախընտրում էր նրան հեռու պահել այնտե-  
սից, որպեսզի նրա մեջ շզարթնեցնի նոր հակումներ՝ աշխարհ  
նոնելու նրա համար սահմանված օրից առաջ: Տիկին զը Գիլ-  
ուուն նրա համար նշանակել էր երկու լավ վկայեալ դաստիա-  
ռակշունիներ, և նա սկսել էր ավելի հաճախ գնալ իր մոր ու  
ազգի մոտ: Բայց դրանից, Աննետի մնալը կալվածքում գրե-  
թի անհրաժեշտ էր դարձել պառավ տատի համար:

Մի ժամանակ Օլիվիի Բերտենը ամեն ամառ մեկուկես-  
տրկու ամիս անցկացնում էր Ծոնսիերում, բայց վերջին երեք  
տարում նա իր սեմատիզմը բուժելու համար հարկադրվում էր  
դեսլ հետագոր բուժավայրեր, և այդ ուղևորություններն այն-

ողես սաստկացրել էին նրա սերը Փարիզի նկատմամբ, որ երբ վերադառնում էր, այլևս չէր կարողանում հեռանալ այնտեղից:

Նախապես որոշվել էր, որ աղջիկը վերադառնա լոկ աշնանը, բայց հայրը հանկարծ նրան ամուսնացնելու մի ծրագիր հղացավ և նրան տուն կանչեց, որպեսզի անմիջապես ծանթանա իրեն համար սահմանված նշանածի՝ մարկիզ դը Ֆուրանդալի հետ: Սակայն այդ ծրագիրը խիստ գաղտնի էր պահպատմ, տիկին զը Գիլոռուան մտերմորեն հայտնել էր միայն Օլիվիեի Բերտենին:

— Ուրիմն ձեր ամուսնու ծրագիրը որո՞շ է, — հարցրեց Ոլիվիեն:

— Այո, ես նույնիսկ կարծում եմ, որ դա շատ հաջող ծրագիր է:

Ապա նրանք զրուցեցին այլ բաների մասին:

Կոմսուհի զը Գիլոռուան նորից վերադարձավ նկարչության և ուզեց նրան համոզել, որ մի Քրիստոս նկարի Օլիվիեն սուարկեց, ասելով, որ այդ թեմայով նկարներ արդեն բավական շատ կան աշխարհում. բայց կոմսուհին պնդեց իր տուաշարկի վրա, նա սրտմտեց.

— Օ՛, եթե ես կարողանայի նկարել, կպատկերեի իմ մտահղացումը. դա կլիներ շատ նոր, շատ համարձակ բան: Նրան իշեցնում են խաչից. այն մարդը, որ խաչելությունից ազատել է Քրիստոսի ձեռքերը, չի կարողանում պահել նրա մարմնի վերին մասը: Նա գլորվում, ընկնում է ամբոխի վրա, իսկ ամրությ ձեռքերն երկարում է, որպեսզի բնդունի ու պաշտպանի նրան: Դուք հասկանո՞ւմ եք իմ միտքը:

Այո, Օլիվիեն հասկանում էր, նա նույնիսկ դա գոտնում էր ինքնատիպ, բայց ներկայումս նրան տիրել էր արդիականության զգացումը, և, նայելով բաղմոցի վրա տարածված իր բարեկամուհուն, որ կախ էր դցել նուրբ կոշիկ հագած մի ոտք որ կիսաթափանցիկ գուպայի միջով գրեթե մերկ էր երեսում. նա բացականչեց.

— Ահա, ահա թե ինչ պետք է նկարել, ահա կյանքը՝ շըրջազգեստի տակից երևացող կանացի ոտքը: Դրա մեջ կարելի է դնել ամեն ինչ, ճշմարտություն, ցանկություն, բանաստեղծություն: Չկա ավելի հաճելի, ավելի սիրուն բան, քան կնոջ ոտ-

բր. և ինչպիսի՝ խորհրդավորություն. շրջադպեստի տակ ծածկ-  
հած, կորսված ու գուշակված սրունքը:

Թուրքավարի նստելով հատակին, Օլիվիեն հանեց նրա կո-  
միկը, և ուսքը դուրս դալով կաշվե պատյանից, շարժվեց ին-  
ողես անհանգիստ, անսպասելիորեն ազատ թողնված դազան:

Երեսենը կրկնում էր.

— Ինչքա՞ն նուրբ է, ինչքա՞ն սիրուն և ինչքա՞ն հեշտա-  
ւրդիւ: Եվիլի հեշտաւրդիւ, քան ձեռքը: Տվեք ձեր ձեռքը, Անի:

Անին կրում էր Երկար ձեռնոցներ, որոնք հասնում էին  
այնչեւ արմունկիր: Զեռնոցներից մեկը հանելու համար նա ըլո-  
ւեց նրա վերին ծայրից և արագ քաշեց, շրջուորելով այն, ինչ-  
ովես հանում են օձի կաշին: Երեաց սպիտակ, գիրուկ, կլորիկ  
բազուկը, մերկանալով այնքան արագ, որ ակամա միտք ծա-  
ցեցրեց ամբողջ մարմնի լիակատար ու հանդուդն մերկության  
ժառին:

Անին Երկարեց ձեռքը, կախելով դաստակը: Սպիտակ  
մտաների վրա շողում էին մատանիները. և երկար վարդա-  
պունի կունդները ասես ճիրաններ էին; որոնք բուսել էին կո-  
ւոցի այդ սիրունիկ թաթի ծայրին:

Օլիվիե Բերտենը մեղմորեն շոշափեց ձեռքը, հիանալով  
սրանով: Նա շարժեց մատները, ինչպես կենդանի խաղալիք-  
ներ. և ասաց.

— Ի՞նչ զվարճալի բան է ձեռքը: Ի՞նչ զվարճալի բան: Ինչ-  
ուա՞ն խելացի ու ճարտար է. նա ստեղծում է ամեն ինչ. գրքեր,  
տանյակներ, տներ, բուրգեր, շոգեկառքեր, կարկանդակներ. նու-  
շիամամանակ և շոյում է, իսկ դա լավագույնն է նրա բոլոր  
շործերից:

Օլիվիեն մեկ-մեկ հանեց Անիի մատանիները, և երբ իս-  
կորթին ընկալ ամուսնական ոսկե մատանին, ժպտալով  
շնչաց.

Որի՞նքը: Խոնարհվե՞նք նրա առաջ:

Հիմա՞ր, — ասաց Անին մի քիչ վիրավորված:

Օլիվիեն միշտ աշքի էր ընկնում հեգնաբանությամբ, այն  
դատ ֆրանսիական հակումով, որը ցուցամոլական հեգնանքը  
խառնում է ամենալուրջ զգացումներին, և հաճախ ակամա  
վշտացնում էր նրան, չկարողանալով հասկանալ կանանց

նուրբ զգացումները և որոշել սրբազան մարզերի սահմանները, ինչպես ասում էր Անին: Անին հատկապես նեղանում էր ամեն անդամ, երբ Օլիվիեն մտերմիկ կատակի երանգով խռում էր իրենց կապի մասին, որն այնքան երկար տևեց, որ նա այն համարեց տասնիններորդ դարի սիրո ամենագեղեցիկ օրինակը:

Մի պահ լոռությունից հետո Անին հարցրեց.

— Դուք ինձ ու Աննետին կտանե՞ք պատկերահանդեսի բացմանը:

— Իհարկե:

Այն ժամանակ Անին հարցրեց առաջիկա ցուցահանդեսի լավագույն կտավների մասին, ցուցահանդես, որի բացումը պետք է տեղի ունենար տասնհինգ օրից:

Բայց հանկարծ, ճիշելով, գուցե, որ ինքը մի տեղ պետք է գնար, նա ասաց.

— Դե՛ռ, տվեք կոշիկս: Ես գնում եմ:

Օլիվիեն մտախոհությամբ խաղում էր թեթև մաշիկով, այն պատեցնելով իր ձեռքերում:

Նա կուացավ, համբուրեց ոտքը, որ կարծես ծիփում էր շրջազգեստի ու գորգի միջև, և որ այլևս չէր շարժվում ու մի քիչ սառել էր, ապա հագցրեց մաշիկը: Տիկին դը Գիլոուան վեր կացավ ու զնաց դեպի սեղանը: Նկարչական կաղամարի կողքին, որի մեջ արգեն շորացել էր թանաքը, թափված էին թղթեր, վազուց ու նոր ստացված բաց նամակներ: Կոմսուհին հետաքրքրությամբ նայում, շոշափում էր թերթիկները, բարձրացնում էր, տեսնելու համար նրանց տակը:

Օլիվիեն մոտենալով նրան, ասաց.

— Դուք խանգարում եք իմ անկարգությունը:

Տիկին դը Գիլոուան, առանց պատասխանելու, հարցրեց.

— Այդ ո՞վ է ուզում գնել ձեր լողացող կանայքը:

— Մի ամերիկացի, որին չեմ ճանաշում:

— Դուք համաձայնության եկե՞լ եք Փողոցների երգչում:

Վերաբերյալ:

— Այու Տասը հազար:

— Շատ լավ եք նկարել: Դա սիրուն է, բայց ոչ բացառիկ:

Մնաք բարով, սիրելիս:

Տիկին դը Գիլոռուան երկարեց իր այտը, որի վրա Օլիվիեն հանդարտ մի համբույր գրոշմեց. և տիկինը շքացավ դուն վասպուցի ետև, կիսածայն ասելով.

— Ռուրաթ, ժամը ութին։ Ես չեմ ցանկանում, որ ինձ ուղեկցեք։ Դուք այդ գիտեք։ Մնաք բարով։

Երբ կոմսուհին մեկնեց, Օլիվիեն ծխախոտ վառեց,՝ ապա սկսեց դանդաղորեն ճեմել արվեստանոցում։ Իրենց կապի ամբողջ անցյալը պարզվում էր իր առջև։ Նա հիշում էր վաղուց անցած մանրամասնությունները, դրանք փնտրում ու կապում էր մեկը մյուսին. նա միայնակ ստարվել էր հիշողությունների այդ հետապնդումով։

Դա այն ժամանակն էր, երբ Օլիվիեն ինչպես աստվ բարձրանում էր Փարիզի արվեստի հորիզոնի վրա. այն ժամանակ նկարիչները նվաճել էին հասարակության բովանդակ համակրանքը և ապրում էին հոյակապ առանձնատներում, որոնք ձեռք էին բերել վրձինի մի քանի շարժումով։

1864 թվականին վերադառնալով Հոռմից, Օլիվիեն Բերտենը մի քանի տարի մնացել էր առանց հացողության ու համբավի. բայց 1868 թվականին նա ցուցադրեց իր Կենապատրան, և իսկ հայն հասարակությունն ու քննադատությունը նրան երկինք բարձրացրին։

1872 թվականին, պատերազմից հետո, Անրի Ռենյոի \* մահից հետո, որ նրա բոլոր արվեստակիցների համար փառքի պատվանդան էր ծառայել, Բերտենը համարձակ մի սյուժեի, իր Յոկաստի համար դասվեց հանդուգն նկարիչների շարքը, թեև որա խելամտորեն ինքնատիպ կատարման եղանակը գնահատվեց նույնիսկ ակադեմիկոսների կողմից։ 1873 թվականին, տուածին մեղալը, որ նրան հատկացվել էր Ալմիրյան հերալդի համար, որ նա նկարել էր Աֆրիկա կատարած ուղեորդություններից հետո, նրան դրեց կոնկորսից դուրս, իսկ 1874 թվականին, իշխանուհի դը Սալիայի պորտրետից հետո, բարձր հասարաւությունը նրան համարեց ժամանակի առաջնակարդ ուսուցչիութիւնը։ Այդ պահից նա դարձավ փարիզեցիների ու ժուրիզուհիների ամենասիրված նկարիչը, նրանց պերճության.

\* Ֆրանսիացի նկարիչ (1843—1871), կուլորիտի վարպետ. սպանվեց նրանս-պրուսական պատերազմի ժամանակ։

նրանց վարվեցողության, նրանց բնավորության ամենավարպետ ու ամենահմուտ միկնարանը։ Մի քանի ամսից հետո Փարփղի բոլոր երեսի կանայք նրան խնդրեցին նկարել իրենց։ Նա դժվարահաճ եղավ և շատ թանկ վճար պահանջից։

Արդ, քանի որ նա հարգված էր և այցելություններ էր տալիս իբրև աշխարհիկ պարզ մարդ, նա մի օր դքսուհի որ Մորտմենի մոտ նկատեց մի երիտասարդ կնոջ՝ խոր սուզի մեջ. կինը դուրս էր գալիս, երբ ինքը մտնում էր և, դուռն տակ հանդիպելով նրան՝ շլացավ նրանով, ինչպես մի հիւսորանչ ու հմայիչ տեսիլով։

Հարցնելով անունը՝ իմացավ, որ նա կոչվում էր կոմառչի զը Գիլուռա, նորմանդական գյուղական աղնվականի, պյուղատնտեսի ու գեպուտատի կին էր. որ իր կեսրացի համար սպազեստ էր կրում, որ խելացի էր, հիացմունք ու հարգանք էր ներշնչում։

Այդ հանդիպումից հուզված և իբրև արվեստագետ հմտյած, Օլիվիեն ասաց.

— ԱՇՅ, ահա մի կին, որին հաճույքով կնկարեի։

Մյուս օրը այդ խոսքը հաղորդվեց երիտասարդ կնոջը. և նույն երեկոյան Օլիվիեն ստացավ կապուտակ, թեթևորեն անուշահոտիք, կանոնավոր, նուրբ, ձախից աջ փոքր-ինչ բարձրացող ձեռագրով մի գրություն, որի մեջ ասված էր.

«Պարսն,

Դքսուհի զը Մորտմենը, որ նոր այցելեց ինձ, հավաստում է, որ դուք կիափաքեիք իմ համեստ անձը նկարել և զրանից մի գլուխ-գործոց ստեղծելու օս հաճույքով ինձ կզնեի ձեր տրամադրության տակ, եթե ստուգակես իմանայի, որ դուք ի միջի այլոց շեք ասել և իրոք իմ մեջ տեսնում եք ինչ-որ բան, որ կարող է ձեր կողմից վերարտագրվել ու իդեալականացվել. Հավատացեք, պարոն, իմ ամենաանկեղծ զգացուներին։

Անեա զը Գիլուռա»։

Օլիվիեն պատասխանն ուղարկեց, հարցնելով, թե ե՞րբ կարող է ներկայանալ կոմսուհուն և հաջորդ երկուշաբթի նաւի անաշաշի հրավիրվեց առանց ձևականության։

Կոմսուհին բնակվում էր Մալզիրը բուլվարի վրա զտնվոր մեծ, շքեղ ու նոր ոճի տան երկրորդ հարկում։ Սպիտակ ու սուկեղույն հեծանների շրջանակի մեջ կապույտ մետաքսով պրկված լայն սրահի միջով նկարիչը առաջնորդվեց դարդասենյակ, որ կահավորված էր անցյալ դարի ձարչակով։ պատաժ Վատտոյի ոճով փայլուն ու պշտուն պաստառներով։ օրոնց նուրբ ու սիրուն նախշերը ասես մտածել ու պատրաստել էին սեր երազող վարպետները։

Նկարիչը հենց նոր էր նստել, երբ կոմսուհին երևաց։ Նրա բալլվածքն այնքան թեթև էր, որ նկարիչը, լսեց նրա անցնելը հարակից սենյակի միջով, և զարմացավ՝ հանկարծ տեսնելով նրան։ Կոմսուհին անկաշկանգ ծեռվ ծեռվ մեկնեց նկարչին։

– Ուրիմն ճիշտ է, — ասաց կոմսուհին, — որ զուք կամ մենում էք նկարել ինձ։

– Ես շատ երջանիկ կլինեի, տիկին։

Իեկ ու շրջազգեստը կոմսուհուն շատ էր նիշարեցնում և նրան տալիս էր բոլորովին երիտասարդ և միաժամանակ տորոց տեսր, որը հակասում էր շեկ մազերի փայլով լուսավորված նրա մական զեմքին։ Ներս մտավ կոմսը, վեցտար աղցկած ձեռքից բռնած։

Տիկին զբ Գիլուուան ներկայացրեց։

– Ամուսին։

Դա կարծահասակ, առանց բեղի, խնամքով սափրիված, վոռ բնկած այտերով ու թուխ գեմքով մի մարդ էր։ Նա քառականի կամ ղերասանի էր մի քիչ նմանվում իր երկար, ետանիված մազերով, բարեկիրթ շարժուձեռքով։ իսկ բերանիւրկու կողմերին, այտերից մինչև ծնոտը իշնող բոլորածե, խոր ծալքերը ասես կազմված էին հրապարակով խոսելու սովորությունից։

Կոմսը շնորհակալություն հայտնեց նկարչին մի երկարարանությամբ, որ նրա մեջ մատնում էր Հոետորը։ Արդեն վազուց նա փափագ ուներ իր կնոջ պորտրեն պատվիրելու և, անշուշտ, նա պարոն Օլիվիե թերտենին կընտրեր, եթե չվախենար մերժումից, որովհետեւ գիտեր, որ նա պաշարված է սման խնդրանքներով։ Բազմաթիվ քաղաքավարական խոսքեր փոխանակելով՝ նրանք պայմանավորվեցին, որ հետեւյալ օրն.

Իսկ կոմսը կնոջը կբերի արվեստանոց, Այսուհանդերձ երբ կոմսը հարցրեց, թե ավելի լավ չի՞ լինի հետաձգել՝ կոմսուհու սուգի պատճառով, ապա նկարիչը հայտարարեց, որ ինքը կկամենար տալ իր ստացած առաջին տպավորությունը և այնքան կենդանի, այնքան նուրբ, զարմանալի հակադրությունը ուսկեցույն մազերի տակ շողացող գլխի և սև շրջազգեստի մուայլության միջև:

Հետնյալ օրը կոմսուհին եկավ ամուսնու հետ, իսկ մյուս օրերին եկավ աղջկա հետ, որին նստեցրին պատկերազարդ գրքերով ծանրաբեռնված սեղանի առջև:

Օլիվիե Բերտենը, ըստ իր սովորության, շատ զուապ էր երեսմ: Բարձր խավի կանայք փոքր-ինչ շփոթեցնում էին նրան, որովհետեւ նա ամենեին չէր ճանաչում նրանց: Նա նրանց համարում էր խորամանկ և միաժամանակ հիմար, կեղծավոր և վտանգավոր, թեթևամիտ և տաղտկալի: Նա ունեցել էր գաղանցիկ արկածներ կիսաշխարհիկ կանանց հետ, որոնց հրապուրել էին նրա համբավը, սրամտությունը, մարդիկի գեղեցիկ կերպարանքը և կորովի թուխ դեմքը: Նա նախընտրում էր այդ կանանց, նա սիրում էր նրանց աղատ վարմունքն ու աղատ խոսվածքը, որովհետեւ վարժվել էր իր հաճախած արվեստանոցների ու կույսների թեթև, զվարճալի ու զվարթ բարքերին: Նա հասարակության մեջ մտնում էր փառքի տեսչի և զշ սրտի տենչի համար, նա այնաև գոհացնում էր իր փառասիրությունը, շնորհավորհանքներ ու պատվերներ էր ստանում, փայլում էր հաճոյախոսող գեղեցիկ կանանց առջև, բայց ամենեին չէր դարպասում նրանց: Նրանց մոտ իրեն թույլ շտալով ոչ համարձակ կատակներ, ոչ երկդիմի խոսքեր անել, քանի որ նրանց համարում էր երեսպաշտներ, նա կիրթ մարդու համբավ էր հանել: Ամեն անգամ, երբ մի կին նրա մոտ գալիս էր նկարվելու, նա, չնայած կնոջ ցուցաբերած բոլոր սիրալիրությանը, սրպեսզի դուր գա նրան, զգում էր անհավասարությունը ժողովրդի, որը թույլ շի տալիս արվեստագետներին խառնվելու բարձր խավի աշխարհիկ մարդկանց հետ, թեև նրանք հաղորդակցում են միմյանց հետ: Փայտների ու հիացումի ետև, որոնք կանանց մոտ միշտ մի քիչ կեղծ են լինում, նա գուշակում էր իրեն բարձր խավին դասող էակի

թաքուն վերապահությունը։ Նրա ինքնասիրությունը ընդլզում էր, նա քաղաքավար, գրեթե մեծամիտ շարժուձևեր էր ընդունում, և քողարկված սնապարծության կողքին նորելուկի, որին իշխաններն ու իշխանութինները իրենց հավասար են ճանաշում, ցուցաբերում էր հպարտությունն այն մարդու, որն իր մաքին է պարտական այն գիրքը, որ ուրիշներ ստացել են իրենց ծաղման շնորհիվ։ Նրա մասին ասում էին. «Ներ շառաբեկիրթ է»։ Այդ դարմանքը, որ շոյում էր նրան, միաժամանակ վշտացնում էր, քանի որ ցույց էր տալիս սահմանները։

Նկարչի դիտավորյալ ու ձևական լրջությունը մի քիչ շփոթեցնում էր տիկին ու Գիլռուային, որ շգիտեր ինչի մասին խոսեր այս այնքան պազ և խելացի համարված մարդու շեմ։

Նստեցնելով աղջկան, կոմսուհին նույնպես նստեց թիկնաթոռին, սկսված մի ուրվանկարի կողքին. Նկարչի հանձնարարության համաձայն, նա՝ շանում էր իրեն տալ պահանջված արտահայտությունը։

Չորրորդ սեանսի մեջտեղ նկարիլը հանկարծ դադարեցրեց իր զործը և հարցրեց.

— Ի՞նչը ձեզ ամենից շատ է զվարճացնում կյանքում։  
Կոմսուհին վարանեց։

— Զգիտեմ։ Ինչո՞ւ եք հարցնում։

— Ինձ հարկավոր է երջանիկ արտահայտություն տեսնել ձեր աշքերում, բայց ես այդ գեռ չեմ տեսնում։

— Ուրեմն աշխատեցեք ինձ խոսեցնել, ես շատ եմ սիրում շողակրատել։

— Դուք զկա՞րթ եք։

— Շատ զլարթ։

— Զբաւցենք, տիկին։

Նկարիլը «զբուցինք, տիկին» ասաց լուրջ տոնով և, նորից սկսելով նկարիլ, շոշափեց մի քանի հարցեր, զանալով գտնել մորերի շփման որևէ կետ։ Նրանք սկսեցին ընդհանուր ժանոթների մասին դիտողությունների փոխանակությամբ, ապա խոսեցին իրենց մասին, որ միշտ կազմում է զրույցների ամենահաճելի ու ամենագրավիչ նյութը։

Հետեւալ օրը հանդիպելով, նրանք իրենց ավելի աղատ զգացին, և թերտենը, տեսնելով, որ ինքը նրան զուր է գալիս ու զվարճացնում է, սկսեց մանրամասնություններ պատմել իր՝ նկարչի կյանքից և երեակայելու իրեն հատուկ հակումով՝ տպաստ ընթացք տվեց իր հիշողություններին:

Վարժված լինելով սալոնային գրականագետների բոնավորությամբ, կոմսուհին զարմացել էր նկարչի մի քիչ խոլական եռանդի, սրտաբաց ու հեգնական արտահայտությունների վրա, և անմիջապես սկսեց պատասխանել նույն տոնով, հաճելի, նուրբ ու համարձակ տոնով:

Մի շաբաթվա ընթացքում նա նկարչին գերեց ու նվաճեց իր զվարթությամբ, անկեղծությամբ, պարզությամբ: Թերտենը բոլորովին մոռացել էր բարձր խավի կանանց գեմ իր նախապաշտումները և պատրաստ էր պնդելու, որ միայն նրանք ունեն հմայք ու գրավվություն: Կանգնելով կտավի առջև և յուանդով աշխատելով, նա մերթ մոտենում էր նրան, մերի հոգ քաշվում, ասես կովում էր մեկի հետ և շարունակում էր արտահայտել իր մտերմիկ մտքերը, կարծես արդեն վաղուց ձանաշում էր արեից ու սուգից ստեղծված այդ սիրուն շիկահեր, սեղագեստ կնոջը, որ նստել էր իր առջե, որ ծիծաղում էր իրեն լսելով և պատասխանում էր այնպիսի զվարթությամբ, այնպիսի աշխատությամբ, որ ամեն բոպե կորցնում էր իր պղողան:

Մերթ թերտենը հեռանում էր նրանից և, փոկելով մի աշրի, թեքվում էր, որպեսզի աեսներ իր մողելի ամբողջ կերպարանքը, մերթ կիա մոտենում էր, որպեսզի նկատեր նրա զեմքի մանր նրերանգները, խուսափուկ արտահայտությունները, որպեսզի որսար ու տար այն ամենը, ինչ ծածկված է կնոջ տեսանելի արտաքնաերեւութիւնուն, այն իդեալական գեղեցկության ճառագայթումը, այն ինչ որ անհայտի ցոլացումը, այն մտերմիկն ու ահավորը, յուրաքանչյուր կնոք հաստուկ հմայքը, որ գեավի նա խելահեղ սեր է առաջացնում հենց այս և ոչ այն տղամարդու մեջ:

Մի օր կեսօրից հետո աղջիկը եկավ և մանկական մեծ զրդությամբ կանգնելով կտավի առջե, հարցրեց.

— Սա մայրիկը չէ, ասա:

Ուրտենը նրան գրկեց, համբուրեց, շոյված քնատիպէ Առ իր նկարի նմանության այդ նախվ վկայությունից:

Մի ուրիշ օր, երբ տիկին դը Գիլուուան շատ հանգիստ նըս-  
տել էր, հանկարծ լսվեց աղջկա տխուր ձայնը.

— Մայրիկ, ձանձրանում եմ:

Նկարիչը այս առաջին տրուունջից այնպես հուզվեց, որ  
մասս օրը արվեստանոց բերել տվեց խաղալիքների մի կույս:

Փոքրիկ Աննետը, զարմացած, գոհ և առաջվա նման մտա-  
խոհ, խնամքով դասավորեց խաղալիքները, իսկ ապա սկսեց  
գիրցնել մեկը մյուսի ետևից, մոմենտի ցանկության համա-  
ձայն: Այդ ընծայի համար նա սիրեց նկարչին, ինչպես սի-  
րում էն երեխաները, և սկսեց նրան վերաբերվել այն ընազ-  
դուկան ու փաղաքշական բարեկամությամբ, որ նրանց դարձ-  
նում է այնքան սիրունիկ, այնքան գրավիչ:

Տիկին դը Գիլուուայի համար հաճելի էին նկարվելու պա-  
հերը: Սուգի առիթով այս ձմեռ անզբաղ մնալով և զրկված  
ինելով աշխարհիկ զվարճություններից, նա իր կյանքի ամ-  
բողջ հետաքրքրությունը կենտրոնացրել էր այս արվեստա-  
նոցում:

Լինելով աղջիկը շատ հարսւու ու հյուրասեր մի փարփա-  
կի առնտրականի, որ վաղուց էր մեռել և մի հիվանդու կնոշ,  
որ իր առողջությունը դարմանելու համար տարվա գրեթե կե-  
սր անկողնում էր անցկացնում, տիկին դը Գիլուուան դեռաւի  
հուսակից դարձել էր իսկական տանտիկին. նա գիտեր հյու-  
րեր ընդունել, ժպտալ, զրուցել, մարդկանց ճանաշել, հասկա-  
նում էր թե ում հետ ինչպես պետք է խոսել, արագ հարմար-  
ժում էր հանգամանքներին, հեռատես էր ու նրբամիտ երր-  
կոմո դը Գիլուուան նրան ներկայացվեց իբրև նշանած, նա-  
և անմիշապես հասկացավ այդ ամուսնության բերելիք օգուտ-  
ուերը. և առանց հարկադրանքի ընգունեց առաջարկը, ինչպես  
խելամիտ աղջիկ, որ շատ լավ գիտե, թե հնարավոր չէ ունե-  
նալ ամեն ինչ և որ ամեն կացության մեջ հարկավոր է կշռել  
յավ ու վատ կողմերը:

Նա աշխարհ մտնելով ընդհանուրի ուշադրությունն էր  
դրավել, որովհետև սիրուն ու խելոք էր, տեսել էր իրեն դար-  
դասող շատ մարդկանց, բայց ոչ մի անգամ չէր կորցրել

Հանդարտությունը սրտի, որը նույնքան շրջահայաց էր, որքան միտքը:

Սակայն նա պշրուտ էր, թեև նրա կրքուտ ու զգուշավոր պըրուանքը երբեք շատ հեռու չէր գնում: Նա սիրում էր հաճոյախոսություններ լսել, սիրում էր ցանկություններ զարթեցնել, միայն թե կարողանար ձևացնել, որ ինքը չի նկատում դրանք և երբ ամրող մի երեկո լինում էր որևէ սալոնում, որտեղ նրան խնկարկել էին, նա լավ քնում էր, ինչպես մի կին, որ կատարել է իր երկրային կոշումը: Այդպիսի կյանքը, որ յոթ տարի էր տևել, նրան շէր հոգնեցրել, նրան միօրինակ չէր թվացել. նա շատ էր սիրում աշխարհիկ կյանքի այս անդարում տեսնդահուզությունը, բայց ցանկանում էր և ուրիշ բաներ: Նրա շրջանակի տղամարդիկ, փաստաբաններ, քաղաքագետներ, ֆինանսիստներ կամ դատարկապորտներ, նրան զվարճացնում էին ինչպես զերասաններ, և նա նրանց հետ վերաբերվում էր ոչ շատ լրջորեն, թեև գնահատում էր նրանց գործունեությունը, նրանց ծառայությունը, նրանց տիտղոսները:

Թերտենը կոմսուհուն դուր էր եկել ամենից առաջ այն պատճառով, որ նրա մեջ նոր բան կար իր համար: Նա ուրախանում էր նկարչի արվեստանոցում, լիաթոք ծիծաղում էր, իրեն սրամիտ էր զգում, շնորհապարտ էր այն գոհունակության համար, որ ստանում էր նկարվելու պահերին: Թերտենը դուր էր զալիս նաև այն պատճառով, որ գեղեցիկ էր, զորավոր, նշանավոր, ոչ մի կին, ինչ էլ որ ասեն, չի կարող անտարբեր մնալ ֆիզիկական գեղեցկության և փառքի հանդեպ: Շոյված այդպիսի վարպետի ուշադրությունից և իր հերթին պատրաստ լինելով շատ բարձր գասելու նրան, տիկին որ Գիլուան նրա մեջ գտել էր կենդանի ու մշակված իմացականություն, փափկանկատություն, երեակայություն, իսկապես հմայիչ միտք և գունագեղ խոսք, որ կարծես լուսավորում էր այն, ինչ արտահայտում էր:

Նրանց միջև շուտով մտերմություն առաջացավ և ձեռքի սեղմումը, որ նրանք փոխանակում էին հանդիպման ժամանակ, ամեն օր դառնում էր հետզհետե ավելի սրտագին:

Առանց որևէ հաշվի, առանց կանխամտածված դիտավորության տիկին դը Գիլուան զգում էր, որ իր մեջ աճում է

Նկարչին հրապուրելու բնական ցանկությունը և տեղի՝ տվեց այդ ցանկությանը։ Նա ոչինչ չէր նախատեսել, ոչ մի ծրագիր չէր կազմել։ Նա միայն պշրուհի էր և նազելի, ինչպես կանայք բնադրաբար լինում են հանդեպ այն տղամարդուն, որը մյուսներից ավելի է դուր գալիս իրենց, և թերտենի հանդեպ նրա վերաբերմունքի մեջ, նրա հայացքների ու ժպիտների մեջ երեսում էր այն գյութիլ հրապուրանքը, որ իր շուրջը սկսում է այն կինը, որի մեջ զարթնել է սիրվելու պահանջը։

Նա թերտենին ասում էր շոյիշ բաներ, որոնք նշանակում եին՝ «Ես ձեզ շամ գեղեցիկ եմ գտնում, պարոն», և նրան ստիպում էր խոսել երկար, որպեսզի, ուշադրությամբ լսելով, նրան ցույց տար, թե նա ինչպիսի հետաքրքրություն է առաջացրել իր մեջ։ Թերտենը դադարում էր նկարել, նստում էր նրա կողքին և այն մտավոր գերհուզման մեջ, որ առաջացնում է դուր գալու ցանկությամբ արբած կինը, նայած օրվան, նաւելինում էր պոետական, խոլական կամ փիլիսոփայական նույաներ։

Տիկին գը Գիլուտան ուրախանում էր, երբ թերտենը զվարք էր լինում, իսկ երբ թերտենը խորասուզվում էր խոհերի մեջ, կոմսուհին աշխատում էր հետեւել, թեև ոչ ճիշտ հաշողությունը, նրա մտքերի զարգացմանը. իսկ երբ կոմսուհին մտածում էր ուրիշ բանի մասին, ձևացնում էր, թե իբր լսում է նրան ու հասկանում, իբր այնպես հաճույք է ստանում նրա հայտնություններից, որ թերտենը հրճվում էր նրա ուշադրություն համար, հուզվում, որ գտել է նուրբ, բաց ու հեզ մի հոգի. որի մեջ միտքն ընկնում էր, ինչպես հատիկ։

Պերտեն առաջ էր գնում և խոստանում էր շատ հաջող լինել, բանի որ նկարիշը ստացել էր այն հոգեվիճակը, որ անհրաժեշտ է երևան բերելու համար մողելի բոլոր հատկությունները և դրանք արտահայտելու այն կրթութ համոզմամբ, որը կազմում է իսկական արվեստագետի ներշնչումը։ Թեքվելով դեպի կոմսուհին, նկարիշը ուշադիր հետեւում էր նրա դեմքի բոլոր շարժումներին, նայում էր մաշկի բոլոր երանգներին, աշքերի փայլին ու արտահայտությանը, անորսալի դիմադերին. նկարիշը տոգորված էր նրանով, ինչպես ջրից ուստած սպունգը. իսկ երբ կտավի վրա էր փոխադրում կոմսու-

Հու հմայիլ հրապուցրը, որ որսում էր իր հայացքը և հոսկ-նում ուղեղից դեպի վրձինը, նա իրեն զգիտած, սրարբած էր զգում, ասես ըմպած լիներ կանացի հմայքը:

Կոմսուհին զգում էր, որ նկարիչը սիրահարվում է իրեն, զվարճանում էր այդ խաղով, հետզհետեւ ավելի վատա՞ էր լի-նում իր հաղթանակին և ինքն էլ էր ոգեորվում:

Ինչ-որ նոր բան կոմսուհու կյանքին տալիս էր նոր համ. նրա մեջ արթնացնում էր թորհրդավոր բերկրանք: Երբ նրա մոտ խոսվում էր թերտենի մասին, նրա սիրտը ավելի արագ էր բարախում, և նա ցանկություն էր զգում ասելու մեկը այն դանկություններից, որոնք երբեք չեն համում մինչև շրթնե-քը.— «Նա սիրահարված է ինձ»: Կոմսուհին գոհ էր մնում. Երբ գովարանում էին նկարչի տաղանդը, և դուժե, է՛լ աղիկ էր գոհ մնում, երբ նրան գեղեցիկ էին գտնում: Երբ նա մտա-ծում էր թերտենի մասին միայնակ, առանց տաղտկալի հյու-քերի, նա իրոք երևակայում էր, որ հանձին նրա գտել է մի յափ բարեկամի, որ միշտ կգոհանար ձեռքի սրտագին սեղմու-մով:

Հաճախ, նկարելու ժամանակ, Օլիվիկ թերտենը հանկարծ ներկապնակը դնում էր աթոռակի վրա, գրկում էր փոքրիկ Աննետին և գորովագին համբուրում էր նրա աշքերը կամ մա-ղերը, նայելով մորք, կարծես ասելով. «Ես այսպես համբու-րում եմ ձեզ և ոչ թե երեխային»:

Երբեմն կոմսուհի զբ Գիլուուան չէր բերում աղջկան և գո-ւիս էր մենակ: Այդպիսի օրերին աշխատանքն առաջ չէր գնում, նրանք ավելի շուտ գրուցով էին տարվում:

Մի օր, կեսօրից հետո, կոմսուհին ուշացավ: Ցուրտ եղա-նակ էր: Փետրվարի վերջն էր: Օլիվիկ թերտենը կանուխ էր տուն վերադառնել, ինչպես անում էր ամեն անգամ, երբ կոմ-սուհին պետք է գար, որովհետեւ միշտ մտածում էր, որ նա մի-րիշ շուտ կերեա:

Սպասելով կոմսուհուն, Օլիվիկին սենյակում գնում-գալիս էր, ծխում, զարմանում էր, որ շաբաթվա մեջ հպրյուր ան-գամ իրեն տալիս էր միննույն հարցը. «Մի՞թե ես սիրահար-ված եմ»: Նա չէր կարողանում վճռել այդ, որովհետեւ դեռ իսկապես սիրահարված չէր: Նա ունեցել էր ուժեղ, նույնիսկ

բավական երկար հափշտակություններ, բայց դրանք սեր չէր կոմարում։ Հիմա նա զարմանում էր իր մեջ զգացած ապրում-ուրի վրա։

Արդյոք սիրո՞ւմ էր նրան։ Անշուշտ Օլիվիեն կրքոտ ցանկություն շունիր կոմսուհու նկատմամբ, նույնիսկ չէր մտածել որան աիրելու հնարավորության մասին։ Մինչև հիմա հենց այս մի կին դուր էր եկել Օլիվիեին, ցանկությունն իսկույն հառակել էր նրան, և նա ձեռքիրը մեկնել էր դեպի այդ կինը, ուն պտուղը քաղելու համար, սակայն նրա ներաշխարհը որրեք խորապես չէր հուզվել այդ կնոջ ներկայությունից կամ ռազակայությունից։

Այդ կնոջ նկատմամբ կիրքը հապիվ էր շոշափել Օլիվիեին թվում է թե ծածկվել, թաքնվել էր մի ուրիշ զգացումի, աղիլի հղոր, բայց դեռ շփոթ, հազիվ զարթնած զգացումի ետեւ ոլիվիեն առաջ մտածում էր, որ սերը սկսվում է երազներով, պոետական զմայլանքներով։ Այն, ինչ զգում էր հիմա, բնդակառակը, նրան թվում էր, թե ծագում է ինչ-որ անորոշ ոլելի շատ ֆիզիկական, բան բարոյական զգայությունից։ Նա զարձել էր նյարդային, անհանդիսու, ինչպես այն մարդը, որի մեջ ինչ-որ հիվանդություն է սկսվում։ Խակայն արյան տենդագին եռմանը, որով վարակվել էր և Օլիվիեի ուղեղը, ոչ մի ժիշտանդագին բան չէր խառնվում։ Նա չէր անգիտանում, որ իր այս տագնապի պատճառը կոմսուհի դը Գիլուուան էր, նրա մասին հիշողությունը, նրա զալուն սպասելը։ Օլիվիեն չէր զգում, որ դեպի կոմսուհին ձգտում է իր ամքողջ էռության ոլացքով, բայց իր մեջ մշտապես դգում էր նրա ներկայությունը. կարծես նա չէր հեռացել իր մոտից. կոմսուհին, գնացով, Օլիվիեի մեջ թողնում էր ինչ-որ նրբին ու անբացարելի ժամնիկ։ Ի՞նչ։ Արդյո՞ք դա սեր էր։ Այժմ Օլիվիեն դիմում էր իր սեփական սրտին՝ տհանիլու և հասկանալու համար այդ հու կոմսուհուն հմայիլ էր գտնում, բայց կոմսուհին չէր համապատասխանում այն իդեալական կնոջ տիպարին, որ անդել էր Օլիվիեի կույր հույսը։ Ով զգում է սեր, արդեն ռախապես դուշակում է հոգեկան ու ֆիզիկական ձիրքերը առն կնոջ, որ հրապուրելու է իրեն. իսկ կոմսուհի դը Գիլուուան,

որը թեև անհունորեն դուր էր գալիս Օլիվիեին, կարծես այդ կինը չէր:

Թայց ինչո՞ւ այս կինը ուրիշ հանանցից ավելի էր զբաղեցնում Օլիվիեի միտքը, զբաղեցնում էր այլապես և անդադար:

Մի՞թե Օլիվիեն պարզապես ընկել էր նրա պշրանքներից ցանցի մեջ, որ ինքն արգեն վաղուց զգում ու հասկանում էր, մի՞թե նրա խորամանկություններից խարված՝ ենթարկվել էր ազդեցությանը այն մասնավոր կախարդանքի, որ հատակ է դուր գալ ուզող կանանց:

Օլիվիեն քայլում էր, նստամ էր, նորից սկսում էր քայլել, գլանակ էր ծխում և իսկույն նետում էր այն. նա ամեն րոպե նայում էր պատի ժամացույցի սլաքին, որը դանդաղորեն ու հանդարտորեն մոտենում էր սովորական ժամին:

Արդեն շատ անգամներ Օլիվիեն ցանկացել էր եղունգով բարձրացնել երկու շարժվող ոսկե սլաքների վրայի գոգավոր ապակին և մեծ սլաքը մատով տանել այն թվի վրա, դեպի որը նա շարժվում էր այնքան ծուլորեն:

Օլիվիեին թվում էր, որ գա լուսական էր, որպեսզի դուռը բացվեր և երեար սպասված կինը, որը խարվել ու կանչվել էր այդ խորամանկությումք: Թայց Օլիվիեն սկսեց ժպտալ իր այս տղայական ու խոյական ցանկության վրա:

Վերջապես նա իրեն հարց տվեց. «Կկարողանա՞մ դառնար կոմսուհու սիրեկանը»: Այս միտքը Օլիվիեին տարօրինակ գրեթե անիրականանալի թվաց այն բարդությունների պատճառով, որ գա կարող էր բերել իր կյանքում:

Սակայն այդ կինը շատ էր դսւր գալիս Օլիվիեին, և Օլիվիեն եղրակացրեց. «Իրոք ես գտնվում եմ անսովոր վիճակում»:

Ժամացույցը հնչեցրեց նշանակված ժամը և Օլիվիեին դուր հանեց, ավելի շուտ ցնցելով նրա նյարդերը, քան հոգին: Նա սպասում էր կոմսուհի զր Գիլռուային այն անհամբերությամբ, որ աճում է ուշացման յուրաքանչյուր վայրկյանի հետ: Կոմսուհին միշտ ճշտապահ էր, ուրեմն տասը րոպե շանցած Օլիվիեն նրան կտեսներ դռան շեմին: Երբ տասը րոպեներն անցան, Օլիվիեն անհանգստացավ, ասես ինչ-որ վշտի նախա-

Դացումից, հետո բարկացավ, որ կորշում է ժամանակը, իսկ ապա հանկարծ հասկացավ, որ ինքը շատ է տառապելու, եթե ու շգա: Ի՞նչ աներ: Կողասեր: Կամ թե չէ՝ դուրս կգար, որ զեսդի նու ոչ ոքի չգտներ արվեստանոցում, եթե շատ ուշ դար:

Օլիվիեն դուրս կգար, բայց ե՞րբ: Ավելի լավ չէ՞ր լինի ձիալ և մի՛ քանի քաղաքավարի, սառը խոսքերով կոմսուհուն հասկացնել, որ ինքն այն մարդկանցից չէ, որոնց ստիպում են ալասել: Իսկ եթե կոմսուհին չկարողանա՞ր գալ: Բայց այն ժամանակ ինքը պետք է մի հեռագիր կամ մի գրություն ստանար ծառայի կամ սուրճանդակի միջոցով: Եթե կոմսուհին շգար, ի՞նչ աներ: Դա կորած օր էր. այլես չէր կարող աշխատել: Ուրեմն ի՞նչ... Ուրեմն կգնար իմանալու, թե ինչ է ժամանել նրան, որովհետեւ անհրաժեշտություն էր զգում սրտն տեսնելու:

Մյու ճիշտ էր. Օլիվիեն անհրաժեշտություն էր զգում կոմսուհուն տեսնելու, խոր, ճնշող, տանջող անհրաժեշտություն: Մյու ինչի՞ց էր: Սիրո՞ւց: Բայց Օլիվիեն ոչ մտքի գերազրություն, ոչ զղացումների ալեկոծություն, ոչ հոգու երազանք ուներ, երբ համոզվեց, որ շատ էր տառապելու, եթե նա շգար այսօր:

Սուանձնատան աստիճանների վրա հնչեց փողոցի դռան դանգը. Օլիվիեն Բերտենը իրեն հանկարծ շնչակուուր զգաց: Ես այնքան էր ուրախացել, որ ոտքի ծայրի վրա մի պտույտ չործեց, վեր նետելով դլանակը:

Կոմսուհին ներս մտավ. նա մենակ էր:

Օլիվիեն անմիջապես համարձակություն ստացավ:

— Դիտե՞ք, թե ի՞նչ էի հարցնում ինձ, ձեզ սպասելիս:

— Ոչ, չգիտեմ:

— Ինձ հարցնում էի, թե արդյոք սիրահարված չե՞մ ձեզ:

— Սիրահարված ի՞նձ: Դուք գժվել եք:

Բայց կոմսուհին ժպտաց, և նրա ժպիտը ասում էր. «Դա ուսի՞ է, ես շատ գոհ եմ»:

Կոմսուհին շարունակեց.

— Ա՞յ, դուք լուրջ չեք. ինչո՞ւ եք այդպես կատակում:

Օլիվիեն պատասխանեց.

— Ընդհակառակը, Ես շատ լուրջ եմ: Ես չեմ պնդում, որ սիրահարված եմ, բայց ինձ հարցնում եմ: Թե արդյոք չե՞մ գտնվում սիրահարվելու ճանապարհին:

— Ի՞նչն է ձեզ ներշնչում այդպիսի միտք:

— Եմ հուզումը, երբ դուք այստեղ եք, և իմ երջանկությունը, երբ դուք գալիս եք:

Կոմսուհին նստեց:

— Օ՛, մի՛ անհանգստանաք այդպիսի դատարկ բաների համար! Քանի դուք լավ կքննեք և ախորժակով կուտեք, ոչ մի մտանգ չի լինի:

Օլիվիեն սկսեց ծիծաղել:

— Իսկ եթե ես քունս ու ախորժակս կորցնե՞մ:

— Ինձ իմաց տվեք:

— Եվ այն ժամանա՞կ:

— Ես ձեզ հանգիստ կթողնեմ, որ կուզդուրիեք:

— Շատ շնորհակալ եմ:

Եվ նրանք սիրո նյութի շուրջ սրախոսեցին ամրող հետմիջօրեի նկարամիջոցին: Նույնը արին հետեւյալ օրերին: Դաշնումելով իբրև սրամիտ ու նշանակություն շունեցող կատակ, կոմսուհին ամնն անգամ մտնելիս զվարթ հարցնում էր.

— Ինչպե՞ս է այսօր ձեր սեր:

Եվ Օլիվիեն կես-կատակ, կհս-լուրջ կոմսուհուն պատմում էր այս հիվանդության զարգացման, ծագող ու աճող դզացումի ներքին, տեական ու խոր աշխատանքի բոլոր մանրամասնությունները: Նա հանգամանորեն վերլուծում էր իր ապրումները նախորդ օրվա բաժանումից հետո, ծաղրական կերպով նմանեցնելով դասախոսություն կարգացով պրոֆեսորի: Իսկ կոմսուհին ուշադիր լսում էր նրան, փոքր-ինչ հուզված ու շփոթված: Դա նման էր այն պատմության որի հերոսուհին հենց ինքն էր: Երբ Օլիվիեն սիրազեզ ու անկաշկանդ երեսվթով թվարկեց իրեն տանջող վշտերը, նրա ձայնը երբեմն դողում էր, միայն մի բառով կամ միայն մի ինտոնացիայով արտահայտելով այն, ինչ տառապեցնում էր իր սիրտը:

Իսկ կոմսուհին շարունակում էր հարցուփորձ անել Օլիվիեին, հետաքրքրությունից թրթուալով, աշքերը նրա վրա

հոսելով՝ ազահորեն լսելով այն պատմությունը, որ այնքան աղօսմ ու հմայում էր իրեն:

Երբեմն մոտենալով կոմսուհուն՝ նրա դիրքը ուղղելու համար, Օլիվիեն բռնում էր նրա ձեռքը և փորձում էր համբուռի: Կոմսուհին արագ շարժումով մատները ետ էր քաշում իրու շրթունքներից և հոնքերը թեթևակի պատում էր:

— Ֆեն լավ, աշխատեցեք,— ասում էր նա:

Օլիվիեն նորից սկսում էր աշխատել, բայց հինգ րոպե մոտ անցնում, երբ կոմսուհին որևէ հարց էր տալիս Օլիվիեին, որպեսզի ձարպկորեն նրան նորից բերեր իրենց դբաղեցնող միակ նյութի վրա:

Հիմա կոմսուհին սկսում էր երկյուղ զգալ իր սրտում: Նա առաջ էր ուղում սիրվել բայց ոչ շափաղանց ուժգին: Վստահ ինելով, որ ինքը չի հրապորվի, նա վախենում էր, որ Օլիվիեն շատ հեռու կզնա և ինքը կկորցնի նրան, քանի որ հարկ եղինի Օլիվիեին հուսազրկել այն բանից հետո, երբ ինքը հուսազրել էր նրան: Սակայն եթե կոմսուհուն հարկ լիներ հրապորվել այդ սիրազեղ ու զվարթ բարեկամությունից, այդ շարակրտանքից, որ հստում էր, իր հետ բերելով սիրո հատիկներ, ինչպես գետակ, որի ավազը ոսկի է բերում, նա հույժ թախիծ կղզար, կսկիծի հավասար թախիծ:

Երբ կոմսուհին տնից դուրս էր գալիս՝ նկարչի արվեստանոցը գնալու համար, նրան համակում էր բուռն ու զերմ մի խայտանք, որ նրան թիթևացնում ու զվարթացնում էր: Երբ նու ձեռքը դնում էր Օլիվիեի տան դռան՝ զանգակի վրա, սիրուր բարախում էր սպասումից, իսկ սանդուղքի վրայի գորգը նրան թվում էր ամենափափուկ գորգը, որ երբենէ կոխել են իր սոները:

Բայց Բերտենը մոայլ էր դառնում, մի քիչ զղայնանում էր, առափի էլ գրգռվում:

Հաճախ նրա համբերությունը հատնում էր, բայց իսկույն գոպում էր իրեն:

Այսի օր, երբ կոմսուհին ներս մտավ, Օլիվիեն փոխանակ նրան նկարել սկսելու, նստեց նրա կողքին և ասաց.

— Տիկին, հիմա դուք պետք է իմանաք, որ դա կատակ է, և որ ես խելահեղորեն սիրում եմ ձեզ:

Շփոթված այս նախաբանից և տեսնելով, որ ահավոր ճրգ-նաժամը մոտենում էր, կոմսուհին փորձեց կանգնեցնել Օլիվիեին, բայց Օլիվիեն այլև չէր լսում կոմսուհուն: Նրա սիրտը լցված էր և կոմսուհին դժգույն, դողոզուն, մտատանչ հարկադրված եղավ լսելու նրան: Օլիվիեն խռովց Երկար, ոչինչ շպահանջելով, քնքշությամբ, թախծությամբ, վշտագին համակերպությամբ. և կոմսուհին նրան թույլ ավեց իր ձեռքերը բռնել ու պահել ձեռքերի մեջ: Օլիվիեն ծունկի էր եկել և զտուանցող մարդու հայացքով նայելով կոմսուհուն, նրան աղերսում էր տառապանք շպատճառել իրեն: Ինչովիսի՝ տառապանք: Կոմսուհին չէր հասկանում և չէր փորձում հասկանով անզգայանալով Օլիվիեի կրած դժնդակ վշտին ի ան: Իսկ այդ վիշտը զրեթե երջանկություն էր: Հանկարծ կոմսուհին արցունքներ տեսավ Օլիվիեի աշքերում և այնպես հաւզից: որ «Օ» բացականշեց և պատրաստ էր համբուրելու նրան, ինչպես համբուրում են արտասվող Երեխաներին: Օլիվիեն մեղմ ձայնով կրկնում էր՝ «Լսեցեք, լսեցեք, ես շատ եմ տանջվում», և հանկարծ այդ վշտից ու այդ արցունքներից աղդված: Կոմսուհին հեծկլտաց, զղագարվեց, զդալով, որ իր դողացոյ բազուկները պատրաստ են բացվելու:

Երբ հանկարծ Օլիվիեն կոմսուհուն գրկեց և տափանքով համբուրեց նրա շրթները, կոմսուհին լուզեց ծշալ, կալել, հետմղել Օլիվիեին, բայց իսկույն հասկացավ, որ ինքը կորած է, որովհետեւ դիմադրելով՝ տեղի էր տալիս, սլաշտպանվելով՝ անձնատոր էր լինում, և «ոչ, ոչ, չեմ ուզում» գոշելով՝ փարվում էր նրան:

Կոմսուհին տակնույլրա եղավ և դեմքը ձեռքերով ծածկեց, ապա ընդոստ վեր թռավ, վերցրեց գորգի վրա ընկած իր գրիխարկը, դրեց վլխին ու դուրս վազեց, ի հեճուկս աղերսանքներին Օլիվիեի, որ բռնել էր նրա շրջաղղեսակց:

Հենց որ կոմսուհին փողոցում գտնվեց, ուզեց նստել մայթի եղրին, այնքան ջախջախված էր զգում, այնքան նրա սրունքները կթոտում էին: Մոտով մի կառք էր անցնում. նա կանչեց այն և ասաց կառապանին. «Հանդարտ գնացեք, ինձ տարեք ո՞ւր որ ուզում եք»: Նա նետվեց կառքի մեջ, փակելք

շահակը, կուշ եկավ խորքում, իրեն միայնակ զգալով բարձրացված տպակիների և տէ, միայնակ՝ մտախոհելու համար:

Մկրտի մի քանի բոպեների ընթացքում նրա ուշքը կլանել էին միայն անիվների աղմուկն ու կառքի ցնցումները, Դաւարկ, ուինչ շտեսնող աշքերով նա նայում էր տներին, ոտքով դիացողներին, իառագնացներին, հանրակառքերին. նա ոչ մի բանի մտսին չէր մտածում, ասես ուզում էր դադար առնել, չունչ տանել նախքան տեղի ունեցածի վրա խորհրդածելու փրտ անելու:

Սակայն կոմսուհին կորովամիտ էր, ամենեին ոչ մտավախեռու, և նա ասաց յուրովի. «Ահա ես խորտակված կին եմ»: Իի մի քանի բոպե մնաց այդ զգացողության տիրապետության տուկ, անգարմանելի դժբախտության ստուգության մեջ, սարսափի մեջ, ինչպես այն մարդք, որ կտուրից բնկել է և դեռ շարժվում, ենթադրելով որ ոտները ջարդվել են և վախենալով հաստատել այդ:

Բայց փոխանակ ընկճվելու տվայտանքից, որ նա սպառում էր և որից վախենում էր, նրա սիրութ, դուրս գալով այդ վտանգավոր փորձանքից, մնացել էր հանգիստ ու անայլայլ ոտ գանդադարձ, հանդարտ էր բարախում այն անկումից հետո, որ ծանրացել էր նրա հոգու վրա և թվում էր, թե սիրութ չէր մտսնակցում նրա հոգու խոռոչքին:

Բարձր ծայնով, ասես ուզելով ինքն իրեն լսել ու համոզել, կոմսուհին կրկնում էր. «Ահա ես խորտակված կին եմ»: Բայց նրա մարմինը ոչ մի տանջալի արձականքով շպատասխանեց խզմի այդ գանգատին:

Արոշ ժամանակ նա անձնատուր եղավ ճոճվող կառքի օրորմանը, առայժմ շուղելով մտածել ստեղծված դժնդակ դրության մասին: Ոչ, նա չէր տանջվում: Նա վախենում էր մտածել, ահա բոլորը, վախենում էր գիտակցել, հասկանալ, խորհրդածել, բնդհակառակը, անթափանցելի խորքերում այն խորհրդավոր հոգեվիճակի, որ մեր մեջ ստեղծվում է մեր հակումների ու մեր կամքի անդադրում պայքարի ազդեցության տուկ, նա, ինչպես թվում էր նրան, մի զարմանալի հանգստություն էր զգում:

Այդ տարօրինակ անխոռվությունից մոտ կես ժամ անց

Հասկանալով, վերջապես, որ յանկացած հուսահատությունը չի գալիս, նաև իր վրայից թոթափեց այդ թմբիրը և շշնչաց. «Զարմանալի է, ես գրեթե վշտացած չեմ»:

Այն ժամանակ նա սկսեց մեղադրել իրեն։ Նրա մեջ յարկություն բարձրացավ սեփական կուրության ու թուլության դեմ։ Ինչպես նա չէր նախատեսել այդ։ Ինչպես չէր հասկացել, որ այդ պայքարի ժամը պետք է գար, և այդ մարդն իրեն այնքան դուր կդա, որ կարող է իրեն բարոյականցության հասցնել, և որ կրքի շունչը ամենամաքուր սրտերում երրեմն նման է բամու թափին, որ ավլում-սահնում է կամքը։

Բայց երբ կոմսուհին խստորեն մեղադրեց ու հանգիմանեց իրեն, սարսափով մտածեց, թե ինչ է լինելու այսուհետեւ։

Իր առաջին ծրագիրը եղավ խվել հարաբերությունները նկարչի հետ և այլևս շտեսնել նրան։

Բայց հաղիվ էր այս որոշումն ընդունել, երբ խսկույն բազմաթիվ առարկություններ մեջանել ելան այդ որոշման դեմ։

Ինչպես պիտի բացատրեր այդ խզումը ի՞նչ պիտի ասեր իր ամուսնուն։ Մի՞թե չէին սկսի փսփսալ, կուահելով ճշմարտությունը, մի՞թե հետո դա չէր տարածվի ամենուրեք։

Ավելի լավ չէ՞ր, պատշաճությունները պահելու համար, ուիվիե թերտենի առջև անտարբերության ու մոռացության երկերեսանի կոմիղիա խաղալ, նրան ցույց տալ, որ ինքը իր չիշողությունից ու կյանքից ջնշել է այդ ըռպեն։

Բայց կոմսուհին կկարողանա՞ր այդ անել։ Քաջություն կունենա՞ր ձեւացնելու, որ ինքը իրեկ թե ոչինչ չիշում և տսելու «ի՞նչ եք ուզում ինձանից», զայրագին զարմանքով նայելով այն տղամարդուն, որի հանկարծական ու բիրտ պոռթկումը ինքը, հիրավի, բաժանել էր։

Կոմսուհին երկար խորհեց և այնուամենայնիվ հանգեց այդ նույն որոշմանը, քանի որ ուրիշ ոչ մի լուծում հնարավոր չէր թվում իրեն։

Նա վազր առավոտ համարձակությամբ կգնար Օլիվիեի մոտ և անմիջապես նրան կհասկացներ, թե ինքը ինչ է ուզում ու պահանջում նրանից։ Անհրաժեշտ էր, որ ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ, ոչ մի նայվածք ամեննին չհիշեցներ նրան այդ ամոթալի դեպքը։

Օլիվիեն նույնպես կտանջվեր, բայց հետո, իբրև պարկեշտ ու բարեկիրթ մարդ, կհամաձայներ, իհարկե, կոմսուհու հետ և ապագայում նրա հետ կլիներ այնպես, ինչպես եղել էր մինչև հիմա:

Հենց որ ընդունեց այդ նոր որոշումը, կոմսուհին կառապանին տվեց իր հասցեն և խորապես վհատ վերադարձակ տուն, ուզելով միայն պառկել, ոչ ոքի շտեսնել, քնել, մոռանալ: Փակվելով իր սենյակում, նա մինչև ճաշի ժամը ընդարձացած ընկողմանեց բազմոցի վրա, շուզելով այլևս իրեն զրագիցնել վառեղներով հղի այդ մտքով:

Ճիշտ ժամին նա ցած իջավ, իր վրա զարմանալով, որ այնպես հանգիստ է և սովորական դեմքով սպասում է ամուսնուն: Ամսւսինը երեաց, աղջկան գրկած բազուկների մեջ, կոմսուհին սեղմեց ամուսնու ձեռքը և համբուրեց երեխային տանց ներքին տափնապն զդացնելու:

Պարոն գր Դիլաւան կնոշը հարցրեց, թե ինչ էր անում: Կինը անտարբերությամբ պատասխանեց, որ նկարվում էր ինչպես բոլոր այդ օրերին:

- Եվ նկարը լա՞վ է զուրս գալիս,— հարցրեց կոմսը:
- Շատ հաջող:

Կոմսը, որ ճաշի ժամանակ սիրում էր իր գործերի մասին խոսել, սկսեց պատմել պալատի նիստերի և սննդամթերքների կեղծման վերաբերյալ օրինագծի շուրջը վիճաբանությունների մասին:

Այս շաղակրատանքը, որ կոմսուհին սովորաբար հեշտ էր տանում, նրան գրգռեց, և նա սկսեց ուշադիր նայել այդ գուհիկ ու ճամարտակ մարդուն, որը հետաքրքրվում էր նման շաներով, բայց կոմսուհին ժպիտով էր լսում, սիրալիր, նույն սիսկ սովորականից ավելի սիրալիր պատասխանում և շատ զիջողամտությամբ վերաբերվում նրա տափակաբանություններին: Նայելով նրան՝ կոմսուհին մտածում էր. «Ես խարեցի նրան: Նա իմ ամուսինն է, և ես խաբեցի նրան: Միթե դու տարօրինակ չես: Ել ոչինչ չի կարող խանգարել դրան, ոչինչ չէ կարող չնշել այդ: Ես փակեցի աշքերս: Մի քանի վայրկյանում ես անձնատուր եղամի տղամարդու համբուրներին, և ես հիմա այլևս պարկեշտ

Կին շեմ և կյանքում մի քանի վայրկյան, մի քանի անջնջելի վայրկյան ինձ հասցրին այս՝ անդարմանելի արարքին, այնքան ծանր, այնքան կարճատե, կնոջ համար ամենաամոթալի արարքին... և ես ամենեին հուահատություն շեմ զգում: Եթե այդ երեկի ինձ առեին, ես չէի հավատա: Եթե ինձ պընդեին, ես իսկույն կմտածեի ահավոր խղճի խայթերի մասին, որոնք այսօր կտանջեին ինձ, իսկ ես խղճի խայթեր շեմ զգում, զբեթե շեմ զգում»:

Պարոն դը Գիլոուան ճաշից հետո դուրս եկավ տնից, ինչպես անում էր զրեթե ամեն օր:

Այն ժամանակ տիկին դը Գիլոուան աղջկան առավ ծընկների վրա և, համրուրելով նրան, արտասվեց. Նա արտասվեց անկեղծ արտասուրով, խղճի արտասուրով, բայց ոչ սրտի արտասուրով:

Գիշերը նա ամենեին շբնեց:

Ննջասենյակի մթության մեջ նա ավելի սաստիկ տանջվեց այն կարծեցյալ վտանգներից, որ նկարչի վարքը կարող էր ստեղծել իր համար. Նա վախենում էր վաղվա հանդիպման և նրա հետ երես առ երես խոսելու մտքից:

Կանուխ լին կենալով, տիկին դը Գիլոուան ամբողջ առավոտյան ընկողմանեց բաղկաթոոի վրա, փորձելով գուշակել, թե ինքը ինչից պետք է զգուշանա, ինչպես պետք է պատասխանի, ջանալով նախապատրաստվել ամեն տևսակ անակնկալների:

Նա տնից վաղ դուրս եկավ, որպեսզի դեռ մտախոհի ճանապարհին:

Օլիվիեն ամենեին շեր սպասում կոմսուհուն և երեկվանից իրեն հարց էր տալիս, թե ինքը հիմա ինչպես պետք է վարվեր նրա հետ:

Կոմսուհու մեկնումից հետո, այդ փախուստից հետո, որին Օլիվիեն շեր համարձակվել ընդդիմանալ, վերջինս մնացել էր մենակ, և դեռ երկար ժամանակ նրա ականջների մեջ հընշում էին կոմսուհու քայլերի ձայնը, շրջազգեստի շրջունը և ուժգնորեն փակված դռան թիսկոցը:

Օլիվիեն ստքի վրա էր, համակված ջերմ, խոր, եռուն ցընծությամբ: Նա տիրել էր կոմսուհուն: Կոմսուհին պատկանում

Եր իրեն։ Մի՞թե դա հնարավոր էր։ Այդ անսպասելի հաղթա-նակից հետո Օլիվիեն հիմա վայելում էր այն և, որպեսզի տվելի լավ ըմբռշխնի այդ հաղթանակը, նստեց, գրեթե պառկեց բաղմոցի վրա, որի վրա տիրել էր կոմսուհուն։

Օլիվիեն այդպիս երկար մնաց, կլանված այն մտքով, որ կոմսուհու իր սիրուհին է, որ իրենց միջև, իր և այդ կնոջ միջե, որին ինքն այնքան տենչացել էր, մի քանի րոպեում սուզգեցել էր խորհրդավոր մի կապ, որ անտեսանելիորեն միացնում է երկու էակների։ Տակավին դողացող իր մարմնի մեջ ևա պահում էր սուր հիշողությունն այն թուցիկ վայրելանի, երբ նրանց շրթները հանդիպել էին, նրանց մարմինները միացել, միախառնվել էին և միասին թրթուում էին կյանքի մեջ թրթիուվ։

Այդ մտքով սնվելու համար Օլիվիեն այդ երեկո դուրս շեկավ տնից և կանուխ պառկեց, երջանկությունից համակ թրթուուն։

Առավոտյան, հաղիվ դարթնած, նա իրեն հարց տվեց. «Ի՞նչ պետք է անեմ հիմա»։ Ինչ-որ դերասանուհու կամ թեթևարոր կնոջ նա կարող էր ծաղիկներ կամ գոհարներ ուղարկել, բայց այս նոր կացության առջև նա տանջվում էր վարանումից։

Անշոշտ պետք է նրան գրեր. . . բայց ի՞նչ։ Օլիվիեն քսան նոմակ սեագրեց, խազեց, ջնջեց, նորից գրեց, բայց դրանք բոլորը վիրավորական, գարշելի, ծիծաղելի թվացին իրեն։

Նա կկամենար նորբ խոսքերով արտահայտել իր հոգու երտիսագիտությունը, խոլական սիրո սլացքները, անհուն նոյիրվածության խոստումները. բայց այդ կրքոտ դգացումները իրենց բոլոր երանգներով հաղորդելու համար նա ոշինչ շէր գտնում, բացի մաշված խոսքերից, տափակ, կոպիտ ու տղաւական արտահայտություններից։

Այն ժամանակ Օլիվիեն հրաժարվեց գրելու մտքից և որոշեց զնալ կոմսուհուն տեսնելու, հենց որ անցներ նկարելու ձամանակը. նա վստահ էր, որ կոմսուհին շէր դա։

Փակվելով արվեստանոցում, Օլիվիեն ոգեշնչվեց նկարի առցի. նրա շրթներն այրվում էին. նա ուղում էր համբուրել կտավը, որի վրա ինչ-որ բան էր մնացել կոմսուհուց. և նա

ամեն բռպէ պատուհանից նայում էր փողոցի վրա։ Նրա սիր-  
տը բարախում էր հեռվից երկացող կանացի շրջազգեստնե-  
րից։ Քսահ անդամ Օլիվիեին թվաց, որ դա նա է, իսկ երբ  
կինը անցնում-դնում էր, նա մի բոպէ նստում էր, հուսախա-  
բությունից ընկճված։

Հանկարծ Օլիվիեն սեսավ կոմսուհուն։ Նա շայխատաց իր  
աշքերին, բոնեց երկդիտակը, ճանաշեց նրան, և, սաստիկ  
հուզումով համակված, նստեց ու սպասեց։

Երբ կոմսուհին ներս մտավ, Օլիվիեն նետվեց նրա ծընկ-  
ներին և ուզեց լրանել նրա ձեռքերը, բայց կոմսուհին արագ  
ետ քաշեց գրանք։ Օլիվիեն կոմսուհու ոտների մոտ էր մնում  
և վշտահար նայում նրան, իսկ կոմսուհին բարձրամտորեն  
ասաց։

— Ի՞նչ եք անում, սլարոն։ Ես չեմ հասկանում այդ վար-  
քագիծը։

Օլիվիեն Ռոթովեց։

— Օ, սիկին, աղերսում եմ ձեզ...

Կոմսուհին խստորեն ընդմիջեց։

— Վեր կացեք, դուք ծիծաղելի եք։

Օլիվիեն, շվարած, վեր կացավ ու շշնչաց։

— Ի՞նչ է սլատահել ձեզ։ Ինձ հետ այդպես մի վերաբեր-  
գեք, ես ձեզ սիրում եմ...

Այն ժամանակ կոմսուհին մի քանի արագ ու չոր խոսքե-  
րով նրան հայտնեց իր կամքը։

— Զիմ հասկանում, թե ինչ եք ուզում առել։ Ինձ մի խո-  
սեք ձեր սիրո մասին, թե ոչ ես կզնամ այս արվեստանոցից  
և երբեք չեմ վերադառնա։ Եթե դուք թեկուզ մի անդամ մո-  
ռանար, որ միայն այդ պայմանով ես կգանվեմ այստեղ։ Դուք  
ինձ այլևս չեք տեսնի։

Օլիվիեն նայում էր նրան, հուսաբեկված այդ խստությու-  
նից, որ չէր նախատեսում։ ապա նա հասկացավ ու շշնչաց։

— Կհնաղանդիկն, տիկին։

Կոմսուհին պատասխանեց։

— Շատ լավ, ես այդ սպասում էի ձեզանից։ Հիմա աշ-  
խատեցեք. դուք շատ ձգձգեցիք ձեր գործը։

Օլիվիեն Բերտենը ներկապնակն առավ ու սկսեց նկարել.

րայց նրա ձեռքը գողում էր, մթագնած աշքերը ոչինչ չէին սկսնում, նա ուզում էր արտասվել, այնքան սիրու կոտըրվում էր:

Նա փորձեց խոսել կոմսուհու հետ, կոմսուհին հագիվ էր պատասխանում: Երբ Օլիվիեն փորձեց մի հաճոյախոսություն տնել նրա գեմքի գույնի տոմիթով, կոմսուհին նրա խոսքը կըտրաց այնպիսի խիստ տոնով, որ Օլիվիեն հանկարծ լցվեց այն բարկությամբ, որը սիրահարվածների մոտ սերը վերածում է ատելության: Օլիվիեն ամբողջ հոգով ու մարմնով նյարդափին ուժեղ ցնցում զգաց և խկույն, առանց անցումների, ատենց կոմսուհուն: Այս, այս, այդպես է կինը ընդհանրապես: Նա նման էր ուրիշ կանանց: Ինչո՞ւ չէ: Նա կեղծ էր, փոփոխամիտ, փոքրոգի, ինչպես բոլոր կանայք: Նա իրեն գրավել, հրապուրել էր աղիճի խորամանկություններով, ջանալով իրեն զգվացնել և հետո ոչինչ շտալ, գրգռել և հետո մերժել, իր նկատմամբ գործադրելով ձեւերը ստոր պշրուհիների, որոնք առես միշտ պատրաստ են մերկանալու, քանի նրանց պատճառով փողոցային շան նման դարձած տղամարդը չի սկսել ներլ կըքից:

Վերջ ի վերջո ամելի վատ կոմսուհու համար. Օլիվիեն տիրել էր նրան, գրավել էր նրան: Կոմսուհին կարող է իր մարմինը սպանգով մաքրել և իրեն ժպրհությամբ պատասխանել: Նա ոչինչ չի ջնջի, իսկ ինքը կմոռանա նրան: Արգարե Օլիվիեն մեծ հիմարություն արած կլիներ, եթե կապվեր այնպիսի մի տարիուհու հետ, որը սիրուն կնոշ քմահաճ ատամներով կիրծեր իր արվեստագետի կյանքը:

Օլիվիեն ուզում էր շվացնել, ինչպես անում էր իր բնակիպերի առջե, բայց զգալով, որ իր ջղագրգռությունն աճում է և վախենալով, որ որևէ հիմարություն կանի, նա կարձեց նկորելու պահը՝ մի ժամադրություն ունենալու պատրվակով: Հրաժետ տալով միմյանց, նրանք անշուշտ իրենց զգացիկ ժիմյանցից ավելի հեռու, քան այն օրը, երբ նրանք առաջին անգամ հանդիպեցին դքսուհի դք Մորտմենի մոտ:

Հենց որ կոմսուհին մեկնեց, Օլիվիեն գլխարկն ու վերաբերն առավ ու գուրս եկավ: Յուրա արեր թեթևակի մշուշով

պատաժ կապույտ երկնքից քաղաքի վրա նետել էր դժգույն, խաբուսիկ ու տխուր ցոլքեր:

Օլիվիեն որոշ ժամանակ քայլեց արագ ու զրգոված քայլ՝ վածքով, անցորդներին հրելով՝ շշեղիելու համար ուղղությունից, և կոմսուհու դեմ իր կատաղությունը հետզհետե վերածվեց կոկծանքի ու ափսոսանքի: Յուրովի կրկնելով բոլոր մեղադրանքները կոմսուհու հասցեին, Օլիվիեն՝ փողոցով անցնող որոշ կանանց նայելով՝ հիշեց, թե ինչպես գեղեցիկ ու հրապուրիչ էր նա: Շատ տղամարդկանց նման, որոնք երբեք չեն խստառովանում այդ, Օլիվիեն միշտ սպասում էր անհնարին հանդիպում, հազվապյուտ, բացառիկ, պոետական ու կրօռտ սեր, որի մասին երազը սավառնում է մեր սրտերի վրա: Մի՞թե նա չէր մոտեցել գանելու այդ սերը: Մի՞թե կոմսուհին այն կինը չէր, որ կարող էր իրեն տալ զրեթե անհնարին այդ երջանկությունը: Հապա ինչո՞ւ ոչ մի բան չի իրականանում: Հապա ինչո՞ւ մարդ չի կարողանում բռնել այն, ինչին հետապնդում է, կամ բռնում է միայն խղճուկ փշրանքներ, որոնք ավելի տանջալի են դարձնում հուսախաբությունների հետապնդումը:

Օլիվիեն արդեն բարկանում էր ոչ թե կոմսուհու դեմ, ոչ նոյն-ինքն կյանքի դեմ: Հիմա, որ խորհրդածում էր, էլ ինչո՞ւ բարկանար կոմսուհու դեմ: Փաստորեն ինչի՞ մեջ պետք է մեղադրեր նրան, այն բանի մեջ, որ իր հետ եղել էր սիրավի՞ր, բարի՞, քաղաքավարի՞: Մինչդեռ նա իրեն կարող էր մեղադրել, որ ինքը վարվել էր ինչպես մի անպիտան մարդ:

Օլիվիեն տուն վերադարձավ բոլորովին տխուր: Նա կուզենար ներողություն խնդրել կոմսուհուց, նրան նվիրաբերել իր կյանքը, նրան մոռանալ տալ պատահածը, և զանաց մի բան մտածել, որպեսզի կոմսուհուն հասկացնի, որ ինքը այսուհետեւ մինչև մահ հլությամբ կկատարի նրա բոլոր ցանկությունները:

Հետեւյալ օրը կոմսուհին եկավ աղջկա ուղեկցությամբ. նա ներկայացավ այնքան տխուր ժպիտով ու վշտահար դեմքով, որ այդ հեք կապույտ աշբերի մեջ, որոնք այնքան զվարթ էին մինչև հիմա, նկարիչը տեսավ այդ կանացի սրտի ամբողջ տվայտանքը, ամբողջ մորմոքումը, բոլոր խղճի խայթերը».

Կարիկությամբ համակված և նրան ամեն ինչ մոռանալ տարու ցոնկությամբ տոգորված, Օլիվիեն սկսեց նրա հետ վերաբերի փափկանկատ վերապահությամբ և շատ նուրբ պատրաստակամությամբ: Կոմսուհին դրան պատասխանում էր հեղանիթյամբ, բարությամբ, տանջահար կնոջ խոնջաբեկ ու հուսարեկ արտահայտությամբ:

Եվ Օլիվիեն նրան նայելով և նորից համակվելով նրան սիրելու և սիրվելու խոլ ցանկությամբ, ինքն իրեն հարցնում էր թե ինչպե՞ս նա չէր սրդողել ինչպե՞ս կարող էր նորից գալ իր մատ, իրեն լսել, իրեն սլատասխանել՝ իրենց միջև տեղի ունեցածի դառն հիշողության տակ:

Բայց եթե կոմսուհին կարող էր նորից տեսնվել Օլիվիեն հետ, լսել նրա ձայնը, եթե Օլիվիեի ներկայությամբ կարող էր հաշարի այն միակ մտքի հետ, որ, անկասկած, չի թողնի նրան, նշանակում է այդ միտքը նրան անհանդուրժելի ու ատելի չէր դարձել: Եթե կինը ատում է իրեն բոնությամբ տիրած սովամարդուն, նա չի կարող այդ տղամարդու ասջև գտնվելք առանց իր ատելությունը պոռթկալու: Բայց նա չի կարող և անտարբեր մնալ այդ տղամարդու նկատմամբ: Նա, իհարկե, կամ կատի այդ տղամարդուն, կամ կների: Եթե նա ներում է, ապա նա շատ հեռու չէ սիրելուց:

Դանդաղորեն նկարելով հանգերձ, Օլիվիեն մտածում ու բնտրում էր մանր, ստույգ, հստակ ու համոզիչ փաստարկ: Ներ նա իրեն պայծառատես, ուժեղ և այսուհետեւ դրության տեր էր զգում:

Նա միայն պետք է լիներ զգույշ, համբերատար, անձնվեր, և շուտով կոմսուհին նորից կպատկաներ իրեն:

Նա կարողացավ սպասել: Կոմսուհուն հանգստացնելու ու նորից սիրելու համար Օլիվիեն իր հերթին դիմեց խորամանկությունների, սիրային զգացումները քողարկեց առերևույթ զգացան տակ, նրա նկատմամբ ցուցաբերեց վարանոտ ուշագրություն և ընդունեց անտարբեր տեսք: Եթե Օլիվիեն վստահ էր մստալուտ երջանկության նկատմամբ, ի՞նչ փույթ՝ այդ երջանկությունը մի քիչ վաղ կհասնե՞ր, թե ուշի Օլիվիեն նույնիսկ արտասովոր ու նուրբ բավականություն էր զգում լշտառկելու, նրան շնետամտելու մեջ. և լուրովի ասում

էր. «Նա վախենում է», տեսնելով որ նա միշտ գալիս է երեխայի հետ։

Օլիվիեն զգում էր, որ իրենց միշկ դանդաղորեն տեղի է ունենում մերձեցում, որ կոմսուհու հայացքների մեջ երևում է անսովոր, լարված, տանջալիորեն հեզ ինչ-որ բան, պայքարող հոգու, թուլացող կամքի այն կոչը, որ կարծես ասում է. «Բոնի տիրացիր ինձ»։

Որոշ ժամանակ անց, Օլիվիեի զսպվածությունից հանգըստացած, կոմսուհին նորից սկսեց մենակ գալ։ Այն ժամանակ Օլիվիեն սկսեց նրա հետ վերաբերվել իրրե բարեկամի, իրրե ընկերոց, և նրան, ինչպես եղբոր, պատմեց իր կյանքի, իր ծրագրերի, իր արվեստի մասին։

Վերաբերմունքի այդ պարզությամբ հմայված, կոմսուհին սիրով ստանձնեց խորհրդականի գերը, շոյված այն մըտքից, որ Օլիվիեն իրեն առանձնացնում էր ուրիշ կանացից և համոզված, որ նրա տաղանդը շահելու էր հոգեկան այս մերձակցության մեջ։ Բայց Օլիվիեն շարունակ կոմսուհու հետ խորհրդակցելով և նրա նկատմամբ ակնածանք ցուցաբերելով, բնականաբար նրան զրդեց խորհրդականուհու գերից անցնել ներշնչող քրմուհու գերին։ Այսպիսով կոմսուհին ուրախացավ, որ իր ազդեցությունը տարածվում էր մեծ մարդու վրա և զրեթե համաձայնեց, որ նա, իրրե արվեստագետ, սիրեր իրեն, եթե ինքն էր ներշնչում նրա ստեղծագործությունը։

Մի օր երեկոյան, նշանափոր նկարիչների սիրուհիների մասին երկար զրուցելուց հետո, կոմսուհին աննկատելիորեն գտնվեց Օլիվիեի բաղուկների մեջ։ Այս անգամ կոմսուհին շփոքանց դուրս պրծնել և փոխադարձեց նրա համբույրները։

Կոմսուհին այլևս խղճի խայթ չէր զգում, այլ զգում էր անկախ շիմթ զգացում և խուսափելու համար բանականության մեջադրանքներից, հավատաց ինչ-որ ճակատագրականության։ Կուսական սրտով ու դատարկ հոգով ձգվելով դեպի Օլիվիեն և աստիճանաբար ենթարկվնելով նրա փայփայանքներին, կոմսուհին տակավ առ տակավ կապվեց նրան, ինչպես կապվում էն առաջին անգամ սիրող նրբաղզաց կանայք։

Իսկ Օլիվիեն զգայական ու պոետական սիրո սուր նոսկա ունեցավ։ Երբեմն նրան թվում էր, որ ինքը երկինք է թուել և,

Ճեռքերը պարզելով, բազուկների մեջ սեղմում էր թևավոր ու փառավոր երազը, որ մշտակես սավառնում է մեր հույսերի վրա:

Նա ավարտել էր կոմսուհու նկարը, անտարակույս լավագույնը իր բոլոր նկարածներից, որովհետեւ կարողացել էր սեսնել ու վերարտադրել այն անարտահայտելին, որ նկարիչը գրեթե երբեք ի վիճակի չէ երևան հանել ցոլացումը, խորհուրդը, հոգու այն պատկերը, որ գրեթե անորսալի է դեմքի վրա:

Անցան ամիսներ, ապա տարիներ, որոնք հազիվ թուլացրին այն կատը, որ կոմսուհի դը Գիլոռուային ու նկարիշ Օլիվիե Բերտենին միացնում էր միմյանց: Նկարչի մոտ արդեն չկար սեղբնական թափը, այլ մնացել էր միայն հանդարտ ու խոր մի զգացում, մի տեսակ սիրային բարեկամություն, որին նա սովորել էր:

Կոմսուհու մոտ, ընդհակառակը, անընդհատ աճում էր կըրպոտ, համառ խանդաղատանքը, ինչպեսին լինում է որոշ կանանց մոտ, որոնք ամբողջովին ու ընդմիշտ նվիրվում են մի տղամարդու: Այնպես ազնիվ և ուղղամիտ արտամուսնության մեջ, ինչպես նրանք կարող էին լինել ամուսնության մեջ, այդ կանաչք իրենց նվիրում են միակ մի սիրո, որից ոչինչ նրանց չի հեռացնի: Նրանք ոչ միայն սիրում են իրենց տարիածուին, այլև ուզո՞ւմ են սիրել նրան, իրենց աշքերը միշտ պահում են նրա վրա, և իրենց սիրոն այնքան տոգորվում է նրանով, որ կողմնակի ոչինչ չի կարող մտնել այնտեղ: Նրանք իրենց կյանքը կապում են այնպես վճռականությամբ, ինչպես իր ձեռքերը կապում է, պատրաստվելով կամուրջից ջուրը նետվել, լողալ իմացող մարդը, որ որոշել է խեղղվել:

Սակայն այն պահից, երբ կոմսուհին իրեն ամբողջովին նվիրել էր Օլիվիե Բերտենին, նա սկսեց կասկածել նկարչի հաստատակամության վրա: Զէ որ նկարչին ոչինչ չէր զըսպում, բացի նրա տղամարդու կամքից, քմահաճույքից, վաղանցուկ սիրուց հանգեց մի կնոջ, որին նա հանդիպել էր պատրաբար, ինչպես արդեն հանդիպել էր այնքան ուրիշ կանանց: Կոմսուհին զգում էր, որ Օլիվիեն ապրելով առանց պարտականությունների, առանց սովորությունների և առանց

կարգու կանոնի, ինչպես բոլոր տղամարդիկ, այնքան քիչ է կապված և այնքան շատ է ենթակա փորձությունների: Օլիվիեն գեղեցիկ, նշանավոր, ուշագրավ տղամարդ էր. նրա արագ զարթնող ցանկություններին մատշելի էին բոլոր աշխարհիկ կանայք, որոնց ողջախոհությունը այնքան փխրուն է, և բոլոր կիսաշխարհիկ կամ կովկսային կանայք, որոնք իրենց շնորհները շռայլում են այնպիսի մարդկանց, ինչպիսին նաև: Այդպիսի կանանցից մեկը մի երեկո, ընթրիքից հետո, կառող էր նրան հետևելու հրապուրել, տիրելու պահել:

Ուստի կոմսուհին ապրում էր Օլիվիեին կորցնելու մշտական վախի մեջ, ուշադիր հետեւում էր նրա արարքներին ու տրամադրություններին, հուզվելով մի բառից, անհանգստություն զգալով, հենց որ նա հիանում էր որևէ կնոջով, գովում էր ինչ-որ գեմքի հրապույրը կամ մարմնի բարեձեռությունը: Այն բոլորը, ինչ կոմսուհին շգիտեր Օլիվիեի կյանքի մասին, նրան զողացնում էր, իսկ այն բոլորը, ինչ զիտեր, սարսափեցնում էր: Իրենց յուրաքանչյուր հանդիպման ժամանակ կոմսուհին զգուշությամբ ու հնարամառությամբ դանական հարցեր էր տալիս Օլիվիեին, որպեսզի նրա կարծիքներն իմանար այն մարդկանց մասին, որոնց հանդիպել էր, այն տների մասին, ուր ճաշել էր, ամենաաննշան տպավորությունները, որ կազմել էր: Հենց որ կոմսուհին կասկածում էր որևէ մեկի հնարավոր ազգեցության մասին, զարմանալի վարպետությամբ ու բազմաթիվ հնարքներով պայքարում էր դրա դեմ:

Օ՛, հաճախ նա նախազգում էր այն թեթև, կարճատև խարդավանքները, որոնք ժամանակ առ ժամանակ սկսվում են ու տևում մեկ կամ երկու շաբաթ յուրաքանչյուր երեկոի արվեստագետի կյանքում:

Նախքան Օլիվիեի մեջ մի նոր ցանկություն զարթնելը, կոմսուհին անգիտակցաբար զգում էր վտանգը այն տոնական արտահայտության շնորհիվ, որ երեսում է սիրո երազով գրգռությած տղամարդու աշքերի մեջ կամ դեմքին:

Այն ժամանակ կոմսուհին սկսում էր տանջվել, և նրա քունը հաճախ խանգարվում էր մտալլկող կասկածներով: Օլիվիեին հանկարծակի բերելու համար, առանց նախազդուշացման գնում էր նրա մոտ, միամիտ թվացող հարցեր էր տա-

Ժառ բնաւոմ էր նրա սիրտը, լսում էր նրա միտքը, ինչպես  
բնաւոմ ու լսում էն հիվանդին՝ թաքնված հիվանդությունը ճա-  
կացելու համար:

Եվ ձեզ որ մենակ էր մնում, սկսում էր արտասվել, վըս-  
տան լինելով, որ այս անգամ Օլիվիեին կիլեն իր ձեռքից,  
կողականակ այդ սերը, որին այնքան պինդ էր կպել, որովհետեւ  
առևտուցի հոժարությամբ նրա մեջ էր դրել իր խանգաղա-  
տութիւն ամրապնդ ուժը, իր ամբողջ հույսերն ու ամբողջ երազ-  
եկրը:

Ասկայն, երբ այդ կարճատես հեռացումներից հետո, Օլի-  
վիեն սորից էր վերադառնում նրա մոտ, երբ նա նորից էր  
վերցնում, նորից էր տիրում Օլիվիեին, ինչպես կորսված ու  
զանգած մի բան, այնպիսի լուս ու խոր երջանկություն էր  
զգում, որ Երրեմն, Եկեղեցու մոտով անցնելիս, ներս էր նետ-  
վում տաճուն շնորհակալություն հայտնելու համար:

Եսլոր կանանցից ավելի Օլիվիեին դուր գալու և նրանցից  
երան որանելու մշտական մտահոգությունը կոմսուհու կյանքը  
մերածել էր անդադրում պայքարի, նա անընդհատ պայքա-  
րում էր Օլիվիեի համար իր նաղանքով, պշրանքով, գեղեց-  
կությունը, վայելչությամբ: Նա ուզում էր, որ ամեն տեղ, ուր  
որ Ոլիվիեն կարող էր լսել իր մասին, գովեին իր հրապույրը,  
իր առշակը, իր միտքը, իր արգուլարդը: Օլիվիեի համար նա  
ուզում էր զուր գալ ուրիշներին և հրապուլել նրանց, որպես-  
զի Ոլիվիեն իրենով հպարտանար ու խանդիր: Եվ ամեն ան-  
գում, երբ զուշակում էր Օլիվիեի խանդը, նրան ստիպելով մի  
քիչ տառնցիւ, նրան ընձեռում էր մի հաղթանակ, որ գրգռելով  
երան սնումիտությունը, կենդանացնում էր նրա ոերը:

Առաջ հասկանալով, որ տղամարդը միշտ կարող է հասա-  
րակության մեջ հանդիպել այնպիսի կնոջ, որի ֆիզիկական  
հմայքը ափելի ուժեղ է՝ նորության սլատճառով, կոմսու-  
հին զիմեց ուրիշ միջոցների: Չողոքորթեց ու երես տվեց Օլի-  
վիեին:

Նու Ոլիվիեին մշտապես գովասանքներ շռայլեց, շողոմու-  
թյունը որորեց ու հարգանքով շրջապատեց, որպեսզի Օլիվիեն  
ուրիշ ամեն առաջ մի քիչ սառը և նույնիսկ թերի բարեկամու-  
թյուն ու բնույնելություն գտնի, որպեսզի նա վերջ ի վերջո

նկատի, որ եթե ուրիշներ սիրում են իրեն, ապա ոչ մի ուրիշ կին իրեն չի հասկանում այնպես, ինչպես ինքը:

Իր տունը, իր երկու հյուրասինյակները, ուր Օլիվիեն շատ հաճախ էր երևում, կոմսուհին վերածեց մի այնպիսի անկյան, ուր նկարչին քաշում էր թե՛ իր արվեստագետի հպարտությունը և թե՛ տղամարդու սիրոց, Փարիզի մի այնպիսի անկյան, ուր նկարիչը հաճույքով էր գալիս, որովհետև այդտեղ նա կարող էր միաժամանակ գոհացնել իր բոլոր ցանկությունները:

Կոմսուհին ոչ միայն ուսումնասիրեց Օլիվիեի ճաշակները, որպեսզի, գոհացնելով դրանք իր տանը, նրա մոտ ստեղծեր անփոխարինելի բավականության զգացում, այլև կարողացավ նրա մեջ զարթեցնել նոր ճաշակներ, ամեն տեսակ նյութական ու հոգեկան հաճույքների հակումներ. խնամատածության, գորովանքի, պաշտումի, քծնանքի սովորություններ: Նա շանաց Օլիվիեի տեսողությունը գոհացնել վայելչագեղությամբ, հոտառությունը՝ անուշահոտություններով, լսողությունը՝ հաճոյախոսություններով, ճաշակելիքը՝ համադամներով:

Բայց երբ կոմսուհին այդ եսասեր ու շփացած ամուրիի հոգու և մարմնի մեջ բազմաթիվ մանր բոնակալական պահանջներ դրեց և երբ լավ համողվեց, որ ոչ մի սիրուհի չի դառնա իր նման հոգածուն հետեւելու ու սիրաշահելու նկարչին, որպեսզի նրան կաշկանդի կյանքի ամեն տեսակ մանր հաճույքներով, ինքը հանկարծ վախեցավ, տեսնելով, որ նա զվել է սեփական տնից, որ նա շարօւնակ գանգատվում է մենակ տալրելուց և, իր մոտ կարողանալով գալ միայն հասարակության պարտադրած սահմանափակումներով, փորձում է միայնության վիշտը ամոքել ակումբում և ուրիշ տեղերում. կոմսուհին վախենում էր, որ նա ամուսնության մասին կմտածեր:

Լինում էին օրեր, երբ կոմսուհին այնպես էր մտատանջվում այս բոլոր անդո՞ներից, որ պառավություն էր երազում, որպեսզի վերջ դանի այդ տագնապը և հանգստանա սառած ու հանդարտած գորովանքի մեջ:

Տարիներն անցան, բայց նրանք շբաժանվեցին: Կոմսուհու կոած շղթան ամուր էր, նա վերասարգում էր մաշված օղակ-

ները, Բայց մշտապես մտահոգ՝ նա հետեւում էր նկարչի սրբա-  
տին, ինչպես հետեւում են կառքերով խճողված փողոցով անց-  
նող երեխային, և զեռ մինչև հիմա ամեն օր վախենում էր մի  
անակնկալ դժբախտությունից, որի սպառնալիքը միշտ կախ-  
ված է մեր վրա:

Կոմսը, շունենալով ոչ կասկած, ոչ էլ խանդ, բնական էր  
գտնում իր կնոջ մտերմությունը մի նշանակոր արվիստագե-  
տի հետ, որ ամենուրեք լնդունվում էր մեծ պատիվներով:  
Համախակի հանգիպելով, երկու տղամարդիկ վարժվեցին իրար  
և ի վերջո սիրեցին միմյանց:

## II

ԵՐԲ ՕԼԻՎԻԵ ԲԵՐՄԵՆԸ ուրբաթ երեկոյան եկավ իր բարե-  
կամուհու մոտ, ուր հրավիրված էր Աննետ դը Գիլոուայի վե-  
րապարձի առթիվ կազմակերպված ճաշկերուցին, նա Լյու-  
դովիկոս XV-ի ոճով կահավորված փոքր հյուրասենյակում ոչ  
ոքի շգտավ, բացի պարոն դը Մյուղադինից, որ հենց նոր էր  
եկել:

Դա մի խելացի ծերունի էր, որ կարող էր գուցե տկանավոր  
մարդ դառնալ և հիմա մխիթարանք չէր գտնում այդպիսին  
շգտակալու համար:

Կայսերական թանգարանների նախկին պահապան, նա  
Հոնիրասկետության օրոք կարողացել էր ձեռք բերել գեղար-  
վիստների տեսչի պաշտոնը, որը նրան չէր խանդարել լինելու  
ելքուղական արխտոկրատիայի իշխանների, բոլոր իշխան-  
ների, իշխանութիների ու դքսութիների բարեկամը և ամեն  
տեսակ արվեստագետների երդվյալ հովանավորը: Օժտված  
աշխույժ մտքեվ, լնդունակ ամեն ինչ նախատեսելու, հեշտ  
իւսուկու ձիքով, որ նրան թույլ էր տալիս հաճելիորեն ասելու  
ամենասովորական բաները, մտքի ճկունությամբ, որի շնոր-  
հիվ նա իրեն շատ լավ էր զգում բոլոր միջավայրերում, և դի-  
վանագետի նուրբ զգացողությամբ, որ նրան հնարավորու-  
թյուն էր տալիս մարդկանց մասին դատելու առաջին հայաց-  
րից, նա ամբողջ օրեր, առավոտից մինչև երեկո հյուրասեն-

յակներում շռայլում էր իր լուսամիտ ու անօգուտ սղերճախոս-  
սովթյունը:

Ամեն ինչի վարպետ, նա ամեն ինչի մասին խոսում էր  
բանիմաց մարդու տեսքով և հանրամատչելի դարձնողի պար-  
զությամբ, որի համար նրան շատ էին գնահատում բարձր  
խավի կանայք; որոնց համար նա ծառայում էր իրրե շար-  
ժուն հանրագիտարան: Արդարեւ, նա շատ բան գիտեր, թեև  
անհրաժեշտ գրքերից բացի ոչինչ չէր կարդացել. բայց նա  
շատ լավ հարաբերությունների մեջ էր հինգ ակադեմիաների,  
բոլոր գիտունների, բոլոր գրադետների, բոլոր մասնա-  
գետների հետ, որոնց ունկնդրում էր խելամտորեն: Նու կարո-  
ղանում էր շուտով մոռանալ շատ սիեխնիկական կամ իր կա-  
պերի համար անօգուտ գիտելիքները, բայց շատ լավ էր հի-  
շում մյուսները, որոնք շարադրում էր այնքան մատչելիք  
պարզ ու գրավիչ կերպով, որ նրանք հեշտությամբ ընկալվում  
էին ինչպես ուսանելի հերիաթներ: Նա հիշեցնում էր գաղա-  
փարների մի պահեստ կամ ընդարձակ մի խանութ, ուր եր-  
բեք չեն գտնվում հաղթագյուտ իրեր, բայց ուր կա տարբեր  
բնույթ ու ծագում ունեցող էժանագին. իրերի հարուստ պա-  
շար, սկսած խոհանոցային պիտույքներից մինչև հետաքրքր-  
րաշարժ ֆիզիկայի կամ տնային վիրաբուժության հասարակ  
գործիքները:

Նկարիչները, որոնց հետ նա ողաշտոնի բերմամբ հարա-  
բերության մեջ էր շարունակ, ծիծաղում էին նրա վրա և  
վախենում էին նրանից: Այնուամենայնիվ, նա նրանց ծառա-  
յություններ էր մատուցում, նրանց օգնում էր նկարները վա-  
ճառելու, նրանց բարձր խավի հետ կապերի մեջ էր գնում,  
սիրում էր նրանց ծանոթացնել, հովանավորել, մարդկանց  
մեջ գուրս բերել. թվում էր, թե նա իրեն նվիրել էր բարձր  
խավի մարդկանց ու նկարիչների մերձեցման խորհրդավոր  
գործին, հպարտանում էր, որ մոտիկից ծանոթ էր նրանց  
հետ, և մտերմորեն հաճախում էր նրանց մոտ, որ միենույն  
օրը նախաճաշում էր Գալիսի իշխանի հետ՝ նրա Փարիզով  
անցնելու ժամանակ և ճաշում էր Պոլ Աղելմանսի, Օլիվիե  
Բերտենի ու Ամորի Մալդանի հետ:

Թերտենը, նրան զվարճալի գտնելով, սիրում էր և նրա

մասին ասում. «Դա ժյուլ Վեոնի հանրագիտարանն է՝ էշի կաշիով կազմված»:

Երկու տղամարդիկ միմյանց ձեռք սեղմեցին և սկսեցին խոսել քաղաքական կացության, պատերազմի լուրերի մասին։ Մյուզադիեն գտնում էր, որ այդ լուրերը տադնապ են առաջացնում, որի ստույգ պատճառները նա շատ լավ էր պարզում. Գերմանիան ամեն գնով ուզում է զախչախել Ֆրանսիան և շտապեցնել այն պահը, որին պարոն Բիսմարկը սպասում է արդեն տասնութ տարի<sup>\*</sup>. Մինչդեռ Օլիվիի Բերտենը անհերքելի փաստարկներով ապացուցում էր, որ այդ երկուդները երկակայական են, քանի որ Գերմանիան այնքան անմիտ չէ, որպեսպի իր Հաղթանակը վտանգի կասկածելի արկածախընդությամբ, իսկ կանցլերը<sup>\*\*</sup> այնքան անխոհեմ չէ, որպեսպի իր կյանքի վերջին օրերին միանգամից վտանգի տակ դնի իր գործն ու իր փառքը։

Սակայն պարոն գը Մյուզադիեն ըստ երևութիւն գիտեր բաներ, որ չէր ուզում ասելու Բացի զրանից նա այսօր ցերեկը տեսնվել էր մի մինհատրի հետ և հանդիպել մեծ իշխան Վլադիմիրին, որ երեկ երեկոյան Կաննից էր վերադարձել։

Նկարիչը ընդդիմարանում էր և հանդարտ հեգիանքով վիճարկում էր լավատեղյա՞կ մարդկանց իրազեկությունը։ Այս բոլոր լուրերի ազմուկների տակ բորսային սպեկուլյացիաներ էին պատրաստվում։ Եվ գուցե միայն պարոն Բիսմարկը ըրոշակի կարծիք ուներ այդ մասին։

Ներս մտավ պարոն դը Գիլսուան, սիրալիրությամբ սեղմեց նրանց ձեռքերը, քաղցրավուն խոսքերով ներողություն ինցրեց, որ մենակ է թողել նրանց։

— Իսկ դո՞ւք, սիրելի գեպուտատ, — Հարցրեց նկարիչը, — զուր ի՞նչ եք մտածում պատերազմի լուրերի մասին։

Պարոն դը Գիլսուան սկսեց ճառաբանելու իբրև պալատի անդամ նա այդ մասին գիտեր ավելի, քան որևէ մեկը, բայց

\* Տասնութ տարի 1870—71 թվականների պատերազմից հետու Մոռապասնի վեպի գործողությունը տեղի է ունենում 1888 թվականին։

\*\* Բիսմարկը, որ կոչվում էր «Գերմանական կայսրության մեծ կանցլեր»։

Համամիտ չէր իր կոլեգաների մեծամասնության կարժիքին։ Ոչ, նա չէր հավատում մոտալուտ բախման հավանականությանը, եթե միայն դա շառաջանար ֆրանսիական աղմկահուզության և այսպես կոչված լիգայի հայրենասերների<sup>\*</sup> պոստախոսության հետևանքով։ Եվ նա ընդհանուր գծերով տվեց պարոն Բիսմարկի պատկերը, Սեն-Սիմոնին<sup>\*\*</sup> արժանի մի պատկեր։ Այդ մարդուն չեն ուզում հասկանալ, որովհետև մտրղիկ միշտ ուրիշներին են վերագրում սեփական մտածելակերպը և կարծում են, որ նրանք պատրաստ են անելու այնպես, ինչպես իրենք կանչին նրանց տեղում։ Պարոն Բիսմարկը անազնիվ ու ստախոս դիվանագետ չէ, այլ շիտակ ու բիրտ է, միշտ ճշմարտությունն ասում է ի լուր ամենքին, միշտ ուղղակի հայտնում է իր դիտավորությունները։ «Ես խաղաղություն եմ ուզում» — ասում է նա։ Եվ դա ճիշտ է, նա խաղաղություն է ուզում, միայն խաղաղություն, և ահա տասնութ տարուց ի վեր ամեն ինչ հայտնապես ապացուցում է այդ, ամեն ինչ, մինչև իսկ նրա սպասարկինությունները, մինչև իսկ նրա դաշինքները, մինչև իսկ ժողովուրդների միավորումը<sup>\*\*\*</sup> ֆրանսիական տաքարյունության դեմ։ Եվ պարոն դը Գիլուսան խոր համոզման տոնով եզրակացրեց։

— Դա մեծ, շատ մեծ մտրդ է, որ հանգստություն է ուզում, բայց այդ ձեռք բերելու համար հավատում է միայն ծպառնալիքներին ու բոնի միջոցներին։ Վերջապես, պարոն ներ, նա մեծ բարբարոս է։

— Նոյատակը արդարացնում է միջոցները, — ասաց պարոն դը Մյուզադին։ — Ես սիրով ձեզ հետ կհամաձայնեմ, որ նա պաշտում է խաղաղությունը, եթե դուք էլ ինձ հետ հա-

\* Նկատի ունի 1882 թվականին հիմնված ֆրանսիացի «Հայրենասերների լիգան», որի նախագահն էր բանաստեղծ ու քաղաքական գործիչ Պոլ Դերուեդը (1846—1914)։ Լիգան համառորեն սեանշի գաղափարն էր քարոզում 1870—71 թվականների պատերազմում Ֆրանսիայի պարտությունից հետո։

\*\* Այստեղ նկատի ունի դուքս Լուի Ռուվրուս դը Սեն-Սիմոնին (1675—1755), հեղինակը նշանավոր «Հիշատակարանների» ուր նկարադրված է։ Իր ժամանակի ականավոր դեմքերն ու պալատական կյանքի դիպլոմատ։

\*\*\* Ակնարկում է 1882 թվականին կազմված եռյակ դաշինքը, որը միավորել էր Գերմանիային, Ավստրիային և Իտալիային։

մածայնեք, որ այդ ձեռք բերելու համար նա միշտ ձգտում է պատերազմ անել: Այնուամենայնիվ, դա անվիճելի և զարմանալի ճշմարտություն է: այս աշխարհում պատերազմ անում են միայն իւաղաղության համար:

Սառան ծանուցեց.

— Դքսուհի դը Մորտմենը:

Բացված դռան երկու փեղկերի մեջ երեաց բարձրահասակ ու գիրուկ մի կին, որ սենյակ մտավ տիրական տեսքով:

Գիլուռան շուալ մոտենալով համբուրեց նրա ձեռքը և չարցրեց.

— Ինչպե՞ս եք, դքսուհի:

Երկու հյուրերը դքսուհուն ողջունեցին մի բիշ ակնհայտ ռհտանությամբ, որովհետև դքսուհին սրաաղին ու կոպիտ վարվելու ձեւեր ուներ:

Այրին գեներալ ու դուքս դը Մորտմենի, աղջիկը մարկիզ այլ ֆարանդալի և մայրը Սալիխացի իշխանի հետ ամուսնացած միակ աղջիա, մեծատօհմիկ ու մեծահարուստ, դքսուհի դը Մորտմենը Վարիենն փողոցի վրա ունեցած իր գաստակերտում ընդունում էր ամրող աշխարհի նշանավոր անձանց, որոնք սրբ մաս հանգիպում ու հաճոյախոսություններ էին փոխանակում: Աշ մի բարձրաստիճան անձ չէր կարող անցնել Փարիզով, առանց ճաշելու նրա սեղանին, և ոչ մի մարդ չէր կարող հաշակվել, որի հետ նա շողենար անմիջապես ծանոթանալ: Դքսուհին պետք է նրան տեսներ, պետք է նրան խոսեցներ, պիտք է գաղափար կաղմեր նրա մասին: Եվ դա շատ էր սրախացնում նրան, աշխատացնում էր նրա կյանքը, սնուցնում էր նրա մեջ վառվող մեծամիտ ու բարյացակամ հետաքրքրության բոցը:

Դքսուհին հաղիվ էր նստել, երբ նույն ծառան ծանուցեց.

— Բարոն և բարոնուհի Կորբելները:

Նրանք երիտասարդ էին. բարոնը ճաղատ ու գեր էր, բարոնուհին՝ նիհար, վայելչագեղ ու շատ թուխ:

Այս ամոլը ֆրանսիական արիստոկրատիայի շրջանում առանձնահատուկ դիրք ուներ, որ պարտական էր միայն իր ծանոթությունների նրբախնդիր ընտրության: Սագելով մանր ազնվականությունից, աշքի շընկնելով ոչ արժանիքներով, ոչ

մտքով, բոլոր արարքների մեջ ղեկավարվելով տարապայման սիրով ղեպի ընտիրը, վայելուն ու նուրբը, հաճախելով միայն աղնվատոհմիկ տները, ցուցադրելով միապետական զգացումներ, բարեպաշտություն ու ծայրահեղ բարեկրթություն, հարգելով հարգելին, արհամարհելով արհամարհելին, երբեք ոչ մի կետում չխալվելով կենցաղադիտության դոդմաների մեջ, երբեք շահտեսելով վարվելակերպի մանրուքները, նրանք հասել էին այնաև, որ շատերի աշքին դարձել էին *high-life*\*-ի ժաղիկը: Նրանց կարծիքները վարվեցողության յուրատեսակ օրենսգիրք էին կազմում, իսկ որևէ տան մեջ նրանց ներկայությունը պատվավորության իսկական արտոնագիր էր ծառայում այդ տան համար:

Կորբելիները աղգական էին կոմս դը Գիլուուային:  
— Իսկ ո՞ւր է ձեր կինը, — զարմանքով հարցրեց դքսուհին:  
— Մի բոպե, մի բոպե, — խնդրեց կոմսը: — Մի սյուրպրիզ է պատրաստում, նա հիմա կգա:

Երբ տիկին դը Գիլուուան, ամուսնությունից մի ամիս հետո, հասարակության մեջ մտավ, ներկայացվեց դքսուհի դը Մորտմենին, որ անմիշապես նրան սիրեց, խանդաղատեց ու հովանավորեց:

Այդ բարեկամությունը քսան տարի մնացել էր անփոփոխ, և երբ դքսուհին ասում էր «փոքրիկս», նրա ձայնի մեջ ղեռ չպում էր հանկարծ ծագած ու հարատևած գորովանքի հռեցումը: Նրա տանն էր, որ տեղի ունեցավ կոմսուհու ու նկարչի առաջին հանդիպումը:

Մյուզադիւն մոտեցավ ու հարցրեց.  
— Դրսուհի, դուք գնացե՞լ էիք տեսնելու Անշափավորների ցուցահանդեսը:

— Ոչ, դա ի՞նչ բան է:  
— Նոր նկարիչների, իմպրեսիոնիստների մի խումբ արքեցության վիճակում: Այնուղիւն կան երկուաը՝ շատ ուժեղ:

Մեծատոհմիկ կինը արհամարհով ասաց.  
— Ինձ դուք չեն գալիս այդ պարոնների կատակները:  
Տիրական, խիստ, շընդունելով ոչ մի ուրիշ կարծիք սեփա-

\* Բարձր հասարակություն (անգլ.):

կանից բացի, իսկ սեփականը հիմնելով միայն իր հասարակական դրության պիտակցության վրա, դքսուհի ոք Մորտմենը, առանց լավ կշռադատելու, արվեստագետներին ու գիտուններին դիտում էր իրեն մտավորական վարձկանների, որոնք աստծու կողմից սահմանված են բարձր խավի մարդկանց զվարճացնելու կամ նրանց ծառայություններ մատուցելու. իր դատողություններին իբրև հիմք ընդունում էր միայն զարմանքի աստիճանը և այն անբացատրելի հաճույքը, որ նրան տալիս էր որևէ բանի տեսքը, մի զրքի ընթերցումը կամ ինչ-որ գյուտի մասին պատմությունը:

Բարձրահասակ, ամրակաղմ, ծանրակշիռ, կարմրագեմ, հնչուն ձայնով, նա համարվում էր զոռող կին, քանի որ ոչինչ չէր շփոթեցնում նրան, նա համարձակվում էր ամեն ինչ առել և հովանավորում էր բոլորին, ոչ միայն գահազրկված իշխանավորներին, նրանց պատվին ընդունելություններ կազմակերպելով, այլև ամենակարողին, առատորեն նվերներ տալով կղերականության ու եկեղեցիներին:

Մյուզաղիեն շարունակեց.

— Դքսուհի, դուք զիտե՞ք, որ, ըստ լուրերի, Մարի Լամբուրին սպանողը ձերբակալվել է:

Դքսուհին միանգամից հետաքրքրվեց.

— Ոչ, չզիտեմ, պատմեցեք:

Եվ Մյուզաղեին պատմեց մանրամասնությունները: Բարձրահասակ, շատ վտիտ, սպիտակ բաճկոնով, աղամանղեփայլուն կոճակներ ունեցող շապկով, նա խոսում էր առանց շարժուձեւերի, այն կիրթ տեսքով, որ նրան թույլ էր տալիս շատ հանդուգն բաներ ասելու, որի մեջ մասնագիտացել էր: Նա շատ կարճատես էր և ակնոց էր կրում, բայց կարծես ոչ ոքի չէր տեսնում, իսկ երբ նստում էր, կարելի էր կարծել, որ նրա ամբողջ կմախքը ծալվում էր բազկաթոռի ձեփի համեմատ: Նրա իրանը ծալված դրությամբ բոլորովին փոքրանում, ցածրանում էր, ասես ողնաշարը ոետինե լիներ. մեկը մյուսի վրա զրված որունքները նմանվում էին երկու ոլորված ժապավենների, իսկ երկար, շատ երկար մատներով դժգույն ձեռքերը կախ էին ընկել բազկաթոռի երկու կողմերին: Գեղարվեստութեն ներկված նրա մազերն ու բեղերը, դիտավորյալ կերպով

թողնված սպիտակ փնջերով, հաճախ կատակի առարկա էին .  
գառնում:

Այն ժամանակ, երբ նա դքսուհուն պատմում էր, որ մարդասպանը սպանված պոռնիկի գոհարեղենները նվիրել է մի ուրիշ թեթևաբարո կնոջ, հյուրասենյակի դռւոր նորից լայն բացվեց և երկու կանայք, փրփուրի պես սպիտակ, թեթև ժապավեններով պճնված շրջազգեստներով, երկուսն էլ շեկ և մեկը մյուսի նման, ինչպես երկու քույրեր, թեև տարբեր հասակի, մեկը շափահաս, մյուսը դեռահաս, մեկը գիրապարար, մյուսը նիհար, ներս մտան ժպտուն, մեկը մյուսի իրանք գրկած:

Հավաքվածները բացականչեցին, ծափահարեցին: Բացի 0լիվին Բերտենից ոչ ոք չզիտեր Աննեա դը Գիլուուայի վերադարձը, և երբ զեռատի աղջիկը երեաց մոր կողքին, որը մի քիչ հեռվից երեւում էր կրեթե նույնքան թարմ և նույնիսկ ավելի զեղեցիկ, որովհետև, ինչպես լրիվ բացված ծաղիկ, զեռես շլացուցիչ էր, իսկ աղջիկը հագիվ բացված կոկոն, սկսում էր միայն սիրուն դառնալ, բուռը երկուսին էլ հմայիչ դտան:

Դքսուհին, զմայլանքով ծափ տալով, բացականչեց.

— Աստված իմ: Ինչպես նրանք զմայլիլի ու զվարճալի են մեկը մյուսի կողքին: Նայեցեք, սկարոն դը Մյուղադին, որ քան նման են իրար:

Սկսեցին համեմատել, և իսկույն երկու կարծիքներ կազմվեցին: Մյուղադինի, Կորբելների և կոմս դը Գիլուուայի կարծիքով կոմսուհին ու իր աղջիկը իրար նման են միայն գեմքի, մազերի և հատկապես աշքերի գույնով, աշքերի: որոնք բոլորովին միաւնսակ են, հավասարապես կետկիտված սերծերով, նման կապույտ հիրիկի վրա թափալած թանաքի ցայտուքներին: Բայց շուտով, երբ զեռատի աղջիկը կին կղառնա, նրանք այլևս գրեթե չեն նմանվի իրար:

Դքսուհու և 0լիվին Բերտենի կարծիքով, ընդհակառակը, մայր ու աղջիկ ամեն ինչով նման են իրար, տարբերությունը ձիայն հասակի մեջ է:

Նկարիչը ասաց.

— Ինչքա՞ն նա փոխվել է այս երեք տարվա մեջ: Ես նրան

ողիստի շճանաշեի, ևս չեմ համարձակվում նրա հետ «դու»-ով  
խռուիր

*Դամսուհին ծիծաղեց.*

— ԱՇ, ի՞նչ եք ասում: Կուզենայի տեսնել, թե ինչպես  
դուք «դուք»-ով կխռուիր Աննետի հետ:

Դեռատի աղջիկը, որի ամոթած խորամտության մեջ  
նշմուրիսում էր ապագա ինքնավատահությունը, ասաց.

— Հիմա արդեն ևս չեմ համարձակվի «դու» ասել պարոն  
Շերտունին:

*Մայրը ժպտաց.*

— Շատհիր այդ վատ սովորությունը, թույլ եմ տալիս: Դուք  
առանձի կվերուկնեք ձանոթությունը:

*Բայց Աննետը գլուխն օրորեց.*

— Ոչ, ոչ! Դա ինձ վայել չէ:

Դրսուհին Աննետին գրկեց ու զննեց գիտակի հետաքրք-  
րությամբ:

— Գե՛ջ, փոքրի՛կ, նայիր երեսիս: Այս, քո նայվածքը բո-  
րուրավին նման է մորդ նայվածքին. որոշ ժամանակ անց, երբ  
զու լիալլ կսանաս, կդառնաս ոչ վատ: Քեզ հարկավոր է գի-  
տունու, ոչ շատ, այլ մի քիչ: Դու լզարիկ ես:

*Դամսուհին գոշեց.*

— Ո՞, այդ մի ասեք:

— Ի՞նչո՞ւ

Այնքան հաճելի է նիհարիկ լինել: Ես ուզում եմ նի-  
շուրու:

Բայց տիկին դը Մորամենը սրտնեղեց, իր բարկության մեջ  
մասնայով մի աղջնակի ներկայությունը.

— ԱՇ, միշտ այդպես է: Դուք գեռ ոսկորների մողացի  
նուից եք, որովհետև դրանք ավելի հեշտ է հագցնել, քան  
միուր ևս ինքս գեր կանանց սերունդից ևմ: Իսկ հիմա եկել  
է նիհար կանանց սերունդը: Դա ինձ հիշեցնում է եզիպտա-  
կուն կովերին \*: Ես ուղղակի չեմ հասկանում տղամարդկանց,  
որունք հիմնում են ձեր կմախքներով: Մեր ժամանակ նրանք  
ինչ որ ավելի լավ բան էին պահանջում:

\* Բառ Միրիայի, նզիպտոսի փարավոնը երազում տեսնում է յոթ նի-  
շուր կովեր, որոնք լափում են յոթ գեր կովերի:

Նա լոեց, ընդհանուր ժպիտ առաջացնելով, ապա հարեց,  
— նայիր մայրիկիդ, փոքրիկ. նա շատ լավ է, իսկական  
չափով։ Նմանվիր նրան։

Անցան ճաշասենյակ։ Երբ սեղան նստեցին, Մյուզադիեն  
վեճը շարունակեց։

— Իսկ ես կասեմ, որ տղամարդիկ պետք է նիհար լինեն,  
որովհետև նրանք ստեղծված են այնպիսի վարժությունների  
համար, որոնք պահանջում են ճկունություն և ճարագկություն,  
որոնք անհամատեղելի են փոքրի հետ։ Կանանց պարագան մի  
քիչ տարրեր է։ Այդպես չէ՞ ձեր կարծիքը. Կորքել։

Կորքելը վարանման մեջ ընկավ, որովհետև դրսուհին հաստ  
էր, իսկ իր սեփական կինը՝ շատ բարակ։ Բայց բարոնուհին  
օգնության եկավ ամուսնուն և վճռականորեն արտահայտվեց  
հօգուտ նրբակաղմության։ Մի տարի առաջ նա հարկադրված  
էր եղել պայքարելու սկսվող գիրացման դեմ, որը շուտով  
հաղթահարել էր։

Տիկին դը Գիլուուան հարցրեց։

— Ասացե՛ք, այդ ինչպե՞ս արեցիք։

Բարոնուհին բացատրեց այն մեթոդը, որ հիմա կիրառում  
են բոլոր սիրուն կանայք։ Նրանք ճաշի ժամանակ չեն խմում։  
Ճաշից մի ժամ հետո միայն խմում են մի բաժակ շատ տաք,  
այրող թեյ։ Դա նաև ստում է բոլորին։ Նա մի քանի ապշեցու-  
ցիչ օրինակներ բերեց, թե ինչպես գեր կանայք երեք ամսվա-  
քնթացքում դանակի բերանից ավելի բարակ էին դարձել։  
Դքսուհին, սրտմտած, բացականչեց։

— Տե՛ր աստված, ի՞նչ հիմարություն է այդպես իրեն շար-  
շարել։ Դուք պարզապես ոչինչ չեք սիրում, ուղղակի ոչինչ։  
Նույնիսկ շամպայն դիմին։ Դե՛մ, թերտեն, դուք արվեստա-  
գետ եք, ի՞նչ եք մտածում այս մասին։

— Աստված իմ, տիկին, ես նկարիչ եմ, ես կտավի վրա  
եմ առնում բնատիպը, ինձ համար միկնուն է։ Իսկ եթե ես  
քանդակագործ լինեի, կսկսեի գանգատվել։

— Բայց դուք տղամարդ եք, ո՞րն եք գերադասում։

— Ե՞ս։ Մի քիչ պարարտ, բայց բարեկազմ կնոջ, այն, որ  
իմ խոհարարուհին կոչում է լավ, գիրուկ ճուտիկ։ Նա ճարպոտ  
չէ, բայց մսոտ է ու քնքուշ։

Համեմատությունը ծիծաղ առաջացրեց, բայց կոմսուհին անվատահությամբ նայեց աղջկան և մեղմ ասաց.

— Ո՞չ, շատ հաճելի է նիհար լինել. նիհար կանայք չեն պառակում:

Այս հարցը նույնպես վեճ առաջ բերեց և ներկաներին երկու մասի բաժանեց: Այսուհանդերձ, գրեթե բոլորը համաձայնության եկան այս կետում. շատ գերը շպետք է շատ արագ նիհարի:

Այս դիտողությունն առիթ տվեց աշքի անցկացնելու բարձր խավի ծանոթ կանանց և նորից արտահայտվելու նրանց բարեձևության, նրանց շիկության ու նրանց գեղեցկության մասին: Մյուզագիեն անզուզական, հմայիչ էր դտնում խարտիշագեղ մարկիզուհի զը Լոկրիստին, մինչդեռ Բերտենը գտնում էր, որ տիկին Մանդելիերը մրցակից չունի իր ցած ճակատով, մարմը ըրուն աշքերով ու մի քիչ մեծ բերանով, ուր ատամները շողում էին կարծես:

Բերտենը նստել էր դեռատի աղջկա կողքին և հանկարծ, գառնալով նրան, ասաց.

— Լսիր ինձ, նանետ: Այն բոլորը, ինչ մենք հիմա ասում ենք, դու կլսես շաբաթը առնվազն մի անգամ, մինչեռ պառավես: Դու ութ օրում անգիր կսովորես այն ամենը, ինչ բարձր հասարակության մեջ մտածում են քաղաքականության, կանանց, թատերական պիեսների և բոլոր մյուս բաների մասին: Քեզ միայն հարկ կլինի ժամանակ առ ժամանակ փոխել մարդկանց անունները կամ երկերի վերնագրերը Երբ մենք բոլորս քո առջև կհայտնենք ու կպաշտպանենք մեր կարծիքը, դու, մեզ լսելուց հետո, հանգիստ կերպով քեզ համար կընտրես այն, որին դու պետք է հետևես, և ապա այլն կարիք չես ունենա որևէ բանի մասին մտածելու. քեզ միայն կմնա հանգստանալ:

Դեռատի աղջիկը, առանց պատասխանելու, նկարչի վրա նետեց խորամանկ մի հայացք, որի մեջ շողում էր կենդանի, դեռահամ միտքը, առաջմ կաշկանդված, բայց պատրաստ ազատ արձակվելու:

Սակայն դքսուհին և Մյուզագիեն, որոնք գաղափարների հետ խաղում էին, ինչպես գնդակի հետ են խաղում, չնկա-

տելսվ, որ այդ գաղափարները միշտ միևնույնն էին, բողոքեցին հանուն մարդկային բանականության ու գործունեության:

Այն ժամանակ Բերտենը ջանաց ապացուցել, թե ինչպես քարձր խավի նույնիսկ ամենաույալ մարդկանց միտքը անարժեք, անբովանդակ ու ծանծաղ է, թե ինչպես նրանց հայցքները քիչ են հիմնավորված, նրանց ուշադրությունը թույլ ու անտարբեր է հոգեկան երեսութների նկատմամբ, նրանց հաշակը անկայուն ու կասկածելի է:

Բերտենը բռնված էր այն կիսաանկեղծ, կիսակեղծ զայրութի նոպայով, որ սկզբում առաջանում է պերճախոս երեվալու ցանկությունից, բայց հետո հանկարծ շիկանում է սովորաբար բարեհոգությամբ ծածկված հստակ դատողության մեջ: Նա սկսեց ապացուցել, որ կյանքում միայն այցելություններով ու ճաշկերութներով զբաղված մարդիկ ճակատագրի անհաղթահարելի ուժով դառնում են թեթևամիտ, հաճելի, բայց տափակ էակներ, որոնց շատ քիչ են հոգում հոգսերը, հավատալիքներն ու մակերեսային ցանկությունները:

Նա ապացուցեց, որ այդ մարդկանց մեջ չկա ոչ խորություն, ոչ կրակ, ոչ անկեղծություն, որ նրանց մտավոր կուտուրան աննշան է, իսկ գիտելիքը՝ պարզապես արտաքին փայլ, որ, վերջապես, այդ մասնեկենները իրենց համարում են ընտրյալներ կամ ընդօրինակում են նրանց շարժուձները: Նա ապացուցեց, որ նրանց բնաղդների խախուս արմատները առել են պայմանականությունների հողում, ոչ իրականության մեջ, և հետեւաբար նրանք հաստատապես ոշինչ չեն սիրում, որ նրանց կենցաղի պերճանքը ծառայում է սոսկ սնափառությունը զոհացնելու և ոչ թե նրբացած պահանջները հագեցնելու, որովհետեւ նրանք իրենց տանի վատ են ուտում և վատորակ գինի են խմում, թեև դրանց համար շատ թանկ են վճարում:

— Նրանք ապրում են, — տսում էր Բերտենը, — ամեն ինչի կողքին, բայց ոշինչ չեն տեսնում և ոչ մի բանի մեջ չեն թափանցում, գիտության կողքին, որ նրանք անգիտանում են, բնության կողքին, որի վրա նրանք չգիտեն նայել, երջանկության կողքին, քանի որ նրանք անկարող են ոգեսրությամբ վայելել որևէ բան, նրանք ապրում են աշխարհի գեղեցկության կամ արվեստի գեղեցկության կողքին, որի մասին խո-

սում են, բայց որին նույնիսկ չեն էլ հավատում, քանի որ նրանց անծանոթ է կյանքի ու մտքի հաճույքներով արբենալը նրանք անընդունակ են մի բան սիրելու այնքան, որ այդ սերը համակի նրանց ամբողջ էությունը, անընդունակ են որևէ բանով հետաքրքրվելու այն աստիճան, որ նրանց լուսավորի հասկանալու ուրախությունը:

Բարոն զը Կորբելը իր պարտականությունը համարեց հանդես գալու լավ հասարակության պաշտպանությամբ:

Նա հանդես եկավ անհիմն, բայց անհերքելի փաստարկ-ներով, որոնք հալվում են բանականության առջե, ինչպես ձյունը կրակի առջե, և որոնք անորսալի են, աստծու գոյությունը ապացուցող զյուղական քահանայի անհեթեթ, բայց հաղթանակող փաստարկներով։ Վերջում նա բարձր խավի մարդկանց համեմատեց նժույգների հետ, որոնք, նիշտ ասած, ոչ մի բանի չեն ծառայում, բայց ձիերի ցեղի փառքն են հանդիսանում։

Բերտենը, անհարմար զգալով այսպիսի հակառակորդի սուջե, արհամարհական ու քաղաքավար լուսություն պահեց։ Բայց շուտով բարոնի տիմարությունը զայրացրեց նրան, և, հարպկորեն ընդմիջելով դրուցակցի ճառը, նա մանրամասնորեն պատմեց, թև ինչպես է անցնում բարեկիրթ մարդու օրը առավոտյան վեր կենալուց մինչև գիշերվա պառկելու ժամը։

Նրբորեն ընտրված ու բերված մանրամասնությունները անսուելի կոմիկական մի պատկեր էին ուրվադում։ Բոլորը առես ակնհայտ տեսնում էին այդ պարոնին։ այն ժամանակ, երբ սենյակի սպասյակը հաղցնում է նրան, նա մի քանի րոկհանուր գալափարներ է հայտնում իրեն ածիլող սափրիցն։ ապա, պատրաստվելով առավոտյան զբոսանքին, նա ձիապաններին հարցնում է ձիերի առողջության մասին։ Հետո ձիով անցնում է Բուլոնյան անտառի ծառուղիներով միմիայն նրա համար, որ ողջույններ փոխանակի ծանոթների հետ։ Նախաճաշում է կնոջ զիմաց, որ, իր հերթին, գուրս էր եկել կտորքով, և նրանց զրուցը սահմանափակվում է առավոտյան հանդիպած անձանց անունների թվարկումով միայն։ ապա մինչև երեկո այցելում է հյուրասրահներ, որպեսզի միտրը թարմացնի իր նմանների հետ շփմամբ, ճաշի ինչ-որ իշ-

խանի մոտ, ուր քննարկվում է Եվրոպայի քաղաքական կացությունը և օրն ավարտում է օպերայի ճեմասրահում պարային երեկույթով, ուր քեֆ անող դառնալու նրա երկշու փորձերը անմեղորեն գոհացվում են միայն անվայել տեղի արտաքին տեսքով:

Պատկերը շատ ճիշտ էր, բայց նրա հեղնանքը ոչ ոքի չէր վիրավորում: Սեղանի շուրջը նստածները ծիծաղեցին:

Գեր գքսուհին, քրքջալու հաղիվ զսպված ցանկությունից ցնցված, կրծքում թեթև սարսուռներ էր ունենում: Վերջապես նա ասաց.

— Ու, իսկապես, դա շատ զվարճալի է, ուրք ինձ կմեռընեք ծիծաղից:

Բերտենը, գեռես գրգոված, պատասխանեց.

— Օ՛, տիկին, ծիծաղից շեն մեռնում բարձր հասարակության մեջ: Այնաև հաղիվ են ծիծաղում: Մարդահաճության ու բարեկրթության համար ձևացնում են, թե զվարճանում են ձևացնում են իբրև թե ծիծաղում են: Միծաղի ծամածոռությունը նմանեցնում են բավական հաջող, բայց դա իսկական ծիծաղ չէ: Գնացեք ժողովրդական թատրոնները և կտեսնեք, թե ինչպես են մարդիկ ծիծաղում: Գնացեք զվարճացող քաղքենիների մոտ և կտեսնեք, թե ինչպես են մարդիկ ծիծաղից թուլանում: Գնացեք զինվորների զորանոցները, և կտեսնեք, թե ինչպես մարդիկ խեղովելու, աշքերից արցունք գալու, մահիճների վրա գալարվելու աստիճան քահ-քահ ծիծաղում են, նայելով ինչոր ձեռնածուի խաղերին: Բայց մեր հյուրասրահներում շեն ծիծաղում: Ես ձեզ կասեմ, որ այնտեղ ամեն ինչ կեղծ է, նույնիսկ ծիծաղը:

Մյուզադիեն Բերտենի խոսքը կտրեց.

— Թույլ տվեք, ուրք շատ խիստ եք: Բայց ինձ թվում էս սիրելիս, որ դուք ինքներդ չեք արհամարհի այդ բարձր հասարակությունը, որին այնքան լավ ծաղրում եք:

Բերտենը ժպտաց.

— Այո, ես այն սիրում եմ:

— Ուրեմն ինչպես հասկանալ:

— Ես մասամբ արհամարհում եմ ինքս ինձ, ինչպես կասկածելի ցեղի խառնածին:

— Այդ բոլորը սոսկ ձեականություն է, — ասաց դքսուածին:

Եվ երբ Բերտենը սկսեց հավատացնել, որ ձեականություն չէ, դքսուհին վեճը ավարտեց հայտարարելով, որ բոլոր արվեստագետներն էլ սիրում են լուն ուղարձնել:

Այն ժամանակ զրուցքը, հասարակ ու հանդարտ, բարեկամական ու զուսպ զրուցքը, ընդհանուր բնույթ կրեց և ամեն ինչ շոշափեց: Կ որովհետեւ ճաշկերույթը վերջանալու վրա էր, կոմսուհին հանկարծ ցույց տալով իր առջև դրված լեցուն բաժակները, գոշեց:

— Այ տեսեք, ես ոչինչ չեմ խմել, ոչինչ, ոչ մի կաթիւ Տեսնենք կնիհարե՞մ:

Դքսուհին, բարկացած, ուղեց նրան մեկ-երկու ումպ Հանքային ջուր խմեցնել, բայց իզուր եղավ, և նու բացականչեց:

— Ա՛հ, հիմա՛ր: Աղջկա պատճառով հիմա գլուխը կպըտըտվի: Խնդրեմ, Գիլուուա, թույլ մի տաք ձեր կնոջը այդպիսի խենթություն անել:

Կոմսը, որ այդ ժամանակ Մյուզադիեին բացարում էր Ամերիկայում հնարված մեքենայական մի կալսիչի մասին, լավ չէր լսել:

— Ի՞նչ խենթություն, դքսուհի:

— Այն, որ կինդ ուղում է նիհարել:

Կոմսը կնոջ վրա բարեհաճ ու անտարբեր մի հայացք նետեց:

— Ես սովորություն չունեմ նրա կամքին հակառակվելու:

Կոմսուհին սեղանից բարձրացավ և իր հարեանի թերմագի, կոմսը թեն առաջարկեց դքսուհուն, և բոլորն անցան մեծ հյուրասենյակ, քանի որ զարդասենյակը սահմանված էր առօրյա ընդունելությունների համար:

Դա ընդարձակ ու շատ լուսավոր մի սենյակ էր: Նրա ամույն-կապույտ մետաքսե գեղեցիկ ու լայն պանսոներով որմերը, պլաննոները, որոնք հին նախշերով էին բանված ու սպիտակ-սոսկի շրջանակներով եղերված, լամպերի ու շահերի լույսի տակ շողշողում էին լուսնի մեղմ ու վառ ցոլքերից: Կոմսուհու նկարը, Օլիվիե Բերտենի ձեռագործը, որ կախ-

ված էր մեջտեղում, ասկս սենյակը լեցնում էր իր կհնդանությամբ։ Օլիվիեն կոմսուհու տանն էր, և Հյուրասենյակի օդն իսկ թաթախված էր երիսասարդ կնոջ ժպիտով, նրա հայցքի հրապույրով, նրա խարտյաշ վարսերի հմայքով։ Եվ ամենուր գրեթե սովորություն էր դարձել, յուրատեսակ աշխարհիկ արարողություն, ինչպես խաշակնքելը եկեղեցի մանելիս. ամեն անգամ էանգ առնել նկարի տոշե և կոմպլիմենտներ շռայլել բնատիպին։

Մյուզադիեն երբեք բաց չէր թողնում այդ առիթը։ Նրա իբրև գիտակի և ոկատության վստահությունը վայելողի կարծիքը պաշտոնական էքսպերտիզմին համազոր արժեք ուներ, և հաճախ իր պարտականությունն էր համարում խոր համոգ. մամբ հաստատել այդ նկարի բարձր արժանիքները։

— Ահա, — ասաց նա, — իսկապես մեր ժամանակի ամենագեղեցիկ նկարը, որ ևս ճանաչում եմ։ Նա զեղուն է հրաշալի կյանքով։

Կոմս զը Գիլուտան, որ շարունակ գովասանքներ էր լսում այս կտավի մասին և իր մեջ արմատացել էր այն համոզումը, թե մի գլուխ-գործոց ունի մոտեցավ Մյուզադիեին, և նրանք մեկ-երկու րոպե կրկնեցին հանրածանոթ ու մասնագիտական տերմինները՝ փողոարանելու համար այդ նկարի ակնհայտ ու թարուն արժեանիքները։

Պատի վրա դարձած բոլոր աչքերը կարծես շողում էին հիացումից, և Օլիվիե Բերտենը, որ վարժվել էր այդ դրվատանքներին և զրանց նույնքան քիչ ուշադրություն էր դարձնում, որքան փողոցային պատահական հանդիպումների ժամանակ առողջության մասին հարցերին, այսուհանդերձ լուսավորելու համար նկարը, նրա վրա էր ուղղում առջեռմ զետեղված լուսարձակ լումպը, որ ծառան անփութությամբ մի քիչ ծուռ էր դրել։

Ապա բոլորը նստեցին։ Կոմսը մոտեցավ դքսուհուն. վերջինս ասաց.

— Հավանաբար եղբորս որդին իմ ետեից կգա և ձեզնից մի բաժակ թեյ կխնդրի։

Որոշ ժամանակից ի վեր նրանց մեջ առաջացել էին ընդհանուր ցանկություններ, որ նրանք փոխադարձաբար գուշա-

կում էին, թեև դեռ ոչ մի խոսք, նույնիսկ ակնարկ, չէին անում գրանց մասին:

Դքսուհի ղը Մորտմենի եղբայրը, մարկիզ ղը Ֆարանդալը, իւաղից գրեթե բոլորովին սնանկացած, ձիուց ընկել ու մեռել էր, թողնելով մի այրու և մի որդու: Այս երիտասարդ մարդը, որ այժմ քսանութ տարհկան էր, կոտիլյոն պարի ամենացանկալի զեկավարներից մեկն էր Եվրոպայում, ըստ որում նա երրեմն հրավիրվում էր նույնիսկ Վիեննա ու Հռոմ, որպեսզի վալսերով զարդարեր պալատական պարահանդեսները. գրեթե դուրկ լինելով հարստությունից, իր դիրքի, անվան, արքայական տների հետ մի քիչ ազգակցական կապերի շնորհիվ դարձել էր Փարիզի ամենափնտրված ու ամենանախանձելի մարդկանցից մեկը:

Պարի ու սպորտի ասպարեզում ձեռք բերված այդ դեռ շատ երիտասարդ փառքը հարկավոր էր ամրապնդել և՝ հարուստ, շատ հարուստ մի ամուսնությունից հետո՝ բարձր հասարակության մեջ ունեցած հաջողությունները վերափոխել քաղաքական հաջողությունների: Հենց որ դառնար դեպուտատ, կդասնար և մարկիզ, և հենց դրանով նա կդասնար ապագա դահի սյուներից մեկը, թագավորի իսորհրդականներից ու կուսակցության պարագլուխներից մեկը:

Դքսուհին, որ ստուգ տեղեկություններ ուներ, գիտեր կոմս ղը Գիլուուայի խոշոր հարստության մասին, ղը Գիլուուայի, որ խոհեմ խնայող էր և ապրում էր սովորական վարձու բնակարանում, երբ կարող էր իշխանակայել ձեռվ ապրել Փարիզի ամենաշքեղ ապարանքներից մեկում: Դքսուհին տեղյակ էր մշտապես հաջող նրա սպեկուլյացիաներին, ֆինանսական գործերում նրա նույրը հոտառությանը վերջին տասնամյակում զործարկված ամենաարդյունաբեր ձեռնարկություններում նրա ունեցած մասնակցությանը, և մտածեց իր եղբոր որդուն ամուսնացնել նորմանդական դիպուտատի աղջկա հետ, դեպուտատի, որին այդ ամուսնությունը կարող էր գերակշռող ազդեցություն տալ իշխաններով շրջապատված արիստոկրատական հասարակության մեջ: Գիլուուան, որ մեծ օժիտով կնոշ հետ էր ամուսնացել և ճարտարորեն բազմապատկել էր սե-

փական գեղեցիկ հարստությունը, հիմա փայփայում էր ուրիշ փառասիրական ծրագրեր:

Նա հավատում էր թագավորի վերադարձին և ուզում էր այդ դեպքն օգտագործել լավագույն ձեռվեց:

Իբրև պարզ դեպուտատ, նա շուներ մեծ կշիռ Բայց իբրև աներ մարկիզ դը Ֆարանդալի, որի նախնիները ֆրանսիական թագավորական տան հավատարիմ ու սիրեցյալ մերձավորներն էին, կրարձրանար առաջին շարք:

Բայց դրանից, իր կնոջ հետ դքսուհու բարեկամությունը այդ միությանը կտար մտերմական բնույթ, որ նույնպես շատ կարեւոր էր, և վախենալով, որ մարկիզը կարող է հանդիպել մի ուրիշ աղջկա, որ նրան հանկարծ դուր կլա, կոմսը կանչել տվեց իր աղջկան, որպեսզի արագացնի դեսպանի ընթացքը:

Տիկին դը Մորտմենը, նախագոյալով ու գուշակելով կոմսի ծրագիրը, լուսնամբ նսկաստում էր դրանց, և այդ օրը՝ թե՛ նրան չէին տեղեկացրել երիտասարդ աղջկա հանկարծակի վերադարձի մասին, նա իր եղբորորդուն խորհուրդ ավեց անցնել Գիլուուաների մոտ, որպեսզի նրան աստիճանաբար վարժեցնի ավելի հաճախ լինելու այդ տանը:

Առաջին անգամ լինելով, կոմսն ու դքսուհին քողարկված բառերով խոսեցին իրենց ցանկությունների մասին, և երբ բաժանվեցին, միության դաշինքը արդեն կնքվել էր:

Հյուրասենյակի մյուս ծալքին ծիծաղում էին: Պարոն դք Մյուզադիեն բարոնուհի դը Կորբելին պատմում էր ինչ-որ նեգրական դեսպանատանը հանրապետության նախագահի ընդունելության մասին, երբ հայտարարվեց, որ մարկիզ դք Ֆարանդալը եկել է:

Մարկիզը երեաց գոան մեջ ու կանգնեց: Արագ ու վարժ շարժումով նա մոնոկլը դրեց աշ աշրին, ասես ցանկանալով զննել հյուրասենյակը, ուր մտնում էր առաջին անգամ, գուցե նաև նրա համար, որ ներկաներին ժամանակ տա իրեն նկատելու, և շեշտի իր մուտքը: Ապա այտի ու հոնքի աննշմարելի շարժումով նա դեն նետեց սև մետաքսե երիվից կախված ապակու կտորը, շտապ առաջացավ դեպի տիկին դը Գիլուուան և շատ ցած խոնարհվելով, համբուրեց նրա պարզած ձեռքը: Նա համբուրեց նաև իր հորաքրոջ ձեռքը, ապա սեղմեց մնա-

գյալ հյուրերի ձեռքերը, վայելուշ անբռնազբոսիկությամբ անցնելով մեկից մյուսին:

Դա մի երիտասարդ մարդ էր բարձր հասակով, շիկակարմիր բեղերով, արդեն մի քիչ ճաղատ գլխով, զինվորականի կեցվածքով և անգլիացի սպորտամենի շարժուձերով։ Նրան սայելով զգացվում էր, որ նա մեկն է այն մարդկանցից, որոնք իրենց մարմնի մյուս անդամները ավելի են մարզել, քան զլուխը և սիրում են լոկ այնպիսի զբաղմունքներ, որոնց մեջ լարումով շարունակում են ֆիդիկական ուժն ու շարժունությունը։ Սակայն նա ուսյալ էր, քանի որ սովորել էր և մտքի մեծ լարումով շարունակում էր ամեն օր սովորել այն բոլորը, ինչ նրան հետագայում կարող էր պետք գալ պատմություն՝ զանալով անդիր սովորել թվականները, չխորանալով դեպքերի իմաստի մեջ, օտղաքատնտեսություն՝ դեսլուտատին անհրաժեշտ տարրական դիտելիքները և հասարակագիտության այբբենարանը՝ ի պետս կառավարող գասակարգերի։

Մյուզադիկն նրան գնահատում էր, ասելով. «Նա արժեքավոր մարդ կդառնա»։ Բերտենը գնահատում էր նրա ճարագիկությունն ու ուժը։ Նրանք գնում էին միևնույն սրամարտարանը, հաճախ միասին էին որսի գնում և ձիով զրոսնելիս հանդիպում Բուլոնյան անտառի ծառուղիներում։ Ճաշակների ցնդհանրությունը նրանց մեջ առաջացրել էր փոխաղարձ համակրանք, հաստատել էր այն բնազդական ֆրանկ-մասոնացին կապը, որ երկու մարդկանց միջև մեկին ու մյուսին հավասարապես հաճելի խոսակցության նյութ է ստեղծում։

Երբ մարկիդին ներկայացրին Աննետ դը Գիլուուային, նա հանկարծ կասկածեց հորաքրոջ կոմքինացիաների մասին և, խոնարհվելուց հետո, դիտակի հայացքով նայեց աղջկան։

Մարկիդը աղջկան սիրուն և, մանավանդ, բազմախոսություն պատավ։ Նա այնքան շատ պարեր էր դեկավարել, որ լավ էր առնաշում աղջիկներին և առաջին հայացքով կարող էր գուշակել նրանց ապագա գեղեցկությունը, ինչպես նոր գինին համահասող փորձագետ։

Նա աղջկա հետ սոսկ մի քանի աննշան խոսքեր փոխանակեց, ապա նստեց բարոնուհի դը Կորբելի կողքին, որպեսզի կիսածայն զրուցի նրա հետ։

Հյուրերը կանուխ մեկնեցին, և, երբ բոլորը գնացին, երբ աղջիկը պառկեց քննելու, երբ ճրագները մարեցին, և ծառաները բարձրացան իրենց սենյակները, կոմս դր Գիլուուան, ետ ու առաջ բայլելով հյուրասենյակով, ուր միայն երկու մոմեր էին վառվում, զես Երկար պահեց բազկաթոռի մեջ նիրհով կոմսունին, նրան պարզելով իր հույսերը, մանրամասն բացատըրելով, ինչ ինչ ընթացք պետք է բռնել, ինչպես նախատեսել բոլոր կոմբինացիաները, շանսերը և ձեռք առնել անհրաժեշտ նախազգուշությունները:

Արգեն ուշ էր, երբ կոմսը քաշվեց իր սենյակը, երեկութիւն մեծապես գոյն ու շշնչալով.

— Կարծես դործը գլուխ է եկած:

### III

«Ե՞րբ եք գալու, բարեկամս: Ես Երեք օր է ձեզ չեմ տեսել, և զա ինձ երկար է թիւում: Աղջիկս ինձ շատ է զբաղեցնում, բայց դուք դիտեք, որ ես այլիս չեմ կարող հրաժարվել ձեզանից»:

Նկարիչը, որ մատիտով էսքիզներ էր ուրվանկարում, միշտ մի նոր նյութ որոնելով, վերընթերցեց կոմսունու գրությունը, ապա բաց անելով գրասեղանի դարակը, այն գրեց իրենց կապի սկզբնավորումից ի վեր այնտեղ կուտակված ուրիշ նամակների վրա:

Բարձր խավի կյանքի ընձեռած դյուրությունների շնորհիվ, նրանք վարժվել էին դրեթե ամեն օր հանդիպելու ժամանակ առ ժամանակ կոմսունին գալիս էր նկարչի մոտ և թողնելով նրան աշխատել, մեկ-երկու ծամ նստում էր բազկաթոռի վրա, ուր մի ժամանակ նստում էր նկարվելու համար: Բայց, մի քիչ վախենալով ծառաների դիտողություններից, կոմսունին այդ ամենօրյա հանդիպումների համար, սիրո այդ մանրադրամի համար, գերազասում էր նկարչին ընդունել իր մոտ կամ նրան տեսնել որեւէ հյուրասրահում:

Նրանք նախապես պայմանավորվում էին այդ հանդիպումների համար, որոնք պարոն դր Գիլուուային միշտ բնական էին թվում:

**Շաբաթվա մեջ առնվազն երկու անգամ նկարիչը ճաշում** էր կոմսուհու մոտ մի քանի բարեկամների ընկերակցությամբ։ Յուրաքանչյուր երկուշաբթի նա կոմսուհուն գտնում էր օպերայի իր օթյակում, ապա նրանք ժամադրություն էին նշանակում այս կամ այն տանը, ուր դիպվածը նրանց հասցնում էր միևնույն ժամին, նկարիչը գիտեր, թե կոմսուհին ո՞ր երեկոյան դուրս չէր գալիս, և գնում էր նրա մոտ մի բաժակ թերխմելու, նրա մոտ իրեն զգալով ինչպես իր տանը, այնքան չերմ, հաճելի ու վստահելի էր այդ վաղուցվա մտերմությունը։ Իսկ կոմսուհու հետ որևէ տեղ հանդիպելու թեկուզ մի քանի րոպեներ միասին անցկացնելու, մի քանի բառեր փոխանակելու, մի քանի մտքեր բաժանելու սովորությունը նկարչի մեջ այնքան ուժեղ էր, որ նա շարունակ պահանջ էր զգում նրան տեսնելու, թեև իր կրքի բոցը արդեն վաղուց հանգել էր։

Իրեն ընտանիքում, բազմանդամ ու կենդանի տանը զգաւու, ընդհանուր սեղանից ճաշելու, երեկոները արդեն վաղուց ծանոթ մարդկանց հետ անխանչ զրուցներ անցկացնելու փափագը, հաղորդակցության, մերձակցության, մտերմության այն էգոխատական փափագը, որ նիրհում է ամեն մարդու սրտում և որ ամեն ծերունի ամուրու քաշում-տանում է տնից տաւն, իր բարեկամների մոտ, ավելի էր ուժեղացնում նկարչի գորովանքի զգացումները։ Այդ տանը, ուր նրան սիրում էին, երես էին տալիս, ուր նա ամեն ինչ գտնում էր, նույարող էր հանգստանալ ու իր միայնությանը փայփայել։

Արդեն երեք օր է նա չէր տեսել իր բարեկամներին, որոնք հավանաբար, իրար էին անցել աղջկա վերադարձի պատճառով։ Նա արդեն ձանձրանում էր և նույնիսկ մի քիչ վիրավորվել էր, որ նրանք մինչև հիմա չէին կանչել իրեն, բայց բոլոր ովին հարմար չէր գտնում առաջին քայլն անելու։

Կոմսուհու նամակը, ինչպես մտրակի հարված, ցնցեց նկարչին։ Հետմիջօրեի ժամը երեքն էր։ Նա վճռեց անմիջապես գնալ կոմսուհու մոտ, որպեսզի նրան դեռ տանը գտնի նկարչի զանգի վրա երեաց սենյակի սպասյակը։

- Ինչպիսի՞ եղանակ, Ժողեֆ։
- Շատ գեղեցիկ, պարոն։
- Շո՞գ։

— Այս, պարոն:

— Սպիտակ ժիլետ, կապույտ ժակետ, մոխրագույն գըլ-իարկ:

Նկարիչը միշտ հագնում էր շատ վայելու ձեռվ, և, թեև սրա հազուստը կանոնավոր դերձակի ձեռքով էր կարված. բայց հագնելու նրա ձեռ, նրա քայլվածքը, սպիտակ ժիլետի մեջ պրկված փորք, մոխրագույն թաղիքի, մի քիչ դեպի ծոծրակը թեքված բարձրագիր գլխարկը ասես անմիջապես մատնում էին, որ նա նկարիչ է և ամուրի:

Երբ նկարիչը եկավ կոմսուհու մոտ, նրան ասացին, որ կոմսուհին պատրաստվում է զրոսանքի գնալ Թուղոնյան անտառու։ Նկարիչը դժգոհեց ու սպասեց։

Հստ սովորության նա սկսեց ճեմել ընդարձակ, վարագույրներից մթագնած հյուրասրահով, անցնելով բազկաթոռից բազկաթոռ, պատուհանից պատերը։ Ուկեզօծ ոտքերով թեթև սեղանների վրա հատուկ անկարգությամբ ցրիվ էին տըրված ամեն տեսակ անօգուտ, սիրուն ու թանկարժեք գեղորներ, Դրանք ոսկեգրվագ հին տփիկներ էին, մանրանկարներով փորագրված ծխախոտատուփեր, փղոսկրե արձանիկներ, փայլատ արծաթե ժամանակակից իրեր, որոնց խստաշունչ զվարճալիության մեջ երեսում էր անգլիական ճաշակը՝ փոքրիկ խոհանոցի սալ և նրա վրա ամանից լակող մի կատու, խոշոր հացի ձեռվ մի ծխախոտատուփ, մի սրճաման-լուցկաման, և ապա մի տուփի մեջ պուպրիկի ամբողջ պաճուճանքը, մանյակներ, ապարանջաններ, մատանիներ, ճարմանդներ, ակնեռով, շափյուղաներով, սուտակներով, զմրուխտներով ընգելուզված ականջօղեր, միկրոսկոպիական մի ֆանտազիա, որ սսես պատրաստված էր կիլիպուտիայի<sup>\*</sup> ոսկերիշների ձեռքերով։

Երբեմն նա վերջնում էր այս կամ այն տարեղարձի առթիվ իր կողմից նվիրված որևէ առարկա, երազուն անտարբերությամբ շոշափում, զննում էր, ապա նորից գնում իր տեսլը։

\* Երևակայական երկիր, որ նկարագրված է Սվիֆթի (1667—1746) «Դուլիվերի ճանապարհորդությունները» վեպի առաջին մասում։

Մի անկյունում, կլորածե բազմոցիկի առջև դրված միուսունի սեղանի վրա ընկած էին մի քանի փառակազմ գրքեր, որոնք գրեթե չէին թղթատված: Նույն սեղանի վրա էր Ռեվյողի Գյո Մոնդը մի քիչ մաշված, ճմլված, ծալված էջերով, ասես այն բազմիցս ընթերցել ու վերընթերցել էին, և գեղակարգած ուրիշ պարբերականներ, ժամանակակից արվեստներ, որ հարկ էին համարում ստանալ միայն նրա թանկ գնէ ուստանառով,—այդ ժուռնալի տարեկան բաժնեղինը չորս հարյուր ֆրանկ էր,—և Ազատ թերթը, կապույտ շապկով բարակ գրքույկ, ուր հրատարակվում էին «Ձղագրպիոններ» հորդորչած նորագույն պոետները:

Պատուհանների միջև դրված էր կոմսուհու գրասեղանը. անցյալ զարի գողտրիկ մի կահ, որի վրա էր կոմսուհին գրուն հյուրընկալությունների ժամանակ ստացած անհետաձգելի գրությունների պատասխանները: Այնտեղ էին և մի քանի սիրված գրքեր, կնոջ մտքի ու սրտի ցուցանակներ,— Մյուսե, Մանոն Լեսկո, Վերթեր, և, ցույց տալու համար, որ խորթ չեն բարդ զգացումներին ու հոգեբանության խորհուրդներին, Զարի ծաղիկները \*, Կարմիրն ու Սևը, Կինը 18-րդ դարում \*\*, Աղոլֆը \*\*\*:

Գրքերի կողքին, ասեղնագործված թավշի մի կտորի վրա դրված էր մի սքանչելի ձեռքի հայելի, ոսկերչական վարպետության մի գլուխ-գործոց, որի ալակին ցած էր շուռ տրված, սրպեսզի կարելի լիներ ետեից նայելով հիանալ ոսկե ու արծաթե մի հետաքրքրական աշխատանքով:

Բերտենը հայելին առավ ու մեջը նայեց: Վերջին տարիներին նա սարսափելիորեն ծերանում էր և թեև իր զեմքը հիմա ավելի ինքնատիպ էր գտնում, քան առաջ, նրան սկսում էին որտմեցնել այտերի թառամումն ու մաշկի կնճռոտումը:

Դուռը բացվեց նրա ետև.

— Բարեն, պարոն Բերտեն, — ասաց Աննետը:

\* Ֆրանսիացի բանաստեղծ Շարլ Բողլերի (1821—1867) բանաստեղծությունների հավաքածուն:

\*\* Գոնկուր եղբայրների գիրքը, որ լույս տեսավ 1862 թ.:

\*\*\* Ֆրանսիացի գրող ու նկարիչ Բենժամեն Կոստանի (1845—1902) վեպը

- Բարե, փոքրիկ, ինչպե՞ս ես:
- Շատ լավ, իսկ դո՞ւք:
- Ինչպե՞ս, ինձ հետ ռդուռ-ով չե՞ս խոսում:
- Ոչ, դա ինձ անվայել է:
- Դե՛հ, բավական է:
- Ոչ, անվայել է: Ես ձեզանից ամաշում եմ:
- Այդ ինչո՞ւ
- Որովհետն... որովհետև դուք ոչ այնքան երիտասարդ եք, ոչ այնքան ժեր...

**Նկարիչը ծիծաղեց:**

- Այս փաստարկից հետո ես չեմ պնդում:
- Աննետը հանկարծ շառագունեց մինչեւ ճակատի այն սպիտակ շերտը, ուր մագերն են աճում, և շփոթված շարունակեց.

- Մայրիկս ինձ հանձնարարեց ձեզ ասելու, որ ինքը հիւա ցած կիշնի. նա հարցնում է, թե արդյոք չե՞ք յանկանա և հետ գալ թուղոնյան անտառ:

— Այո, իհարկե: Դուք մենա՞կ եք:

— Ոչ, մեղ հետ կլինի դքսուհի դը Մորտմենց:

— Շատ լավ, ձեզ հետ կգամ:

— Այն ժամանակ թույլ տվեք, զնամ գլխարկս վերցնելու:

— Գնա, զավակս:

- Աննետը դեռ չէր դուրս եկել, երբ կոմսուհին երկաց քողի ոտեղ, պատրաստ մեկնելու նա ձեռքերը ներտենին երկարեց:

— Չեք երևում, Օլիվիե: Ինչո՞վ եք զբաղված:

— Ես չի ուզում ձեզ խպնդարել այս օրերին:

- Կոմսուհին «Օլիվիե» արտասանեց այնպիսի տոնով, որի մեջ իր բոլոր մեղադրանքներն ու բոլոր գորովանքը:

- Դուք լավագույն կինն եք աշխարհում,— ասաց Օլիվիե ներտենք, կոմսուհու ձայնի ելեկչից հուզված:

Երբ այդ փոքրիկ սրտի գժտությունը հարթվեց, կոմսուհին քարձր խավին հատուկ տոնով ասաց.

- Մենք կգնանք դքսուհու ետևից նրա ապարանքը և ազա կզրունենք թուղոնյան անտառում: Հարկավոր է այդ բուռը ցույց տալ նանետին:

Կառքը նրանց սպասում էր դարպասի կամարի տակ:

Թերտենը նստեց երկու կանանց դիմաց, ձիերի սմբակներէ զրնդացին հնշուն կամարի տակ, և կառքը մեկնեց:

Դեպի Մաղլեն եկեղեցի տանող մեծ բուլվարի վրա ամեն կինդանի արարած ասես զգում էր երկնքից իշնող վաղ գարս նաև բերկրանքը:

Գաղց օդն ու արևը տոնական տեսք էին տալիս տղամարդ կանց, սիրահարության տրամադրություն՝ կանանց, խայտացնում էին երեխաներին ու խոհարարների աշկերտներին, որոնք իրենց կողովները գնելով նստարանների վրա, վազվում ու խաղում էին իրենց հասակակից փողոցային լակոտների հետ, շներն ասես շտապում էին ինչ-որ տեղ, դռնապանների գեղաձանիկները կոկորդալիր դայլալում էին, և միայն կառքերին լծված յարուները, ասես հազիվ կենդանի, քարշ էին գալիւ իրենց սովորական, նկուն քայլվածքով:

Կոմսուհին 22նշաց.

— Օ՛, ի՞նչ գեղեցիկ օր է, ի՞նչ լավ է ապրել:

Յերեկվա պայծառ լույսի տակ նկարիչը փոխնիփոխ նայում էր մորը և աղջկան: Անշուշտ, նրանք տարրեր էին, բայց ժիաժամանակ այնքան նման էին, որ ասես մեկը մյուսի շարունակությունը լիներ, ստեղծված նույն արյունից ու մսից, ողեղնչված նույն կյանքով: Մանավանդ սև թծերով կետկիտված նրանց աչքերը, վառ-կապույտ՝ աղջկա մոտ և մի քիչ դժգույն մոր մոտ, Թերտենի վրա էին ուղղում, երբ նա խոսում էր, այս աստիճան համանման մի հայացք, որ նա սպասում էր նրանցից լսելու միևնույն պատասխանը: Եվ նրանց ծիծաղեցնելով ու խոսեցնելով, Թերտենը զարմանքով նկատել էր, որ իր առջւուներ բոլորովին տարրեր երկու կանայք, մեկը, որ ապրել էր և մյուսը, որ ապրելու էր: Ոչ, նա չէր կարող նախատեսել, թե ինչ կդառնար այդ աղջիկը, երբ նրա մատաղ միտքը տակավին լզարթնած ճաշակների ու բնագդների ազդեցության տարրացվեր աշխարհի իրադարձությունների մեջ: Հիմա նա սիրուն դեռատի մի աղջնակ էր, անգետ ու անգիտացված, պատրաստ ընդառաջ գնալու պատահականություններին ու սիրուն, նման նավահանգստից դուրս եկող նավին, մինչդեռ նրա մայրը, անցնելով իր կյանքի ճանապարհն ու սիրվելով, վերադառնում էր նավահանգիստ:

Թերտենը խանդաղատում էր մտածելով, որ հենց իրեն էր ընտրել ու գեռ նախընտրում էր այդ գեռնս սիրուն կինը, որ մեղմորեն օրորվում էր կառքի մեջ, գարնանային գաղց շղում։

Թերտենը նրա վրա երախտագիտական մի հայացք նետեց, կոմսուհին գուշակեց այդ, և Թերտենը նրա շրջազգեստի հպուժից պատասխան երախտագիտություն զգաց։

Թերտենը իր հերթին շշնչաց.

— Յ, այս, ի՞նչ գեղեցիկ օր է։

Իրենց հետ վերցնելով Վարենն փողոցի վրա բնակվող դքսուհուն, նրանք ուղղվեցին գեպի Հաշմանդամների տուն և, ուրիշ կառքերի հեղեղի միջով անցնելով Աստղի հրապարակի Հաղթական կամարով, հասան Ելիսյան դաշտեր։

Երիտասարդ օրիորդը, որ նստել էր Օլիվիե Թերտենի կողքին, կոնակը ձիերին դարձրած, լայնաբաց, անհագ ու անմեղունակ աշքերով նայում էր կառքերի այդ հեղեղին։ Մերթ շնորհ մերթ, երբ դքսուհին կամ կոմսուհին գլխի թեթև շարժումով պատասխանում էին որևէ ողջույնի, օրիորդը հարցնում էր. «Այդ ո՞վ է», և Թերտենը պատասխանում էր. «Պոնտեգլենները», կամ «Պյուիսելսիները», կամ «կոմսուհի դրէուկրիստը», կամ «գեղեցիկ տիկին Մանդելիերը»։

Հիմա նրանք անցնում էին Բուկոնյան անտառի մայրուշիով, թափալվող տնիվների աղմուկի միջով։ Կառքերը, որոնք արդեն այնպես չեին վխտում, ինչպես Հաղթական կամարի մոտ, կարծես մրցում էին անվերջանալի վագքի մեջ։ Վարձու կառքերը, ծանր քառանիվ կառքերը, հոյակապ ութ զսպանակավոր կառքերը մեկը մյուսից առաջ էին անցնում, բայց հանկարծ բոլորից առաջ երեսւմ էր արագ սլացող միձիանի մի հաղթակառք, որ այդ ամբողջ թափալվող բուրժուական ու աշխատկրատական ամբոխի միջով, բոլոր հասարակական խավերի, բոլոր դասակարգերի, բոլոր հիերարխիաների միշով խելահեղ արագությամբ տանում էր անփութորեն ընկողմանած մի երիտասարդ կնոջ, որի փայլիլուն ու հանդուզն պիճնագեստից անհայտ մի ժաղկի բուրմունք էր արձակվում հպանցող կառքերի վրա։

— Ո՞վ է այդ դաման, — հարցրեց Աննետը

— Զգիտեմ, — պատասխանեց Բերտենը, իսկ դքսուհին ու կոմսուհին ժպիտներ փոխանակեցին:

Տերեները բողբոջում էին, սոխակները, այդ փարիզյան զբուայգու մշտական հաճախորդները, արդեն գեղգեղում էին նորափթիթ սաղարթների մեջ, և երր կառքը, մոտենալով լճին, դանդաղեցրեց իր ընթացքը մյուսների ետևից, գրեթե դիպչելով նրանց անիվներին, կառքից կառք ողջույններ, ժպիտներ ու սիրալիր խոսքեր փոխանակվեցին: Հիմա զաւ նման էր սահող մակուզկների մի տորմիղի, ուր շատ կիրթ տիկնայք ու պարոնայք էին նստած: Դրսուհին, որ ամեն ըսպէ գլխով պատասխան էր տալիս բարձրացված գլխարկներին ու խոնարհված ճակատներին, ասես աշքի էր անցկացնում իր առջևից տողանցող մարդկանց և վերհիշում այն բոլորը, ինչ զիտեր, մտածում էր ու ենթադրում էր նրանց մասին:

— Նայիր, փոքրիկ, ահա նորից գեղեցիկ տիկին Մանդալիկը, հանրապետության գեղեցկուհին:

Թեթև ու շքեղ կառքի մեջ նստած, հանրապետության գեղեցկուհին, իր այդ անվիճելի փառքի նկատմամբ կեղծ անտարբերությամբ, թույլ էր տալիս հիանալ իր մեծ մթին աշքերով, սեաթույր վարսերի սաղավարտի տակ ցածր ճակատով և տիրական, մի քիչ խոշոր բերանով:

— Այնուամենայնիվ, նա շատ գեղեցիկ է, — ասաց Բերտենը:

Կոմսուհին չէր սիրում ուրիշ կանանց գովքը լսել Բերտենի բերանից: Նա թեթևակի թոթվեց ուսերը և ոչինչ շպատասխանեց:

Բայց երիտասարդ աղջիկը, որի մեջ հանկարծ մրցակցության բնագդը զարթնեց, համարձակվեց ասել:

— Ես ամենեին այդպես շեմ գտնում:

Նկարիչը դարձավ նրան,

— Ի՞նչ, զու նրան ամենեին գեղեցիկ չե՞ս գտնում:

— Ոչ, նա այնպիսի տեսք ունի, որ ասես նրան թանաքի մեջ են թաթախել:

Դքսուհին հրճվանքով ծիծաղեց:

— Կեցցես, փոքրիկ, ահա արդեն ութ տարի է, ինչ Փարիզի տղամարդկանց կեսը մարմրում է այդ նեգրուհու առջև: Ես

կարծում եմ, որ նրանք ծիծագում են մեր վրատ Ավելի լավ է նայիր կոմսուհի դը Հոկրիստին:

Կառքի մեջ մենակ, սպիտակ գանգրամազ շնիկի հետ, մանրանկարի նման նրբագեղ, շեկ վարսերով ու թուխ աշքերով կոմսուհին, որի նուրբ դիմագծերը արդեն հինգ կամ վեց տարի նրա երկրպագուների հիացական բացականչությունների առարկան էին հանդիսանում, ողջունում էր շրթների վրա սառած ժպիտով:

Սակայն նանեար ոչ մի հիացում չէր արտահայտում:

— Օ՛, — ասաց նա, — նա արդեն տուազին թարմությունը չունի:

Բերտենը, որը այդ երկու ախոյանուհիների մասին ամենօրյա վեճերի մեջ ամենևին չէր բաժանում տիկին դը Գիլռուայի կարծիքը, հանկարծ բարկացավ աղջկա այդ դժվարահաճության վրա:

— Սատանան տանի, — ասաց նա, — այդ կինը քեզ դուր է գալիս, թե ոչ, բայց նա զմայլելի է, և ես քեզ մաղթում եմ, որ նրա պես գեղեցիկ լինես:

— Դեհ, թողե՛ք, — ասաց դքսուհին, — դուք կանանց նկատում եք միայն այն ժամանակ, երբ նրանք երեսուն տարին լրացնում են: Աղջիկը իրավունք ունի, դուք նրանց գովում եք, երբ նրանք թառամում են:

Բերտենը բացականշեց.

— Թույլ տվեք, կինը իսկապես գեղեցիկ է դառնում ավելի ուշ հասակում, երբ նրա ամրող արտահայտչական կողմերը լրիվ երևան են գալիս:

Եվ զարգացնելով այն միտքը, թե առաջին թարմությունը հասունացած գեղեցկության ջնարակն է լոկ, Բերտենը ապացուցեց, որ բարձր խավի տղամարդիկ շեն սխալվում քիչ ուշադրություն դարձնելով երիտասարդ կանանց՝ նրանց փայլի ժամանակ և իրավունք ունեն նրանց գեղեցիկ հողակելու միայն նրանց ծաղկման վերջին շրջանում:

Կոմսուհին, դրանից շոյված, շշնջաց.

— Նա իրավացի է, նա դատում է իրրե արվեստագետ երիտասարդ դեմքը շատ սիրուն է, բայց միշտ մի քիչ հասարակ է:

Նկարիչը պնդեց, որ որոշ շրջանում դեմքը աստիճանաբար կորցնում է երիտասարդության անորոշ հմայքը և ստանում է իր վերջնական ձևը, իր բնույթը, իր կերպարանքը:

Կոմսուհին նկարչի յուրաքանչյուր բառը հաստատում էր համոզված գլխի շարժումով, և ինչքան նկարիչը պաշտպանական ճառ արտասանող փաստաբանի կրքոտությամբ, իր որդարությունը պաշտպանող մեղադրյալի ոգևորությամբ պնդում էր, այնքան կոմսուհին հայացքով ու ժեստով նրան հավանություն էր տալիս, ասես նրանք դաշինք էին կնքել ինչ-որ վտանգի գեմ իրար ալաշտպանելու համար, իրենց սպառնացող թյուր մի կարծիքի գեմ պաշտպանվելու համար Աննետը, մտախոհություններով տարված, նրանց շէր լսում: Նրա ծիծաղկու դեմքը դարձել էր լուրջ, և նա լուռ էր մնացել, այդ զբոսանքի ուրախությունից զգլիած: Այդ արել, տերեները, կառքերը, այդ գեղեցիկ, ճոխ ու զվարթ կյանքը, այդ քուլուրը նրա համար էր:

Նա այսպես ամեն օր կգար այստեղ, իրեն նույնպես կճանաշեին, կողջունեին, կնախանձեին, և տղամարդիկ, ցուց տալով իրեն, գուցե կասեին, որ ինքը գեղեցիկ է: Նա աշքերով կորոներ ամենապերճագեղ տղամարդկանց ու կանանց և շարունակ կհարցներ նրանց անունները, հետաքրքրվելով միայն այն վանկերի զուգակցությամբ, որոնք, հաճախ հանդիպելով ըրագրերում կամ պատմության դասագրքերում, նրա մեջ որոշ հարգանք ու հիացում էին առաջացնում: Բայց նա շէր կարողանում ընտելանալ այդ մեծաշուք անձանց տողանցին և նույնիսկ շէր կարողանում հավատալ, որ նրանք իրական անձեր են, ասես նա հանդիսատես լիներ ինչ-որ ներկայացման Կառքերը նրան ներշնչում էին զգվանքի հետ խառն արհամարհանք, նրան նեղում ու զայրացնում էին, և նա հանկարծ առաց.

— Ես գտնում եմ, որ այստեղ պետք է միայն տերունական կառքերը թողնեն:

Բերտենը պատասխանեց.

— Եատ լավ, օրիորդ, իսկ ո՞ւր կմնան հավասարությունը, ազատությունն ու եղբայրությունը

Աննետը դեմքը ծամածոեց, որ նշանակում էր «զրանք թողնենք ուրիշներին» և շարունակեց.

— Սովորական կառքերի համար կգտնվեր ուրիշ անտառ, օրինակ, Վենսենյան անտառը:

— Դու ետ ես մնում, փոքրիկ: Դու դեռ չգիտես, որ մենք հիմա լող ենք տալիս լիակատար դեմոկրատիայի մեջ: Այսուհանդերձ, եթե ուզում ես Բուլոնյան անտառը ամեն խառնուրդից ազատ տեսնել, եկ առավոտյան, դու այստեղ կգտնես միայն ծաղիկը, հասարակության նուրբ ծաղիկը:

Եվ Բերտենը ուրվաղձեց իր այնքան հաջող պատկերներից մեկը, Բուլոնյան անտառի առավոտյան պատկերը իր հեծյալներով ու ամազոնուհիներով, պատկերը այդ ամենաընտիր ակումբի, ուր բոլորը իրար ճանաշում են իրենց անուններով, ազգակցական կապերով, տիտղոսներով, առաքինություններով ու թերություններով, ասես նրանք բոլորը ապրում են միննույն թաղամասում կամ միննույն գյուղաքաղաքում:

— Դուք հաճախ եք գալիս այստեղ, — հարցրեց Աննետը:

— Շատ հաճախ. սա, իրոք որ, Փարիզի ամենազմայլելի տեղն է:

— Առավոտյան դուք ձի նստո՞ւմ եք:

— Այո, իհարկե:

— Իսկ կեսօրից հետո այցելություններ տալիս եք:

— Այո:

— Իսկ դուք ե՞րբ եք աշխատում:

— Ես աշխատում եմ... երբեմն, և հետո ես իմ մասնագիտությունն եմ ընտրել իմ ճաշակի համաձայն: Քանի որ ես գեղեցիկ դամաներին եմ նկարում, ինձ հարկ է լինում նրանց այցելել և հաճախ ամեն տեղ ուղեկցել:

— Ոտքո՞վ, թե ձիով, — հարցրեց Աննետը միշտ առանց ծիծաղելու:

Բերտենը Աննետի վրա նետեց խեթ ու գոհունակ մի հայցք, որ ասես նշանակում էր. «Տես, տես, արդեն սրամտում է: Քեզանից բան դուրս կդա»:

Հեռվից, ձմեռային քնից հազիվ զարթնած ընդարձակ դաշտավայրերից սառը քամի փշեց, և ամբողջ անտառը, հեզանակ, մրսկան ու շնաշխարհիկ անտառը սարսուաց:

Մի քանի վայրկյան տերևները սրսփացին ծառերի վրա և գործվածքները՝ ուսերի վրա։ Բոլոր կանայք գրեթե միատեսակ շարժումով իրենց բազուկների ու կրծքի վրա քաշեցին երենց ետև ձգված հանդերձանքը, իսկ ձիերը սկսեցին վարչու ծառուղիներով, ասես սուրացող սուր քամին նրանց մըտրակել էր իր շնչով։

Արագ ետ վերադարձան արծաթե լծասարքերի հնչունի տակ, մայր մտնող արեի շեղարձակ ու շառագույն ճառագայթների հեղեղի մեջ։

— Մի՞թե դուք տուն եք գնում,— հարցրեց կռմսուհին կարշին, որի բոլոր սովորությունները նա գիտեր։

— Ու, ես գնում եմ ակումբ։

— Ուրեմն մենք ձեզ այնտեղ կտանենք։

— Շատ լավ, շնորհակալ եմ։

— Իսկ ե՞րբ մեզ դքսուհու հետ կհրավիրեք ձեզ մոտ նաև քաճաշի։

— Նշանակեցիք օրը։

Փարիզեցիների այս տիտղոսյալ նկարիչը, որին հիացողութերը մկրտել էին «ուսալիստական Վաստո»\*, իսկ վատարանողները կոչում էին «կանացի շրջազգեստների ու վերնազգեստների լուսանկարիչ», հաճախ իր մոտ նախաճաշին կամ ճաշին ընդունում էր գեղեցիկ անձանց, որոնց դիմագծերը նա վերաբռնի էր, ինչպես նաև ուրիշ, նշանավոր ու ճանաշլած կանանց, որոնց շատ էին զվարձացնում այս փոքրիկ տոնախմբությունները ամուրի տանը։

— Վազը չէ մյուս օր։ Միրելի դքսուհի, ձեզ համար հարձա՞ր է վազը չէ մյուս օր, — հարցրեց տիկին զր Գիլոուան։

— Այո, այու Դուք շատ սիրալիք եք։ Պարոն Բերտենը ոյսպիսի գեղքերում բնավ չի մատամ իմ մասին։ Պարզ է, որ ես այլևս երիտասարդ չեմ։

Կոմսուհին, որ վարժվել էր նկարչի տունը մասամբ իր և իմականը նկատել, ասաց։

— Միայն այս շորսս կլինենք, դքսուհին, Աննետը, ես և դուք, այնպես չէ, մեծ նկարիչ։

\* Ֆրանսիացի նկարիչ ու փորագրանկարիչ (1684—1721)։

— Միայն մենք կլինենք, — ասաց Թերտենը, իշնելով կառ-  
քից, — և ես ձեզ համար ալզասյան ձևով խեցքետիններ պատ-  
րաստել կտամ:

— Օ՛, դուք փոքրիկին քմապարար ուտելիքների պիտի  
վարժեցնեք:

Կանգնելով կառքի դռնակի մոտ, Թերտենը ողջույն տվեց,  
արագ մտավ ակումբի նախասրահը, վերարկուն ու ձեռնա-  
փայտը նետեց սպասյակների վաշտին, որոնք վեր էին թոնել,  
ինչպես զինվորները սպաների առջև, ապա բարձրացավ լայն  
սանդուղքով, անցավ կարճ տափատ հազած սպասյակների մի  
ուրիշ բրիգադի առջևից, բախեց ինչ-որ դուն և հանկարծ իր  
մեջ երիտասարդական ժրություն զգաց, միշտնցքի ծայրին  
լսելով իրար զարնվող խաղասրերի անընդհատ զրնգոցը, սրա-  
խաղացների դոփյունը և բարձրածայն կանչերը. — Դիպավ: —  
Ինձ: — Կողքով անցավ: — Ունեմ: — Դիպավ: — Զեզ:

Սրամարտի սրահում մրցում էին սրամարտիկները, որոնք  
հագել էին մոխրագույն վերնաշապիկներ, կոճերին պրկված  
տափատներ և կաշվե լանջապանակներ, որոնք գոգնոցի ձևով  
իշնում էին փորի վրա. մի ձեռքը բարձրացնելով ու ծալելով,  
իսկ մյուս ձեռքով, որ խոշորացել էր հազած թաթպանի պատ-  
ճառով, բռնելով նուրբ ու ճկուն խաղասուրը, նրանք հարձակ-  
վում ու ետ էին քաշվում մեքենայական միմուների արագու-  
թյամբ ու ճկունությամբ:

Ունանք հանգստանում, զրուցում էին, տակավին հեալով,  
կարմրած, քրտնած, թաշկինակով սրբելով ճակատն ու վիզ-  
ուրիշներ, նստած քառակուսի բազմոցի վրա, որ ձգված էր  
ամբողջ սրահի պատի երկայնքով, դիտում էին սուսերամար-  
տը: Լիվերդին Հանդայի դեմ էր, իսկ ակումբի սուսերամար-  
տի ուսուցիչ Տալյադը՝ բարձրահասակ Ռոկդիանի դեմ:

Թերտենը ժայռալով, իրեն դդալով ինչպես տանը, սեղմում  
էր ձեռքերը:

— Դուք ինձ հետ կխաղաք, — գոշեց նրան բարոն դը Բավ-  
րին:

— Զեր տրամադրության տակ եմ, սիրելիս:

Եվ Թերտենը անցավ հանդերձարան՝ զգեստները փո-  
խելու:

Վաղուց նա իրեն այնպես ճկուն ու կորովի շէր զգացել, և սախազգալով, որ ինքը գերազանցորեն է կովելու, շտապում էր խաղալու վազող աշակերտի անհամբերությամբ։ Հենց որ հակառակորդը առցեն ելավ, նա անսովոր եռանդով հարձակվեց նրա վրա և, տասը բոպեում տասնմեկ անգամ դիպչելով նրան, այնպես հոգնեցրեց, որ բարոնը գթություն հայցեց։ Ապա նա կովեց Պյունիզիմոնի և իր արվեստակից Ամորի Մալդանի հետ։

Իր թրթուացող մարմինը դնելով սառը դուշի տակ, Բերտենը հիշեց իր լոգանքները քսանամյա հասակում, երբ խոր աշնանը արվարձանի կամուրջից զլսիվայր նետվում էր Սենայի ճեց, որպեսզի զարմացներ բուրժուաներին։

— Դու այստե՞ղ ես ճաշում, — հարցրեց նրան Մալդանը։

— Այո։

— Մենք մի սեղանի կնստենք լիվերդիի, Ռոկդիանի և Լանդայի հետ։ Շտապիր, ժամը յոթից քառորդ անց է։

Լեփ-լեցուն ճաշարանը փեթակի նման բզզում էր։

Այստեղ էին Փարիզի բոլոր գիշերային թափառաշրջիկները, բոլոր անգործներն ու գործավորները, բոլոր նրանք, ովքեր երեկոյան ժամը յոթից հետո շգիտեն ինչ անեն և գնում են ակումբ ճաշելու, որպեսզի, պատահական մի հանդիպման շնորհիվ, կառշեն որևէ մեկին կամ որևէ բանի։

Երբ ճինգ բարեկամները նստեցին, բանկիր լիվերդին, պնդակազմ ու կարճահասակ քառասնամյա մի մարդ, աստղ Շերտենին։

— Դուք այսօր կատաղած էիք։

Նկարիչը պատասխանեց։

— Այո, ես այսօր զարմանալի գործեր պիտի անեմ։

Մյուսները ժպտացին, իսկ բնանկարիչ Ամորի Մալդանը, Կիհար, ճաղատ, ալեմորուս մի մարդ, նրբամտորեն ասաց։

— Ես նույնպես ապրիլին կենսահյութերի հորդում եմ լզում միշտ, և իմ վրա երեսում են մի քանի, ամենաշատը մի վեցյակ տերեներ, իսկ հետո ամեն ինչ լուծվում է զգացումների մեջ. բայց պտուղներ երբեք չեն լինում։

Մարկիզ դը Ռոկդիանը և կոմս դը Լանդան Մալդանին ափսառնք հայտնեցին։ Լինելով նրանից տարեց, թեև ոչ մի վարժ

աշք չէր՝ կարող որոշել նրանց տարիքը, ակումբի այդ երկու անդամները, ձիավարներ ու սրամարտիկներ, որոնց մարմինը պողպատի պես կոփվել էր մշտական վարժություններից, պարծենում էին, որ իրենք ամեն ինչով ավելի կենսառուցք են, քան նոր սերնդի ջլատված ստահակները:

Ռոկղիանը, լավ ընտանիքից սերած, բոլոր սալոնները հաճախած, թեև կասկածված ամեն տեսակ դրամանենգությունների մեջ, որ, թերտենի ասելով, զարմանալի չէր, քանի որ նա երկար տարիներ խաղատներում էր անցկացրել, ամուսնացած էր, բայց բաժանված կնոջից, որը նրան ունտա էր վճարում. նա բելգիական ու պորտուգալական բանկերի տնօրին էր և, գատելով նրա դոնքիշոտյան կորովի կերպարանքից, հպարտանում էր ամեն բան անելու ընդունակ ազնվականի իր մի քիչ մթաղնած պատվով, ժամանակ առ ժամանակ իր արյունը մաքրելով մենամարտի մեջ ստացած քերծվածքներով:

Կոմս դր Լանգան, բարեհոգի մի հսկա, հպարտ իր հասակով և ուսերով, թեև ամուսնացած և երկու երեխաների հայր, բայց մեծ դժվարությամբ իրեն ստիպում էր շաբաթը երեք անգամ տանը ճաշելու, իսկ մյուս օրերին սրամարտի սրահում վարժություններից հետո մնում էր ակումբում բարեկամների հետ:

— Ակումբը մի ընտանիք է,— ասում էր նա, — ընտանիք նրանց համար, որոնք գեռ ընտանիք չունեն, նրանց համար, որոնք երբեք ընտանիք չեն ունենա, և նրանց համար, որոնք ձանձրանում են իրենց ընտանիքում:

Խոսեցին կանանց մասին և ասկա անեկդոտներից անցան հիշողությունների և հիշողություններից՝ ինքնազովությունների, ընդհուպ մինչև անպարկեցած խոստովանությունները:

Մարկիզ դր Ռոկղիանը որոշակի հատկանշումներով բնորոշում էր իր սիրուհիներին. զրանք բարձր խավի կանայք էին, որոնց անունները նա չէր ասում, որպեսզի զրանք գուշակել տա զրուցակիցներին: Բանկիր Լիվերդին իր սիրուհիներին կոչում էր անուններով:

Նա պատմում էր.

— Ես այն ժամանակ շատ մոտ էի մի դիվանագետի կնոր

Նու: Եվ ահա մի երեկո, նրանից բաժանվելիս, ես նրան առացի, «Իմ փոքրիկ Մարգարիտ...»:

Նա կանգ առավ, ժպիտներ տեսնելով շուրջը, ապա շարունակեց.

— Հը՛մ: Ես բերնից փախցրի... Հարկավոր է սովորություն ընդունել բոլոր կանանց Սոֆի կոչելու:

Օլիվիե Բերտենը, երբ նրան հարցնում էին, սովորաբար հայտարարում էր շատ զուսպ.

— Ես գոհանում եմ իմ բնատիպերով:

Ջրուցակիցները ձեացնում էին, թե դրան հավատում են, իսկ կանգան, որ պարզապես փողոցային աղջիկների ետևից էր վազում, ոգեորվում էր փողոցներով ման եկող համեղ պատառների և ժամը տասր ֆրանկով նկարչի առջև մերկացող երիտասարդ կանանց մասին մտածելուց:

Ինչքան շշերը դատարկվում էին, այնքան այդ բոլոր ծեռուկները, ինչպես նրանց կոշում էին ակումբի երիտասարդները, այդ բոլոր կարմրած ծերուկները շիկանում էին, բորբոքված ցանկություններով և խմորված կրքերով համակված:

Սուրճից հետո Ռոկդիանը անցավ բաց պատմությունների, որոնք ավելի ճշմարտանման են թվում, և, մոռանալով բարձր խավի կանանց, սկսեց փառաբանել հասարակ, թեթևաբարո կանանց:

— Փարիզը, — ասում էր նա, լիկյորի ըմպանակը ձեռքին բռնած, — միակ քաղաքն է, ուր աղամարդը չի ծերանում, ուր նա հիսուն տարեկան հասակում, եթե գեռ պինդ է և իրեն լավ է պահել, միշտ կգտնի հրեշտակի պես սիրուն տասնութամյա մի շարաճճի աղջկա, որ կսիրի իրեն:

Կանգան տեսնելով, որ Ռոկդիանը լիկյորներից հետո նախշին Ռոկդիանը դարձավ, ոգեորությամբ համաձայնեց նրան և մեկ-մեկ թվեց այն սիրունիկ աղջիկներին, որոնք մինչև հիմա էլ պաշտում էին իրեն:

Բայց լիվերդին, որ ավելի սկեպտիկ էր և պնդում էր, թե շիտե կանանց իսկական արժեքը, մրմնչաց.

— Նրանք միայն ասում են, որ ձեզ պաշտում են:

Կանգան առարկեց.

— Նրանք ինձ այդ ապացուցում են, սիրելիս:

— Այդ ապացույցները հաշվի մեջ չեն:

— Դրանք ինձ բավական են:

Ռոկղիանը գոշեց.

— Բայց նրանք էլ են այդպես մտածում, սատանան տանի:  
Մի՞թե զուք կարծում եք, որ մի քանամյա սիրունիկ շարաճճի  
աղջիկ, որ հինգ-վեց տարուց ի վեր ուրախ-զվարթ կյանք է  
վարում Փարիզում, ուր մեր բոլոր բեղերը նրան համբույրների  
ճաշակ են տվել, ասլա փշացրել ևն այդ ճաշակը, կարող է  
երեսնամյա տղամարդը տարբերել վաթունամյա տղամար-  
դուց: Բավակա՞ն է, ի՞նչ հիմարություն: Այդպիսի աղջիկը շա-  
փականց շատ է տեսել և շափականց շատ է ճանաչել: Գրագ  
կպամ, որ նա սրաի խորքում ծերունի բանկիրին գերազասում  
է, այո, անպայման գերազասում է երիտասարդ սուահակից:  
Բայց մի՞թե նա դրա մասին է մտածում: Մի՞թե այսուեղի  
տղամարդիկ տարիք ունեն: Է՞՞, սիրելիս, մենք երիտասարդա-  
նում ենք սպիտակելով և ինչքան ավելի ենք սպիտակում, այն-  
քան ավելի մեղ ասում են, որ մեղ սիրում են, այնքան ավելի  
այդ ապացուցում են և այնքան ավելի դրան հավատում են:

Նրանք սեղանից վեր կացան, ալկոհոլից կարմրած ու  
գրգոված, պատրաստ արշավելու ամեն տեսակ հազիքանակ-  
ների համար, և սկսեցին խորհրդակցել, թե ինչպես անցկաց-  
նեն երեկոն: Բերտենը առաջարկեց գնալ կրկես, Ռոկղիանը՝  
ձիարշավարան, Մալդանը՝ Եղեմ, իսկ Լանդան՝ Ֆոլի-Բերժեր,  
Այդ միջոցին լարված ջութակների թեթև, հեռավոր հնչյուն-  
ներ հասան նրանց ականջին:

— Ի՞նչ է, — ասաց Ռոկղիանը, — այսօր երաժշտություն  
կա ակումբում:

— Այո, — պատասխանեց Բերտենը, — դուքս դալուց առաջ  
տասը բոպեով շանցնե՞նք այնտեղ:

— Դնանք:

Նրանք անցան սրահով, բիլիարդանոցով, խաղասենյակով և  
հասան յուրատեսակ մի օթյակ, որ նայում էր նվազախմբի էս-  
տրադայի վրա: Չորս պարոններ, բազկաթուների մեջ միքքճ-  
ված, մտամփոփ սպասում էին սկսվելուն, իսկ ներքնում, դա-  
տարկ աթոռների շարքերի մեջտեղ, ուրիշ տասը հոգի զրուցում  
էին նստած ու կանդնած:

Նվագախմբի ղեկավարը իր ձողափայտով թխկթխկացրեց պրակալի վրա, սկսեցին:

Օլիվիե Բերտենը պաշտում էր երաժշտությունը, ինչպես պաշտում են ափիոնը, երաժշտությունը՝ նրան սուզում էր երազների մեջ:

Հենց որ նրան հասավ երաժշտական դործիքների հնչուն ալիքը, նա իրեն զգաց հարբածի պես. նրա մարմինն ու միտքը սնսովոր կերպով թրթուացին, և երևակայությունը, մեղեղիներով զինովցած, խելահեղորեն տարիեց քաղցր երազներով ու հաճնլի անուրշներով։ Աշքերը փակած, ուսքը սաքի վրա դրած, ռազուկները մեղկացած, նա լսում էր հնչունները և տեսնում էր պատկերներ, որոնք անցնում էին իր հայացքի ու մտքի առջևով։

Նվագախումբը նվագում էր Հայոցնի սիմֆոնիան, և հենց որ նկարչի կոպերը փակվեցին, նա նորից տեսավ անտառը, շուրջը բազմաթիվ կառքեր, իսկ դիմացը կառի մեջ տեսավ կոմսուհուն ու աղջկան։ Նա լսում էր նրանց ձայները, հետեւում էր նրանց խոսքերին, զգում էր կառքի երերումը, շնչում էր տեսների բուրմունքով թաթավված օղը։ \*

Երեք անգամ նրա հարեանը, հետը խոսելով, ընդհատեց այդ ահսիլքը, որը երեք անգամ վերսկսվեց, ինչպես ծովով անցնելուց հետո վերսկսվում է նավի ճոճումը, թեև անկողին, որի վրա պառկած է նավագնացը, անշարժ է։

Ապա տեսիլքը լայնացավ, ծավալվեց ինչ-որ հեռագոր ու զերության մեջ այդ երկու կանանց հետ միասին. նրանք առաջվա նման նստած էին իր դիմաց մերթ երկաթուղու վագոնում, մերթ օտարերկրացիների հյուրանոցի սեղանին։ Քանի տեսում էր երաժշտությունը, երկու կանայք միշտ այսպես ուղեկցում էին նրան, ասես այդ արեավառ օրվա զբոսանքի ժամանակ նրանց դեմքերի պատկերը դրոշմված էր նրա աշքերի մեջ։

Լոռությունը, ապա ձայների ու տեղաշարժված աթոռների ազմուկը ցրեցին նրա մշուշոտ անուրշները, և նա նկատեց, որ իր շորս բարեկամները մրափում էին իր կողքին և նրանց պարզունակ կեցվածքների մեջ քնից հաղթահարված ուշադրությունն էր երեսում։

Արթնացնելով նրանց, թերտենը հարցրեց.

— Դե՛մ, ի՞նչ ենք անհլու մենք հիմաւ

— Ես,— բացեիբաց պատասխանեց Ռոկդիանը, — Ես ուղում եմ մի քիշ էլ քնել այստեղ:

— Ես նույնպես, — ասաց Լանդան:

Թերտենը ոտքի ելավ.

— Դեհ լավ, իսկ ես տուն կվերադառնամ, մի քիշ հոգնած եմ:

Թերտենը, ընդհակառակը, իրեն շատ ոգևորված էր զգում, բայց ուզում էր գնալ. նա վախենում էր, որ երեկոն կվերջանա բակարայի \* սեղանի շուրջ, ինչպես միշտ լինում էր ակումբում:

Ուստի նա տուն վերադառնավ, իսկ հետեւալ օրը տենդագին անցկացրած գիշերից հետո, մեկը այն գիշերներից, երբ արվեստագետներն ընկնում են ուղեղային բուռն գործունեության վիճակում, որ ներշնչում անունով են մկրտել, նա որոշեց տնից դուրս չգալ և մինչև երեկո աշխատել:

Դա հիանալի օր էր, մեկը այն օրերից, երբ մարդ հեշտ է ստեղծագործում, երբ դադարարը ասես իշխում է ձեռքերի մեջ և ինքն իրեն հաստատվում կտավի վրա:

Դոները գոց, արտաքին աշխարհից կտրված, բոլորի համար փակված առանձնատան անդորրության մեջ, արվեստանոցի բարեկամական լոռության մեջ, պայծառատես, լուսամիտ, գրգոված ու կայտառացած, թերտենը վայելեց սոսկ արվեստագետներին տրված երջանկությունը, իր ստեղծագործությունը ուրախության մեջ հղանալու երջանկությունը: Աշխատանքի այդ ժամերին նրա համար ոչինչ գոյություն չուներ, բացի կտավի կտորից, ուր նրա վրձնի փաղաքուշ հպման տակ ծնվում էր պատկերը, և ստեղծագործական բեղմնավորության այդ նոպաների ժամանակ նա անսովոր, կենսուրախ, կենսահորդ ու արբեցուցիչ մի զգացում էր ունենում: Երեկոյան նա բոլորովին շախչախված էր, ինչպես առողջ Փիզիկական հոգնությունից հետո, և անկողին մտավ հետեւալ օրը նշանակված նախաճաշի հաճելի մտքով:

\* Բղբախաղի տեսակ, բախտիխաղ:

Սեղանը զարդարվեց ծաղիկներով, ճաշացուցակը խնամքավ կազմվեց փափկասուն տիկին դը Գիլուայի ճաշակի համաձայն, և, ի հեճուկս բուռն, բայց կարճատե դիմադրության նկարիչը իր հյուրերին ստիպեց շամպայն խմել:

— Աղջիկս պիտի գինովնա, — ասաց կոմսուհին:

Դքսուհին ներողամտորեն պատասխանեց.

— Աստված իմ, բայց չէ՞ որ սկսք է գինովնա մի անումք:

Անցնելով արվեստանոց, բոլորն իրենց համակված էին զգում այն թեթև ու վերացնող խնդությամբ, որից ասես թեր ոն բուսնում ոտնկիրի վրա:

Դքսուհին ու կոմսուհին, որոնք ֆրանսիական մայրերի կոմիտնի նիստ ունեին, պատրաստվեցին նախապես տուն տանել գեռատի աղջկան, բայց թերտենը առաջարկեց հետիոտն մի զրուանք անել նրա հետ և նրան տանել Մալզերբի բռլվար. Երանք դուրս եկան:

— Գնանք երկար ճանապարհով, — ասաց Աննետը:

— Ուզում ես թափառել Մոնսոյի զրուայգում: Դա շատ սիրուն անկյուն է. կնայենք մանկիկներին ու դայակներին:

— Այո, այո, հոժարությամբ:

Նրանք անցան Վելասկեսի պողոտայի ոսկեզօծ ու հոյակետ ցանկապատի կողքով, որ ցուցանակ ու մուտք է ծարայում Փարիզի կենտրոնում սեթենթ նազանքով տարածված երշխանական ապարանքներով գոտենորված այս գեղաշուք ու գալարազարդ զրուայդու համար:

Լայն ծառուղիների երկայնքով, որոնք հնարամիտ ոլորապտույտներով հատում էին գալարիքներն ու ծառատունկերը, կանայք ու տղամարդիկ, երկաթե աթոռների վրա նստած, հետեւում են անցնողների շարանին, իսկ առվակների պես գալարվող ու ստվերների տակ մտնող նրբուղիների վրա մի խումբ երեխաներ, ավագի վրա հավաքված, վազվզում են, պարանով զատկում դայակների անտարբեր նայվածքների կամ մայրերի անհանգիստ հայացքների տակ: Վիթխարի, գմբեթաձև խուզված ծառերը, որոնք տերեւներից կազմված հուշարձանների են սմանվում, հսկա շագանակենիները, որոնց ծանր կանաչությունը ծածկված է կարմիր ու սպիտակ ծաղիկների ողկույզ-

ներով, նշանավոր ժանտաթղենիները, գեկորատիվ սոսիները. Կիտմամբ կորացրած բներով, զարդարում են բարեձև մարդասեղերը, ստեղծելով զմայլելի հեռապատկերներ։

Շոգ է։ Տատրակները մնշում են ծառերի տերևների մեջ. Թոշելով գագաթից գագաթ, իսկ ճնճղուկները լողում են ծիածանի մեջ, արևից լուսավորված ջրային փոշու վրա, որով ծածկվել է հենց նոր թրջված քնքուշ դալարիքը։ Թվում է, թե ապիտակ արձանները երանության մեջ են գտնվում իրենց պատվանդանների վրա այդ կանաչ զովության մեջ։ Մարմարն մի տղա իր ոտքից դուրս է քաշում շտեսնգող մի փուշ, ասես նա հենց նոր է խոցվել Դիանայի ետևից վագելիս, որը փախշում է ահա այնտեղ, գեղի մի լճակ, եղերված պուրակներով, ուր մի տաճարի ավերակներն են ապաստանել։

Իսկ ուրիշ արձաններ, սիրահար ու սառը համբուրվում են պուրակի եզրին, կամ երազում են, ծունկը ձեռքով բռնած։ Մի ջրվեժ գեղեցիկ ժայռերով թափալվում է փրփրալով։ Սյան նման կտրված մի ծառի շուրջ բաղեղ է փաթաթվում. մի շիրմաքարի վրա արձանագրություն կա գրված։ Մարդասեղերի վրա քարի սյունիկները չեն հիշեցնում Ակրոպոլը, ինչպես այս գեղեցիկ փոքրիկ զրոսայգին չի հիշեցնում կուսական անտառները։

Այս արվեստական ու զմայլելի վայրը, ուր քաղաքացիները գնում են շերմոցների մեջ աճած ծաղիկները դիտելու և հիանում են, ինչպես հիանում են թատերական մի ներկայացուժով, այն հաճելի տեսարանով, որ գեղեցիկ քնությունն ընծայում է Փարիզի հենց կենտրոնում։

Օլիվիե Բերտենը երկար տարիներ գրեթե ամեն օր դալիս էր այս նախասիրած զրոսայգին, նայելու համար փարիզուհիներին իրենց իսկական շրջանակի մեջ։ «Այս զրոսայգին,—ասում էր նա,— ստեղծված է աբգուզարդի համար. վատ հագնված մարդիկ սարսափ են ներշնչում այստեղ»։ Եվ նա ժամերով թափառաշրջում էր այնտեղ, ուսումնասիրելով բոլոր բույսերն ու բոլոր մշտական զրոսնողներին։

Նա Աննետի կողքին քայլում էր ծառուղիներով, մտացրիկ նայելով զրոսայգու խայտաբղետ ու եռուն կյանքին։

— Օ, ի՞նչ սիրուն հրեշտակ է, — բացականշեց Աննետը։

Աննետը ակնապիշ նայում էր շեկ, գանգրահեր ու կապուտաշյա մի մանշուկի, որ զարմանքով ու զմալլանքով աշքերն հառել էր նրա վրա:

Ապա աշքի անցկացրեց բոլոր երեխաներին. և այդ պահումված կենդանի պուպրիկներին նայելու հաճույքից դարձակ շաղակրատ ու դյուրահաղորդ:

Նա քայլում էր ղանդաղ և թերտենին իր դիտողություններն ու խորհրդածություններն էր հայտնում երեխաների, դայակների, մայրերի մասին: Գիրուկ երեխաները նրա մեջ առաջացնուելին ուրախ բացականչություններ, իսկ դժգույն երեխաները՝ արգահատանք:

Թերտենը լսում էր Աննետին, բայց ավելի շատ զվարճանում էր նրանով, քան մանուկներով, և, շմոռանալով իր նկար-լության մասին, յուրովի շշնջում էր. «Հրաշալի՞ է»: Ի՞նչ պատվական նկար նա կարող էր դուրս բերել զրոսայգու այդ անկյունից և դայակների, մայրերի ու երեխաների այդ փնչից: Ինչպես թերտենը շէր մտածել այդ մասին:

— Գուսիրո՞ւմ ես այդ մանուկներին, — հարցրեց թերտենը:  
— Ես պաշտում եմ նրանց:

Տեսնելով, թե ինչպես Աննետը նայում է երեխաներին, թերտենն զգում էր, որ նա ցանկություն ունի նրանց ձեռքից բռնելու, նրանց գրկելու, համբուրելու. ապագա մոր բնական ուխանդակաթ ցանկություն: Եվ թերտենը զարմանում էր կանացի մարմնի մեջ թաքնված այդ խորհրդավոր բնագդի վրա:

Որովհետև Աննետը խօսելու տրամադրություն ուներ, թերտենը հարցուիորձ արեց նրա ճաշակների մասին: Աննետը գրավիշ պարզամտությամբ թերտենին պատմեց բարձր հասարակության մեջ իր հույսերի հաջողության ու փառքի մասին և ցանկություն հայտնեց ունենալու գեղեցիկ ձիեր, որոնց նաև ճանաշում էր ինչպես ձիավաճառ, քանի որ Ռոնսիերի որոշ ֆերմաներում զրադվում էին ձիաբուծությամբ. բայց նա փեսացուի մասին անհանգստանում էր ոչ ավելի, քան բնակարանի մասին, որ միշտ կարելի է ընարել բազմաթիվ վարձուարված բնակարաններից:

Նրանք մոտեցան լճակին, ուր հանդարտ լողում էին հախապակե թոշունների նման մաքուր ու հանգիստ երկու կա-

քապներ ու վեց բաղեր և անցան երիտասարդ մի կնոջ մոտից, որ նստել էր աթոռին՝ ծնկների վրա բացված գրքով, աշքերն ուղղած հորիզոնին, հոգին ուղացած երազների մեջ:

Այդ կինը անշարժ էր, ինչպես մոմե ֆիգուրա. տգեղ, խոնարհ, համեստ հազնված, ինչպես մի աղջիկ, որ չի երազում դուր գալ, թերեւս մի ուսուցչուհի, նա փոխադրվել էր երազանքի աշխարհը, իր սիրտը թովված մի խոսքով կամ տիրապետված մի բառով։ Նա, ըստ երեսյթին, գրքում սկսված արկածք զարգացնում էր իր մտքում, իր հույսերի թելաղրանքի համաձայն։

Թերտևնը զարմանքով կանգ առավ:

— Ի՞նչ լավ է այդպես երազանքների մեջ ընկնել, — ասաց Համազար:

Նրանք անցան երիտասարդ կնոջ առջեից, ապա վերադարձան ու նորից անցան, բայց կինը նրանց չնկատեց, այնքան շարված ուշադրությամբ հետեւում էր իր մտքերի հեռասլաք։ Թոփշը ին:

Նկարիչը Աննետին ասաց.

— Լսիր, փոքրիկ, քեզ համար ձանձրալի վի՞ լինի մեկ կամ երկու անգամ դիրք ընդունել նկարվելու համար։

— Ոչ, ընդհակառակը։

— Ուրեմն նայիր այդ օրիորդին, որ հածում է իդեալական Ֆի աշխարհում։

— Նրան, ով այնտեղ աթոռի վրա՞ է նստել։

— Այո։ Դու նույնպես կնստես աթոռի վրա, մի զիրք կրանաս ծնկներիդ վրա և կաշխատես նրա նման անել։ Դու երբեք երազե՞լ ես արթուն ժամանակ։

— Անշուշտ։

— Ինչի՞ մասին։

Եվ թերտենը փորձեց նրան խոստովանեցնել իր եթերային հանապարհորդությունները, բայց Աննետը չէր ուզում պատասխանել, խուսափում էր թերտենի հարցերից, նայում էր բագերին, որոնք լողում էին հացի հոտեից, որ նրանց նետում էր ինչ-որ դամա, և իրեն անհարմար վիճակում էր զդում, ասես թերտենը նրա զգայուն տեղին էր դիպել։

Ապա, խոսքի նյութը փոխելու համար, Աննետը պատմեց

Խոնսիերում անցկացրած իր կյանքի մասին, խոսեց իր տատիկի մասին, որի համար ինքն ամեն օր բարձրածայն ընթերցում էր և որը հիմա, տնտարակույս, շատ մենակ ու շատ տխուր կլինի:

Աննետին լսելիս նկարիչը իրեն թոշունի նման ուրախ էր զգում, այնպես ուրախ, ինչպես երբեք չէր եղել: Այն ամենը, ինչ Աննետը ասում էր նկարչին, այդ բոլոր մանր, փշուն ու աննշան մանրամասնությունները աղջնակի պարզակյաց գոյության մասին՝ զվարճացնում ու հետաքրքրում էին նրան:

— Նստենք, — ասաց Բերտենը:

Նրանք նստեցին ջրի մոտ: Երկու կարապները լողացին դեպի նրանք և կերի սպասեցին:

Բերտենն զգաց, որ իր մեջ հուշեր են արթնանում, այնպիսի անհետացած, մոռացության մեջ սուզված հուշեր, որոնք հանկարծ վերադառնում են հայտնի չէ ինչու: Նրանք ծագեցին այնպես արագ, այնպիսի բազմազանությամբ ու բազմախըռնությամբ, որ նրան թվաց, թե ինչ-որ ձեռք շարժում էր իր հիշողությունը ծածկող տիղմը:

Նա փնտրում էր, թե որտեղից էր իր մեջ հայտնվում նախկին կյանքի այդ բարախյունը, որ նա շատ անգամներ զգացել ու նկատել էր, բայց ոչ այնպես ուժգին, ինչպես այսօր: Մի որևէ պատճառ եղել էր հուշերի այդ հանկարծական զարթոնքին, նյութական ու հասարակ մի պատճառ, հաճախ մի բուրմունք, մի անուշահոտություն: Քանի՛-քանի՛ անգամ օծանելիքի բույր արձակող կանացի մի շրջազգեստ հիշողության մեջ արթնացրել էր վաղուց ջնջված գեպքեր: Տուալետի հին սրվակների խորքում ևս նա գտել էր մասնիկներ իր երբեմնի գոյությունից: Բոլոր թափառուն բույրերը փողոցների, դաշտերի, տների, կահույքների հաճելի ու տհաճ բույրերը, ամառային երեկոների տաք բույրերն ու ձմեռային երեկոների ցուրտ բույրերը, բոլորը միշտ նրա մեջ վերակենդանացնում էին հեռավոր անցյալը, ասես այդ բուրմունքները, նման այն անուշահոտություններին, որոնց մեջ պահպում են մումիաները, իրենց մեջ պահում են զմուսված անկենդան եղելությունները:

Արդյո՞ք թրջված խոտը կամ ծաղկած շագանակենիներն էին այսպես վերակենդանացնում անցյալը: Ո՞չ Հապա ի՞նչն:

Էր: Արդյո՞ք Բերտենը տեսել էր որևէ բան, որ կարող էր այդ ժամանապի պատճառ լինել: Ո՞չ: Գուցե նրա հանդիպած կանցից մեկի դիմագծերը նրան հիշեցնում էին անցյալը և, թեև նա չէր ճանաշում նրանց, նրա սրտում հնչեցնում էին անցյալի բոլոր զանգերը:

Արդյո՞ք դա որևէ հնչյուն էր: Շատ համախ, պատահաբար լսելով մի գաշնամուր կամ անծանոթ մի ձայն, կամ նույնիսկ մի երգեհնիկ, որ հրապարակի վրա մոդայից ընկած եղանակ է նվազում, նա հանկարծ քսան տարով երիտասարդանում էր և նրա կուրծքը ուռչում էր մոռացված խանդաղատանքներից:

Բայց անցյալի այդ կոչը շարունակվում էր համառ, անորակի, գրեթե գրգռիչ կերպով: Ի՞նչ կար նրա շուրջն ու մոտը, որ կարողանում էր այսպես կենդանացնել հանգած հույզերը:

— Օդը մի քիչ զով է, գնանք, — ասաց Բերտենը:

Նրանք վեր կացան ու նորից սկսեցին քայլել:

Բերտենը նայում էր նստարաններին նստած աղքատներին, որոնց համար աթոռին վճարելը շատ մեծ ծախս էր:

Աննետը նույնպես հիմա դիտում էր նրանց, հետաքրքրվում էր նրանց կյանքով, նրանց արհեստով և զարմանում էր, որ, ի հեճուկս իրենց ողորմելի կերպարանքին, նրանք գալիս են ժամանակ անցկացնելու հանրային այս գեղեցիկ զբոսայգում:

Եվ հետզհետե ավելի պարզորդ կերպով Բերտենը վերհիշում էր անցած տարիները: Նրան թվում էր, թե ինչ-որ ճանճքզում է իր մոտ և ականջները լցնում վերջացած օրերի շփոթ շոխնդով:

Տեսնելով որ Բերտենը մտախոհ է, Աննետը հարցրեց.

— Ի՞նչ է պատահել ձեզ: Տխուր եք երեսում:

Բերտենը դողաց ամբողջ էությամբ: Ո՞վ ասաց այդ: Անետը, թե նրա մայրը: Ոչ, դա մոր այժմյան ձայնը չէ, դա նրա նախկին ձայնն է, բայց այնքան փոխված, որ Բերտենը միայն հիմա ճանաշեց:

Բերտենը ժպտալով պատասխանեց.

— Ոչ, ոչինչ շունեմ: Ինձ համար հաճելի է քեզ հետ, դու շատ սիրուն ես, դու ինձ հիշեցնում ես մայրիկիդ:

ինչպես թերտենը ավելի վաղ շէր նկատել այդ անսովոր որձագանքը երբեմնի այնքան ծանոթ նրա խոսքի, որ նա հիմա լսում էր նոր շրթներից:

— Էլի խոսիր,— ասաց թերտենը:  
— Ինչի՞ մասին?  
— Պատմիր, թե ինչ են քեզ սովորեցրել քո ուսուցչուհիները: Դու սիրե՞լ ես նրանց:

Աննետը նորից սկսեց շաղակրատել:

Խոկ թերտենը լսում էր աճող հուզումով համակված, իր պրտին գրեթե օտար այդ աղջկա խոսքերի մեջ որսալով մի բառ, մի ձայն, մի ծիծաղ, որոնք ասես մնացել էին նրա կոկորդում մոր երիտասարդության ժամանակվանից: Ինչ-որ ինտոնացիաներ երբեմն նրան ստիպում էին ցնցվել զարմանքից: Իհարկե, աղջկա և մոր խոսքերի մեջ կար այնպիսի տարրերություն, որ թերտենը շէր կարողանում միանգամից նկատել նմանությունը և հաճախ նույնիսկ դրանք ամեննին շէր չփոթում. բայց այդ տարբերությունը միայն ավելի զարմանալի էր զարձնում մոր խոսվածքի հանկարծական զարթոնքը: Մինչև հիմա թերտենը բարեկամական և հետաքրքիր աշքով էր նկատել նրանց դեմքերի նմանությունը, բայց այդ կենդանացած ձայնի խորհուրդը նրանց այնպիս էր միախառնում, որ, երեսը շուռ տալով, որպեսզի այլևս շտեսնի աղջկան, նա երբեմն իրեն հարց էր տալիս, թե այդ արդյոք կոմսուհին չէ, որ խոսում է իր հետ, ինչպես խոսում էր քսան տարի առաջ:

Ապա, անցյալի այդ վերհիշումից հմայված, եզր թերտենը նորից էր նայում Աննետին: Նրա հայացքին հանդիպելիս նորից էր մասամբ զգում այն տանջանքը, որի մեջ իրեն նետել էր նրա մոր հայացքը իրենց սիրո առաջին օրերին:

Նրանք արդեն երեք անգամ շրջագայել էին զբոսայգում, ամեն անգամ անցնելով նույն մարդկանց, նույն զայակների, նույն երեխաների առջևից:

Աննետը հիմա նայում էր զբոսայգին շրջապատող ապարանքներին և հարցնում էր, թե ովքեր են ընակվում նրանց մեջ:

Նա ուզում էր ամեն ինչ իմանալ այդ մարդկանց մասինք նա անհագ հետաքրքրությամբ հարցուփորձ էր անում, ասես տեղեկություններով էր լցնում իր կանացի հիշողությունը, և, դեմքը լուսավորված կենդանի հետաքրքրությամբ, լսում էր ոչ միայն ականջներով, այլև աշքերով։

Բայց, հասնելով դրսի բուլվարի վրա երկու մուտքերը իրարից բաժանող տաղավարին, թերտենը նկատեց, որ շուտով ժամը չորսը կհնչի։

— 0<sup>0</sup>, — ասաց նա, — պետք է տուն վերադառնալε

Եվ նրանք դանդաղ գնալով հասան Մալզերի բուլվարը»

Բաժանվելով երիտասարդ օրիորդից, նկարիչը իջավ գեսի Համաձայնության հրապարակ, որտեսզի մի այց կատարի Սենայի մյուս ափի վրա։

Նա կիսաձայն երգում էր, ուզում էր վագել, ուզում էր ցատկել նստարանների վրայով, այնքան ժիր էր զգում իրենց Փարիզը նրան շողջողուն էր երկում, ավելի սիրուն, քան երբեք եղել էր։ «Հաստատապես, — մտածում էր նա, — գարունը ամեն ինչ նոր լաքով է ծածկում»։

Նա ապրում էր այն պահերից մեկը, երբ գրգոված միտքն ամեն ինչ ընկալում է ավելի հաճույքով, երբ աշքը ավելի՝ զգայուն է ու ավելի պայծառատես, երբ մարդ ավելի բուռն է զգում տեսնելու և զգալու բերկրանքը, կարծես ինչ-որ ամենազոր ձեռք հանկարծ թարմացրել է երկրի գույները, ոգեստել կենդանի էակների շարժումները և նորից մեր մեջ պտուտակել զգայությունների ժրաւթյունը, ինչպես վերանորոգում ու շարժման մեջ են դնում կանգնած ժամանույցը։

Հայացքով բազմաթիվ զբաղեցնող բաներ որսալով, նա մտածում էր. «Լինում են պահեր, երբ ես նյութ շիմ գտնում նկարելուա։

Նա իր միտքը այնպես ազատ ու այնպես խորաթափանց էր զգում, որ իր ամրող ստեղծագործությունը իրեն գոեհիկ թվաց, և նա սկսում էր հասկանալ կյանքը պատկերելու նոր, ավելի ճշմարիտ ու ավելի ինքնատիպ եղանակը։ Եվ հանկարծ տուն վերադառնալու և աշխատելու փափագը նրան ստիպեց ետ դառնալ ու ներփակվել իր արվեստանոցում։

Բայց հենց որ մենակ գտնվեց սկսված կտավի առջև, արյունը՝ եռացնող կրակը մեկեն հանդարտվեց։ Նա իրեն հոգնած չգաց, բազմոցի վրա նստեց և սկսեց երազել։

Մի տեսակ նրանիկ անտարբերություն, որի մեջ թերտենն ալլում էր, անհոգությունը գոհ մարդու, որի գրեթե բոլոր պահանջները բավարարված են, տակավ առ տակավ գնացել էին նրա սրտից, ասես ինչ-որ բան պակասել էր նրանից։ Նա գտարկություն էր զգում իր տանը և ամայություն՝ իր ընդարձակ արվեստանոցում։ Նա շուրջը նայեց և նրան թվաց, թե մոտով անցավ ստվերը մի կնոջ, որի ներկայությունը հաճելի էր իրեն։ Արդեն վազուց նա մոռացել էր սիրուհու գալուն ոպասող սիրահարի անհամբերությունը, և ահա հանկարծ զգում էր, որ սիրուհին հեռու է և երիտասարդական սարսունով ցանկանում էր, որ նա իր մոտ լինի։

Թերտենը խանդադատանքով մտախորում էր, թե ինչպես էրենք սիրել էին միմյանց և այդ ընդարձակ սենյակում, ուր սիրուհին այնքան հաճախ էր եկել, ամեն ինչ հիշեցնում էր նրա մասին, նրա շարժումների, նրա խոսքերի, նրա համբույրների մասին։ Նու հիշում էր որոշ օրեր, որոշ ժամեր, որոշ ըսպեներ և իր բովանդակ էությամբ զգում էր նրա վաղեմի փաղաքշանքները։

Զկարողանալով տեղում նստել, նա վեր կացավ ու սկսեց ձնմնել, նորից խորհելով այն մասին, որ, չնայած այդ կապին, որով լցված էր իր գոյությունը, նա, այնուամենայնիվ, միայնակ էր, միշտ միայնակ։

Աշխատանքի երկար ժամերից հետո, երբ շուրջն էր նայում կյանք վերադարձող մարդու ցրված հայացքով, նա ոշինչ չէր տեսնում ու ոշինչ չէր զգում, բացի պատերից, որոնց միայն նարող էին հասնել իր ձեռքն ու ձայնը։

Տանը շունենալով կին և ի հարկին դիմելով գովի զգուշությունների՝ հանդիպելու համար նրան, որին սիրում էր, նա ատիպված էր լինում իր պարապ ժամերն անցկացնել ամեն շեսակ հասարակաց վայրերում, ուր կարելի է գտնել, ժամանակն սպանելու միջոցներ։ Նա սովորություն ուներ որոշյալ օրերին ակումբ, կրկես, ծիարշավարան, ուղերա հաճախելու, սովորություն ուներ մի քիչ ամեն տեղ

լինելու, միայն թե շմնար տանը, ուր, անշուշտ, ուրախությամբ կմնար, եթե ապրեր սիրուհու հետ միասին:

Մի ժամանակ, սիրո մոլուցքի որոշ ժամերին, Բերտենք դժնդակ կերպով տանջվում էր, որ չէր կարող նրան թողնել իր մոռ, ապա, երբ իր հրայրքը սկսում էր մեղմանալ, նա անտրտունջ կերպով ընդունում էր իրենց բաժանումն ու իր ազատությունը. հիմա դրանք նորից ափսոսանք էին առաջացնաւմ իր մեջ, կարծես ինքը նորից էր սկսում սիրել նրան:

Եվ խանդաղատանքի այդ վերադարձը այսպես հանկարծ, գրեթե առանց պատճառի, համակել էր Բերտենին, որովհետեւ հիմա լավ եղանակ էր և նաև, դուցի, որովհետեւ հենց նոր էր լուել այդ կնոջ երիտասարդացած ձայնը: Ինչքա՞ն քիչ բան է հարկավոր հուզելու համար սիրու տղամարդու, ծերացոք տղամարդու, որի մոտ հուզը վերածվում է ափսոսանքի:

Ինչպես մի ժամանակ, նորից նրան տեսնելու պահանջը վերադառնում էր Բերտենին, տեսնի նման թափանցում էր նրա հոգու ու մարմնի մեջ. և Բերտենն սկսեց նրա մասին մտածել գրեթե այնպես, ինչպես մտածում են սիրահարված երիտասարդները, պանծացնելով նրան սրտում և գրանով իսկ ոգեսրելով իրեն, որպեսզի ավելի ուժին տենչա նրան. ապա վճռեց երեկոյան գնալ նրա մոտ թեյելու, թեև առավոտյան տեսել էր նրան:

Ժամերը երկար թվացին, և, երբ Բերտենը տնից դուրս եկավ, որպեսզի Մալզերը բուզվար գնար, վախեցավ, որ չփառնի նրան և ստիպված կլինի այս երեկոն էլ անցկացներ միայնության մեջ, ինչպես անցկացրել էր, այնուամենայնիվ, շատ երեկոներ:

Երբ Բերտենի «Կոմսուհին տա՞նն է» հարցին Ժառանք «Այո, պարոն» պատասխանեց, նրա սիրու խայտաց:

— Դարձլաւ ես եմ, — ասաց Բերտենը ուրախ տոնով երևալով շեմի վրա փոքր հյուրասենյակի, ուր երկու կանայք աշխատում էին բարձր ու նուրբ առանցքի վրա կանգնած երկու լամպանի լուսամփոփների առակ:

Կոմսուհին բացականչեց.

— Ինչպես, այդ դո՞ւք եք: Ի՞նչ հրաշք:

— Այո: Ես ինձ շատ մենակ զգացի և ահա եկաւ

— Այդ ի՞նչ լավ է:

— Դուք որեւէ մեկին սպասո՞ւմ եք:

— Աշ... գուցե... շփառմ:

Բերտենը նստեց ու արհամարհանքով նայեց կողիտ բօր-  
դի ցանցակերպ հյուսվածքին, որ նրանք արագ գործում էին  
փայտե երկար ասեղներով:

— Այդ ի՞նչ է,— Հարցրեց Բերտենը:

— Վերմակներ:

— Աղքատների՞ համար:

— Այո:

— Ի՞նչ տգեղ են:

— Բայց տաք են:

— Գուցե, բայց նրանք տգեղ են, հատկապես լյուդովիկոս  
ՀՎ-ի ոճով կահավորված սենյակում, ուր ամեն ինչ շոյում է  
աշքը: Եթե ոչ աղքատների համար, ապա բարեկամների հա-  
մար գուք պիտք է ավելի վայելուշ բարեգործություններ անեքք:

— Աստված իմ: Այս տղամարդիկ, — ասաց կոմսուհին, ու-  
սեբը թոթվելով: — Բայց այսպիսի վերմակներ հիմա ամեն  
ունի սկատրաստում են:

— Ես այդ լավ զիտեմ, շատ լավ զիտեմ: Հիմա երեկոնքը  
ուր որ գնաս անպայման կտեսնես այդ ահավոր մոխրագույն  
քուրջերը ամենասիրուն տուալետների կողքին և ամենապշտուն  
կահույքների վրա: Այս գարնանը բարեգործությունը վատ  
հաշակ է ստացել:

Համոզվելու համար, որ Բերտենը ճիշտ է ասում, կոմսու-  
հին գործվածքը տարածեց կողքին դրված մետաքսե աթոռի  
վրա և անտարբերությամբ համաձայնեց.

— Այո, իրոք որ տգեղ է:

Եվ նա նորից սկսեց աշխատելու երկու գլուխները կողք-  
կողքի հակված լամպի տակ, լուսավորված էին վարդագույն  
լույսի հեղեղով, որ տարածվել էր մազերի, գեմքերի, շրջա-  
ղղեստների ու շարժվող ձեռքերի վրա: Մայր ու աղջիկ իրենց  
աշխատանքի վրա նայում էին թեթև, բայց շարունակական  
ուշադրությամբ այն կանանց, որոնք վարժվել են այդ ձեռա-  
գործներին, որոնց աշքը հետևում է առանց մտքի մասնակ-  
ության:

Սենյակի շորս անկյուններում շինական ճենապակե շորս ուրիշ յամպեր, որոնք դրված էին սակեզօծված փայտե հին սյուների վրա, պաստառների վրա սփռել էին մեղմ ու համաշտիք մի յույս, որը թուլանում էր կլոր լուսամֆոփների վրա ձգված ժանյակի տրանսպարանտներից:

Բերտենը շատ ցած ու փոքրիկ մի բաղկաթոռ վերցրեց. որի մեջ հաղիով էր տեղավորվում, բայց որը միշտ նախընտրում էր, քանի որ կարող էր կոմսուհու հետ դրուցել, նստելով գրեթե նրա ստոների մոտ:

Կոմսուհին ասաց Բերտենին.

— Դուք այսօր նանեի հետ երկար զբոսանք կատարեցիք զբոսայգում:

— Այո! Մենք շաղակրատեցինք, ինչպես հին բարեկամներ: Ես շատ եմ սիրում ձեր աղջկան: Նա ճիշտ ու ճիշտ նման է ձեզ: Եթե նա որոշ ֆրազներ է արտասանում, կարելի է կարծել, որ նրա կոկորդում ձեր ձայնն է հնչում:

— Ամուսինս շատ անգամ այդ ինձ ասել է արդեն:

Բերտենը նայում էր, թե ինչպես մայր ու աղջիկ աշխատում են, լամպերի լույսով ողողված, և միտքը, որից նա հաճախ էր տանջվում, որից դեռ ցերեկն էր տանջվել, իր առանձնատան ամայի, անշարժ, լուռ կյանքի մասին մտահոգությունը, առանձնատուն, որ ցուրտ էր բոլոր եղանակներին. Նրան վշտացրեց, կարծես նա առաջին անգամն էր լիովին հասկանում իր միայնությունը:

Ո՛, ինչպես կուզննար իրոք յինել այդ կնոջ ամուսինը, այլ ոչ թե սիրեկանը: Մի ժամանակ Բերտենն ուզում էր առևանգել կոմսուհուն, վերցնել, գողանալ նրան ամուսնուց: Հիմա նա խանդում էր խաբված ամուսնուն, որ ընդմիշտ հաստատվել էր այդ կնոջ մոտ, նրա տան սովորական իրադրության մեջ, նրա փաղաքշող մերձավորության մեջ: Այդ կնոջը նայելով, Բերտենն զգում էր, որ իր սիրտը նորից լցվում է վերադարձած հուշերով, որոնց մասին նա կկամենոր պատմել նրան: Հիրավի Բերտենը դեռ շատ էր սիրում կոմսուհուն, նույնիսկ առաջվանից մի քիչ ավելի, իսկ այսօր շատ ավելի, ինչպես շէր սիրել վաղուց, և այդ վերանորոգված զգացումի մասին արտահայտվելու պահանջը, որ այնքան կուրախացներ կոմսու-

Հուն, թերտենին ցանկալ տվյալ, որպեսզի դեռատի աղջկան շրբան կարելի է շուտ ուղարկեին քննելու:

Թերտենը տանջվում էր սիրած կնոջ հետ մենակ մնալու փափագից, նրա ծնկներին հպվելու, նրանց վրա հակվելու, նրա ձեռքերը բռնելու տեսնչից, ձեռքեր, որոնցից կխլվեին աղքատների համար վերմակը, փայտե ասեղները, իսկ բրդի կծիկը քակվելով կգլորվեր բազկաթոռի տակ. Թերտենը նախում էր ժամացույցին, ոչ մի բան չէր խոսում և գտնում էր, որ, իրոք, լավ բան չէ փոքր աղջիկներին սովորեցնել շափահաս. Ների հետ անցկացնել երեկոն:

Ինչ-որ քայլեր խզեցին հարեան հյուրասենյակի լոռությունը, ծառան երեաց ու ծանուցեց.

— Պարոն զը Մյուլադիեն:

Օլիվիե Թերտենը կատաղությունը հազիվ զսպեց, և երբ նա գեղարվեստների վերատեսչի ձեռքը սեղմեց, ուզեց նրան՝ օձիքից բռնել ու դուրս շպրտել:

Մյուլադիեն շատ լուրեր էր բերել. մինիստրությունը շուտով ընկնելու էր, լուրեր են շրջում մարկիզ գը Ռոկդիանի հետ պատահած ինչ-որ սկանդալի մասին: Նայելով երիտասարդ օրիորդին, նա ավելացրեց.

— Այդ մասին ես հետո կպատմեմ:

Կոմսուհին աշքերը գեղի ժամացույցը բարձրացրեց և տեսավ, որ շուտով ժամը տասը կլինի:

— Քո քննելու ժամանակն է, զավակս,— ասաց նա աղջկան:

Աննետը առանց պատասխանելու գործվածքը ժալեց, ուրդը կծկեց, մոր երկու այտերը համբուրեց, ձեռքը մեկնեց երկու տղամարդկանց և այնպես արագ դուրս եկավ, որ կարծես սահեց, օդն անգամ շշարժելով:

Երբ Աննետը դուրս եկավ, կոմսուհին հարցրեց.

— Պատմեք տեսնեմ ի՞նչ սկանդալ է:

Պնդում էին, որ մարկիզ գը Ռոկդիանը, որը հոժարությամբ բաժանվել էր կնոջից և ոենտա էր ստանում նրանից, հիմա այդ ոենտան անբավարար էր համարում և ապահով ու բացառիկ մի միջոց էր գտել այն կրկնապատկել տալու: Մարկիզուհին, որին մարկիզը հետևում էր ուրիշների միջոցով,

բռնվել էր ամուսնական անհավատարմության մեջ և հարկագրվել էր նոր ունաւ վճարել՝ փրկագնվելու համար ուստի կանական կոմիսարի կազմած արձանագրությունից:

Կոմսուհին, ընդհատած ձեռագործը ծնկների վրա բռնած, ձեռքերն անշարժ պահած, ուշադիր լսում էր:

Բերտենը, որին համբերությունից հանել էր Մյուզադիեի ներկայությունը Աննետի դուրս զալուց հետո, զայրացավ և վրդովմունքովը այն մարդու, որ տեղյակ էր այդ զրպարտությանը, բայց ոչ ոքի չեր ուզում խոսել դրա մասին, պնդեց, որ դա նողկալի սուտ է, մեկը այն ամոթալի բամբասանքներից, որ բարձր խավի մարդիկ ամենեին շպետք է ոչ խեն, ոչ էլ կրկնեն: Կանգնած բուխարու մոտ, նա շարանում էր և այնպիսի ջղալին մարդու տեսք ուներ, որ ասես պատրաստ էր այդ պատմությունը իր անձնական գործը դարձնել:

Իոկղիանը Բերտենի բարեկամն էր և եթե ինչ-ինչ դեպքերում կարելի էր նրան կշտամբել թեթևամտության մեջ, ապա նրան չէր կարելի ոչ մեղադրել, ոչ էլ կասկածել որևէ անվայիլ արարքի մեջ: Մյուզադիեն, զարմացած ու շվարած պաշտպանվում էր, նահանջում, ներողություն խնդրում:

— Քույլ տվեք, — ասում էր նա, — ես դա հենց նոր լսեցի գրսուհի դը Մորտմենի աւանը:

Բերտենը հարցրեց.

— Ո՞վ պատմեց ձեզ: Հավանաբար մի կի՞ն:

— Ոչ, ամենեին: Մարկիզ զը Ֆարանդալը:

Նկարիչը, խոժոռված, պատասխանեց.

— Նրա այդ վերաբերմունքը ինձ չի զարմացնում:

Լոռություն տիրեց: Կոմսուհին նորից սկսեց աշխատել: Ապա Օլիվիե Բերտենը ավելի հանդարտ տոնով հարեց.

— Ես հաստատապես գիտեմ, որ դա սուտ է:

Նա ոչինչ չգիտեր և այդ պատմությունն առաջին անգամ էր լսում:

Զգալով վտանգավոր դրությունը, Մյուզադիեն արդեն պատրաստվում էր նահանջ կատարել և Կորբելների մատգնալու մասին էր խոսում, երբ կոմս դը Գիլոուան երևաց, վերադառնալով ինչ-որ ճաշկերույթից:

Թերտենը իր տեղը նստեց ընկճված, հուսահատությամբ  
սեսնելով, որ ամուսնուց պրծնել արդեն չի հաջողվի:

— Դուք շգիտե՞ք, — ասաց կոմսը, — ի՞նչ մեծ սկանդալի  
ժամին է այսօր խոսվում ամեն տեղ:

Որովհետեւ ոչ ոք չէր պատասխանում, նա շարունակեց.

— Երեսում է, որ Ռոկոկիանը իր կնոջը բռնել է ինչ-ոք  
հանցավոր սիրաբանության մեջ և նրան շատ թանկ է նըս-  
տեցրել այդ անպարկեցությունը:

Այն ժամանակ Թերտենը վշտացած տեսքով ձեռքը գնելով  
որ Գիլուուայի ծնկի վրա, տխուր ձայնով և բարեկամական,  
մեղմ արտահայտություններով կրկնեց այն բոլորը. ինչ քիչ  
առաջ շպրտել էր Մյուզադիեի երեսին:

Եվ կոմսը, կիսով շափի համոզված, յուրովի վրդովվելով,  
որ այնպիս թեթևամտորեն կրկնում էր կասկածելի և, գուցեա  
վարկարեկիչ բաներ, սկսեց արդարանալ իր անգիստությամբ  
ու անմեղությումբ: Արդարեւ, այնքան սուտ ու շար բաներ են  
պատմում մարդիկ:

Բոլորը հանկարծ համաձայն եղան այն բանում, որ հա-  
սարակությունը մեղադրում, կասկածում ու զրապարտում է  
ցավալի թեթևամտությամբ: Եվ հինգ րոպեում չորսն էլ ըստ  
երեսութին համոզվեցին, որ փսփսոցով ասված բոլոր ասեկո-  
սիները սուտ են, որ կանայք երբեք չեն ունենում սիրեկան-  
ներ, ինչպես կասկածվում էն, որ տղամարդիկ երբեք չեն  
զործում նրանց վերագրվող ստորությունները և, ընդհանրա-  
պես, արտաքուստ ամեն ինչ շատ ավելի վատ է, քան իրա-  
կանումն է:

Թերտենը, որ դը Գիլուուայի գալուց հետո այլևս չէր նեղա-  
նում Մյուզադիեի վրա, նրան ասաց շողոքորթիչ բաներ և,  
շոշափելով նրա նախասիրած նյութերը, բաց արեց նրա պեր-  
ճախոսության սահանաղոնակը: Եվ կոմսը գոհ էր երեսում,  
ինչպես մի մարդ, որ ամեն տեղ իր հետ տանում է խաղա-  
ղություն ու մտերմություն:

Երկու ծառաներ, կամացուկ քայլելով գորգերի վրայով,  
ներս մտան՝ իրենց հետ բերելով թեյի սեղանը, ուր եռացող  
շուրբ փայլուն ու սիրուն եռոցի մեջ գոլորշի էր արձակում  
սովորություն լամպի կապույտ բոցի տակ:

Կոմսութին վեր կացավ, զգուշությամբ ու հոգածությամբ պատրաստեց տաք ըմպելիքը, որ ոռւսներն են բերել մեզ մոտ, մի բաժակ տվեց Մյուզադիկին, մի բաժակ էլ Բերտենին, նրանց առաջարկեց սանդվիչներ և ավստրիական ու անգլիական զանազան կարկանդակներ։

Կոմսը մոտեցավ շարժական սելանին, ուր սիրոպներ, լիկյորներ և բաժակներ էին շարված, իր համար գրոգ \* պատրաստեց, ասլա աննկատելիորեն զնաց հարեան սենյակը և անհետացավ։

Բերտենը նորից գտնվեց Մյուզադիկի դեմ առ դեմ, և հանկարծ նրա մեջ նորից ցանկություն առաջացավ գուրս նետելու այդ ձանձրայի հյուրին, որը, յավ տրամադրության մեջ ընկնելով, ճառախոսում էր, անեկդոտներ էր պատմում, կրկնում էր իր և ուրիշների սրախոսությունները, եվ նկարիչը անընդհատ հայում էր պատի ժամացուցին, որի մեծ սլաքը մոտենում էր կեսդիշերին։ Կոմսութին նկատեց նրա հայացքը և հասկացավ, որ նո ուզում էր խոսել իր հետո Բարձր իամփի կահանց ճարտարությամբ, որոնք սովոր են ճարպիկ անգումներով փոխելու զրուցի տոնն ու հյուրասենյակի մթնություն և, ոչ մի բառ չտաելով, հյուրին հասկանալ են տալիս, որ պնտք է մնալ կամ զնալ, կոմսութին միայն իր կեցվածքով, զեմքի տրահայտությամբ և տաղտկացնող հայացքով իր շարչը տարածեց այնպիսի ստունություն, որ առես պատուհանն էր բաց արել։

Մյուզադիկն զգաց, որ քամու այդ հոսանքից իր մտքերը սառկեցին, և, ինքն էլ շիմանալով ինչու, ցանկություն ունեցավ վեր կենալու և զնալու։

Բերտենը քաղաքավարության համար հետեւց նրա օրինակին Երկու տղամարդկիկ երկու հյուրասենյակների միջով միասին անցան կոմսութիւն ուզեկցությամբ, որ միշտ խոսում էր նկարչի հետո Կոմսութին նախասենյակի շեմի վրա նկարչին պահեց, որպեսզի ինչ-որ բացատրություն ստանար նրանից, միշտ Մյուզադիկն ծառայի օգնությամբ վերարկուն էր հագնում։ Քանի որ տիկին դը Գիլուուան շարունակում էր

\* Ծաքարացքով, օղիով ու կիտրոնով ըմպելիք

իսուել Բերտենի հետ, գեղարվեստների տեսուչը, մի քանի  
շապէ սպասելով սանդուղքի վրա՝ դուն առջն, որ բացել էր  
մի ուրիշ ծառա, վճռեց մենակ դուրս գալ, որպեսզի կանգնած  
շմարյ ծառայի առջև:

Դուռը մեղմորեն փակվեց Մյուզազիեի ետև, և կոմսուհին  
ամենայն համարձակությամբ ասաց նկարչին.

— Իսկապես, ինչո՞ւ այսքան շուտ եք գնում: Դեռ կեսդի:  
Հոր չի եղել: Մի քիչ էլ մնացեք:

Եվ նրանք վերադառն փոքր հյուրասենյակը:

Հենց որ նրանք նստեցին, Բերտենն ասաց.

— Ասոված, ինչպիս ինձ ջղայնացնում էր այդ անասունը:

— Ինչո՞ւ:

— Նա ինձանից իշում էր ձեր մի մասը,

— Օ՛, ամենից անշանը:

— Դուցե, բայց նա ինձ խանդարում էր:

— Դուք խանդո՞ւմ եք:

— Մեկին ավելորդ զոնել չի նշանակում խանդել:

Բերտենը նորից առավ ցած բագկաթոռը և, նստելով կռմ-  
ութու կողքին, մատներով տնտղելով նրա շրջադղեսաի կեր-  
պասը, սկսնց պատմել, թե ինչ տաք շունչ է իր սիրտը թա-  
փանցել այսօր:

Կոմսուհին լսում էր զարմանքով, զմայլանքով և, մեղմո-  
րեն ձեռքը դնելով Բերտենի սպիտակ մազերի վրա, քնքշորեն  
շոյում էր նրանք, ասես շնորհակալ լինելով նրան:

— Այնքան կցանկանայի ապրել քո կողքին, — ասաց Բեր-  
տենը:

Բերտենը միշտ մասմածում էր պառկած ամուսնու մասին,  
ոչ, հավանաբար, արդեն քնել էր հարևան սենյակում, և  
ավելացրեց.

— Միայն ամուսնությունն է իրոք միտցնում երկու էակ-  
ներին:

Կոմսուհին, Բերտենի և իր նկատմամբ կարեկցությամբ  
համակված, շշնչաց,

— Իմ խեղճ բարեկամ:

Այտք դնելով կոմսուհու ծնկներին, Բերտենը նրան նայում  
էր խանդարատանքով, մի քիչ մելամաղձոտ, մի քիչ ցավա-

Դին խանդաղատանքով, արդեն ոչ այնպես տաք, ինչպես քիչ առաջ էր, երբ սիրած կնոջից նրան բաժանում էին աղջիկը, ամուսինը և Մյուզաղինն:

Մատների թեթև հպումով շոյելով Բերտենի մազերը, կոմուհին ժպիտով ասաց.

— Աստված իմ, ինչքա՞ն եք սպիտակել: Զեր վերջին սև մազերը շքացել են:

— Ավաղ, ես այդ գիտեմ, այդ արագ է կատարվում:

Կոմսուհին վախեցավ, որ վշտացրել է Բերտենին:

— Օ՛, բայց դուք արդեն սկսել էիք սպիտակել շատ երիտասարդ հասակում: Ես ձեզ միշտ ալեխառն եմ տիսել:

— Այո, այդ ճիշտ է:

Բոլորովին ջնջելու համար իր խոսքերի առաջ բերած թեթև վիշտը, կոմսուհին հակվեց Բերտենին և, երկու ձեռքերով բարձրացնելով նրա զլուխը, նրա ճակատին դրոշմեց համր ու սիրազեղ համբույրներ, այնպիսի երկար համբույրներ, որոնք, կարծես, վերջ չունեն:

Ապա նրանք միմյանց նայեցին, ջանալով իրենց աշքերի խորքում իրենց զգացմուների արտացոլումը տեսնել:

— Ես կցանկանայի, — ասաց Բերտենը, — մի ամբողջ օր սնցկացնել ձեր կողքին:

Բերտենին անորոշ կերպով տանջում էր մտերմության անբացատրելի պահանջը:

Դեռ քիչ առաջ Բերտենը մտածում էր, որ բավական է այստեղ եղած մարդիկ դուրս գային, որպեսզի իրականացներ առավոտվանից իր մեջ զարթնած ցանկությունը, իսկ հիմա առանձին մնալով իր սիրունու հետ և ճակատին զգալով նրա ձեռքերի շերմությունը, իսկ այտին՝ շրջազգեստի միշով ճարմնի շերմությունը, նա նորից իր մեջ զգում էր նույն խոռվքը, անծանոթ ու խուսափուկ սիրո նույն կարուց:

Եվ հիմա նա երեակայում էր, որ այս տնից դուրս, գուցե անտառում, ուր իրենք կլինեին բոլորովին մենակ և ոչ չէր լինի իրենց շուրջը, իր անհանգիստ սիրտը գոհացում ու հանգըստություն կգտներ:

Կոմսուհին պատասխանեց.

— Ինչքա՞ն երեխա եք դուք։ Բայց մենք զրեթե ամեն օր հանդիպում ենք իրար։

Թերտենը կոմսուհուն աղաշեց, որ միջոց գտնի իր հետ միասին գնալու Փարիզի շրջակայքը՝ նախաճաշելու, ինչպես մի ժամանակ գնացել էին շորս կամ հինգ անգամ։

Կոմսուհին գարմանում էր այդ քմահաճության վրա, որ այնքան դժվար էր իրականացնել հիմա, երբ իր աղջիկը վերադարձել էր։

Սակայն նա կփորձեր իրականացնել, հենց որ ամուսինը Ռոնսիեր գնար, բայց այդ հնարավոր էր միայն ցուցահանդեպի բացումից հետո, որը կկայանար հաջորդ շաբաթ օրը։

— Իսկ մինչև այդ ե՞րբ կարող եմ ձեզ տեսնել, — հարցրեց Թերտենը։

— Վաղը երեկոյան կորբելների մոտ Ապա այստեղ ինձ մոտ եկեք շորեքշաբթի օրը, ժամը երեքին, եթե ազատ եք, իսկ հետո ուրբաթ օրը, ես կարծում եմ, մենք կկարողանանք միասին ճաշել դքսուհու հետ։

— Այո, իհարկե։

Թերտենը վեր կացավ։

— Մնաք բարով։

— Գնաք բարով, իմ բարեկամ։

Թերտենը գեռնս կանգնել էր, շվճոելով մեկնել, որովհետեւ գրեթե ոչինչ շէր կարողացել մտաբերել այն ամենից, ինչ կոմսուհուն ասելու էր եկել, և նրա գլուխը տակավին լի էր շարտահայտված մտքերով, անորոշ պոռթկումներով, որոնք ելք չէին գտել։

Նա կոմսուհու ձեռքերը բռնելով կրկնեց։

— Մնաք բարով։

— Գնաք բարով, իմ բարեկամ։

— Ես ձեզ սիրում եմ։

Կոմսուհին Թերտենին նետեց մի այնպիսի ժպիտ, որով կինը տղամարդուն հասկանալ է տալիս, թե մի վայրկյանում ինչքան շատ բան է տվել նրան։

Թրթոռն սրտով Թերտենը կրկնեց երրորդ անգամ։

— Մնաք բարով։

Եվ մեկնեց։

Կարելի էր կարծել, որ Փարիզի բոլոր կառքերն այդ օրը ուխտի էին զնում դեսի Արդյունաբերության պալտաք: Առաջոտյան ժամը իննից նրանք բոլոր փողոցներից, պողոտաներից ու կամուրջներից շարժվում էին դեսի Գեղարվեստների այդ շուկան, ուր արվեստագետների Ամբողջ-Փարիզը՝ բարձր հասարակության Ամբողջ-Փարիզին հրավիրել էր ներկա գտնվելու երեք հազար շորս հարյուր նկարների ցուցադրությանը:

Բազմաթիվ ամբոխը խոնվել էր դոների մոտ և, ուշադրություն շղարձնելով քանդակագործությանը, անմիջապես բարձրանում էր դեսի պատկերասրահները: Աստիճաններով ելնելիս, այցելուներն արդեն իրենց աշքերը բարձրացնում էին գետի այն կտավները, որ ցուցադրված էին աստիճանների պատերի վրա, ուր կախում են նկարները այսպիս կոչված նախասենյակային նկարիշների, որոնք ուղարկել են կամ տնսովոր շափերով ստեղծագործություններ, կամ այնպիսի ստեղծագործություններ, որ չեն համարձակվել մերժել: Քառակուսի սրահում հավաքվել էր մարդկանց մի խումբ, որ խլրտում ու աղմկում էր: Մինչն երեկո ներկա գտնվող նկարիշներին կարելի էր ճանաչել իրենց իրարանցումից, բարձր ձաշնից ու հեղինակավոր ժնուտերից: Նրանք բոնում էին իրենց բարեկամների թիգանեթից, բնորում էին նկարների մոտ, որոնք ժամանանշում էին բանիմացների բացականշություններով և ազդեցիկ միջիկայով: Նկարիշները բազմատեսակ արտաքինով էին. ոմանք ժարդարահասակ էին, երկար մազերով, սպիտակ ու սև, կտուրի նման ուրիշ ու կլոր, աննկարագրելի ձեերով գլխարկներով, որոնց կախ բնկած եղբերը ստվեր էին գցում ամբողջ իրանի վրա. ուրիշներ կարճահասակ էին, արագաշարժ, նիճար կամ գեր, դիպակե թաշկենակներով ու փողկաւաներով, բաձկոններով կամ ստորին դասակարգին հատուկ պարկածն անսովոր կոստյումներով:

Այստեղ էր վայելչասեր, պճնամոլ, բուլվարներ հաճախելու սովոր արվեստագետների խումբը, կոռեկտ, կարմիքարդածե Պատվո Լեգեոնի մեծ կամ փոքր շքանշանով—նա-

յած վայելչության ու բարեկրթության մասին իրենց ըմբռունման—զարդարված ակադեմիկոսների խումբը, և, վերջապես, խումբը բուրժուական նկարիչների, որոնք երեսում էին ընտանիքի ուղեկցությամբ, շրջապատելով հորը, ինչպես Հանդիսավոր երգչախումբը:

Այն նկարները, որոնք քառակուսի սրահում, շորս սրաննոների վրա ցուցադրվելու պատվին էին արժանացել, աշքի էին զարնում գույների պայծառությամբ, շրջանակների վայրիլումով, նոր երանգների խռությամբ, որոնք ջնարակով կենդանացած, շշայնում էին վերելից ընկնող ուժեղ լուսավորության սահկ:

Մուտքի անմիջական դիմաց կախված էր հանրապետության նախագահի պորտրեն, իսկ մի ուրիշ պատի վրա զետեղված էր ուսիւ տրեզներով, շայլամափետուր զլիսարկով և կարմիր մահուդի տափատով՝ մի զորակար՝ ուսենիների տակ: Բոլորովին մերկ հավերժաճարսերի և ալիքից վթարված, զրեթե ընկղմված մի նավի կողքին: Բարբարոս թագավորին բանագրող հինավուրց եպիսկոպոսը, ժանտախտից մեռած դիակներով լեցուն արևելյան փողոցը, դժոխքում շրջադաշող Պանթեի ստվերը իրենց արտահայտչության անդրմադրների ուժով գրավում ու գերում էին հայացքը:

Ընդարձակ սրահում կարելի էր տեսնել նաև հեծելաղորի հարձակումը, հրածիգները անտառում, կովերը արոտավայրում, անցյալ դորի երկու ազնվականների մենամարտը փողոցի անկյունում, անկյունաքարի վրա նստած խելագար կինը, մահամերձին վերջին օծություն տվող քահանան, հնձվորներ, զետեր, վերջալույս, լուսնի լույս, վերջապես նմուշներ այն ամենի, ինչ նկարիչները նկարել են, նկարում են և կնկարն էինչ աշխաբնի վերջին օրը:

Օլիվիե Բերտենը, նշանավոր արվեստակիցների, Ակադեմիայի ու Ժյուրիի անդամների մեջտեղ կանգնած, կարծիքներ էր փոխանակում նրանց հետ: Նրան ճնշում էր մի մտմտուք՝ նրան անհանգստացնում էր իր ցուցադրած նկարը, որի հաջողությունը նա չէր զգում, շնայած չերմ շնորհավորանքներին:

Հանկարծ նա առաջ նետվեց։ Դուան մուտքին երևաց դըք-  
սուհի դը Մորտմենը։

Դքսուհին հարցրեց։

— Կոմսուհին չի՝ եկել։

— Ես նրան շեմ տեսել։

— Իսկ պարոն դը Մյուզաղիե՞ն։

— Նրան էլ շեմ տեսել։

— Նա խոստացել էր ժամը տասին սանդուղքի հարթակի  
վրա լինել և ինձ առաջնորդել սրահներով։

— Թույլ կտա՞ք, դքսուհի, որ ես նրան փոխարինեմ։

— Ոչ, ոչ! Դուք հարկավոր եք ձեր բարեկամներին։ Բայց  
մենք շուտով ձեզ հետ կտեսնվենք. ես հույս ունեմ, որ մենք  
միասին կնախաճաշենք։

Մյուզաղիեն վազելով եկավ։ Նրան մի քանի րոպե պահել  
էին քանդակագործության բաժնում և նա, հեալով, ներողու-  
թյուն խնդրեց։ Նա ասաց։

— Այստեղ, դքսուհի, այստեղ, մենք սկսենք աջից։

Հենց նոր նրանք ծածկվեցին գլուխների հորձանուտում,  
երբ կոմսուհի դը Գիլուուան ներս մտավ աղջկա հետ, աշքերով  
փնտրելով Օլիվիե Բերտենին։

Բերտենը նրանց տեսավ, մոտեցավ ու բարեկելով ասաց.

— Աստված, ինչքան գեղեցիկ են նրանք։ Աննետը իրոք  
շատ է սիրունանում։ Մի շաբաթվա մեջ նու փոխվել է։

Բերտենը դիտող հայացքով նայեց Աննետին։ Ապա ավե-  
լացրեց։

— Գծադրությունները գարձել են ավելի անուշ, ավելի  
քնքուշ, զույնը՝ ավելի պայծառ։ Նա արդեն նվազ է նման դե-  
ռատի օրինրդի և ավելի շատ նման է փարիզուհու։

Ապա հանկարծ անցավ օրվա գլխավոր խնդրին։

— Սկսենք աջից, և մենք կհասնենք դքսուհուն։

Կոմսուհին, նկարչությանը վերաբերող բոլոր իրադարձու-  
թյուններին տեղյակ և նկար ցուցագրողի նման մտահոգ,  
հարցրեց։

— Ի՞նչ են ասում։

— Գեղեցիկ ցուցահանդես է։ Նշանավոր թոննան, երկու  
հիանալի կարույուս Դյուրան, մի հրաշալի Պյուլի դը Շա-

վանն, զարմանալի և նոր տեսակի մի Ռոլ, ընտիր մի Ժեր-  
քիքս և շատ ուրիշներ, Բերոներ, Կաղիններ, Դյուեզներ, մի  
խոսքով բազմաթիվ լավ բաներ:

- Իսկ դո՞ւք, — հարցրեց կոմսուհին:
- Ինձ կոմպլիմենտներ են անում, բայց ես գոհ չեմ:
- Դուք երբեք գոհ չեք լինում:
- Այո, երբեմն պատահում է: Բայց այսօր ես կարծու՞  
եմ, որ իրավացի եմ:
- Ինչո՞ւ
- Չգիտեմ:
- Գնանք նայենք:

Երբ նրանք մոտեցան գետակի մեջ լողացող երկու գյու-  
ղացի աղջիկներ պատկերով նկարին, նրա առջև հիացած կանգ-  
նած էր հանդիսատեսների մի խումբ: Կոմսուհին ուրախա-  
ցավ և ցած ձայնով ասաց.

- Բայց դա սքանչելի, դոհար գործ է: Դուք դրանից ավե-  
լի լավ բան չեք նկարել:

Երտենը մերձեցավ կոմսուհուն, համակված սիրով ու  
երախտագիտությամբ յուրաքանչյուր բառի համար, որ հան-  
գրստացնում էր իր ցավը, բուժում իր վերքը: Եվ Երտենի  
մտքում արագ անցնում էին ամեն տեսակ փաստարկներ,  
որոնք իրեն համոզում էին, որ կոմսուհին իրավացի է, որ նա  
անշուշտ ճիշտ է տեսնում փարիզուհու իր խելացի աշքերով:  
Զանալով հանգստացնել իր կասկածները, Երտենը մոռա-  
նում էր, որ տասներկու տարի է, ինչ ինքը կոմսուհուն մե-  
ղադրում էր, որ նա չափաղանց հիանում է իր սեթենթանքնե-  
րով, նուրբ սնոտիքներով, էժանադին զգայնություններով, մո-  
դայի պատահական քմահաճություններով, և ամենենին շի-  
զմայլվում արվեստով, մաքուր արվեստով, կանխակալ դա-  
զափարներից, տենդենցներից, բարձր խավից, նախապաշտ-  
ումներից ազատ արվեստով:

- Շարունակենք, — ասաց Երտենը, — ավելի հեռու տա-  
չելով նրանց:

Եվ նա բավական երկար ժամանակ նրանց ման ածեց  
սրահից սրահ, նրանց ցուցց տալով կտավները, բացատրելով

սյուժեները, իրեն երջանիկ զգալով իր ուղեկցուհիների մեջ՝  
իր ուղեկցուհիների հետ:

Հանկարծ կոմսուհին հարցրեց.

— Ժամը քանի՞սն է:

— Կևորից կես ժամ անց է:

— Օ՛, շուտ զնանք նախաճաշելու Դքսուհին հավանա-  
բար մեզ սպասում է կեդուայենի մոտ. նա ինձ հանձնարարեց  
է ձեզ տանեւ, եթե մենք նրան այստեղ չգտնենք:

Ծառերի ու թփերի կղզյակի մեջակղ գտնվող սեստորանը  
լեփ-լեցուն ու զզզացող փեթակ էր հիշեցնում: Բոլոր պատու-  
հաններից ու բաց գոներից ձայների, կանչերի շփոթ աղմուկ,  
բաժակների ու սկնակների զրնգոց էր գուրս գալիս: Իրար կիստ  
դասավորված սեղանները, որոնց շուրջ նստել էր նախաճաշող  
հանարակությունը, երկար շարքերով ձգված էին հարևան շա-  
վիղների երկայնքով, աջ ու ձախ կողմերում նեղ անցքի, որուն  
վազվզում էին խլացած, զլուխները կորցրած մատուցովները,  
ձեռքերի վրա բռնելով մսերով, ձկներով կամ մրգերով բեռ-  
նավորված սկոտեղները:

Կլորածե գալերեայի տակ տղամարդկանց ու կանանց այն-  
պիսի բազմություն կար, որ ասես ինչ-որ կենդանի խմոր  
լիներ: Բոլորը ծիծաղում, կանչվոտում, խմում և ուսում էին,  
գինիներից զվարթացած և մի այնպիսի ուրախությամբ հա-  
մակված, ինչպիսին որոշ օրերում տարածվում է Փարիզի վրա  
արևի ճառագոյների հետ:

Եի մատուցող կոմսուհուն, Աննետին ու Բերտենին աստի-  
ճաններով բարձրացրեց ու տարավ մի առանձին սենյակ, որ  
նրանց սպասում էր դքսուհին:

Դքսուհու մոտ նկարիշը տեսալ նրա եղբորորդուն, մար-  
կիզ զը Ֆարանդալին, որը սիրալիր ծպիտով կոմսուհուց ու  
նրա աղջկանից շտապեց վերցնել նրանց հովանոցներն ու վեր-  
նազգեստները: Բերտենը դրանից այնպիսի զայրայթ զգաց,  
որ հանկարծ սպեց վիրավորական ու բիբու խոսքեր ասել:

Դքսուհին բայցարեց, որ հանդիսական էր իր եղբորորդու  
հետ, իսկ Մյուզաղիեին իր հետ տարել էր Գեղարքունիքի  
մինիստրը: Եվ այն մտքից, որ այդ աղճաւասեր մարկիզը ամուս-  
նակալու է Աննետի հետ, որ նա այստեղ է եկել Աննետի հա-

մար, որ նա Աննետին արդեն նկատում է իրրե մի կնոջ, որ սահմանված է իր անկողնի համար, Բերտենը շղայնանում, ցնդվզում էր, ինչպես եթե անտեսած, ոտնահարած լինեին իր հրավունքները, խորհրդավոր ու սրբազան իրավունքները:

Հենց որ սեղան նստեցին, մարկիզը, որին տեղավորել էին երիտասարդ օրիորդի կողքին, ոկսեց դարպասել նրան, որա համար թույլտվություն ստացած տղամարդու հսժարակամուշյամբ:

Մարկիզը Աննետի վրա նետեց հետաքրքիր հայացքներ, որոնք նկարչին լպիրշ ու խուզարկու թվացին, ժպտաց գրեթե սիրով ու ինքնակությամբ, սիրաբանեց նրա հետ մտերմատար ու անկեղծորեն: Մարկիզի վարվելաձեռի ու խոսքերի մեջ արդեն նկատվում էր ինչ-որ վճռական բան, որ կարծես մոտալուս տիրապետության մասին էր ազգարարում:

Դքսուհին ու կոմսուհին, ըստ Երեսութին, հովանավորում էին մարկիզին, հավանություն էին տալիս նրա վարքագծին և մեղսակիցների նման աշքով էին անում միմյանց:

Նախաճաշից հետո վերապարձան ցուցահանդես: Սրահներում այնքան մեծ բազմություն կար, որ անհնար էր թվում մռւտք գործել այնտևզ: Խռնչած մարդիւային մարմիններից և հնամաշ Փրակների ու շրջադպեստների անախորժ հոտից օղը ծանրացել ու ապականվել էր: Նայում էին արդեն ոչ թե նկարներին, այլ զեմքերին ու պճնաղդեստներին, փնտրում էին ծանոթներին: Երբեմն այդ հոժ ամբոխի մեջ հրհրոց էր սկսվում, հասարակությունը ևտ էր քաշվում, որպեսզի անցնելու ճանապարհ տար «Ռուշադրություն», պարոններ, ուշադրություն, ափկիններ» գոռացող լաքարաբների բարձր շարժական սանդուղքին:

Հինգ րոպե շէր անցել, երբ կոմսուհին ու Թերտենը կտրրվեցին իրենց ուղեկիցներից: Նկարիչը ուղում էր փնտրել նրանց, բայց կոմսուհին, ձեռքը հենելով նրա վրա, ասաց:

— Այսպես լավ շենք մենք: Բողնենք նրանց: Եթե մենք միմյանց կորցնենք, միննույն է, ալայմանավորվել ենք ժամը շորուին հանդիպել բուֆետում:

— Այդ ճիշտ է,—ասաց Բերտենը:

Բայց Բերտենին կլանել էր այն միտքը, որ մարկիզը

ուղեկցում է Աննետին և շարունակում է նրա շուրջը պատվել կնահաճու տղամարդու թեթևովիկությամբ:

Կոմսուհին շշնչաց.

— Ուրեմն, գուք գեռնս սիրո՞ւմ եք ինձ:  
Բերտենը մտահոգ տեսքով պատասխանեց.

— Այո, իհարկեւ

Եվ աշխատեց գլուխների վրայով նայել ու գտնել պարոն զր Ֆարանդալի: Մոխրագույն գլխարկը:

Զգալով, որ Բերտենը մտացրիվ է և ուզելով նրան սթափեցնել, կոմսուհին շարունակեց.

— Եթե գուք իմանայիք, թե ինչպե՞ս է ինձ հիացնում այս տարի ձեր ցուցադրած նկարը: Դա ձեր գլուխ-գործոցն է:

Բերտենը ժամանակ հրիտասարդներին և հիշելով միայն, ինչ առավոտյան անհանգստացնում էր իրեն:

— Իսկապե՞ս, գուք գտնո՞ւմ եք:

— Այո, ես դա բոլորից բարձր եմ դասում:

— Ես շատ եմ տքնել այդ նկարի համար:

Կոմսուհին շարունակեց շոյող խոսքեր ասել նկարչին, քանի որ վաղուց լավ գիտեր, որ ոչ մի բան այնպիս աղղեցություն շունի արվեստագետի վրա, ինչպես քնքուշ ու մշտական շովոքորթությունը: Այդ քաղցր խոսքերից հմայված, ոգեշնչված, Բերտենը նորից սկսեց զրուցել, մարդկային այդ վիթխարի, ալեծուփ զանդվածի մեջ ոշինչ շտեսնելով, ոշինչ լսելով, բացի կոմսուհուց:

Շնորհակալություն հայտնելու համար կոմսուհուն, Բերտենը նրա ականջին շշնչաց.

— Ես ուզում եմ խելահեղորեն համբուրել ձեզ:

Կոմսուհին զերմ հուզումով համակվեց և, փայլուն աշքերք, բարձրացնելով Բերտենի վրա, իր հարցը կրկնեց.

— Ուրեմն, գուք գեռնս սիրո՞ւմ եք ինձ:

Եվ Բերտենը պատասխանեց ձայնի այն ելեէզով, որ կոմսուհին ուզում էր լսել և տռաջ շեր լսել:

— Այո, ես սիրում եմ ձեզ, իմ թանկագին Անի:

— Երեկոներն ավելի հաճախ եկեք ինձ մոտ: Հիմա, երբ աղջիկս ինձ մոտ է, ես շատ գուրս շեմ գալիս:

Այն ժամանակվանից, երբ կոմսուհին նրա մեջ սիրո այդ անսպասելի զարթոնքն էր զգում, մի անհուն երջանկություն փոթորկում էր նրան։ Հիմա, երբ Բերտենի մազերը բոլորովին սպիտակել էին, և տարիների հետ նա խաղաղվել էր, կոմսուհին արդեն ավելի քիչ էր վախենում, որ Բերտենը կարող է հրապուրվել մի ուրիշ կնոջով, բայց կոմսուհին սաստիկ վախենում էր, որ Բերտենը կարող է ամուսնանալ մենակության սարսափից։

Կոմսուհու մեջ վաղուց ծնված այդ վախը անընդհատ աճում էր։ Նրա մեջ ծագում էին անիրազործելի պլաններ Բերտենին ավելի երկար իր մոտ թողնելու և այսպիսով թույլ շտալու, որ նա երկար երեկոներ անցկացնի իր դատարկ առանձնատան ցուրտ լուսվիյան մեջ։ Զկարողանալով միշտ իր մոտ բերել ու պահել նկարչին, կոմսուհին նրան թելագրում էր զվարճություններ, հորդորում էր, որ նա թատրոն գնա, հասարակության մեջ մտնի, նույնիսկ նախընտրելով, որ նա կանանց շրջանում գտնվի, քան թե մնա իր տիսուր տան մեջ։

Կոմսուհին, պատասխանելով իր թաքուն մտքին, շարունակեց։

— Ա՞հ, եթե ես կարողանայի ձեզ միշտ ինձ մոտ պահել, ինչպես ձեզ երես կտայիր Խոստացեք ավելի հաճախ գալ ինձ մոտ, քանի որ ես այլևս բոլորովին դուրս չեմ գա։

— Խոստանում եմ։

Կոմսուհու ականջի մոտ մի ձայն հնչեց։

— Մայրիկ։

Կոմսուհին ցնցվեց ու շուռ եկավ։ Աննետը, դքսուհին և Ժարկիլը մոտեցան նրանց։

— Ժամը շորսն է, — ասաց դքսուհին, — ես շատ հոգնած եմ, ուզում եմ գնալ։

Կոմսուհին պատասխանեց։

— Ես նույնպես գնում եմ, ես բոլորովին ուժասպառ եմ եղել։

Նրանք մոտեցան ներքին սանդուղքին, որ մեկնում է պատկերասրահներից, ուր կախված են նկարներն ու ակվարելները և որ բարձրանում է հսկայական ազակեպատ պարտեզի

վրա, որի մեջ ցուցադրված են քանդակագործության ստեղծագործությունները:

Սանդուղքի հարթակի մի ծայրից մինչև մյուս ծայրը երեսում էր հսկայական ջերմոցը, ուր արձաններ էին դրված. նրանք կանգնած էին շավիղների կանաչ, թավ թփերի շուրջը, կախվելով ծառուղիները սև հեղեղով ծածկող ամբոխի վրա: Դրւխարկների և ուսերի մթին ծածկոցի վերեռում, որ ճղված էր հազար տեղով, մարմարն արձանները ասես փայլում էին իրենց սպիտակությամբ:

Երբ Բերտենը մուտքի մոտ հրաժեշտ էր տալիս կանանց, տիկին դց Ֆիլոսոփան ցած ձայնով հարցրեց նրան:

— Ուրեմն, դուք կգա՞ք այս երեկո:

— Օ՛, այո՛:

Եվ Բերտենը վիրապարձավ ցուցահանգես, որպեսզի արվեստագետների հետ զրուցի օրվա տպավորությունների մասին:

Նկարիշներն ու քանդակագործները խմբերով կանգնել էին արձանների շուրջ, բուֆետի առջև, և վիճում էին, ինչպես անում էին ամեն տարի, պաշտպանելով կամ հերքելով նույն գաղափարները նույն փաստարկումներով, մոտավորապես նույն տեսակի ստեղծագործությունների մասին: Օլիվիե Բերտենը սովորաբար ոգեսորմամ էր այդ վիճաբանությունների ժամանակ, ունենալով պատասխաններով ու հերքումներով հականակորդին խճճելու առանձին հմտություն և վայելելով սրամիտ տեսաբանի համբավ, որով նա հպարտանում էր. նա կուզենաց հիմա էլ վեճերի մեջ մտնել, բայց այն, ինչ նա սովորաբար պատասխանում էր, նույնքան քիչ էր իրեն հետաքրքրում, որքան այն, ինչ լսում էր, և նա ուզում էր զնալ, ոչինչ լսել, ոչինչ շնորհանալ, քանի որ առաջուց դիտեր այն ամենը, ինչ կարող էր ասվել արվեստի այդ վաղնջական հարցերի մասին, որոնց նա ծանոթ էր իրենց բոլոր նրբություններով:

Այնուամենայնիվ Բերտենը սիրում էր այդ հարցերի մասին զրուցել, շատ էր սիրում մինչև հիմա, բայց այսօր այդ հարցերից նրան հեռացրել էր մեկը այն մանր ու համառ հոգսերից, մեկը այն թեթև մտահոգություններից, որոնք, թվում

Հ, մեզ երբեք շպետք է դիպչեն և, այնուհանդերձ, ինչ էլ որ ասենք, ինչ էլ որ անենք, մեխվում են մտքի մեջ, ինչպես մարմնի մեջ խրված անտեսանելի փուշը:

Նա նույնիսկ մոռացել էր լողացող կանանց մասին անհանգուտությունները և հիշում էր միայն մարկիզի տհաճ վերաբերմունքը Աննետի նկատմամբ: Բայց վերջ ի վերջո ինքը ի՞նչ գործ ուներ: Ի՞նչ իրավունք ուներ Աննետի վրա: Ինչո՞ւ էր ուզում արգելել այդ շահավետ ամուսնությունը, որ նախապես որոշված էր և ամեն տեսակետից հարմար էր: Բայց ոչ մի փաստարկ չէր կարող ջնջել անախորժության ու գժղոհության այն զգացումը, որ աիրեց նրան, երբ նա տեսավ, որ նարանդալը զբուցում ու ժպտում է փեսացուի նման, հայացքով շոյելով երիտասարդ օրիորդի գեմքը:

Երբ երեկոյան նկարիչը կոմսուհու մոտ անցավ և նորից նրան մենակ գտավ աղջկա հետ լամպի լույսի տակ, աղքատների համար հյուսվածք անելիս, նա իրեն հազիվ զոպեց, որպեսզի ծիծառելի ու շար զիւսակություններ շաներ մարկիզի ժամփին և շրանար Աննետի աշքերը արտաքին շիկությամբ ծածկված նրա ամբողջ գոեհկության վրա:

Ահա արդեն մի քանի տարի է, ինչ Բերտենը սովորություն էր ստացել ծուլորին լուսու այդ հետճաշքա այցելությունների ժամանակ, նստելով անփույթ զիրքով, ինչպես հին բարեկամ, ոչը իրեն աղատ է զգում: Եվ հիմա, բաղկաթողի մեջ նստած, որունքները խաշածեած, դլուխը ետ թեքած, նա երազում էր, հոգով և մարմնով հանգստանալով այդ ընտանի մթնուրտի սովորության մնջ: Բայց ահա նա հանկարծ կենդանացավ, վերտաշավ ակտիվությունը տղամարդու, որը ուրիշ կանաց ներկայությամբ շանում է զուր գալ, կշռադատում է իր խոսքարը, փնտրում է ամենափայլուն ու ամենանորը արտահայտությունները, որպեսզի պերճանք ու զեղեցկություն տա իր ձտքերին: Նա արդեն չէր գոհանում ալարկոտ զրույցով, այլ աստարում, եռանգով ու սրամտությամբ կենդանացնում էր այս: Երբ պատահեր, որ նա կոմսուհուն և աղջկան զվարթ ծիծաղ պատճառեր, զգար, որ նրանք հուզված են կամ տեսներ, որ նրանք զարմանքով աշքերն իր վրա են բարձրացնում և աշխատանքը թողնում, որպեսզի ուշագիր լսեն իրենք նա

ինչ-որ հաճելի խուտուտ էր զգում, մի թեթև դող հաջողության, որը փոխհատուցում էր նրա տանջանքները:

Հիմա նա ամեն անդամ զալիս էր, երբ իմանում էր, որ իրենք մենակ կլինեն, և գուցե երբեք դեռ չէր անցկացրել այդպիսի հաճելի երեկոներ:

Այդ հաճախակի այցելությունների շնորհիվ տիկին դը Գիլուուայի մշտական երկյուղները փարատվեցին, և նա բոլոր շանքերը գործ դրեց, որպեսզի Բերտենը ավելի հաճախ գա իր ժոտ: Տիկին դը Գիլուուան հրաժարվում էր հրավիրածաշերից, պարահանդեսներից, ներկայացումներից և, ժամը երեքին գուրս գալով տնից, ուրախությամբ հեռազրատուիի մեջ էր նետում փոքրիկ կապույտ հեռագիրը, ուր ասված էր. «Շուտով կտեսնը վենք»: Առաջին շրջանում, ձգտելով ավելի շուտ իր հետ տեսակցելու հնարավորություն տալ Բերտենին, կոմսուհին աղջկան ուղարկում էր քնելու, հենց որ սկսում էր ժամը տասք հնչել: Բայց մի օր տեսնելով, որ Բերտենը զարմանում էր զրա վրա և, ծիծաղելով, խնդրում էր, որ Աննետի հետ այլևս չվերաբերվեր ինչպիս անխելք երեխայի հետ, կոմսուհին համաձայնեց նրան շնորհել ևս քառորդ ժամ, ապա կես ժամ, ապա մի ժամ: Եթիտասարդ օրիորդի գուրս գալուց հետո Բերտենը երկար չէր մնում, ասես նրա հետ միասին շքանում էր իրեն այդ հյուրասենյակում պահով հմայրի կեռք: Իսկույն կոմսուհու ոտքերին մոտեցնելով իր սիրած ցած բազկաթոռը, Բերտենը նստում էր նրա կողքին և, երբեմն, այտք քնքորեն դնում էր նրա ծնկների վրա: Կոմսուհին, Բերտենին էր մեկնում ձեռքը, որ Բերտենն առնում էր իր ձեռքերի մեջ, և նրա տենդը հանկարծ մարում էր, նա լուս էր և այդ քաղցր լուսթյան մեջ, ասես, հանգստանում էր անցած լարումից:

Կոմսուհին կանացի հոտառությամբ տակավ առ տակավ հասկացավ, որ Աննետը Բերտենին գրեթե այնքան էր հրապարում, որքան և ինքը նա ամենեին չէր վշտանում զրահամար, նա ուրախ էր, որ իրենց ընկերության մեջ Բերտենն իր համար գտել էր ինչ-որ ընտանիքի նման բան, որից նա զրկվել էր իր պատճառով, և զանում էր որքան կարելի է նրան ամուր գերի պահել իր և աղջկա մոտ, խաղալով մոր դեր, որպեսզի Բերտենն իրեն գրեթե հայր զգար Աննետի և գորո-

վանքի մի նոր երանգ ավելանար այն ամենին, ինչ նրան կտպում էր այդ տան հետ:

Կոմսուհու նաղանքը, միշտ զգաստ, բայց անհանգիստ այն ժամանականից, երբ նա ամեն կողմերից, զեռ հաղիվ նկատելի խոցերի ձևով, զգում էր վերահաս ծերության անհամար զրոհները, ավելի ակտիվ բնույթ ստացավ: Աննետի նման բարեկաղմ դառնալու համար կոմսուհին շարունակում էր ոչինչ չխմել, և իրոք այնպես էր նիշարել, որ կերպարանքով նորից եր նմանվել աղջկան, և թիկունքից գրեթե չէր կարելի նրանց տարբերել: Բայց այդ ապրելակերպը անդրադարձել էր նրա նիշարած դեմքի վրա: Պրկված մաշկը կնճռուել էր և ստացել էր դեղին երանգ, որը ավելի ակնրախ էր դարձնում երիտասարդ աղջկա հոյակապ թարմությունը: Այն ժամանակ կոմսուհին սկսեց գեմքը խնամել ղերասանուհու հնարանքներով, և ջեկ նրա սպիտակությունը օր ցերեկով մի քիչ կասկածելի էր երեսմ, գրա փոխարեն երեկոյան լուսավորության տակ նա ստանում էր այն հմայիչ ու արվեստական պայծառությունը որ անզուզական թարմություն է տալիս լավ շպարված կանց:

Մոտեցող պառավորիթյան նշանները և այդպիսի արվեստական միջոցների գործադրումը փոխել տվին կոմսուհու սովորությունները: Նա սկսեց ըստ հնարավորին խուսափել աղջկա հետ համեմատվելուց արեի լույսի տակ և աշխատեց Աննետի հետ երեալ լամպի լույսի տակ, որը իրեն առաքելություն էր տալիս: Երբ նա իրեն հոգնած, զունատված, սովորականից ավելի պառաված էր զգում, օգնության էր գալիս հաճոյարար գլխացավը, որը նրան հնարավորություն էր տալիս հրաժարար պարագելու ալարահանգեսներից կամ ներկայացումներից, բայց այն օրերին, երբ նա իրեն գեղեցիկ էր զգում, նա չնծում էր և երիտասարդ մոր հալարտ համեստությամբ ավագ քրոջ գեր էր խաղում: Միշտ կրելու համար այնպիսի շրջազգեստներ, ինչպիսիք կրում էր իր աղջիկը, կոմսուհին նրան երիտասարդ կնոջ նման էր հաղցնում, որը Աննետին լուրջ տեսք էր տալիս, բայց աղջիկը, որի մոտ միշտ ավելի ու ավելի էր երեսմ ժիր ու ծիծաղկու բնույթը, այդ տուալետները

Վրում էր նռանգուն կենսուրախությամբ, որից նա է՛լ ավելի էր սիրունանում: Նա ամբողջ սրտով հավանություն էր տալիս մոր պշրուն խորամանկություններին, բնազդաբար նրա հետ խաղում էր փոքրիկ սիրուն տեսարաններ, զիտեր ժամանակին համբուրել նրան, զորովանքով դրկել նրա իրանը և մի ինչ-որ շարժումով, փաղաքուշ, ճարտար հնարանքով ցույց տալ, թե ինչպես իրենք երկուսով էլ սիրուն են և ինչպես իրար նման են:

Օլիվիե Բերտենը, նրանց Մշտապես միասին տեսնելով և իրար հետ համեմատելով, երբեմն նույնիսկ չէր կարողանում տարրերել նրանց: Երբեմն, երբ երիտասարդ աղջիկը Բերտենի հետ էր խոսում, իսկ Բերտենը այդ ժամանակ ուրիշ կողմ էր նայում, վերջինս ստիպված էր լինում յուրովի հարցնել, «Նրանցից ո՞վ ասաց այդ»: Հաճախ, երբ նրանք երեքով նշատում էին Լյուդովիկոս XV-ի ոճի պաստառներով զարդարված փոքր հյուրասենյակում, Բերտենը զվարձանում էր այդ սխալով, ինչպես զվարի խաղովի նա աշքերը փակում էր և նրանց խնդրում էր հերթով իրեն տալ նույն հարցը, որովեսպի ինքը կարողանար ձայնից ճանաչել նրանց: Եվ երկու կանայք այնպիսի հնարանքով ձայնի նույն ելեէցն էին գոտնում, նույն շեշտերով նույն խոչքերն էին ասում, որ Բերտենը հաճախ չէր կարողանում գուշակել: Արդարեւ նրանք այնպիսի միանման արտառանություն էին ձեռք բերել, որ ծառաները աղջկան զատառախանում էին՝ «Այո, ալիկին», իսկ մորը՝ «Այո, օրիորդ»:

Մշտապես մեկը մյուսին նմանեցնելով զվարձության համար և ընդօրինակելով մեկը մյուսի շարժումները, երկու կանայք վարվնակերպի ու շարժումների մեջ այնպիսի նմանություն էին ձեռք բերել, որ նույնիսկ սլարոն ողը Գիլուուան շատ անգամ սխալվում էր, երբ նրանցից մեկը անցնում էր մթին հյուրասենյակի խորքով, և նա հարցնում էր. «Այդ դո՞ւ ես, Աննետ, թե՞ մայրիկդ է»:

Այդ բնական ու գիտավորյալ, իրական ու արվեստական նմանությամբ նրանք նկարչի մաքի ու սրտի մեջ տուած բերին երկակի էակի անսովոր տպավորություն, հին և նոր, լավ

անոթ և զրեթե անծանոթ, մեկը մյուսից հետո և միանույն  
չից ստեղծված երկու մարմինների տպավորություն, ինքն-  
ին շարունակած, երիտասարդացած և նորից առաջվանը  
որձած նույն կնոջ տողավորություն։ Եվ Բերտենը ասլրում էր  
ւանց մտերմության մեջ, իրեն բաժանելով երկուսի միջև  
նշանգաւուցած, շփոթված, մոր նկատմամբ այրվելով վերա-  
սրբնած կրքով և աղջկան պարուրելով խորհրդավոր գո-  
վանքով։

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### I

20 նուիս, Փարիզ: Երեկոյան ժամը 11:

«Իմ բարեկամ, մայրս մեռավ Ռուսիերում: Իհսգիշերին մենք այնտեղ կմեկնենք: Դուք մի գաք, որովհետև մենք ոչ ոքի շենք տեղեկացնում: Խղճացեք ինձ ու մտածեցեք իմ մասին:»

Չեր Անդի»:

21 նուիս, կեսօր:

«Իմ հեգ բարեկամուհի, ես այնուամենայնիվ կգայի ձեղ մոտ, եթե սովորած չլինեի ձեր ցանկությունները համարել որննքներ: Երեկ երեկոյանից ես ձեր մասին եմ մտածում դառնակսկիծ վշտով: Ես պատկերացնում եմ այն լուռ ուղեռությունը, որ զուք կատարեցիք այդ գիշեր, նստած ձեր աղջկա ու ամուսնու զիմաց, հազիվ լուսավորված վագոնում, որ զանգագորեն ձեզ տանում էր զեափի ձեր հանգուցյալը: Ես տեսնում էի ձեզ երերիդ ձեթի ճրագի տակ, տեսնում էի, թե ինչպես զուք արտասվամ էիք և ինչպես Աննետը հեկեկում էր: Տեսնում էի ձեր ժամանումը կայարան, ձեր ցավագին անցումը կառքով, ծառաների միջով ձեր մուտքը դզյակ, ձեր սլացումը սանգուղքով գեպի այն սենյակը, գեպի այն մահիճը, ուր պառկած է ննջեցյալը, տեսնում էի ձեր հայացքը նրա վրա և ձեր համբույրը նրա վտիտ, անշարժ գեմքին: Եվ ես մտածում էի ձեր սրտի, ձեր հեգ սրտի մասին, այն հեգ սրտի,

որի կեսը պատկանում է ինձ և որը փշրվում է և այնքան է տառապում ու այնքան ձեզ հեղծում, որ այս բողեիս ես էլ և մ կսկսում:

Խորին ցավակցությամբ համբուրում եմ ձեր արտասվալից աշքերը:

Օլիվիե»:

24 Բուլիսի, Ռանսիր:

«Ձեր նամակը, իմ բարեկամ, սփոփանք կլիներ ինձ համար, եթե որևէ բան որոշ շափով կարողանար ամոքել ինձ խորտակող ահավոր վիշտը: Երեկ մենք թաղեցինք մայրիկին, և այն սկահից, երբ նրա հեք, անկենդան մարմինը դուրս բերվեց այս տնից, ինձ թվում է, որ ես մենակ եմ մնացել աշխարհի վրա: Մարդ սիրում է իր մորը զրեթե առանց գիտակցելու, առանց զգալու, որովհետև դա նույնքան ընական է, որքան հենց կյանքը, և միայն վերջին հրաժեշտի ժամանակ նկատում է, թե որքան խոր են այդ սիրո արմատները: Ոչ մի ուրիշ գորովանք չի կարելի համեմատել դրա հետ, որովհետեւ բոլոր մյուսները պատահական են, իսկ դա բնածին է, բոլոր մյուսները մեզ պարտադրվում են ավելի ուշ՝ կյանքի զանազան հանգամանքներով, իսկ զա ալրում է մեր գոյության առաջին օրից, հենց մեր արյան մեջ: Եվ հետո, և հետո մարդ միայն մորը չէ, որ կորցնում է, այլ նրա հետ միասին կիսով շափ անհետանում է մեր մանկությունը, որովհետև մեր կյանքը, մեր փոքրիկ մանկական կյանքը, նույնքան նրան է պատկանում, որքան և մեզ: Նա' միայն գիտեր այդ կյանքն այնպիս, ինչպիս մենք, զիտեր բազմաթիվ հեռավոր, աննշան ու թանկագին մանրամասնություններ, որոնք են և մնում են մեր որոտի առաջին քաղցր հուզումները: Նրա'ն միայն ես կարող եմ ասել. «Հիշո՞ւմ ես, մայրիկ, այն օրը, երբ... Հիշո՞ւմ ես, մայրիկ, այն հախճապակե սկուպրիկը, որ ինձ նվիրել էր տատիկը»: Նրա հետ երկուսով մենք աշքի էինք անցկացնում երկար, քաղցր համբիշը այն մանր ու փխրուն հիշողությունների, որոնք հիմա ինձանից բացի ոչ ոքի հայտնի չեն աշխարհում: Ուրեմն մեռավ իմ մի մասը, ամենահին, ամենաշավ մասը: Ես կորցրի հետ սիրու, ուր դեռ ամրողովին ապ-

գում էր այն փոքրիկ աղջիկը, որ ես էի մի ժամանակ։ Հիմա  
այլիս ոչ ոք չդիտե, ոչ ոք չի հիշում փոքրիկ Աննային, նրա  
կարծ շրջապատները, նրա ծիծաղները, նրա քմայքները։

Եվ կգա մի օր, որ թերեւ այնքան էլ հեռու չէ, երբ ես էլ  
կզնամ իմ հերթին, իմ թանկացին Աննեատին մենակ թողնելով  
աշխարհի վրա, ինչպես հիմա ինձ թողել է մայրիկը։ Ի՞նչ  
տիտուր, դժողակ, զածան բան է այս բոլորը։ Սակայն մարդ  
երբեք այս մասին չի մտածում, չի նկատում, որ մահը ամեն  
ըսովե տանում է մեկին, ինչպես շուտով կատանի և մեզ։ Եթե  
մենք նկատեինք, եթե մտածեինք այդ մասին, եթե մենք մեր  
առջև տեղի ունեցող իրադարձություններով մտացրված, ուրա-  
խացած, կուրացած չլինեինք, անհնարին կլիներ ասլրել,  
որովհետև այդ անվերջանալի սպանդի տեսարանը կխելա-  
գարեցներ մեզ։

Ես այնքան չախչախված եմ, այնքան հուսահատված, որ  
այլիս ուժ շունեմ որեւէ բան անելու։ Օր ու գիշեր ես մտածում  
եմ այդ արեղի մեջ մեխված, հողի մեջ, դաշտում, անձրեկ  
տակ թաղված իմ խեղճ մայրիկի մասին, այն մասին, որ նրա  
պառակ դեմքը, որ ես այնքան ուրախությամբ համբուրում  
էի, հիմա լոկ սոսկալի որեն նեխվող մի զանգված է։ Օ՛, ի՞նչ  
զարհուրելի բան է, իմ բարեկամ, ի՞նչ դարձուրելի բան է։

Երբ ես հորս կորցրի, գեռ նոր էի տմուսնացել և այդ բո-  
յորը այնպիս սուր չղջացի, ինչպես զԴում եմ հիմու։ Խըզ-  
քացեր ինձ, մտածեցեք իմ մասին, զրեցեք։ Ես հիմա այնքան  
կարիք ունիմ ձեզ։

### Աննա»:

Փարփա, 25 հունիս

#### «Իմ հեք բարեկամուհի»

Զեր վրշտը ահավոր տանջանք է պատճառում ինձ։ Ես  
նույնպես հիմա կյանքը վարդագույն չեմ տեսնում։ Զեր մեկ-  
նելուց հետո ես մնացել եմ մենակ ու լքուն, աննեցուկ ու  
անապաստան։ Եմեն ինչ ինձ հոգնեցնում է, ձանձրացնում,  
շղայնացնում։ Ես անընդհատ մտածում եմ ձեր մասին և մեր  
Աննետի մասին, զգալով, թե ինչպես երկուսդ էլ հեռու եք  
ինձնից։ Երբ ինձ հարկավոր էր, որ գուք ինձ մոտ լինեիք»

Տարօրինակ է, որ ես ձեզ հեռու եմ զգում և ձեզ կարուսում  
 եմ: Երրհք, նույնիսկ իմ երիտասարդության օրերին, դուք  
 ինձ համար շեք եղել այն աստիճան ամեն ինչ, ինչպիս այս  
 պահին: Որոշ ժամանակից ի վեր ես նախազգում էի այդ  
 ճգնաժամը, որ պետք է լիներ ինչպես արեահարություն՝ աշ-  
 նակամուտի իմ օրերին: Այն, ինչ ես զղում եմ, այնքան ար-  
 տասովոր է, որ ձեզ ուղում եմ պատմել այդ մասին: Պատ-  
 կերացրեք, որ ձեր մեկնելուց հետո ես այլևս չեմ կարողանում  
 զբունել: Մի ժամանակ և նույնիսկ վերջին տմիսներին, ես  
 շատ էի սիրում մենմիայնակ դեգերել փողոցներում, մարդ-  
 կանցով ու իրերով զվարճանալով, տեսնելու որախությունը  
 և առուց քայլելու հաճույքը վայելելով: Ես զնում էի ուր որ  
 աշքերս կտրում էին, միայն թե քալիի, շնչել, երազեի: Իսկ  
 ոչիմ, այլևս չեմ կարողանում: Հենց որ դուրս եմ գալիս փո-  
 ղոց, ինձ ձնշում է անձիւթյունը, իր շանց արձակած կույրի  
 գախը: Ես սկսում եմ անհանդստանալ անտառում շավիղը  
 և որցրած ճանապարհորդի նման և պետք է առւն վերադառ-  
 նամ: Փարիզը ինձ երեսում է զատարկ, տհավոր, խռովահույզ:  
 Ես յուրովի հարցնում եմ: «Ո՞ւր զնում»: Եվ պատասխանում  
 եմ: «Ոչ մ' տեղ, քանի որ զբունում եմ»: Եվ ահա չեմ կարո-  
 ղանում, և այլևս չեմ կարողանում տննպատակ զբունել:  
 Միայն այն միտքը, որ զնում եմ, շիմանալով, թե ուր եմ  
 զնում, ինձ սասաիկ պարտասեցնում ու վհատեցնում է: Եվ ես  
 եմ մելամաղձության հետ քարշ եմ գալիս ակումբ:

Եվ զիտե՞ք ինչու: Միմիայն նրա համար, որ դուք այլև-  
 այստեղ շեք: Ես զրահ վստահ եմ: Երբ իմանամ, որ դուք  
 Փարիզումն եք, իմ զբուսնքներն այլևս աննպատակ չեն լի-  
 նի, որովհետեւ հնարավոր է, որ ես ձեզ կհանդիպեմ որեւէ փո-  
 ղոցի մայթի վրա: Ես կարող եմ զնալ ամեն տեղ, որովհետեւ  
 դուք կարող եք լինել ամեն տեղ: Եթե ես շտաննամ ձեզ, ապա,  
 զույգ, կհանդիպեմ Աննեախն, որը ձեր արտացոլումն է: Դուք-  
 երկուսդ ինձ համար փաղոցները լցնում եք հույսով, ձեզ ճա-  
 նաշելու հույսով, երբ դուք հեռուից կդաք դեպի ինձ կամ երբ  
 գուշտիում եմ, որ այդ դուք եք, որին ես հետևում եմ: Եվ այն  
 համանակ քաղաքը ինձ համար հմայիլ է զառնում, և ձեզ  
 նման կանայք իմ սիրալ հուզում են, ներքաշելով նրան փո-

զոցային եռուզեսի մեջ, թեթևացնում են իմ սպասումը, զբազիցնում են իմ տեսողությունը, գրգռում են ձեզ մեսնելու իմ ցանկությունը:

Դուք ինձ շատ էգոխտ պիտի համարեք, իմ հեք բարեկամուհի, ինձ, որ այսպիս խոսում եմ իմ միայնության մասին, ինչպես ծեր, մնշացող աղավնի, այն ժամանակ, երբ դուք արտասվում եք այնքան զառնաղի արցունքներով։ Ներեցեք ինձ, ես այնքան սովորել եմ երես առնել ձեզանից, որ մենակ մնալով, դոշում եմ, «ողնեցե՞ք»։

Համբուրում եմ ձեր ոտքերը, որպիսզի դուք գթաք ինձ։

### Օլիվիե»:

Թանօթեր, 30 նովիս:

«Իմ բարեկամ։

Ծնորհակալություն ձեր նամակի համար։ Ես այնքա՞ն կարիք ունեմ իմանալու, որ դուք ինձ սիրում եք։ Ես ապրել եմ ահավոր օրեր։ Արդարե, կարծում էի, որ ես նույնպես կմեռնեմ վշտից։ Վիշտը իմ մեջ էր, ընկել էր կրծքիս մեջ ծանր քարի նման և անդադար աճում էր, ճնշում, խեղդում էր ինձ։ Հանգըստացնելու համար զղային նոսկաները, որ ունենում էի օրական շորս-հինգ անգամ, բժիշկը ինձ մորֆին սրսկեց։ Ես դրանից քիչ մնաց խելագարվեի, իսկ այստեղ սկսած ծանր շոգերը վատացնում էին իմ վիճակը, ինձ հարցնում զառացանքին մոռեցող զղագարության։ Ուրբաթ օրը տեղի ունեցած սաստիկ ամպրոպից հետո ես մի քիչ հանգուտացել եմ։ Պետք է ասել, որ թաղման օրից ի վեր ես ոչ մի անգամ չէի լացել, և ահա ամսուրոպի ժամանակ, որի մոտենալը խոռվում էր ինձ, իմ աշքերից հանկարծ կաթեցին արցունքներ, համր, նոսր, մանր, այրող արցունքներ։ 0՝, այդ առաջին արցունքները, ինչքա՞ն ցավ են պատճառում նրանք նրանք ինձ բզկառում էին ասես ճանկերով, և իմ կոկորզը այնպես էր սեղմվում, որ չէի կարողանում շունչ քաշել։ Ասկա արցունքները դարձան ավելի հաճախակի, ավելի խոշոր, նվազ կիզիչ։ Նրանք աղբյուրի նման հոսեցին իմ աշքերից, նրանք հոսեցին այնքան, այնքան, այնքան, որ թաշկինակս ջուր դարձավ և հարկ եղավ

նորը վերցնելի Եվ վշտի ստվար զանդվածը ասես փափկեց,  
հալվեց և իմ աշքերից հոսեց:

Այդ բուգեից ես արտասվում եմ առավոտից մինչև երեկո,  
և այդ ինձ գրկում Հ Եթե ես չկարողանայի արտասվել,  
վերջ ի վերջո՛ իսկապես կխելագարվեի կամ կմահանայի: Ես  
շարձյալ շատ մենակ եմ: Ամուսինս շրջագայում է գավառում,  
և ես նրան հորդուեցի իր հետ տանել Աննետին, որպեսզի  
զրադեշնի ու հանգստացնի նրան: Նրանք Խոնսիերից ութ կամ  
տասը մղոն հեռու են գնում կառքով կամ ձիով, և Աննետը,  
շայած իր տիրության, վերադառնում է ինձ մոտ թարմացած,  
վարդագունած, աշքերը կենսունակությունից շողուն, գյուղա-  
կան օդից ու ճանապարհորդությունից աշխուժացած: Ի՞նչ լավ  
է լինել այդ հասակում: Ես կարծում եմ, որ մենք դեռ երկու-  
երեք շարաթ այստեղ կմնանք, իսկ հետո, թեև դեռ օդուտոս  
ամիսն է, կվերադառնանք Փարիզ ձեզ հայտնի պատճառով:

Հղում եմ ձեզ այն ամենը, ինչ մնացել է ինձ՝ իմ սրտից:

### Անի»:

Փարիզ, 4 օգոստոս:

«Ես այլես չեմ կարող տոկալ, իմ սիրելի բարեկամունի  
Դուք պետք է վերադառնաք, այլապես ինձ, հավանարար, ինչ-  
որ բան կպատահի: Ես ինձ հարց եմ տալիս՝ արդյոք ևս հի-  
մոնդ չե՞մ, այնքան նողկանք եմ զգում դեպի այն ամենը, ինչ  
ևս այնքան երկար ժամանակ անում էի որոշ բավականու-  
թյամբ կամ անտարբեր հլությամբ: Նախ և առաջ, Փարիզում  
անքան շոգ է, որ զիշերները ինձ զգում եմ, ինչպես թուր-  
քական բազնիքում: Ես վեր եմ կենում, շիկացած հնոցում  
տյղպիսի քնից հետո հոգնությունից ուժառպառ եղած և մեկ  
կամ երկու ժամ ման եմ դալիս սպիտակ կտավի առջե, ինչոր  
բան նկարելու դիտավորությամբ: Բայց իմ միոքը հիմա  
անդոր է, աշքերս անզոր են, ձեռքերս անզոր: Ես այլես նկա-  
րիչ չեմ... Աշխատելու այդ արարդյուն ճիգը հուսահատեցնում  
է ինձ: Կանչում եմ բնատիպ ծառայող կանանց, կանգնեցնում  
է մ նրանց, բայց նրանք ստանում են այն կեցվածքը, այն  
շարժուձերը, այն արտահայտությունները, որ ես արդեն

նկարել եմ կշտանալու չափ, և ես նրանց հրամայում եմ  
 հագնվել ու դռնից դուրս եմ հանում։ Արդարե, ես այլիս չեմ  
 կարողանում որեք նոր բան տեսնել և տանջվում եմ զրանից,  
 ասես կուրացել եմ։ Ի՞նչ է այդ։ Աշքի կամ ուղեղի հոգնու-  
 թյուն, ստեղծագործելու ունակության ցամաքում, թե տե-  
 սովական նյարդի գերհոգնություն։ Ո՞վ գիտել ինձ Բվում է,  
 որ ես արդեն դադարել եմ հայտնագործություններ անել շնե-  
 տազուվածի բնագավառում, որի մեջ կարողանում էի թա-  
 փանցել։ Հիմա ևս նշմարում եմ միայն այն, ինչ հայտնի է  
 ամենքին. անում եմ այն, ինչ արել են բոլոր վատ նկարիչ-  
 ները. սրատեսությունն ու դիտողությունը հիմա ինձ մոտ-  
 նույնքան են, որքան համբակի մոտ։ Մի ժամանակ, ոչ շատ  
 վաղուց, նոր թեմաների քանակը անսահման էր երեսում ինձ,  
 և ես զրանք արտահայտելու համար այնքան բազմապիսի մի-  
 ջոցներ ունեի, որ դժվարանում էի բնուրության մեջ եվ ահար-  
 ինձ ներկայացած ոչուժեների աշխարհը հանկարծ ամայա-  
 ցակ, իսկ իմ հետազոտությունը դարձավ անզոր ու ամուլ-  
 Առջեցից տնցնող մարդիկ այլիս ինձ համար իմաստ շունեն.  
 յուրաքանչյուր մարդկացին էակի մեջ ես այլիս չեմ գտնում  
 այն հատկանիշն ու այն համը, որոնք սիրում էի զանազանել  
 և տեսանելի դարձնել։ Սակայն ես կարծում եմ, որ կարող էի  
 ձեր աղջկա շատ սիրում դիմանկարը տալ։ Արդյոք պատճառն  
 այն չէ, որ դուք իրար շատ եք նման, և ես ձեղ երկուսիդ շփո-  
 թում եմ մտքում։ Սյո, թերեւ

Եվ այսպիս, հոգնելով տղամարդ կամ կին ուրվանկարելու  
 փորձերից, տղամարդ կամ կին, որոնք նման լինեին բոլոր  
 ծանոթ բնաւտիպներին, ես վճռում եմ զիալ նախաճաշելու որեք  
 առեղ, որովհետեւ այլիս արիսություն չունեմ մենակ նստելու իմ  
 հաշտանելուր կրամ։ Առջերբի բոլվարը նման է մեռած մի քաղա-  
 քի մեջ փակված անտառային բացատի։ Բոլոր տներից գա-  
 տարկություն է բուրում։ Ճրողները վողոցներով շաղ են տալիս  
 սպիտակ անձրես շիմիկ, և փայտահատակից բարձրանում են  
 թաց կուպրի ու լիւացված ախուրի ճողորշիներ, իսկ Մոնսուի  
 դրամայզուց մինչև Սևան-Օդյուստ հեկեղեցին երկարող ամքողչ  
 տարածության վրա նկատվում են աննշան անցորդների, ցրիշ-  
 ների կամ ծառաների հինգ կամ վեց ազոտ կերպարանքներ

Ժողիների ստվերները տարածվում են ծառերի տակ, շիկացած մայթերի վրա, արտասովոր բժերով, որոնք հեղուկներ են երեսում, ինչպես շորացող ջրերը ձյուղերի տերևների և աօֆալտի լյուս նրանց մոխրագույն սիլուետների անշարժության մեջ երեսում է հոգնած քաղաքը, որը խորովվում, նիրճում ու քըրտում է, ինչպես արեի տակ նատարանի վրա քնած բանվորը Այս, քրտնում է նա՝ անտակ քաղաքը և գարշելի հոտ է արձակում իր կոյուղիների բացվածքներից, նկուղների օվանցքներից ու խոհանոցներից, փողոցների առաւելեցից, որոնցով հոսում է նրա ազտեղությունը: Եվ ես հիշում եմ ամառային տապատները ձեր այգում, ուր բազմաթիվ դաշտային ծաղիկները մեղրի համ են տալիս օդին: Ասլա զգվանքով մտնում եմ ձաւշարան, ուր ընկճված գեմքով, ճաղատ գիխով, քրտինքից փայլող ճակատով, մեծ փորով մարդիկ, կիսարաց բաճկոններ հազած, աւտում են: Բոլոր ուսելիքները այստեղ նույնութեան տաք են՝ և սառուցի տակ հալիքող սեխը, և՝ կակուղ հացը, և՝ ճլորած սուկին, և՝ փտած բանջարեղենը, և՝ հոտած պանիրը, և՝ ցուցափեղկում հասունացած պտուղները: Եվ ես նողկանքով գուրս եմ դաշիս ու վերապառնում եմ տուն, որպեսզի փորձեմ մի քիչ քնել մինչև ճաշի ժամը: Ճաշում եմ ակումբուն:

Ես միշտ այնտեղ եմ գտնում Աղելմանսին, Մալդանին, Ռոկչիանին, Հանգալին և շատ արիշների, որոնք ինձ ձանձրացնում ու հոգնեցնում են, ինչպես երգեհոնիկները: Յուրաքանչյուրն ունի իր եղանակը կամ եղանակները, որ ես լուս եմ ուասնջինք տարուց ի վեր, և նրանք բոլորը միասին ամեն երեկո այդ եղանակները նվազում են ակումբում, որ այնպիսի սեղ է, ուր մարդիկ գնում են զգաբնանալու: Ինձ հարկավոր էր փոխել իմ սերունդը, որից աշքնրս, ականջներս ու միտքս կշտագել են: Այդ մարզիկ ամեն անզամ նոր հաղթանակներ են նվաճում, նրանք պարծենում են գրանով և միմյանց շնորհավորում են զրա համար:

Հորանցելով այնքան տնզում, որքան բոպե կա երեկոյան ժամը ութից մինչև կեսգիշեր, ես գնում եմ տուն քնելու և պառկում եմ մտածելով, որ վաղը այդ բոլորը հարկ կլինի նորից սկսել:

Այո, սիրելիս, ես այն հասակումն եմ, երբ ամուրիի կյանքը գառնում է անտանելի, քանի որ ինձ համար այլես ոչ մի նորություն չկա արեի տակ: Ամուրին պետք է լինի երիտասարդ, հետաքրքիր, ազան: Երբ մարդ դադարում է այդպիս լինել, ազատ մնալը գառնում է վտանգավոր: Աստված իմ, ինչպես եմ սիրել ազատությունը մի մամանակ, նախքան ձեզ նրանից ավելի սիրելու: Ինչպես նա հիմա ճնշում է ինձ: Ինձ նման ծեր ամուրիի համար ազատությունը դատարկություն է, ամենուրեք դատարկություն, դա մահվան ճանապարհ է, ազատ այն ամենից, ինչ խանգարում է վերջը տեսնել, դա անընդհատ ժագող հարցն է՝ «Ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ, որպեսդի մենակ չմնամ»: Եվ ես գնում եմ մի ընկերից մյուս ընկերը, մի ձեռքի սեղմումից մյուս ձեռքի սեղմումը, մի քիչ բարեկամություն մուրալով: Ես հավաքում եմ բարեկամության փշրանքներ, որոնք պատառ շեն կազմում: Ես ունեմ ձեզ, ձեզ, իմ բարեկամունի, բայց դուք ինձ չեք պատկանում: Նույնիսկ, գուցի, դուք եք ինձ տանջող անձկության պատճառը, որովհետեւ հենց ձեզ մերձենալու, ձեզ հետ ընդհանուր հույսեր, վշտեր, հաճույքներ, ուրախություն, տրտմություն և նույնիսկ նյութական առարկաներ ունենալու պահանջն այնքան մտահոգում են ինձ: Դուք իմն եք, այսինքն ժամանակ առ ժամանակ ես գողանում եմ ձեր մի մասնիկը: Բայց ես կրփափառեի անրնդհատ նույն օդը շնչել ձեզ հետ, ամեն ինչ բաժանել ձեզ հետ, գործածել միայն այնպիսի իրեր, որոնք մեր երկուսին պատկանած լինեին ե զգալ, որ այն ամենը, ինչով ես ապրում եմ, նույնքան ձերն է, որքան և իմը—և՛ բաժակը, որով խմում եմ, և՛ աթոռը, որի վրա հանգստանում եմ, և՛ հացը, որ ուտում եմ, և՛ կրակը, որի մոտ տաքանում եմ:

Մնաք բարով, ավելի շուտ վերագարձեք: Ես շատ եմ տառապում ձեզանից հեռու:

Օլիվիե»:

«Իմ բարեկամ, ես հիվանդ եմ և այնքան պարտասած, որ գուք ինձ չէիք ճանաչի. Հավանաբար ես շատ եմ լաց եզեր ինձ հարկավոր է մի քիչ հանգստանալ վերադառնալուց առաջ, որովհետեւ շեմ ուզում ձեզ երեալ այսպիսի տեսքով։ Ամուսինս վաղը չէ մյուս օրը Փարիզ կգա և ձեզ կպատմի մեր մասին։ Նա մտադիր է ձեզ ճաշի տանել որեւէ տեղ և ինձ հանձնարարնց ձեզ խնդրել, որ գուք իրեն սպասեք տանը ժամը ո՛վին։

Դալով ինձ, հենց որ մի քիչ ավելի լավ զգամ, հենց որ շունչնամ մեռելի գեմք, որից անգամ վախենում եմ, կվերագառնամ ձեզ մոտ։ Ես ես աշխարհում ոչ ոք չունեմ, բացի Աննետից ու ձեզանից և ուզում եմ ձեզանից յուրաքանչյուրին տալ այն ամենը, ինչ կարող եմ տալ, առանց գողանալու մյուսից։

Համբուրելու համար ձեզ նմ պարզում իմ աշքերը, որոնք այնքան արտասվել են։

### Անհայ։

Երբ Օլիվիե Բերտենը ստացավ այս նամակը, որով հայտնրվում էր, որ վերադարձր նորից է հետաձգվում, նրա մեջ զանկություն, անզուսալ ցանկություն ծագեց կայարան երթարու և զնացքով նորիսիեր մեկնելու։ Բայց մտածելով, որ ուսուն զը Գիլուուան վաղը պետք է վերադառնար, նա համակերպվեց և սկսեց ամուսնու ժամանումը ցանկալ գրեթե այնպիսի անհամբերությամբ, ինչպես իթե դա հենց կնոց ժամանումը լիներ։

Դեռ երբեք Օլիվիեն Գիլուուային չէր սիրել այնպես, ինչպես սպասման այս քանչորս ժամերի ընթացքում։

Երբ Գիլուուան ներս մտավ, Օլիվիեն նետվեց դեպի նա չեռքերը ողարգելով ու գոշելով։

— Ա՞հ, սիրելի բարեկամ, որքա՞ն երջանիկ եմ ձեզ տեսնելու համար։

Գիլուուան նույնպես դո՞հ, հատկապես ուրախ էր երեսում ծարիգ վերադառնալուն համար, որովհետեւ վերջին երեք շարաթներում նրա կյանքը նորմանգիայում տրտում էր։

Երկու տղամարդիկ նստեցին երկուտեղանի փոքրիկ բազմոցի վրա, արվնստանոցի անկյունում, արևելյան պատտառներից կազմված ամպհովանու տակ, և նորից խանդաղատանքով պարզեցին ու սեղմեցին միմյանց ձեռքերը:

— Իսկ կոմսուհի՞ն, — հարցրեց Բերտենը: — Ինչո՞ւ է նա:

— Ոչ լավ: Նա շատ հուղվեց, շատ աղղվեց և հիմա խիստգանդաղ է կազդուրվում: Խոստովանում եմ, որ նա նույնիսկ ինձ մի քիչ անհանգստացնում է:

— Ինչո՞ւ նու չի վերադառնում:

— Զգիտեմ: Ես չկարողացա նրան համոզել, որ վերապատճառ:

— Ի՞նչ է նա անում ամբողջ օրը:

— Աստված իմ: Լազ է լինում ու մոր մասին, մտածում: Դա լավ չէ նրա համար: Եվ շատ կուզեի, որ նա փոխեր միշտ վայրը, թողներ տեղը, որ այդ զեպքը տեղի է ունեցել:

— Իսկ Աննե՞ար:

— Օ՛, նա ժաղկում է:

Օլիվիեն ուրախ-ուրախ ժաղտաց ու նորից հարցրեց.

— Նա շատ վիշտ ապրե՞ց:

— Այո, շատ, շատ, բայց դուք դիտեք, վիշտը տասնութեամյա հասակում երկար շի տեսում:

Կարճաահ լուսթյունից հետո Գիլուռան շարունակեց.

— Ո՞ւր գնանք ճաշելու, սիրելիու: Ինձ հարկավոր է մտացրվել, աղմուկ լսել, շարժում տեսնել:

— Ինձ թվում է, այս եղանակին ամենահարմար տեղը Թեսպանական սրճարանն է:

Եվ նրանք թե-թեի մտած գնացին զեպի Շանդելիզե: Գիլուռան, անհանգիստ, ինչպես ամեն փարիզեցի, որին, յուրաքանչյուր բացակայությունից հետո թվում է, թե քաղաքը շահելացի է և ամեն տեսակ անակնկալներով լի, նկարչին հարցնում էր այն ամենի մասին, ինչ արվել ու ասվել էր այստեղ, իսկ Օլիվիեն նրան պատասխանում էր անտարբերությամբ, որի մեջ արտացոլվում էր նրա միայնության բովանդակ ձանձրույթը, ապա խոսում էր Ռոնսիերի մասին: Նա զանում էր Գիլուռայի մեջ որսալ, նրա մեջ բռնել այն գրեթե շոշափելի

քանը, որ մեր մեջ թողնում են մարդիկ, որոնցից նոր ենք բաժանվել, այն հազիվ զգալի էմանացիան, որը մենք կրում ենք, մեր մեջ պահում ենք մի քանի ժամ և որը գոլորշիանում է նոր մթնոլորտում:

Ամառային երեկոյան ծանր երկինքը կախվել էր քաղաքի և լայն պողոտայի վրա, ուր ծառերի տակ արդեն հնչում էին շացօթյա համերգների զվարի մեղեղիները: Երկու տղամարդիկ, Դևսպանական սրճարանի պատշգամբում նստած, նայում էին ներքեա՞ մինչե՞ փոքր թատրոնը ձգված ցանկապատի առջեցրած դեռ պարուղ նստարաններին, ու աթուներին, թատրոն, ուր երգչուհիները ցերեկվա լույսի հետ խառնվուծ էլեկտրական զնդերի աղոտ լույսի մեջ ցուցադրում էին իրենց շողշոշուն տուալետներն ու վարդակույն մարմինները: Թեթև զեփուուի մեջ, որ մեկը մյուսին էին ապարկում շագանակենիները, ծիփում էին տապակածների, համեմունքների, զանազան տաք ուտելիքների հոտերը, իսկ երբ ու ֆրակ՝ հագած մի ողամտրդու ուղնկցությամբ ինչ-որ կին էր անցնում իրեն վերապահված աեղք փնտրելով, նա իր ետև թողնում էր իր շրջագրերուի ու մարմնի դգլիմի ու թարմ բորմունքը:

Գիլուուն, ուրախ դեմքով, շշնչաց.

— Օ՛, ես գերապառուն եմ այստեղ լինել, քան այնունց:

— Իսկ ես,— պատասխանեց Բերտենը — կուրադասեի այնուեղ լինել, քան այստեղ:

— Թողե՛ք:

— Վա՛հ: Ես դոնում եմ, որ այս ամառ Փարիզը դարշե՞մ է:

— Է՛հ, սիրելիս, այնուամնայնիվ, Փարիզն է:

Դեպուտատը, ըստ երեսութիւն, հիանալի տրամադրության մեջ էր, ոյն հազիւագեղ աշխույժ գրգուման վիճուկի մեջ, երբ յուրց մարդիկ հիմարություններ են անում: Նու նայում էր երեկու թեթևողիկ կանանց, որոնք ճաշում էին հարիան ոնդանին՝ երեք նիճար, ծայրաստիճան կոռեկտ երիտասարդների հետ, և ծածկամտորեն ՕլիվիԵին հարցուփորձ էր անում հանրածանոթ աղիճների մասին, որոնց անունները նա լսում էր ամեն օր: Ապա նա խոր ափսոսանքի տոնով շշնչաց.

— Դուք բախտավոր եք, որ ամուրի եք մնացել։ Դուք կարող եք այնքան բաներ անել և տեսնել։

Բայց նկարիչը լրջորեն առարկեց և, նման նրանց, որոնց մի միաք է Հնտապնդում, Գիլուռային մտերմաբար պատմեցիր տիրությունների ու առանձնության մասին։ Եթե նա ամեն ինչ ասաց, մինչև վերջ արտասանեց իր մելամաղձության լիտանիան և, սիրող թեթևացնելու պահանջից դրդված, միամբ տորեն պատմեց, թե ինչքան ծարավի է կնոջ սիրո ու մշտական մերձակցության, կոմսը, իր հերթին, համաձայնեց, որ ամուսնությունն ունի նաև լավ կողմ։ Եվ, իր ընտանեկան կյանքի քաղցրության նկարագրության համար գիմելով պառլամենտական իր պերճախոսության, նա կոմսուհու մասին խոսեց մեծ դովանանքով, որին Օլիվիեն հավանություն էր տալիս լրջորեն ու հաճախակի դիմու շարժումներով։

Ուրախ լինելով, որ խոսքը կոմսուհու մասին է, բայց խանդիլով այն ընտանեկան երջանկությանը, որ Գիլուռան փառաբանում էր պարտականությունից դրդված, նկարիչը վերջապես ասաց հանդարտ ու անկեղծ համոզումով։

— Այս, դուք բախտավոր եք։

Դեպուտատը, շոյված, համաձայնեց դրան. ապա հարեց։

— Ես շոտ կփափակի, որ կոմսուհին վերադառնար. խելապես նա հիմա մտահոգություն է սլատճառում ինձ։ Լսեք. քանի որ դուք ձանձրանում եք Փարիզում, տղա գնացեք Ռուսիեր և նրան այստեղ բերեք։ Նա ձնդ կլսի, չէ որ դուք նրա լավագույն բարեկամն եք. մինչդեռ ամուսինը... գիտեք...։

Օլիվիեն ուրախությամբ պատասխանեց։

— Ես ավելի լավ բան չեմ կարող ցանկանալ։ Սակայն... ի՞նչ եք կարծում, նա չի՞ բարկանա, եթե ես այդպես անսովոռելիորեն երկամ։

— Ոչ, ամենեին. գնացեք, սիրելիս։

— Այն ժամանակ ես համաձայն եմ։ Ես վաղը ժամը մեկին կմեկնեմ գնացքով։ Մի հեռազիր շուղարկեմ։

— Ոչ, այդ ես կանեմ։ Ես նրան կիմացնեմ, որ ձեզ համար կառք ուղարկի կայարան։

Ճաշը վերջացնելով, նրանք նորից դուրս եկան բուլվար

Ներում զբոսնելու, բայց կես ժամ չէր անցել, երբ հանկարծ կոմոր բաժանվեց նկարչից, պատրիակ բռնելով ինչ-որ ստի-պողական դործ, որ բոլորովին մոռացել էր:

## II

Կոմսուհին ու աղջիկը, երկուսն էլ սդազգեստ հագած, Ռոն-սիերի տան ընդարձակ ճաշասրահում հենց նոր, գեմ-դիմաց նստել էին նախաճաշելու Պատերի վրա հին, ոսկեզօծում թափված շրջանակների մեջ, շարքով կախված էին նախվորեն նկարված նախնիների պորտրեները, վաղնջական Գիլոռուանեռի ամբողջ հավաքածուն, մեկը զրահազդեստի մեջ, մյուսք ժարապանակի մեջ, սա պուղբայված դվարդիական սպայի ձևով, նա՝ ուստավրացիայի ժամանակվա զնդապետի ձևով։ Երկու սպասյակներ, կամացուկ քայլելով, սպասարկում էին երկու լուակյաց կանանց. սեղանի վրա կախված բյուրեղյա շահի շուրջ ճանճերը պտտվող ու բզզացող սև կետերի փոք-րիկ ամպ էին ձևացնում։

— Թացեք պատուհանները, — ասաց կոմսուհին, — այստեղ մի քիչ զռվ է։

Դուն նման լայն և հատակից մինչև առաստաղ հասնող երեք բարձր պատուհանները բացվեցին երկու փեղկերի վրա։ Դաղջ օդի շունչը ներս խուժեց այդ երեք խոշոր բացվածքներից, բերելով տաք խոտերի բուրմունքներն ու դաշտերի հեռավոր հնչյունները, խառնվելով դաստակերտի հաստ պատե-սի մեջ փակված ընդարձակ սենյակի խոնավ օդի հետ։

— Ա՞հ, ի՞նչ լավ է, — ասաց Աննետը, լիաթոք շնչելով ողբ։

Երկու կանանց աշքերը ուղղվել էին դուրս, դեպի զբոսաք ու երկար կանաչ մարդադետինը, որի վրա ցրված էին ծառերի կղզյակներ. տեղ-տեղ բացվում էր հեռապատկերը դեղին դաշտերի, որոնք մինչև հորիզոնը փայլիում էին հասած հասկերի ոսկե սփռոցից. նրանց վերևում շողում էր պայծառ կտպույտ երկինքը, մի քիչ շղարշված միջօրեի թեթև մշուշով որ ցոլցլում է արևով ողողված հողերի վրա։

— Նախաճաշից հետո մի երկար զբոսանք կանենք, —

ասաց կոմսուհին։ — Կարելի է ոտքով գնալ մինչև թերվիլ՝ գետի ափով, որովհետև բաց դաշտում շատ շոգ կլինի։

— Այո, մայրիկ, և մեզ հետ կվերցնենք Ժյուլիոյին։ Նա կհետապնդի կտքավներին։

— Դու դիտես, որ հայրդ արգելում է այդ անել։

— Բայց չէ որ հայրիկը Փարիզումն է։ Այնքան զվարճալի է տեսնել որսի ետևից ընկած Ժյուլիոյին։ Նայիր, ահա նա անհանգստացնում է կովերին։ Աստված, ինչքա՞ն ծիծառելի է։

Ետ հրելով աթոռը, Աննետը վեր կացավ, վագեց դեպի պատուհանը և գոշեց։

— Հե՛յ, Ժյուլիո՛, Հե՛յ։

Մարգագետնի վրա երեք ծանրաշարժ կովեր, խոտ ճարակելուց հազնեցած և շոգից թուլացած, փրկած փորով, հանգըստանում էին կողի վրա պառկած։ Նրբակազմ, սպիտակ ու կարմիր բծերով մի սպանյոլ որսաշուն կեղծ ու զվարթ կատաղությամբ մի կովից դեպի մյուսն էր նետվում, հաշում էր, անմիտ ոստումներ էր դործում, այնպես որ նրա բրդուտ ականջները ամեն անդամ մի կողմ էին թոշում, և նա մոլեգնորեն ջանում էր վեր կացնել պարարտ անասուններին, որոնք չէին ուզում վեր կենալ։ Դա, անշուշտ, շան սիրած խաղն էր։ Որ նա հավանարար սկսում էր ամեն անդամ, երբ կովերին պառկած էր տեսնում։ Իսկ կովերը դժոոհությամբ, բայց առանց վախի նայում էին շանը խոշոր, խոնավ աշքերով և, հետեւ համար նրան, պտտեցնում էին գլուխները։

Աննետը պատուհանից գոշեց։

— Ժյուլիո՛, բռնի՛ր, բռնիր։

Եվ սպանյուր, այդ ձայնից զրզոված, ավելի հանդուզն դարձավ, ավելի ուժեղ հաշեց, հանդգնեց ցատկել անասունների գավակին, ձեացնելով, թե ուզում է կծել Կովերն սկսեցին անհանգստանալ, և կաշու նյարդային ցնցումները, որոնցով նրանք քշում էին ճանճերին, դառնում էին ավելի հաճախ ու ավելի երկարատև։

Հանկարծ շունը, դեսուզեն վագելով և չկարողանալով ժամանակին կանգ առնել, թափով այնպես մոտեցավ կովերից մեկին, որ ստիպվեց նրա վրայով թռնել, շայթաքելու ու

Ալնկնելու համար։ Նրա ոստյունի հպումից ծանրամարմին անասունը վախեցավ և նախ գլուխը բարձրացրեց, իսկ ապա դանդաղորեն բարձրացավ շորս սրունքների վրա, ծանը կերպով շնչելով։ Տեսնելով, որ մի կովը ոտքի է կանգնել, մյուս երկուսը անմիջապես հետեւցին նրա օրինակին, և ժյուկիոն սկսեց նրանց շուրջը հաղթանակի սլար պարել, մինչդեռ Աննետը շնորհավորում էր նրան։

— Բրավո՛, ժյուկիո՛, բրավո՛։

— Դե՛մ, զավակս, եկ նախաճաշելու, — ասաց կոմսուհին։  
Բայց աղջիկը, ձեռքով աշքերը ծածկելով արեից, հայտարարեց։

— Այս ի՞նչ է, հեռագրի սուրհանդակը։

Անտեսանելի շավիզը կորչում էր ցորենների ու վարսակների մեջ, և թվում էր, թե շավիված քայլերով դեպի դաստակերտ եկող սուրհանդակի կապույտ բլուզը սահում էր հառկերի վրայով։

— Աստված իմ, — շշնչաց կոմսուհին, — միայն թե վաւլուր չինի,

Նա դեռևս սարսում էր սարսափից, որ երկար ժամանակ մեր մեջ թողնում է սիրված էակի մահը դուժող հեռագիրը։ Նա հիմա չէր կարողանալու կնիքը պոկել և կապույտ թերթիկը բանալ, առանց մատները դողալու և հոգին հուզվելու, առաջուց վախենալով, որ այդ այնքան դանդաղորեն պատրուված թղթիկում թաքնված կլինի մի վիշտ, որ իրեն կստիպի նորից արտասուր թափել։

Աննետը, ընդհակառակը, երիտասարդական հետաքրքրությամբ լի, սիրում էր ամեն մի անակնկալ, նրա սիրտը, որին կյանքը առաջին անգամ էր տանջանք պատճառում, կարող էր լոկ ուրախություն սպասել և ու ահավոր պայուսակից, որ կախված է փոստատարների կողքից, որ այնքան հուզումներ է սերմանում քաղաքների փողոցների ու գյուղերի ճանապարհների վրա։

Կոմսուհին այլևս չէր ուտում և մտքով հետեւում էր իրենց մոտեցող այդ մարդուն, որ բերել էր մի քանի գրված բառեր, մի քանի բառեր, որոնք դուցե կիսոցեին իրեն, ինչպես դանակի հարված՝ կոկորդին։ Նա հեռում էր տագնապից, զանալով

գուշակել, թե ի՞նչ էր այդ այնքան շտապ լուրջ՝ ինչի՞ մա-  
սին. Ումի՞ց Հանկարծ նրա մտքով անցավ Օլիվիեն։ Արդյոք  
հիվա՞նդ է։ Գուցե նույնիսկ մեռա՞ծ է։

Սպասման տասը րոպեներն անվերջանալի թվացին կոմ-  
յունուն, ապա, պատուելով հեռագիրը և տեսնելով ամուսնու  
ձեռագիրը, նա կարդաց. «Հայտնում եմ, որ մեր բարեկամ  
թերտենը ցերեկվա ժամը մեկի գնացքով մեկնում է Ռոնսիեր։  
Կառք ուղարկիր կայարան։ Համբուլյոներ»։

- Ի՞նչ է, մայրիկ, — հարցրեց Աննետը։
- Մեզ մոտ է գալիս պարոն Օլիվիե Բերտենը։
- Ա՛հ, ի՞նչ լավ է։ Իսկ ե՞րբ։
- Հիմա։
- Ժամը շորսի՞ն։
- Այո։
- Ա՛հ, ինչքա՞ն լավն է նա։

Բայց կոմսուհին զունատվել էր, քանի որ որոշ ժամանա-  
կից ի վեր նրա մեջ աճում էր մի նոր մտահոգություն, և  
նկարչի հանկարծական գալուստը նրան նույնքան ժանր  
տպառնալիք էր թվում, որքան այն բոլոր ահավորը, որ մի  
ռոպե առաջ նախազգացել էր։

- Դու կառքով կգնաս դիմավորելու նրան, — առաց կոմ-  
յունին աղջկան։
- Իսկ դու, մայրիկ, շե՞ն զալու։
- Ոչ, ես ձեզ կսպասեմ այստեղ։
- Ինչո՞ւ Դա նրան կվշտացնի։
- Ես ինձ այնքան լավ շեմ զգում։
- Դու քիչ առաջ ուզում էիր ոտքով Բերվիլ գնալ։
- Այո, բայց նախաճաշից հետո ինձ վատ զգացի։
- Դա շուտով կանցնի։
- Ոչ, ես հիմա պետք է սենյակս բարձրանամ։ Հենց որ  
գուք ժամանեք, ինձ իմաց տուր։
- Լավ, մայրիկ։

Ապա, կարգադրություն անելով, որ որոշյալ ժամին կառ-  
քը լծվի ու սենյակը նախապատրաստվի, կոմսուհին իր սեն-  
յակը մտավ ու փակվեց։

Մինչև այդ ժամանակ կոմսունու կյանքն անցել էր գրեթե

առանց տառապանքի և նրա մեջ միակ գեպքը Օլիվիեի հանդիպ սերն էր, իսկ միակ անհանգստությունը՝ այդ սերը պահպանելու հոգուր։ Այդ նրան հաջողվել էր, այդ պայքարում նա միշտ հաղթող էր եղել։ Այն բանից հետո, երբ նա համաձայնել էր փայլուն մի ամուսնության, որի մեջ հակումը ոչ մի դեր չէր խաղացել, իսկ հետո սերը ընդունել էր իբրև լրացում երջանիկ գոյության, այն բանից հետո, երբ նա հանցավոր կատ էր հաստատել, գլխավորապես հրապուրանքի հետեանքով, իսկ մասամբ այն պատճառով, որ պաշտամունք ուներ այդ զգացումի նկատմամբ, որ փոխհատուցում էր նրա անցյալ կյանքի միօրինակությունը, նրա սիրութ, հաջողություններով ու գովեստներով օրորված, պահանջկոտ սիրութ բարձր խավի գեղեցկուհու, որին վայել են երկրային բոլոր ուրախությունները, ամուր փակվել, պատնեշվել էր այդ երջանկության մեջ, որ բախտն էր նրան ուղարկել, և նրա միակ փափագն էք պահպանել այդ երջանկությունն ամեն օր սպառնացող անակընկալներից։ Սիրուն կնոջ բարեհաճությամբ էր նա ընդունել իրեն ներկայացած հաճելի գեպքերը, արկածներ շատ չէր փնտրել, շատ չէր տանջվել նոր ցանկություններից ու անծանոթ մարմաշներից, բնդհակառակը, զգայուն, հաստատակամ, նախատեսող, նա գոհ էր ներկայից, բնադդաբար վախենում էր վաղվա օրից և կարողանում էր զգուշորեն, հաշվանկատորեն ու խելացիորեն օգտվել այն ամենից, ինչ նրան մատուցում էր բախտը։

Բայց տակավ առ տակավ, ինև կոմսուհին չէր համարձակվում նույնիսկ յուրովի խոստովանել, նրա հոգու մեջ սուզոսկել էր շփոթ մտահոգությունը անցնող օրերի և մոտեցող ծերության։ Այդ միտքը նրան հետապնդում էր, ինչպես մի տեսակ շդադարողքոր։ Բայց լավ իմանալով, որ կյանքի այդ վայրէջքը անդունդ էր տանում, որ մի անդամ սկսելով իջնելա է՛լ չէր կանգ առնի, նա, անձնատուր լինելով վտանգի բնադդին, լընդդիմանալով, ներքեւ սահեց, փակելով աշքերը, որպեսզի պահի իր երազը, որպեսզի գլխավտույտ շղգա անդունդի առջև և հուսահատություն՝ իր անգորությունից։

Եվ նա ապրեց ժպատալով, ասես հպարտանալով, որ այնքան երկար է պահել իր գեղեցկությունը։ և երբ նրա մոտ

նրեաց Աննետն իր տասնութամյա հասակի թարմությամբ՝ նա ոչ միայն շնեղվեց այդ մերձակցությունից, այլ ընդհակառակը, հպարտացավ նրանով, որ իր հմտորեն պահված հասուն գեղեցկությունը կարող էր գերադասվել ժաղկուն աղջկա առաջին երիտասարդության շողջողուն փայլից:

Նա նույնիսկ մտածում էր, որ թևակոխում է իր կյանքի ճրշանիկ ու հանդարտ շրջանը, երբ հանկարծ մոր մահը խոզեց նրա սիրտու: Առաջին օրերին դա այնպիսի մի խոր հուսահատություն էր, որ տեղ չէր թողնում ոչ մի ուրիշ մտքի: Առավոտից մինչև երեկո նա սուզվում էր անմխիթար վշտի մեջ և զանում էր միայն վերհիշել հանգուցյալ մոր փոքրիկ լծերը, նրա սովորական խոսքերը, նրա երբեմնի կերպարանաւը, շրջագղեստները, որ նա կրել էր մի ժամանակ: Իր հիշողության խորքում ասես դիզվել էին այն մասունքները, ունհետացած անցյալի մեջ հավաքվել էին այն մտերմիկ ու հանր հիշատակները, որոնցով նա հիմա սլիտի սներ իր լնժդակ խորհերը: Ապա, երբ այն աստիճանի հուսահատության հասավ, որ ամեն բոպե նյարդային նոպաներ ու նվազումներ էր ունենում, ամբողջ կուտակված վիշտը պոռթկաց սրցունքներով, որ հոսեցրեց օր ու դիշերու:

Մի օր առավոտ, երբ ներս մտած աղախինը փեղկերը բանալով և վարագուցրները քաշելով հարցրեց. «Ինչպե՞ս է այսօր ձեր առողջությունը, տիկին», կոմսուհին, շատ արտասվելուց իրեն ուժասպառված ու զարդիված զգալով, պատասխանից, «Օ՛հ, վատ է! Ես իսկապես բոլորովին թուլացել եմ»:

Թեյի մատուցարանը բռնած, սպասուհին նայեց իր տիրուհուն և, հուզված նրա դալկությունից, որ աշքի էր զարնում նույնիսկ անկողնի սպիտակության մեջ, տիրուր ու անկեղծ շեշտով ասաց.

— Իսկապես, տիկին, դուք շատ վատ տեսք ունեք: Դուք լավ կանեք հոգ տանեք ձեր մասին:

Դա ասվեց այնպիսի առնով, որ ասեղի նման ծակեց կոմսուհու սիրտը, և, հենց որ աղախինը գուրս ելավ, նա վերկացավ ու մոտեցավ հայելավոր մեծ պահարանին, որպեսզի նայի իր դեմքին:

Տեսնելով իրեն, կոմսուհին զարմացավ, այնքան վախճա-

ցավ իր փոս ընկած այտերից, կարմրած աշքերից, հյուծված կերպարանքից, որոնք մի քանի օրվա տվայտանքների հետեւ վանքն էին: Նա այնպես լավ էր ճանաշում իր գեմքը, այնքան հաճախ էր այն տեսել զանազան հայելիներում. Նա շատ լավ ուսումնասիրել էր նրա բոլոր արտահայտությունները, բոլոր սիրուն խաղերը, բոլոր ժպիտները, շատ անդամ արդեն վերացրել էր նրա գունատությունը, ոչնչացրել հոգնության թեթև հետքերը, հարթել փոքրիկ կնծիռները, որոնք նկատելի էին աշքերի անկյուններում՝ ցերեկվա պայծառ լույսի ժամանակ, և այդ գեմքը հանկարծ նրան թվաց ուրիշ կնոջ դեմք, անդարձանելի հիվանդությունից աղավաղզած անծանոթ մի դեմք:

Ավելի լավ տեսնելու համար իրեն, ավելի լավ նկատելու համար այդ անսպասելի դժբախտությունը, կոմսուհին ընդունակ մոտեցավ հայելուն, ճակատով դիպավ նրան, և շունչը սփռելով ապակու վրա, մթնացրեց, զրեթե չնշեց դժգույն գեմքը, որին նայում էր: Նա թաշկինակով ապակու վրայից սըրերեց իր շնչի գոլորշին և, դողալով անսովոր հուզումից, երբ կար ու համբերատար կերպով զննեց իր գեմքի կրած փոփոխությունները: Մատի թեթև հպումով նա ուղղեց այտերի մաշկը, հարթեց ճակատի վրայինը, բարձրացրեց մազերը, շրջեց կոպերը, որպեսզի նայի աշքի սպիտակուցին: Ապա բաց արեց բերանը, զննեց մի քիչ աղոտած ատամները, որոնց մեջ ուկեփայլ կետեր էին շռղում. յնդերի կապտությունը և այտերի ու քունքերի մաշկի դեղնությունը անհանգստացրին նրան:

Նա այնպիսի ուշադրությամբ էր նայում իր թառամած գեղեցկությանը, որ շատ գուան բացվելը և ամբողջ էությամբ սարսոաց, երբ աղախինը իր ետեից ասաց.

— Տիկին, դուք թեյը մոռացել եք:

Կոմսուհին շուր եկավ շփոթված, հանկարծակիի եկած, շվարած, իսկ աղախինը, գուշակելով նրա միտքը, նկատեց:

— Դուք շատ եք լաց եղել, տիկին, արցունքները շորացնում են մաշկը: Արցունքից արյունը զուր է դառնում:

Կոմսուհին թախծությամբ ավելացրեց:

— Նաև տարիքից:

Աղախինը բացականշեց.

— 0', տիկին, դուք դեռ այդ հասակում չեք: Մի քանի որ Հանգստացեք և ոչ մի քանի հետք չի մնա: Բայց ձեզ հարկավոր է զբոսնել և լաց լինելուց զգուշանալ:

Հաղնելով, կոմսուհին անմիջապես պարտեղ իշավ և մոր մահից հետո առաջին անգամ լինելով մտավ փոքրիկ այգին, ուր մի ժամանակ սիրում էր ծաղիկներ խնամել ու քաղել, իսկ ասկա, մինչև նախաճաշի ժամը, զբոսնեց գետի երկայնքով:

Սեղան նստելով շմուսնու դիմաց, աղջկա կողքին, նա ասաց նրանց կարծիքը իմանալու համար.

— Այսօր ես ինձ ավելի լավ եմ զգում: Հավանաբար ես նվազ գունատ եմ:

Կոմսը պատասխանեց.

— Դժո՞հ, դուք դեռ բավական վատ տեսք ունեք:

Կոմսուհու սիրու ճմլվեց, և աշքերն արցունքներով թըրշվեցին, քանի որ նա արտասվելու սովորություն էր ստացել,

Մինչև երեկո, և հաջորդ օրը, և հետեւալ օլեբին, մտածելով իր մոր կամ իր մասին, նա ամեն անդամ զդում էր, որ հեծկտանքները հեղծում են կոկորդը, և արցունքները բարձրանում կոպերին, բայց, շարտասվելու և դրանով իսկ այտերը շխաթարելու համար, նա զսպեց արցունքները և գերմարդկային կամքի լարումով իրեն ստիպեց մտածել կողմնակի բաների մասին, սանձահարեց իր միտքը, իրեն ենթարկեց այն, զանաց հեռանալ իր վշտից, սփոփվել, մտացրիվ լինել, այլևս չմտածել տիուր բաների մասին, որպեսզի վերագտնի իր զեմքի առողջ գույնը:

Իսկ առանձնապես նա չէր ուզում Փարիզ վերադառնալ և Օլիվիե Բերտենին հանդիպել նախքան նորից դառնալը այն, ինչ որ էր: Նա շատ էր նիհարել, իսկ նրա հասակի կինը պետք է լիքը լինի, որպեսզի թարմությունը պահի, ուստի շանում էր ախորժակը զրդուել դաշտերում ու մոտակա անտառներում զբոսնելով և, թեև տուն էր վերադառնում հոգնած ու քաղց չզգացած, աշխատում էր շատ ուտել:

Կոմսը, որ նորից էր ուզում Փարիզ մեկնել, չէր հասկանում կնոջ համառությունը, Տեսնելով նրա անհաղթահարելի դիմադրությունը, կոմսը վերջապես հայտարարեց, որ ինքը

ռանակ է մեկնում և կոմսուհուն թույլ է տալիս վերադառնալ,  
ուր կցանկանաւ:

Մյուս օրը կոմսուհին ստացավ Օլիվիեի գալը ծանուցող  
ընտագիրը:

Կոմսուհուն համակեց փախչելու ցանկությունը, այնքան  
ու վախենում էր Օլիվիեի առաջին հայացքից: Նա կփափագեր  
մեկ-երկու շաբաթ եռ սպասել: Խնամելով իրեն, նա կարող էր  
մեկ շաբաթվա մեջ բոլորովին փոխել իր գեմքը. շէ որ կա-  
նայք, նույնիսկ առողջ ու երիտասարդ կանայք, ամենաան-  
նշան պատճառից անճանաչելի են դառնում մեկ օրից մյուսը  
Բայց օրը ցերեկով բաց գաշտում օգոստոսի պայծառ արևի  
ուսկ թարմագեղ Աննետի կողքին Օլիվիեի առջե երեալու  
միտքը կոմսուհուն այն աստիճան անհանգստացրեց, որ նա  
իւկուցն որոշեց կայարան չգնալ, այլ Օլիվիեին սպասել հյու-  
րասինյակի կիսամթության մեջ:

Նա բարձրացավ իր սենյակը և սկսեց մտախոհելւ Տոթ  
զեփյուռի շունչը ժամանակ առ ժամանակ օրորում էր վարա-  
գույրները: Օղը լցված էր ծղրիդների ծղրտոցով: Դա արդեն  
այն շախշախիչ վիշտը շէր, որ քրքրել, ծվատել էր նրա սիր-  
ուը, ճմլիլ էր այն՝ չերմորեն սիրած պառավ մոր անշունչ  
ժարմնի առջեւ: Այն վիշտը, որ նա անդարմանելի էր համա-  
շում, մի քանի օրից հետո մեղմացել էր և վերածվել լոկ ինչ-  
որ հիվանդագին հիշողության, բայց հիմա նա զգում էր, թե  
ինչպես ինքը տարվել ու ողողվել էր մելամաղձության խոր  
հեղեղով, որի մեջ սուզվել էր աննկատելիորեն և որից դուրս  
չէր գա այլեւ:

Նա ուզում էր արտասվել, անհաղթահարելիորեն ուզում էր  
սրտասվել, բայց զսպում էր իրեն: Ամեն անգամ, երբ զգում  
էր, որ կոպերը խոնավանում են, անմիշապես սրբում էր  
որանք, վեր էր կենում, քայլում էր սենյակում, նայում էր  
ոլարտեղին, ուր կապույտ երկնքում, բարձրարերձ ծառերի  
գրայով, ագռավները կատարում էին իրենց դանդաղ ու սե  
թոփքը:

Ապա մոտեցավ հայելուն, զննող հայացքով նայեց իր վրա,  
հոսած արցունքի հետքը սրբեց, բրնձափոշու շպարափնջիկով  
հպելով աշքի անկյունին, ժամացույցին նայեց, զանալով գու-

շակել, թե հիմա Օլիվիեն ճանապարհի ո՞ր մասը կարող է հասած լինել: Ինչպես երեակայական կամ իրական վշտից ընկճված ամեն կին, կոմսուհին կառշել էր Օլիվիեին անգուսության զանգաղատանքով: Մի՛ թե Օլիվիեն ամեն ինչ շեր նրա համար, ամեն ինչ, ամեն ինչ, ավելի թանկաղին, քան կյանքը: ամեն ինչ, որ մեղ համար դառնում է միակ սիրած էակը, երբ մենք զգում ենք մեր ծերանալը:

Հանկարծ կոմսուհին հեռվից մտրակի շաշյուն լսեց, վազեց պատուհանին և տիսավ երկու ձիերի լծված կառքը, որը արագ շրջանցում էր մարդագետինրա Կառքի մեջ Աննետի կողքին նստած Օլիվիեն, տեսնելով կոմսուհուն, շարժեց թաշկինակը, իսկ կոմսուհին, այդ նշանին ի պատասխան, ողջունեց երկու ձեռքերով: Ապա ցած իշավ բարախուն սրտով, բայց արդեն իրջանիկ, ցնծությունից թրթռալով, որ Օլիվիեն այնպես մոտ է իրեն, և ինքը կարող է խոսել նրա հետ, տեսնել նրան:

Նրանք հանդիպեցին նախասենյակում, հյուրասենյակի դուռ առջև:

Անգուսության վերաբերյալ բացեց կոմսուհուն և անկեղծ հուզումից տաքացած ձայնով ասաց:

— Ա՛հ, իմ խեղճ կոմսուհի, ինձ թույլ տվեք ձեզ համբուրել:

Կոմսուհին աշքերը փակեց, խոնարհվեց, Օլիվիեին փարվեց, այտերը պարզելով, և, երբ Օլիվիեն շրթները դիպցրեց, կոմսուհին նրա ականջին շշնչաց.

— Սիրում եմ քեզ:

Սեղմելով կոմսուհու ձեռքերը և բաց շթողնելով, Օլիվիեն նրան նայեց, ասելով:

— Այդ ի՞նչ տխուր գեմք է:

Կոմսուհին թուլություն զգաց: Օլիվիեն շարունակեց:

— Այո, մի քիչ գունատվել եք, բայց այդ ոչինչ:

Ուզելով շնորհակալություն հայտնել Օլիվիեին, կոմսուհին թոթովեց, ուրիշ ասելիք շդտնելով.

— Ա՛հ, սիրելի բարեկամ, սիրելի բարեկամ:

Բայց Օլիվիեն շուռ եկավ, աշքերով փնտրելով ինչ-որ տեղ թաքնված Աննետին և հանկարծ ասաց:

— Եի՞թե տարօրինակ չէ ձեր աղջկան տեսնել սուզի մեջ  
— Ինչո՞ւ, — հարցրեց կոմսուհին:

*Օլիվիեն բացականշեց արտասովոր ոգևորությամբ»*

— Ինչպե՞ս թե ինչու թայց չէ որ դա իմ նկարած ձեր  
գորտրեն է, դա իմ պորտրեն է: Այդ դուք եք, ինչպիսին ես  
մեզ հանդիպեցի մի ժամանակ դքսուհու մոտ: Հիշո՞ւմ եք ինչ-  
պես դուք անցաք դոնով իմ հայացքի տակ, ինչպես ֆրեգա-  
ռը ամրոցի թնդանոթի նշանառության տակ: Սատանա՞ն  
ունի: Երբ եւ քիչ առաջ այդ փոքրիկ աղջկան կայարանի  
կառծեցի, որ ահա արտասվելու եմ: Ես, որ այնքան լավ էի  
նանաշում ձեզ, դիտում էի ձեզ ավելի մոտիկից, քան ուրիշ  
լեկին, սիրում էի ձեզ ավելի, քան որևէ մեկին, ես, որ ձեզ  
լերարտագրել եմ կտավի վրա, ասում եմ ձեզ, որ դրանից  
կարելի է խելագարվիլ: Երոք, ես նույնիսկ մտածեցի, որ  
դուք նրան մենակ ուղարկել եք կայարան, որպեսզի ինձ զար-  
ժացնեք: Աստված իմ, ինչքան ես զարմացա: Ասում եմ ձեզ,  
որ դրանից կարելի է խելագարվել:

*Օլիվիեն կանչեց.*

— Աննետ, նանե:

*Երիտասարդ աղջկա ձայնը պատասխանեց դրսից, ուր նա  
չաքար էր տալիս ձիերին.*

— Այստեղ եմ, այստեղ:

— Եկ այստեղ:

*Աննետը վաղելով եկավ:*

— Ապա, կանգնիր մորդ կողքին:

*Աննետը կանգնեց, և Օլիվիեն համեմատեց նրանց. թայց  
նա, առանց համոզման, մեքենայորեն կրկնում էր. «Այո, դա  
զարմանալի է, զարմանալի», — որովհետեւ, կանգնելով կողք  
կողքի, նրանք արդեն այնպես շէին նմանվում իրար, ինչպես  
առաջ, նախքան Փարիզից մեկնելը. աղջիկը այդ սգաղգնստի  
մեջ ստացել էր լուսաշող երիտասարդության նոր արտահայ-  
տություն, մինչդեռ մայրը վաղուց կորցրել էր մաղերի փայլն  
ու գեմքի գույնը, որոնցով նա մի ժամանակ, առաջին հան-  
դիպմանը, շլաքրել ու արթեցրել էր նկարչին:*

Ապա կոմսուհին ու Օլիվիե թերտենը մտան հյուրասենյակ՝  
Օլիվիեի դեմքը ասես ճառագայթում էր:

— Ա՛հ, ինչ լավ է, որ միտքս եկավ այստեղ գալ, — ասաց  
Օլիվիեն:

Ապա շարունակեց.

— Ու, այդ միտքը ինձ տվեց ձեր ամուսինք: Նա ինձ  
հանձնարարեց տանել ձեզ: Իսկ գիտե՞ք, թե ինչ եմ ես ձեզ  
առաջարկում: Ու, այնպես չէ: Դեհ, ուրեմն, ես ձեզ առաջար-  
կում եմ, բնդհակառակը, մնալ այստեղ: Այս շոգերին Փարիզը  
գարշելի է, իսկ գյուղը հաճելի: աստված, ի՞նչ լավ է  
այստեղ:

Իջնող երեկոն զբոսայգին լցրել էր խոնավությամբ, ժառե-  
րի սոսափյունով. Հողից բարձրանում էին անտեսանելի գո-  
լորշիներ, որոնք թեթև, թափանցիկ մի քող էին նետում հո-  
րիզոնի վրա: Երեք կովերը, գլուխները հակած, ագահորեն  
ճարակում էին խոտը, իսկ չորս սիրամարդեր, թևերը ուժգին  
թափահարելով, բարձրանում-թառում էին առանձնատան  
պատուհանների առջև գտնվող մալթի վրա, ուր նրանք սովո-  
րաբար քնում էին: Հեռակա դաշտավայրերից հասնում էին  
շան հաշոցներ, և երեկոյան խաղաղ օդում լսվում էին մարդ-  
կային ձայների կանչեր, մեկ վարելահողից դեպի մյուսը  
թռչող առանձին ֆրազներ, և կարճ կոկորդային ճիշեր, որոն-  
ցով շտապեցնում էին անասուններին:

Նկարիչը, գլխարաց, փայլուն աշքերով, շնչում էր լիաթոք,  
պատասխանելով կոմսուհու հայացքին, նա ասաց:

— Ահա երջանկությունը:

Կոմսուհին ավելի մոտեցավ նրան:

— Նա հավիտյան շի տեսում:

— Վեցնենք այն, երբ գալիս է:

Այն ժամանակ կոմսուհին ժպիտով ասաց:

— Մինչև հիմա դուք չեիք սիրում գյուղք:

— Հիմա ես սիրում եմ, որովհետեւ ձեզ գտնում եմ այս-  
տեղ: Ես չեի կարող այլիս ապրել այնտեղ, ուր դուք շկաք  
երբ մարդ երիտասարդ է, նա կարող է սիրել հեռվից, նա-  
մակներով, խոհերով, զմայլագին երազներով, գուցե զգալով  
ոք կյանքը դեռ առջեռում է, գուցե նաև որովհետեւ մարդ այն

ժամանակ ապրում է ոչ այնքան սրտի պահանջներով, որքան կրքով: Իմ հասակում, ընդհակառակը, սերը դառնում է հիշանդի սովորություն, հոգու վիրակապ, իսկ հոգին, ունենալով միայն մեկ թև՝ այնպես բարձր չի սավառնում իդեալի լեզ: Սիրոց այլևս չունի զմայլանքներ, այլ ունի միայն էղոիստական պահանջներ: Եվ հետո, ես շատ լավ գգում եմ, որ շպետք է ժամանակ կորցնել վայելելու համար այն, ինչ ուռ մնում է ինձ համար:

— Օ՛, ծերո՛ւկ,— ասաց կոմսուհին, բռնելով Օլիվիեի ձեռքը:

Օլիվիեն կրկնեց.

— Այո՛, այո՛: Ես ծերո՛ւկ եմ: Ամեն ինչ այդ է ցույց ուղիս, մաղերը, բնավորության փոփոխությունը, տիրությունը, որ գալիս է իմ վրա: Սատանա՞ն տանի: Ահա մի բան, որ մինչև հիմա ինձ անհայտ էր, տիրություն: Եթե իմ երեսամյա հասակում ինձ ասեին, որ կդա ժամանակ, երբ ես լզգամ առանց պատճառի ախրություն, անհանդստություն, ամեն ինչից դժգոհություն, ես չէի հավատու: Դա ապացուցում է, որ իմ սիրոտն էլ է ծերացել:

Կոմսուհին պատասխանեց խոր վստահությամբ.

— Օ՛, իմ սիրոց բոլորովին երիտասարդ է: Նա չի փոխվել: Թերեւս, նույնիսկ զահելացել է: Մի ժամանակ նա քսան ուրեկան էր, իսկ հիմա տասնվեցից ավելի չէ:

Նրանք այսպես երկար ժամանակ զրուցեցին բաց պատուանի մոտ, համակվելով այդ երեկոյի տրամադրությամբ, կանգնելով իրար մոտ, ավելի մոտ, քան երբեք կանգնել էին, ուրիշանքի այդ ժամին, որը օրվա այդ ժամվա նման մթնշային էր:

Սառան ներս մտավ ու հայտարարեց.

— Սեղանը արդեն պատրաստ է:

Կոմսուհին հարցրեց.

— Դուք հայտնե՞լ եք իմ աղջկան:

— Օրիորդը ճաշասրահումն է:

Նրանք երեքով սեղան նստեցին: Փեղկերը փակ էին. զեցմունի երկու մեծ աշտանակների բոցերը լուսավորել էին

Աննետի դեմքը, և նրա զլխի վրա ասես ոսկե փոշի էր ցանգած: Թերտենը անդադար նրան էր նայում ու ժպտում էր:

— Աստված, ինչքա՞ն նա սիրուն է սև հանդերձի մեջ,— ասաց նա:

Եվ աղջկանով հիացած՝ թերտենը դարձել էր կոմսուհուն, ասես մորը շնորհակալ լինելով այն բանի համար, որ նա իրեն այդ հաճույքն էր տվել:

Երբ նրանք հյուրասենյակ վերադարձան, լուսինը բարձրացել էր զբոսայգու ծառերի վրա: Նրանց մթին զանգվածը երեսում էր ինչպես մի մեծ կղզի, իսկ հեռավոր դաշտագետինը թվում էր մի ծով, որ ծածկվել էր հարթավայրի վրա ծփացող թեթև մշուշով:

— Օ՛, մայրիկ, գնանք զբոսնելու,— ասաց Աննետը:

Կոմսուհին համաձայնեց:

— Ես Ժյուլիոյին հետո եմ առնում:

— Լավ, առ, եթե ուզում ես:

Նրանք դուրս եկան: Աղջիկը առջեից էր քայլում, խաղալով շան հետ: Մարդագետնով անցնելիս նրանք լսեցին փընչոցը կովերի, որոնք, զարթնելով և իրենց թշնամու հոտն տռնելով, բարձրացրել էին զլուխներն ու նայում էին: Հեռվում լուսինը ծառերի ճյուղերի մեջ շարել էր մի ամբողջ տարած նուրբ շղթերի, որոնք, սահելով մինչև գետին, թրջում էին տերեները և հեղեղում էին ճանապարհը դեղնավուն լույսի ջրակույտերով: Աննետը և Ժյուլիոն վաղվզում էին, ասես այդ պայծառ գիշերին նրանք նույն ուրախ ու անհոգ սիրտը ունեին, և նրանց ավյունը ելք էր գտնում ոստումների մեջ:

Անտառի բացատներով, ուր լուսնի լույսի ալիքը ընկնում էր ինչպես շրհորի մեջ, երիտասարդ օրիորդը անցնում էր իբրև տեսիլք, և նկարիչը նրան կանչում էր իր մոտ, հիացած այդ սև ուրվականով, որի պայծառ դեմքը փայլում էր: Երբ աղջիկը նորից էր հեռանում, Յլիվիեն սեղմում էր կոմսուհու ձեռքը և հաճախ, ավելի ստվերախիտ տեղերով անցնելիս փնտրում էր նրա շրթները, ասես Աննետին տեսնելով ամեն անգամ վերակենդանանում էր նրա սրտի անհամբերությունը:

Նրանք վերջապես հասան հարթավայրի ժայրին, ուրկից

Շեռաստանում, այս ու այն տեղ, հազիվ երեսում էին ագա-  
բակիների ծառերի խմբերը։ Դաշտերը ողողած կաթնամշուշի  
են և հորիզոնը անհունանում էր, և լեթե լուսիցունը, այդ լու-  
սուփոր ու ջերմիկ տարածության կենդանի լուսիցունը, լի էր  
անրացատրելի հուսով ու անորոշ սպասումով, որոնք այն-  
քան հմայիչ են գարծնում ամառային դիշերները։ Շատ բարձր  
երկնրում երկար ու նուրբ ամպիկները ասես հյուսված էին  
արծաթե թեփուկներով։ Մի քանի վայրկյան անշարժ կանգնե-  
լով՝ դիշերային այդ խաղաղության մեջ կարելի էր լսել կյան-  
քի շիոթ ու անդաղրում շշունչը, բազմաթիվ մեղմ հնչյուններ,  
որոնց հարմոնիան սկզբում նմանվում էր լուսիցան։

Մոտակա մարգագետնում մի լորամարդի արձակում էր իր  
կրկնակ ճիշը, և Ժյուլիոն, ականջները սրած, կամացուկ շարժ-  
վեց դեպի այդ թաշունի սրնգի երկու նոտաների հնչյունները։  
Աննետը նրա ետեղ գնաց, նույնքան թեթև, որքան նա, կո-  
ղած ու շունչը պահած։

— Ա՛հ, — ասաց կոմսուհին, առանձին մնալով նկարչի  
հետ, — ինչո՞ւ ալսալիսի վայրկյանները այնքան արագ են  
անցնում։ Ոչինչ չի կարելի բռնել, ոչինչ չի կարելի պահել։  
Մարդ նույնիսկ ժամանակ չի ունենում վայելելու այն, ինչ  
չավ է հսկույն վրա է հասնում վերջը։

Օլիվիեն նրա ձեռքը համբուրեց և ժպտալով շարունակեց.

— Օ՛, այս երեկո ես փիլիսոփայություն շեմ անի, ես  
ամբողջովին կնվիրվեմ ներկա ժամանակին։

Կոմսուհին շշնչաց.

— Դուք ինձ այնպես շեք սիրում, ինչպես ես սիրում  
եմ ձեզ։

— Ա՛հ, բավական է։

Կոմսուհին ընդմիջեց.

— Ոչ, դուք հանձին ինձ սիրում եք, ինչպես դուք շատ լավ  
էիք ասում այսօր ճաշից առաջ, մի կնոջ, որը գոհացնում է  
ձեր սրտի պահանջները, մի կնոջ, որ ձեզ երբեք վիշտ չի  
պատճառել և երջանկության բաժինն է բերել ձեր կյանքին։  
Այո, ես գիտակցում եմ ջերմորեն ուրախանում եմ, որ ձեր  
հանդեպ եղել եմ բարի, որ ձեզ եղել եմ օգտակար և օգնել եմ  
ձեզ։ Դուք սիրել եք և հիմա էլ սիրում եք այն ամենը, ինչ

Հաճելի եք դտնում իմ մեջ, իմ ուշադրությունը դեպի ձեզ, իմ հիացումը, ձեզ դուք գալու իմ ջանքերը, իմ կիրքը, իմ ներքին կյանքի նվիրաբերումը ձեզ: Թայց դուք ինձ չեք, որ սիրում եք, հասկանում եք: Օ՛, ես այդ զգում եմ, ինչպես զգում են ցուրտ օղի հոսանքի Դուք հանձին ինձ սիրում եք բազմաթիվ բաներ, իմ գեղեցկությունը, որ զնում է, իմ անձնվիրությունը, խելքը, որ իմ մեջ գտնում են, կարծիքը, որ իմ մասին կազմել են բարձր հասարակության մեջ, և կարծիքը, որ ձեր մասին պահում եմ իմ սրտում, բայց ոչ ինձ, ոչ ինձ հասկանո՞ւմ եք, ամենեին ոչ ինձ:

Օլիվիեն բարեկամարար ծիծաղեց.

— Ոչ, ես այնքան էլ լավ չեմ հասկանում: Դուք ինձ համար սարքում եք շատ անակնկալ մի տեսարան՝ մեղադրանք ներով դի:

Կոմսուհին բացականշեց.

— Օ՛, աստված իմ: Ես ուզում էի ձեզ հասկացնել, թե եւ ինչպես եմ սիրում ձեզ: Ահա, տեսնում եք, ես ջանում եմ դա արտահայտել և չեմ կարողանում: Երբ ես ձեր մասին եմ մտածում, իսկ ես ձեր մասին մտածում եմ միշտ, ես իմ ամբողջ մարմնով ու ամբողջ հոգով անբացատրելի երանություն եմ զդում ձեզ պատկանելու և անհաղթահարելի պահանջ՝ է՛լ ավելի ձեզ նվիրվելու ես կուզենայի ինձ լիովին զոհաբերել ձեզ համար, որովհետև մարդ երբ սիրում է, շկավելի լավ բան, քան տալ, միշտ տալ ամեն ինչ, ամեն ինչ, իր կյանքը, իր միտքը, իր մարմինը, ամեն ինչ, որ մարդունի և լիովին զգալ, որ տալիս է, և պատրաստ լինել է՛ ավելին տալու ես ձեզ այնպես եմ սիրում, որ նույնիսկ սիրում եմ ձեր պատճառով կրած իմ տանջանքները, սիրում եմ իմ տագնապները, տվայտանքները, խանդի նոպաները, վիշտը, որ ես կրում եմ, երբ զգում եմ, որ դուք այլևս այնպես քնքուշ չեք վարվում ինձ հետ: Ես հանձին ձեզ սիրում եմ նրան, որին ես ինքս եմ գտել, ոչ նրան, որ պատկանում է բարձր հասարակության, որով հիանում են, որին հանաշուած են, այլ նրան, որ պատկանում է ինձ, որ այլևս չի կարող փոխվել, չի կարող ծերանալ, որին ես արդեն չեմ կարող չսիրել, որովհետև իմ աշքերը միայն նրան են տեսնում:

Թայց այս բաները չի կարելի արտահայտել: Բառեր շկան  
դրանք արտահայտելու համար:

Օլիվիեն մեղմ ձայնով մի քանի անգամ կրկնեց իրաք  
ետեից.

— Սիրելի, սիրելի, սիրելի Անի:

Ժյուլիոն վերադառնում էր ցատկութելով, առանց գտնելու  
լորամարգին, որ լուել էր, զգալով նրա մոտենալը, իսկ նրան  
հետեւմ էր Աննետը, վագելուց շնչառպառ:

— Ե՛լ չեմ կարող, — ասաց նա: — Զեղ եմ կառշում, պարո՞  
սկարիշ:

Նա հենվեց Օլիվիեի ազատ բազուկի վրա, և այսպես,  
նկարիչը երկու կանանց միջև ընկած, նրանք շարժվեցին  
դեպի տուն՝ նսեմաստվեր ծառերի տակով: Նրանք չէին խո-  
սում: Օլիվիեն զնում էր, տիրապետված իր ուղեկցութիներից,  
առգործված նրանցից բխող կանացի ինչ-որ հոսանքով: Նա  
էր նայում նրանց, քանի որ նրանք իր կողքին էին, նա  
նույնիսկ փակում էր աշքերը, որպեսզի ավելի լավ զգար եր-  
կու կանանց: Նրանք նրան առաջնորդում, տանում էին, և նա  
զնում էր սիրահարված նրանց, ինչպես ձախինին, այնպես  
էլ աջինին, առանց իմանալու, թե ո՞րն էր ձախ կողմինը և  
ո՞րը՝ աջ կողմինը, ո՞րն էր մայրը և ո՞րը աղջիկը: Ինչ-որ ան-  
գիտակից ու նրացած զգայնությամբ նա անձնատուր էր  
եղել այդ զգացողության պատճառած խռովքին: Նա նույնիսկ  
շանում էր նրանց խառնել իր սրտում, նրանց շտարբերել իր  
ժողում և իր կիրքը օրորվում էր այդ շփոթության հմայքով:  
Մի՞թե այդ մայրն ու այդ աղջիկը, այնքան նման մեկը մյու-  
սին, մի կին չէին: Եվ մի՞թե աղջիկը միայն նրա համար չէր  
եկել աշխարհ, որպեսզի երիտասարդացներ իր նախկին սերը  
մոր նկատմամբ:

Երբ, մտնելով տուն, Օլիվիեն նորից բացեց աշքերը, նրան-  
թվաց, թե ինքը հիմա ապրում է իր կյանքի ամենահաճելի-  
վայրկյանները, զգում է ամենաանսովոր, ամենաանբացատ-  
րելի և ամենալիակատար հուզումը, ինչպիսին միայն կարող  
է ճանաշել տղամարդը, որ արքի է իրեն հրապուրած երկու  
կանանց նկատմամբ միակ զգացումով:

— Ա՞հ, ի՞նչ հրաշալի երեկո է, — ասաց Օլիվիեն, հենց որ

Նորից գտնվեց նրանց հետ՝ կանթեղներով լուսավորված աենյակում։

Աննետը բացականշեց.

— Ես բոլորովին ցանկություն չունեմ քնելու. այսպիսի գավեղանակին ես կզբունքի ամբողջ գիշեր։

Կոմսուհին նայեց պատի ժամացույցին։

— 0', ժամը արդեն տասնմեկ անց կես է։ Ժամանակն է քնելու, զավակու։

Նրանք բաժանվեցին, և ամեն ոք գնաց իր ննջասենյակը։ Միայն աղջիկը, որ չէր ուզում պառկել, իսկույն քնեց։

Առավոտյան սովորական ժամին, երբ սպասուհին թեյր քերեց և վարագույրներն ու փեղկերը բացեց, նայելով դեռ կիսաքուն տիրուհուն՝ ասաց.

— Տիկինը այսօր ավելի լավ տեսք ունի։

— Կարծո՞ւմ եք։

— 0', այս՛ Տիկնոջ դեմքը ավելի է հանգստացած։

Դեռ առանց հայելու մեջ նայելու, կոմսուհին արդեն գիտեր, որ այդ ճիշտ է։ Նրա սիրտը թեթևացել էր, նա չէր զգում փր սրտի բարախյունը և կյանքի հորդում էր զգում։ Արյունը նրա երակներում արդեն հոսում էր ոչ այնպես արագ, տաք ու տենդագին, ամբողջ մարմնով տարածելով ջղագրգություն ու անհանգստություն, ինչպես երեկ էր, այլ նրա մարմնով զեղում էր երանավետ ջերմություն և երջանիկ վստահություն։

Երբ սպասուհին դուրս եկավ, կոմսուհին հայելուն մոտեցավ։ Նա մի քիչ զարմացավ, քանի որ իրեն այնպես ասույգ էր զգում, որ հույս ուներ մի գիշերում իրեն երիտասարդացած տեսնել մի քանի տարով։ Սպահակացավ այդ հույսի բովանդակ ունայնությունը և, մի անգամ ևս նայելով իրեն, համակերպությամբ նկատեց, որ իր դեմքի գույնը ավելի թարմ է, աշքերը նվազ հոգնած են և շրթները ավելի վառ են, քան նախորդ օրը։ Քանի որ նրա հոգին ավելի հանդարտ էր, նա չէր կարող տիրել, և ժպտալով մտածում էր. «Եյս, մի քանի օրում, ես ինձ բոլորովին լավ կզգամ։ Ես շափականց շատ բան քաշեցի, որպեսզի կազդուրվեմ այնքան արագ»։

Բայց նա երկար, շատ երկար նստեց տուալետի սեղանի

Ճոտ, ուր ժանյակներով եզերված մարմաշե սփռոցի վրա՝  
անկյունավոր գեղեցիկ հայելու առջե, շնորհալի կարգավորուա  
թյամբ դասավորված էին կոկետության նրա բոլոր փոքրիկ  
գործիքները՝ փղոսկրե շրջանակներով և թագով պսակված  
նրա ծածկագրությամբ։ Նրանք անթիվ-անհամար զետեղված  
էին այնաեղ, սիրուն, բազմատեսակ, սահմանված զանազան  
քնքուշ ու ինտիմ պահանջների համար։ ոմանք պողպատից  
էին, նորբ, սուր, արտասովոր ձեռերով, ինչպես մանկական  
վերքերը բուժելու վիրաբուժական դործիքներ, ուրիշներ՝ փեռ-  
տուրից, աղվամազից, անծանոթ կենդանիների կաշուց էին։  
նուրբ ու կլոր, պատրաստված՝ քնքուշ մարմինը խնամելու,  
նրա վրա ցանելու համար հոտավետ պուղրաներ, թանձր կամ  
հեղուկ օծանելիքներ։

Երկար ժամանակ հմուտ մատներով նա շոշափեց դրանք,  
շրմներից տանելով քունքերին համբույրի նման քնքուշ նրանց  
հպումը, ուղղելով նրանց թերի երանգները, ընդգծելով աշռ-  
քերը, հարդարելով հոնքերը։ Երբ նա վերջապես ցած իջակը՝  
գրեթե վստահ էր, որ Օլիվիեի առաջին հայացքը, որ նա նետելու էր իր վրա, չէր լինի շատ անբարեհաճ։

— Ո՞ւր է պարոն Բերտենը, — հարցրեց կոմսուհին նա-  
խասենյակում հանդիպած ծառային։

— Պարոն Բերտենը այսումն է և օրիորդի հետ լաւն-  
թենիս է խաղում, — պատասխանեց ծառան։

Կոմսուհին հեռվից լսեց ձայնը նրանց, որոնք հաշիվներն  
էին կանչում։

Նկարչի հնչուն ձայնը և երիտասարդ օրիորդի նուրբ ձայնը  
հերթով հայտարարում էին։

— Տասնհի'նդ, երեսո՛ւն, քառասո՛ւն, ավելի՛, հավասար-  
ավելի՛, խա՛զ։

Այգին, ուր հողամաս էր հարթված լառն-թենիսի համար։  
մի մեծ քառակուսի մարդագետին էր, շուրջը տնկված խնձորենիներով և շրջապատված զբոսայգիով, բանջարանոցով ու  
հարակից հանդակներով։ Զառիթափի երկայնքին, որ նրան  
երեք կողմից եղերապատում էր ճամբարային խրամատներին  
նման, տնկված էին ծաղիկներ, դաշտային ու պարտեզային  
ամեն տեսակ ծաղիկներ—վարդեր, մեխակներ, հելիոտրոպ-

Ներ, Փուկսիաներ, ոհզեղաներ և շատ ուրիշներ, որոնք մելքի  
համ էին տալիս օդին, ինչպես ասում էր Թերտենը: Ոսկեգույն  
մեղուները բզզալով թոշում էին այդ ծաղկած դաշտի վրայով.  
Հարդի գմբեթներով փեթակները շարվել էին բանջարանոցի  
ժառաշարքի երկայնքին:

Այգու հենց մեջտեղում կտրատել էին մի քանի խնձորենի-  
ներ, որպեսզի ստացվեր անհրաժեշտ տեղը լառն-թենիսի  
համար, և լայնությամբ ձգված կուպրածածկ մի ցանց այդ  
տարածությունը բաժանում էր երկու դաշտի:

Ցանցի մեկ կողմում Աննետը, գլխաբաց, սև շրջապահուող  
հանգրիմած, ցույց տալով սրունքներն ու բումբերի կեսը՝  
թոշող գնդակը բռնելու համար վազում էր ետ ու առաջ, փայ-  
լուն աշքերով, կարմիր այտերով, շնչակուր եղած ու հոգնած  
իր հակառակորդի ճիշտ ու վստահ խաղից:

Թերտենը, սպիտակ հովար զլխարկով, սպիտակ ֆլանելի  
տափառով և նույնպիսի վերնաշապիկով ու մի քիչ դուրս  
զցված փորով, սլաղարյունությամբ սպասում էր գնդակին,  
ճշտորեն որոշելով նրա թոփշը, ընդունում ու ետ էր ուղար-  
կում այն, առանց շտափելու, առանց իրարանցման, անբռնա-  
զրոսիկ թեթևությամբ, թափով ու պրոֆեսիոնալ ճարտարու-  
թյամբ, որ նա մտցնում էր ամեն խաղի մեջ:

Աննետը առաջինը նկատեց մորը: Նա գոչեց.

— Բարի լույս, մայրիկ, սպասի՛ր մի ըոպե, մենք հիմա  
կվերջացնենք!

Մի վայրկյան տեսող այդ անուշադրությունը պատճառ  
եղավ, որ Աննետը խաղը կորցնի: Արագ ու ցածր սլացով  
գնդակը անցնելով նրա կողքով, գետին դիպավ ու խաղա-  
դաշտից դուրս եկավ:

Թերտենը գոչեց՝ «Տարա»: Եվ մինչդեռ երիտասարդ որիոր-  
դը, հանկարծակի գալով, Թերտենին մեղադրում էր, որ նա  
իր անուշադրությունից էր օգտվել, Ժյուլիոն, որ սովորել էր  
փնտրել ու բերել գլորված գնդակները, ինչպես թիերի մեջ  
ընկած կաքավներ, նետվեց իր առաջ խոտի մեջ գլորված  
գնդակի ետևից, զգուշությամբ այն բռնեց ատամներով ու եռ-  
բերեց, պոչը խաղացնելով:

Նկարիվ ողջունեց կոմսուհուն, բայց, պայքարով ոգեր-

ված, գոհունակություն զգալով իր ճարտարությունից և շատ-  
պելով խաղը վերսկսել, արագ ու անուշադիր մի հայացք լոկ  
նետեց նրա դեմքի վրա, որն այնքան խնամվել էր իր հա-  
մար:

— Թույլ կտա՞ք, — հարցրեց նկարիչը: — Ես վախենում  
եմ, սիրելի կոմսուհի, որ կմրսեմ ու ներալգիայով կբռնվեմ:

— Օ՛, այո՛, — ասաց կոմսուհին:

Ազատ թողնելու համար խաղացողներին, կոմսուհին  
նստեց հենց առավոտյան հնձված խոտի դեղի վրա և  
սկսեց նրանց նայել, սրտում հանկարծ մի քիչ տիրություն  
զգալով:

Աղջիկը, շարունակ տարվելուց գրգռված, տաքանում էր,  
հուզվում, բարկության կամ հաղթության ճիշեր էր արձակում,  
դաշտի մի ծայրից մյուսն էր նետվում սրբնթաց, և այդ ժա-  
մանակ նրա վարսերը արձակվում, թափվում էին ուսերի վրա:  
Նա բռնում էր դրանք և, ուակետը ծունկերի մեջ սեղմած, ան-  
համբեր շարժումներով մի քանի վայրկյան շտկում էր, վար-  
սակալները խրելով ինչպես պատահի:

Իսկ թերտենը հեռվից գոշում էր կոմսուհուն.

— Ինչքա՞ն սիրուն ու թարմ է, ինչպես օրը: Ճիշտ չէ՞:

Այո, Աննետը երիտասարդ էր, նա կարող էր վազել, տա-  
քանալ, կարմրել, վարսերն արձակել, ոչ մի բանի ուշադրու-  
թյուն շղարձնել, ամեն ինչ իրեն թույլ տալ, որովհետեւ ամեն  
ինչ դեղեցկացնում էր նրան:

Նրանք եռանդով շարունակում էին խաղալ, և կոմսուհին,  
որ հետզհետեւ ավելի էր տիրում, մտածում էր, որ այդ գըն-  
դակախաղը, այդ մանկական վազվացը, թղթե զնղերի ետեկից  
ցատկուող կատուների այդ զվարճությունը Օլիվիեն գերա-  
դասում է առավոտյան այս շոգին իր կողքին նստելու, սիրածի  
մոտ զգալու հաճույքից:

Երբ հեռվից հնչեց նախաճաշի առաջին դանգը, Օլիվիեին  
թվաց, որ կոմսուհուն ազատում էին, որ նրա սրտից մի բեռ  
էին վերցնում: Բայց երբ կոմսուհին, հենվելով Օլիվիեի բա-  
զուկին, տուն էր վերադառնում, նկարիչը նրան ասաց.

— Ես հիմա ուրախ-զվարթ խաղում էի, ինչպես պատանի:  
Կիստ հաճելի է երիտասարդ լինել կամ կարծել իրեն: Այո,

այո, այդ է միայն կարեռը: Եթե մարդ այլես չի ցանկանում վագել, պրծավ:

Վեր կենալով սեղանից, կոմսուհին, որ նախորդ օրը առաջին անգամ շեր եղել գերեզմանատուն, առաջարկեց միասին գնալ այնտեղ, և նրանք երեքով մեկնեցին գյուղ:

Նրանք անցան անտառով, ուր հոսում էր մի գետակ, որ կոչվում էր Գորտիկ, հավանաբար, որովհետեւ նրա մեջ փոքրիկ գորտեր էին վիստում, անցան բացատով և հասան մինչև եկեղեցի, որ շրջապատված էր տների մի խմբով, ուր բնակավում էին նպարավաճառը, հացագործը, մսագործը, գինեվաճառը և մի քանի ուրիշ մանր խանութպաններ, որոնք պարեն էին մատակարարում գյուղացիներին:

Նրանք գնացին լուս ու մտամփոփ. Հանգուցյալի մասին մտածումը ճնշում էր նրանց: Հասնելով գերեզմանին, երկու կանայք ծնրադրեցին ու երկար աղոթեցին: Կոմսուհին, գերեզմանի վրա հակված, անշարժ, թաշկինակը սեղմել էր աշքերին, վախենալով որ լաց կլինի և որ արցունքները կհոսեն այտերի վրա: Նա աղոթում էր ոչ այնպես, ինչպես արել էր մինչև հիմա, երբ, հուսահատությամբ դիմելով գերեզմանի մարմարին, ասես մորն էր կանչում գերեզմանից և, ամբողջովին համակված կսկծալի հուզումով, սկսում էր հավատալ, որ հանգուցյալը լսում և ունկնդրում է իրեն. ոչ, հիմա նա պարզապես շերմեռանդորեն թոթովում էր Պատեր ոստե-ի և Ան Մարիա\*-ի նվիրական բառերը: Այսօր նա կորով ու հոգեկան լարում շեր ունենա, պատասխան չստանալով, դժբակ զրուց վարելու նրա հետ, որ դեռ կարող էր մնալ շքացած էակից, հանգուցյալի աճլունները ծածկած այդ խոռոշի կողքին: Ուրիշ ուժեղ զդաշումներ թափանցել էին նրա կանացի սրտում, հուզել, խոցել, մտացրել էին նրան, և նրա ջնրմեռանդ ու պաղատազին աղոթքը բարձրանում էր երկինք. նա աղաշում էր աստծուն, անողոք աստծուն, որ երկրի վրա էր նետել բոլոր դժբախտ արարածներին, գթալ իրեն, ինչպես գթացել էր նրան, որին իր մոտ էր կանչել:

\* Հայր մեր և Շնորհական քեզ, Սորիամա — քրիստոնեական աղոթքները

Նա չէր կարողանում արտահայտել այն, ինչ հայցում էր՝ այնքան դեռ անորոշ ու շփոթ էր նրա տագնապը, բայց նա զղում էր, որ կարիք ուներ աստվածային օգնության, գերբնական աջակցության ընդդեմ գալիք վտանգների և անխուսակելի տառանդանքների:

Աննետը, նույնպես շշնչալով սովորական աղոթքները, աշքերը փակած սուզվել էր անբջանքների մեջ, շցանկանալով վեր կենալ մորիդ առաջ:

Օլիվիե Բերտենը նայում էր նրանց, մտածելով, որ իր առջև ուներ հրաշալի մի պատկեր և ափսոսում էր, որ չի կարող ուրվանկար անել:

Վերադառնալիս նրանք սկսեցին խոսել մարդկային գոյության մասին, հանդարտորեն քննության առնելով հուզիչ ու վհասեցուցիչ փիլիսոփայության դասն ու պոետական գաղափարները, որոնք հաճախ խոսակցության նյութ են դառնում տղամարդկանց ու կանանց միջև, որոնց խոցում է կյանքը և որոնց սրտերը միախառնվում. Են ընդհանուր վըշտի մեջ:

Աննետը, որ դեռ չէր հասունացել այդպիսի մտքերի համար, ամեն ըովե հեռանում էր և դաշտային ծաղիկներ էր քաղում ճանապարհի եզրին:

Բայց Օլիվիեն, որ ուզում էր Աննետին իր կողքին պահել, չղայնանում էր, տեսնելով, որ նա անբնդհատ մեկուսանում է, և աշքը շէր հեռացնում նրանից: Նա զայրանում էր, որ Աննետը ավելի հետաքրքրվում է ծաղիկների գույնով, քան իր արտասանած ֆրազներով: Նա անբացատքելի վրգովմունք էր զգում, որ չի կարող Աննետին գերել, իրեն ենթարկել այնպես, ինչպես մորը, նա կկամենար ձեռքը մեկնել, բռնել նրան, սլահել, արգելել նրան գնալ: Նա զգում էր, որ Աննետը շատ է շարժուն, շատ է շահել, շատ է անտարբեր, շատ է ազատ, ազատ, ինչպես թոշուն, ինչպես անհնագանդ փոքրիկ շուն, որ չի վերադառնում, որ իր արյան մեջ ունի անկախություն, այն սիրուն բնագդը ազատության, որ դեռ չի պարտվել ոչ բղավոցից, ոչ մտրակից:

Գրավելու համար նրան՝ Օլիվիեն խոսեց ավելի գվարթաների մասին, նրան հարցեր էր աալիս, զանալով նրա մեջ

լսելու ցանկություն ու կանացի հետաքրքրություն արթնացնել, թայց կարելի էր կարծել, որ այդ օրը Աննետի գլխում, ինչպես ծփուն հասկերի վրա, փշում էր քմահաճ մի քամի, տանելով ու ցրելով նրա ուշադրությունը տարածության մեջ. հարևանցիորեն նետելով՝ ցրված մի հայացք և պատասխանելով ինչ-որ աննշան բառով, Աննետը նորից վերադառնում էր իր ծաղիկներին: Երեխայական անհամբերությունից տանշված թերտենը վերջ ի վերջո զայրացավ, և երբ Աննետը վագեց մոր մոտ, խնդրելով ծալկեփունչը վերցնել, որպեսզի ինքը մի ուրիշը քաղի, նկարիվ բռնեց նրա արմունկից և սեղմնց քաղուկը, որպեսզի նա այլևս չփախչի: Աննետը թպրտում էր ծիծաղելով և ամբողջ ուժով աշխատում էր ճողովրել: Այն ժամանակ Օլիվիեն, չկարողանալով նրա ուշադրությունը գրավել, տղամարդու բնազդով թույլ մարդկանց գործադրած միջոցը գործադրեց. նա գործեց կաշառքով, փորձելով Աննետի կոկետությունը:

— Ասա ինձ,— ասաց Օլիվիեն,— ի՞նչ ծաղիկ ես դու սիրում. ես քեզ համար ճիշտ այդպիսի մի բրոշկա կպատվիրեմ:

Աննետը զարմացած հարցրեց.

— Բրոշկա, այդ ինչպե՞ս:

— Միենույն գույնի քարերից. եթե կակաչ է, սուտակներից, եթե կապույտ տերեփուկ է, շափյուղաներից, զմրուխտի թիրթիկներով:

Աննետի դեմքը պայծառացավ այն սիրալիր ուրախությամբ, որով կենդանանում են կանացի դեմքերը խոստումների ու ընծաների ժամանակ:

— Այն ժամանակ կապույտ տերեփուկ,— ասաց Աննետը,

— Դա այնքան սիրում է:

— Թող լինի կապույտ տերեփուկ: Հենց որ Փարիզ վերադառնանք, կզնանք և կպատվիրենք:

Աննետը այլևս չէր հեռանում, կապվելով Օլիվիեին այդ թանկարժեք զարդի մասին մտքով, զարդ, որ նա արդեն փորձում էր պատկերացնել իր երևակայության մեջ: Նա հարցրեց.

— Երկա՞ր ժամանակ է հարկավոր այդ բանը պատրաստելու համար:

Օլիվիեն ծիծաղեց, զգալով, որ նա բռնվեց:

— Զգիտեմ, դա կախված է աշխատանքից։ Մենք կշտապեցնենք ոսկերիչին։

Հանեարձ Աննետի գլխով մի միտք անցավ, սաստիկ վըշացնելով նրան։

— Բայց ես չեմ կարող այն կրել, քանի որ խոր սգի մեջ հմ։

Օլիվիեն Աննետի թերց բռնեց և իր կրծքին սեղմեց։

— Դե՛ք, զու կսպասես մինչեւ որ քո սուզը վերջանա, դա չեղ չի խանդարի, որ զու հիանուս նրանով։

Ինչպես նախորդ օրը երեկոյան, Օլիվիեն քայլում էր երկու շամանց միջև սեղմված, զգալով նրանց ուսերը, և, տեսնելու համար, թե ինչպես մայր ու աղջիկ իր վրա են բարձրացնում ձրենց միատեսակ, ու բծերով կետկիտված կապույտ աշխերը, առ խոսում էր նրանց հետ հերթով, շրջելով գլուխը մերթ մի կողմ, մերթ մյուս կողմ։ Հիմա, երբ պայծառ արեք լուսավորում էր նրանց, Օլիվիեն կոմսունուն ավելի քիչ էր շփոթում Աննետի հետ, բայց աղջկան հետզհետե ավելի էր շփոթում վերածնվող հիշողության հետ այն մասին, թե ինչպիսին էր Տի ժամանակ եղել նրա մայրը։ Օլիվիեն ուզում էր երկուսին էլ համբուրել. մեկին, որպեսզի նորից զգար իր այտերի ու ձուրակի վրա այն վարդագույն ու շեկ թարմությունը, որ վաշելել էր մի ժամանակ, իսկ այսօր տեսնում էր նրա հրաշալի վերադարձը, մյուսին, որովհետեւ դեռևս սիրում էր նրան և շղում էր հին սովորության նրանից բխող տիրական կոչը նա ուզյնիսկ նկատում էր հիմա և հասկանում, որ իր ցանկությունը, վաղուց արդեն մի քիչ հանդարտված, և իր սերը կոմսունուն նկատմամբ՝ կենդանացել էին ի տես նրա հարուցյալ երիտասարդության։

Աննետը նորից գնաց ծաղիկներ քաղելու։ Օլիվիեն այլևս նու չէր կանչում նրան, ասես նրա բազուկի շփումը և նրա ոված ուրախությունը հանգստացրել էին իրեն, բայց հետեւմ էր Աննետի բոլոր շարժումներին այնպիսի գոհունակությամբ, հնչպիսին մենք զգում ենք, երբ տեսնում ենք էակներ կամ իրեր, որոնք գերում ու թովում են մեր հայացքը։ Երբ Աննետը վերադարձավ, բերելով մի ամբողջ խուրձ, Օլիվիեն սկսեց ավելի խոր շնչել, անգիտակցաբար շանալով որևէ բան որսալ

Նրանից — նրա շնչից կամ նրա վագրից շարժված օդում նրա մարմնի մի մասնիկը։ Նա հիացումով նայում էր Աննետին, ինչպես նայում են արշալույսին, ինչպես լսում են երաժշտությունը, և հաճելի դող էր զգում, երբ Աննեար կունում էր, շտկում, հանկարծ բարձրացնում էր երկու բազուկները, որպեսզի կարգի բերեր մազերի սանրվածքը։ Եվ ժամ առ ժամ Աննետը ավելի ու ավելի էր Օլիվիեի մեջ արթնացնում անցյալի տեսիլը։ Աննետի շարաձմիությունները, շարժումները, ծիծաղները Օլիվիեի շրթների վրա առաջացնում էին համբաւյրների, որոնք նա մի ժամանակ ստացել ու վերադարձրել էր։ Հեռավոր անցյալը, որի ճիշտ զգացողությունը Օլիվիեն վազուց էր կորցրել, Աննետը ինչոր երազված ներկայի նման էր դարձրել։ Աննետը խճում էր իր սրտի ժամանակաշրջանները՝ թվականները, հասակները և, շերմացնելով սառած զգացումները, իր համար աննկատելի կերպով խառնում էր երեկը վաղվահետ, հուշը հույսի հետ։

Քրբելով իր հիշողությունը, Օլիվիեն իրեն հարց էր տալիս, թե կոմսուհին իր ամենալրիվ ժաղկման ժամանակ արդյոք ունեցե՞լ էր այժիկի այդ նուրբ հմայքը, այդ հանդուզն, քմահաճ, անդիմադրելի հմայքը, նման վազվզող ու ոստոստող կենդանու գրավչության։ Այս եղել էր ավելի փարթամ և նվազ վայրի։ Քաղաքային աղջիկ, իսկ ապա քաղաքային կին, երբեք շշնչելով դաշտերի օդը, շապրելով բնության մեջ, նա սիրունացել էր պատերի ստվերի մեջ և ոչ թե երկնքի պայծառ արևի տակ։

Երբ նրանք առանձնատուն վերադարձան, կոմսուհին նըստեց նամակներ գրելու իր ցածրիկ սեղանի մոտ, պատուհանի խոռոշի մեջ, Աննետն իր սենյակը բարձրացավ, իսկ նկարից դուրս եկավ զբոսայգի և, ձեռքերը դնելով թիկունքին, գլանակը բերանին, դանդաղորեն քայլեց ոլորապտույտ շավիղներով։ Բայց Օլիվիեն հեռու շգնաց, որպեսզի աշքից չկորցներ տան սպիտակ ճակատը կամ սրածայր կտուրը։ Հենց որ տունը շքանում էր ծառերի խմբերի, թափուտ թփերի ետև, նրա սիրոտը մոայլվում էր, ասես արել ամպերով է ծածկվել, իսկ երբ առանձնատունը նորից էր երեսում սաղարթների լուսանցիկ բացվածքների մեջ, նա կանգնում էր մի քանի վայրկյան։

ռայում էր բարձրադիր պատուհանների երկու շարքին։ Ապա  
եռից էր սկսում քայլել:

Օլիվիեն իրեն զգում էր գրգռված, բայց գոհու գոհի ինչի՞ց  
Ամեն ինչից։

Այսօր նրան ողը շինչ, կյանքը գեղեցիկ էր թվում։ Նա նո-  
րից իր մարմնի մեջ զգում էր պատանու թեթևություն, ցան-  
քություն վազելու, ձեռքերով բռնելու դեղին թիթեռնիկները։  
«Րոնք թոշում էին մարդագետնի վրայով, ինչպես եթե նրանք  
«եղինե թելից կապված լինեին։ Նա քթի տակ երգում էր օպե-  
ռային արիաներ։ Նա մի քանի անգամ իրար ետեից կրկնեց  
Գունոյի \* նշանավոր խոսքը՝ «Թույլ տուր ինձ զմայլանքով  
զիտել քո դեմքը»; — Նրա մեջ գտնելով խորապես քնքուշ մի  
արտահայտություն, որ առաջ երրեք շեր զգացել։

Հանկարծ նա իրեն հարց տվեց՝ ինչպե՞ս կարող էր պա-  
տահել, որ ինքն իրենից այնքան արագ տարբերվեց։ Երեկ, Փա-  
րիզում, նա ամեն ինչից դժոհոհ էր, ամեն ինչ նրան ձանձրաց-  
նում էր, ամեն ինչ ջղայնացնում, իսկ այսօր նա հանդարտ  
էր, ամեն ինչից գոհ էր, ասես ինչ-որ հաճոյակատար աստ-  
ված փոխել էր նրա հոգին։ «Այդ բարի աստվածը, — մտածեց  
նա, — լավ կաներ, եթե իմ մարմինն էլ փոխեր և ինձ մի քիչ  
երիտասարդացներ»։ Հանկարծ նա նկատեց Ժյուլիոյին, որ  
ինչ-որ բանի էր հետապնդում թիերի մեջ։ Օլիվիեն կանչեց  
նրան, և, երբ շունը մոտ վազեց, նրա ակի տակ մտցնելով  
իր նուրբ գլուխը՝ երկար գանգրամազ ականջներով, Օլիվիեն  
նստեց խոտի վրա, որպեսզի ավելի լավ զգվեր նրան, նրան  
ֆաղաքշական խոսքեր ասաց, իր ծունկերի վրա պառկեցրեց,  
ֆայֆայեց և այնպես խանդաղատեց, որ հաճբուրեց նրան։  
Ինչպես անում են կանայք, որոնց սիրտը հուզվում է ամեն  
առիթով։

Ճաշից հետո փոխանակ զբոսանքի գնալու, ինչպես նա-  
խորդ օրը, նրանք ընսուանիքով երեկոն անցկացրին հյուրա-  
սենյակում։

Հանկարծ կոմսուհին ասաց։

\* Ֆրանսիացի նշանավոր կոմպոզիտոր (1818—1893), որին Մոպասա-  
նը ծանոթ էր անձամբ։

— Սակայն մեզ հարկավոր է շուտով մեկնել  
•լիվիեն բացականչեց.

— Օ՛, դեռ մի խոսեք դրա մասին: Դուք չեիք ուզում Ռուսիերից հեռանալ, քանի ես այստեղ չեի: Բայց ահա ես եկե, եմ, և դուք մտածում եք միայն ծլկվելու մասին:

— Բայց սիրելի բարեկամ, — ասաց կոմսուհին, — մենք շենք կարող անվերջ այստեղ մնալ երեքով:

— Խոսքը անվերջի մասին չէ, այլ մի քանի օրվա: Զէ ոք բազմիցս ես այստեղ ձեզ մոտ ապրել եմ ամբողջ շարաթներ:

— Այո, բայց ուրիշ պարագաներում, երբ տունը բաց էր լինում բոլորի համար:

Այն ժամանակ Աննետը փաղաքուշ ձայնով ասաց:

— Օ՛, մայրիկ: Մի քանի օր էլ, երկու կամ երեք օր: Նա այնքան լավ է ինձ սովորեցնում թենիս խաղար: Ես վշտանում եմ, երբ խաղը տարվում եմ, բայց հետո շատ գոհ եմ լինում, որ հաջողություններ եմ ունենում:

Նույն առավոտյան կոմսուհին ծրագրել էր, որ իր բարեկամի խորհրդավոր բնակությունը տեսի մինչև կիրակի, իսկ հիմա արդեն ուզում էր մեկնել, ինքն էլ չկմանալով ինչու Այս օրվա օրը, որից կոմսուհին այնքան լավ րան էր սպասում: Նրա հոգում թողել էր անբացատրելի ու խոր տխրություն, առանց պատճառի երկյուղ, համառ ու շփոթ, ինչպես վատ նաև խազգացում:

Երբ նա նորից իրեն մենակ գտավ իր սենյակում, նա նույնիսկ շուզեց փնտրել, թե որտեղից է տխրության այդ նոպան:

Արդյոք կոմսուհին չէ՞ր ապրում աննկատելի մի զգացում, այնքան խուսափուկ, որ բանականությունը շի հիշում, բայց որից երկար ժամանակ թրթում են սրտի ամենազգայուն լարերը: Թերեւս: Ի՞նչ զգացում էր այդ: Նա հիշեց մի քանի տհանք վայրկյաններ, երբ ապրել էր որոշ զգացումներ: Բայց այդ զգացումները շափագանց աննշան էին, որպեսզի նրա մեջ թողնեին այդպիսի վատ տրամադրություն: «Ես շատ պահանջուստ եմ, — մտածեց նա, — ես իրավունք շունեմ ինձ այսպիս տանջելու:

Նա բաց արեց պատուհանը, որպեսզի շնչեր գիշերային

շղը, և, արմունկը հենելով լուսամուտի գոգին, նայեց լուսնին:

Նա լսեց թեթև մի աղմուկ այզում և գլուխը ցած թեքեցէ Օլիվիեն ճեմում էր առանձնատան առջև: «Ինչո՞ւ Օլիվիեն ասաց, որ կգա իր մոտ,— մտածեց կոմսուհին:— ինչո՞ւ ինձ քմաց շտվեց, որ նորից է դուրս գալիս, ինչո՞ւ ինձ շկանչեց իր հետ: Նա գիտե, որ դրանով ես շատ երջանիկ կլինեի: Ինչի՞ ժամին է նա մտածում»:

Այն միտքը, որ Օլիվիեն չէր ցանկացել իրեն զբոսանք առաջարկել, այլ նախընտրել էր մենակ դուրս գալ այս գեղեցիկ գիշերով, մենակ, ծխելով գլանակը (որի կրակի կարմիր ծայրը ինքը տեսնում էր), մենակ, երբ միասին գնալը կարող էր իրեն ուրախություն պատճառել, այն միտքը, որ Օլիվիեն մըշտապես իր կարիքը շուներ, մշտապես իրեն չէր տեսնում, կոմսուհու հոգու մեջ դառնության նոր հատիկ գցեց:

Կոմսուհին արդեն պատրաստվում էր պատուհանը փակել, որպեսզի այլևս Օլիվիեին շտեսներ և նրան կանչելու փորձության շենթարկվեր, երբ հանկարծ նկարիչը աշքերը բարձրացրեց և նրան նկատեց: Նա բացականշեց:

— Այդ ի՞նչ է, կոմսուհի, դուք աստղերին նայելով երազո՞ւմ եք:

Կոմսուհին պատասխանեց.

— Այո՛, դուք նույնպես, ինչպես տեսնում եմ:

— Օ՛, ես պարզապես ծխում եմ:

Կոմսուհին իրեն շզսպեց և հարցրեց.

— Ինչո՞ւ դուք ինձ իմաց շտվիք, որ դուրս եք գալիս:

— Ես միայն ուզում էի մի գլանակ ծխել: Այնուամենայսիվ ես արդեն ներս եմ մտնում:

— Ուրեմն քարի գիշեր. իմ բարեկամ:

— Քարի գիշեր, կոմսուհի:

Կոմսուհին ետ քաշվեց պատուհանից, նստեց ցած աթոռի վրա և լաց եղավ. ապա, պատրաստվելով պառկել, կանչեց շպասուհուն, և նա, տեսնելով իր տիրուհու կարմրած աշքերը, կարեկցությամբ ասաց.

— Ա՛հ, տիկինը դրանից վաղը նորից վատ կերպարանք է ունենալու:

Կոմսուհին վատ քնեց, մղձավանշներից տենդի մեջ ըն-

կավ, տանջվեց։ Զարթնելուն պես, նա, նախքան զանգ տալը, պատուհանը բացեց, վարագույրները քաշեց և իրեն հայելու մեջ նայեց, Դիմագծերը պրկված էին, հոնքերը ուռած, մաշկը գեղնած։ Նրա կրած վիշտն այնքան սաստիկ էր, որ ուզեց իրեն հիվանդ հայտարարել, անկողին պառկել և մինչեւ երեկո շերեալ։

Ապա հանկարծ նա զգաց մեկնելու պահանջ, անհաղթահարելի պահանջ մեկնելու անմիջապես, առաջին իսկ գնացքով, հեռանալու այս լուսավոր սարածությունից, ուր վառ յարեկի տակ շափազանց շատ էին աշքի զարնում լշտի ու կյանքի թողած անցնջելի հետքերը։ Փարիզում կարելի է ապրել կիսախավար բնակարանների մեջ, ուր նույնիսկ կեսօրին ժանր վարագույրները միայն մեզմ լույս են ներս թողնում։ Այնտեղ նա նորից կդառնա նախկինը, կդառնա գեղեցիկ, նրա դալկությունը կներդաշնակի այդ մարմրուն ու տմույն լույսի հետ։ Հանկարծ կոմսուհու աշքերի առաջ երեաց թենիս խաղացող Աննետի թուրմ, կարմրած դեմքը, նրա մի քիչ արձակած վարսերը, և կոմսուհին հասկացավ այն անծանոթ անհանգուտությունը, որով տառապել էր իր հոգին։ Նա չէր խանդում իր աղջկա գեղեցկությանը։ Ոչ, իհարկե։ Բայց զգում էր և առաջին անգամ խոստովանում էր, որ այլևս երբեք չպետք է երթագար աղջկա կողքին ցերեկվա լույսի տակ։

Կոմսուհին զանգ տվեց և, դեռ թեյ շխմած, հրամայեց մեկնելու պատրաստվել, մի քանի հեռազրեր գրեց, նույնիսկ հեռագրով պատվիրեց երեկոյան ընթրիքը, գյուղի հաշիվները վճարեց, վերջին կարգադրություններն արեց, մի ժամ շեղած ամեն ինչ հարթեց, համակված տենդագին ու հարաձուն անհամբերությամբ։

Երբ ներքեւ իջավ, Աննետն ու Օլիվիեն, որոնց հայտնվել էր մեկնելու այս որոշումը, զարմանքով սկսեցին հարցուիրծ անել նրան։ Տեսնելով, որ կոմսուհին չի բացատրում մեկնելու պատճառները, նրանք մի քիչ քրթմնջացին և իրենց դժոգությունը ցույց տվին մինչեւ այն բոպեն, երբ իրարից բաժանվեցին Փարիզի կայարանում։

Չեռքը մեկնելով նկարչին, կոմսուհին հարցրեց։

— Վաղը կզա՞՞ք մեզ մոտ ճաշի։

Նկարիչը մի քիչ դժկամությամբ պատասխանեց.

— Անշուշտ, կգամ: Բայց, այնուամենայնիվ, դուք լավ քան չարիք: Մենք այնտեղ, երեքով, այնքան լավ էինք մեզ պահ:

### III

Հենց որ կոմսուհին աղջկա հետ մենակ մնաց իրենց տուն ռանող կառքի մեջ, նա իսկույն իրեն զգաց հանգստացած, հնչպես եթե ահավոր մի ճգնաժամ անցկացրած լիներ: Նա ավելի թեթև էր շնչում, վայտում էր տներին, ուրախությամբ ճանաշում քաղաքը, որի սովորական գծերը իսկական փարիզեցիները ասես պահում են իրենց աշքերի առջև և սրառում: Բուզվարի երկայնքին յուրաքանչյուր կրպակ տեսնելուց նա արդեն գիտեր, թե որը կգա հետո, և հիշում էր գեմքը վաճառրդուհու, որին այնքան հաճախ տեսել էր ապահեփեղկի ետևում: Նա իրեն զգում էր փրկված: Ինչի՞ց: Հանգստացած: Ինչո՞ւ վստահ: Ինչո՞ւ:

Երբ կառքը կանգ առավ կառանցիկ դռան կամարի տակ, կոմսուհին թեթեսությամբ ցած իջավ և, ասես փախչելով, ժտավ սանդուղքի կիսամթության մեջ, ապա իր ննջասենյակի կիսամթության մեջ: Այսաեղ նա կանգնած մնաց մի քանի րոպե, գոհ, որ ապահովության մեջ է Փարիզի այդ մշուշու ու տարտամ լուսավորության մեջ, որը թույլ է տալիս ավելի դուշակել, քան տեսնել, ցույց տալ այն, ինչ քեզ դուր է գալիս, և ծածկել այն, ինչ ուզում ես ծածկել: Պայծառ լույսով ողողված պյուղի հիշողությունը դեռ մնում էր կոմսուհու մեջ, ինչպես վերջացած տառապանքի տպավորություն:

Երբ ցած իջավ ճաշելու, ամուսինը, որ հենց նոր էր տուն վերադարձել, գորովանքով համբուրեց նրան և ժպիտով ասաց,

— Է՛հ, է՛հ, ես լավ գիտեի, որ բարեկամ Բերտենը ձեզ տուն կրերի: Ես անմիտ բան չարեցի, նրան ուղարկելով ձեզ ժոտ:

Աննետը պատասխանեց լրջությամբ, այն հատուկ տոնով: Որ նա ստանում էր, երբ կատակում էր առանց ծիծաղելու,

— 0', այդ հեղտ շեղավ թերտենին Մայրիկը չէր կարուանում վճռել:

Եվ կոմսուհին, մի քիշ շփոթված, ոշինչ շասաց:

Դուռը փակ էր, այդ երեկոյան ոչ ոք շեկավ։ Հետեյալ օրք արիկին գը Գիլուուան անցկացրեց տարբեր խանութներում ընտրելու և ապսպրելու համար այն ամենը, ինչ իրեն հարկավոր էր։ Երիտասարդության, գրեթե մանկության ժամանակավանից նա սիրում էր հայտնի դերձակուհիների երկար շափափորձերը հայելիների առջև։ Խանութ մտնելուն պէս նա ուրախանում էր այդ մանրակրկիտ կրկնափորձի բոլոր մանրուքների մտքից, որոնք տեղի էին ունենում փարիզյան կյանքի կուլիսների ետևում։ Նա պաշտում էր իր երեալու ժամանակ մոռվագող վարպետուհիների շրջազգեստների։ Խշշոցը, նրանք ժայիտները, առաջարկությունները, հարցերը, իսկ նրանց տիրուհին, դերձակուհին, մողիստուհին կամ կորսետուհին նրա աշքին կարենոր սնձ էր, որի հետ վերաբերվում էր, ինչպես տրվեստագետի հետ, արտահայտելով նրան իր կարծիքը, որպեսզի խորհուրդ հարցներ։ Նրան է'լ ավելի հաճելի էր զգացած աղջիկների ժիր ձեռքերի շփումը, երբ նրանք նրա հագուստները հանում էին, հազցնում էին և մեղմորեն շուռ էին տալիս հայելու մեջ նրա շնորհալի արտացոլման առջև։ Նրանք մատները տակ իր մաշկի, պարանոցի, մազերի վրայով սնցնող գողը ամենահաճելի, ամենաքաղցր զգացողություններից մեկն էր իր՝ վայելագեղ կնոջ կյանքում։

Սակայն այդ օրը կոմսուհին որոշ անձկությամբ էր պատրաստվում առանց քողի ու առանց գլխարկի անցնել այդ բոլոր շտող հայելիների առջեռվ։ Բայց մողիստուհու մոտ առաջին այցելությունից հետո նա հանգստացավ։ Իր ընտրած երեք գլխարկները նրան հիանալի սազեցին, և, երբ վաճառորդուհին համոզմունքով ասաց՝ «Օ՛, կոմսուհի, շեկերը երբեք շպետք է թողնեն սուզը», — նա գուրս եկավ շատ գոհ և մտակ ուրիշ խանութներ բոլորովին ինքնավստահ։

Ապա տանը գտավ գրությունը դքսուհու, որ այցելության էր եկել և հայտնում էր, որ նորից կգա երեկոյան։ Հետո կոմսուհին գրեց մի քանի նամակներ։ Հետո որոշ ժամանակ անձնատուր եղավ երազանքների, զարմանալով որ այն մեծ

վիշտը, որ իրեն մորմոքել էր, հիմա, միայն տեղի փոփոթության շնորհիվ, ետ էր քաշվել անցյալի մեջ, որ արդեն այնքան հեռավոր էր թվում։ Նա նույնիսկ չէր հավատում, որ ինքը միայն երեկ էր վերադարձել Ռոնսիերից, այնքան նրա հոգեկան վիճակը փոխվել էր Փարիզ վերադառնալուց հետո։ Կարծես այդ փոքրիկ տեղափոխությունը սպիացրել էր նրա վերաբերք։

Բերտենը, որ եկել էր ճաշին, կոմսուհուն տեսնելով գոշեց։

— Դուք շլացուցիչ եք այս երեկուն

նվազական շուրջյունից կոմսուհուն մնչ տարածվնեց նրանկության չերմ մի ալիք։

Երբ վեր կացան սեղանից, կոմսը, որ կրքութ սեր ուներ զեպի բիլիարդը, Բերտենին առաջարկեց մի պարտիա խաղալ, և երկու կանայք նրանց ուղեկցեցին բիլիարդանոցում, որը ուրեմն հրամցվեց։

Երկու տղամարդիկ դեռ խաղում էին, երբ հայտնեցին, որ գրսուհին եկել է, և բոլորը վերադառն հյուրասենյակ։ Միաժամանակ երեացին տիկին դը Կորրելն ու նրա ամուսինը, նրանց ձայնը դողում էր արցունքներից։ Մի քանի բոլենի ընթացքում արտասանված բառերի ցավագին տոնից թվաց, թե բոլորը հիմա լաց կլինեն, բայց, քիշ-քիշ, քաղցր զեղումներից ու հարցուփորձերից հետո, խոսակցությունն ուրիշ ընթացք ստացավ. ձայները հանկարծ ավելի պարզ հնչեցին, և բոլորն սկսեցին զրուցել բնական ձեռվ, ասես վշտի ստվերը, որ մթաղնել էր բոլորի հողիները, հանկարծ ցրվել էր։

Այն ժամանակ Բերտենը վեր կացավ, Աննետի ձեռքից շոնէց, նրան՝ տարավ մոր պորտուեի մոտ, որ ոեֆլեկտորի պայծառ լուսավ էր լուսավորված, և հարցրեց։

— Մի՞թե սա ապշեցուցիչ չէ։

Դրսուհին այնքան էր զարմացել, որ ասես ինքն իրենից շուրս էր եկել և կրկնում էր։

— Աստված, մի՞թե դա հնարավոր է։ Մի՞թե դա հնարավոր է։ Այդ ինչքա՞ն նմանություն։ Իսկ ես մտնելիս ուշադրություն չեմ դարձրել։ Օ՛, քաղցրի՛կ Անի, ես նորից եմ տեսնում ձեզ, ես որ այնպես լավ էի ձեզ ճանաշում այն ժամանակ, ձեր առաջին սգի ժամանակ, ոչ, երկրորդի, քանի որ դուք ար-

դեն հորից զրկվել էիք։ Իսկ հիմա Աննետն է այգ ու շրջադաշտի մեջ։ Նա կենդանի մայրն է զահել հասակում։ Ի՞նչ հրաշք։ Առանց այս պորտրետ ոչ ոք չէր նկատի։ Զեր աղջիկը շատ նման է ձեզ, ինչպես հիմա, բայց ավելի շատ նման է այս պորտրետին։

Մյուզագիևն երեաց, իմացած լինելով տիկին ոք Գիլռուայի վերադարձը. նա ուզում էր առաջիններից մեկը լինել նրան հայտնելու «իր խորագույն ցավակցությունը»։

Նա բնդհատեց իր ողջույնը, տեսնելով երիտասարդ աղջկան, որ կանգնած էր պորտրետ մոտ ոեֆլեկտորի պայծառ լուսավորության մեջ և նկարվածի կենդանի քույրն էր թվում։ Նա բացականչեց.

— Ա՞հ, ի՞նչ եք ասում. ահա ամենազարմանալի բաներից մեկը, որ ես երբեք տեսել եմ։

Կորրել ամուսինները, որսնց համոզումը միշտ հետևում էր բոլորի կողմից ընդունված կարծիքներին, իրենց հերթին զարմացան, բայց ավելի զուսպ արտահայտությամբ։

Կոմսուհու սիրտը սեղմվում էր նա սեղմվում էր հետզետե ավելի ուժեղ, ասես բոլոր այդ զարմանքի բացականշությունները նրան ցավ էին պատճառում։ Առանց ոչինչ ասելու՝ նա նայում էր իր պատկերի մոտ կանգնած աղջկան և զղագրգություն էր ունենում։ Նա ուզում էր ճշալ. «Բայց լսեցեք։ Ես շատ լավ գիտեմ, որ նա ինձ է նմանվում»։ Մինչև երեկոյթի վերջը նա տիսուր մնաց, նա նորից կորցրեց նախորդ օրը վերագտած վստահությունը։

Բերտենը խոսում էր նրա հետ, երբ հայտնեցին, որ մարկիզ զր Ֆարանդալը եկել է։ Երբ մարկիզը ներս մտավ և տանտիրուհուն մոտեցավ, նկարիչը վեր կացավ, բազկաթոռի հտեւ անցավ և, «գե՛հ, հիմա էլ այս անասունը» շշնչալով շուռ եկավ, դեպի դուռը գնաց ու դուրս եկավ։

Կոմսուհին, լսելով նոր հյուրի հաճոյախոսությունները, աշքերով փնտրեց Օլիվիեին, որպեսզի վերսկսի իրեն հետաքրքրող զրույցը նրա հետ։ Չտեսնելով նրան, կոմսուհին հարցրեց.

— Ի՞նչ, մեր մեծ մարդը գնացե՞լ է։

Ամուսինը պատասխանեց.

— Կարծես այս, սիրելիս նա հենց նոր դուրս եկամ  
առանց մնաք բարով ասելու

Կոմսուհին զարմացավ, մի քանի վայրկյան խորհրդածեց.  
ապա սկսեց զրուցել մարկիզի հետ:

Բարեկամները, այնուամենայնիվ, փափկանկատությունից  
պրդված շուտով քաշվեցին. կոմսուհին իրեն պատահած դժո-  
րախտությունից հետո դեռ չեր սկսել բացահայտ ընդունելու-  
թյունները:

Եվ ահա, հազիվ անկողին պառկեց, նորից նրա մեջ երեան  
եկան այն բոլոր անհանդստությունները, որ նրան համակել,  
էին գյուղում: Հիմա դրանք ավելի որոշակի էին դառնում. նա  
դրանք գգում էր ավելի պարզորո? նա գգում էր, որ պա-  
ռավում է:

Այդ երեկո կոմսուհին առաջին անգամ հասկացավ, որ իր  
հյուրասենյակում, ուր մինչև հիմա միայն իրեն էին պաշտել,  
մեծարել, զարպասել, սիրել, հիմա իր տեղը գրավել էր մի  
ուրիշը, իր աղջիկը: Նա այդ իսկույն հասկացավ, զգալով, որ  
այսուհետև բոլոր գովեստները ուղղվելու հն Աննետին: Այդ  
թագավորության մեջ, ինչպիսին է գեղեցիկ կնոջ տունը, այդ  
թագավորության մեջ, ուր նա թույլ չի տալիս նսեմացնել  
իրեն, ուրկից գգույշ ու համառ հոգածությամբ հոռացնում է  
ամեն մի վտանգավոր մրցակցություն, ուր իրեն հավասար-  
ներին ներս է թողնում՝ լոկ իր վտանգալները դարձնելու հա-  
մար, կոմսուհին պարզ տեսնում էր, որ վեհապետուհին դառ-  
նում էր իր աղջիկը: Ինչպես անսովոր կերպով պիտի ճմլվեր  
նրա սիրտը, երբ բոլոր աշխերն ուղղվեին նկարի կողքին կանգ-  
նած Աննետին, որի ձեռքից բռնել էր թերտենը: Նա հանկարծ  
իրեն գգում էր չքացած, պսակազերծ եղած, գահընկեց ար-  
ված: Բոլորը նայում էին Աննետին, ոչ ոք չէր նայում իրեն:  
Նա այնքան սովորել էր հաճոյախոսությունների ու քծնանք-  
ների ամեն անգամ, երբ հիանում էին իր նկարով, նա այն-  
քան վստահությամբ էր սպասում գովասանական խոսքերի,  
որոնց ոչ մի արժեք չէր տալիս, բայց որոնք, այնուամենայ-  
նիվ, շոյում էին նրա ականջը, որ այդ լքումը, այդ անսպա-  
սելի պարտությունը և այդ հիացումը հանկարծ ամբողջու-  
թյամբ աղջկա վրա փոխադրվելի հուզեցին, ապշեցրին, վի-

բավորեցին նրան ավելի, քան որևէ մրցակցություն որևէ ուրիշ հանգամանքների մեջ:

Բայց որովհետեւ կոմսուհին պատկանում էր այն բնավորություններին, որոնք ամեն ճգնաժամի ժամանակ առաջին վհատությունից հետո հակազդում, պայքարում և մխիթարանքի փաստարկներ են գտնում, մտածեց, որ երր իր սիրելի ազգիկը ամուսնանա, երբ իրենք դադարեն ապրել միևնույն Հարկի տակ, իրեն այլևս հարկ չի լինի ենթարկվել այդ մշտական բաղդատությանը, որ սկսում էր շափազանց ծանր դառնալ իր համար՝ իր բարեկամի աշքերի տակ:

Սակայն ցնցումը շատ ուժեղ էր եղել: Կոմսուհին տեսակ և բոլորովին շքնեց:

Առավոտյան նաև վեր կացավ հոգնած ու չարդված և այն ժամանակ նրա մեջ ծագեց անհաղթահարելի պահանջ սփոփանք, աջակցություն, օգնություն գտնելու որևէ մեկի մոտ, որ կարող էր նրան բուժել այդ բոլոր վշտերից, այդ բոլոր հոգեկան ու ֆիզիկական տառապանքներից:

Նա իրոք զգում էր այնպիսի անհանգստություն, այնպիսի թուլություն, որ մտածեց խորհուրդ հարցնել իր բժշկին: Գուցե նա լրջորեն հիվանդանար, որովհետեւ օրգանիզմի համար հեշտ չէր մի քանի ժամկա ընթացքում անցնել տանջանքների ու հանգստացման հաջորդական փուլերով: Նա հեռագրով կանչել տվեց բժշկին և նրան սպասեց:

Ժամը տասնմեկի մոտ բժիշկը եկավ: Դա մեկն էր վերնախավի այն լուրջ բժիշկներից, որոնց շքանշաններն ու տիտղոսները երաշխիք են ծառայում նրանց կարողության, իսկ նրանց ճարպիկությունը հավասարագոր է գիտության, և որոնք, մանավանդ, մոտենալով հիվանդ կանանց, գտնում են այն քնքուց խոսքերը, որոնք ավելի դարմանիշ են, քան գեղորացք:

Նա ներս մտավ, բարեկեց, նայեց հիվանդին և ժպիտով ասաց.

— Դե՛մ, ծանր բան չէ: Այնպիսի աշքերով, ինչպիսիք ձերն են, երբեք լրջորեն շեն հիվանդանա:

Կոմսուհին իսկույն երախտագիտություն զգաց բժշկի այդ նախարանի համար և նրան պատմեց իր թուլությունների:

շղայնությունների, տխրությունների մասին և գարեանցրորդն հիշեց, որ ինքը երբեմն ունենում է հիվանգագիւն տեսք, որ անհանգստացնում է իրեն։ Ուշադիր լսելով կոմսուհուն, բժիշկը նրան հարցրեց միայն ախորժակի մասին, ասես նա լավ էր ճանաչում կանացի այդ հիվանդության թաքուն ընույթը, ապա նրան քննեց, նայեց, մատների ծայրով ուսերը շոշափեց, նրա բազուկները բարձրացրեց, և, որսալով, անկասկած, նրա թաքուն միտքը, պրակտիկ բժշկի նրբամտությամբ հասկացավ, որ կոմսուհին իրեն էր դիմել ավելի շուտ իր գեղեցկությունը պահպանելու, քան իր առողջության համար, և նրան ասաց։

— Այս, դուք ունեք անեմիա և զղային խանգարումներ։ Գա զարմանալի չէ, քանի որ դուք ծանր վիշտ եք կրել։ Հիմա ես ձեզ համար մի փոքրիկ ղեղատոմս կզրեմ, և ամեն ինչ կարգին կլինի։ Բայց ամենից առաջ պետք է ուտել կազզուրի բաներ, ընդունել մսաջուր, խմել ոչ թե շուր, այլ գարեջուր։ Մի հոգնեք, գիշերները երկար մի նստեք. և որքան կարելի է զատ քայլեցեք։ Շատ քննեցեք և մի քիչ էլ գիրացեք։ Ահա այն ամենը, որ ես կարող եմ խորհուրդ տալ ձեզ, գեղեցիկ հիվանդ տիկին։

Կոմսուհին բժշկին լսել էր վառ հետաքրքրությամբ, զանալով գուշակել այն ամենը, ինչ նա չեր ասել, և կառշեց նրա վերջին խոսքից։

— Այս, ես նիհարել եմ։ Մի ժամանակ ես շատ զորեղ էի և գուցե ինձ թուլացրի դիետա պահելով։

— Առանց որևէ կասկածի։ Վատ բան չէ նիհար մնալ, երբ մարդ միշտ այդպես է եղել, բայց երբ մարդ գիտմամբ Յ նիհարում, այդ միշտ լինում է ինչ-որ բանի հաշվին։ Բաբերախտաբար, այդ հեշտ է դարմանվում։ Մնաք բարով, տիկին։

Կոմսուհին իրեն ավելի լավ, ավելի կայտառ զգաց և նախաճաշին մարդ ուղարկեց հանձնարարված գարեջուրը բերելու, բերելու հենց գործարանի գլխավոր խանութից, որպեսզի ավելի թարմ լիներ։

Կոմսուհին վեր էր կենում սեղանից, երբ Թերտենը ներս մտավ։

— Ահա նորից ես, — ասաց Թերտենը, — միշտ ես, Եկել եմ  
Հարցնելու, թե գուք այսօր որևէ բան ունե՞ք անելու:

— Ոչ, չունեմ: Ինչո՞ւ եք Հարցնում:

— Իսկ Աննե՞աբ:

— Նույնակես ոչ:

— Այդ դեպքում կարո՞ղ եք ինձ մոտ գալ ժամը շորսի  
մոտերքը:

— Այո, բայց ի՞նչ նպատակով:

— Ես պետք է ուրվանկարեմ «Երազող կինը»: Ես նրա  
մասին ձեզ խոսել եմ և Հարցրել, թի ձեր աղջիկը կարո՞ղ է  
Համապատասխան դիրք ընդունել դրա համար: Դա ինձ մեծ  
ծառայություն կմատուցեր, եթե այսօր զար թեկուզ մի ժամով:  
Համաձա՞յն եք:

Կոմսուհին վարանում էր, և, ինքն էլ շիմանալով ինչու,  
տհաճություն էր զգում: Մակայն պատասխանեց.

— Լավ, բարեկամս, մենք ձեզ մոտ կլինենք ժամը շոր-  
սին:

— Ենորհակալություն: Դուք շատ սիրալիք եք:

Թերտենը գնաց կտավը պատրաստելու և սյուժեի մասին  
մտածելու, որպեսզի շատ շնորհացնիր ընատիպ ժառայելիք  
աղջկան:

Իսկ կոմսուհին գնաց մենակ, ոտքով՝ գնումներ անելու  
նա անցավ կենտրոնական մեծ փողոցներով, ապա Մալզեր-  
րի բուլվարով վերադարձավ դանդաղ քայլերով, քանի որ  
ոտները թուլացած էր զգում: Երբ Սենտ-Օգյուստեն եկեղեցու  
առջեց էր անցնում, հանկարծ ցանկություն ունեցավ ներս  
մտնելու և հանդատանալու: Նա հրեց մահուղով պատաժ դու-  
ռը, թեթևորեն ու հաճույքով շնչեց ընդարձակ տաճարի թարմ  
օդը, մի աթոռ առավ ու նստեց:

Կոմսուհին կրոնասեր էր, ինչպես շատ փարիզուհիներ: Նա  
Հավատում էր աստծուն, առանց որևէ կասկածի, քանի որ չէր  
կարող ընդունել տիեզերքի գոյությունը առանց արարչի դո-  
յության: Բայց, ինչպես շատերը, ստեղծող աստվածության  
ատրիբուտները խառնելով իր տեսողությանը մատշելի ստեղծ-  
ված մատերիայի բնության հետ, նա հավիտենականին պատ-  
կերացնում էր զրեթե իրրի մարդու, նրան օժտելով հպատկու-

թյուններով, որոնք գուշակում էր նրա ստեղծագործությունների մեջ, այնուամենայնիվ, նա որևէ հստակ գաղափար չուներ, թե ինչ կարող էր իրականում լինել այդ խորհրդավոր արարիշը:

Կոմսուհին հաստատակամորեն հավատում, տեսականորեն պաշտում էր նրան և տարտամորեն վախենում էր նրանից քանի որ, խղճի մտոք ասելով, նա չէր իմանում նրա դիտավորություններն ու ցանկությունները, ըստ որում շատ սահմանափակ վստահություն ուներ բահանաների նկատմամբ, որոնց բոլորին էլ զինվորական ծառայությունից խույս տված գյուղացիների որդիներ էր համարում: Նրա հայրը, Փարիզյան բուրժուա, նրան ոչ մի կրօնական ոկրքունք չէր պարտադրել, և նա՛ մինչև ամուսնությունը ծեսերը կատարել էր բավական անփութորեն: Երբ նոր դրությունը ճշտորեն որոշել էր նրա արտաքին պարտականությունները եկեղեցու վերաբերմամբ, նա ճշտապահորեն ենթարկվել էր այդ թեթև ծառայությանը:

Նա բազմաթիվ ու հանրահայտ մանկամսուրների հովանավոր դաման էր, երբեք բաց չէր թողնում կիրակնօրյա պատարագները և ողորմություն էր տալիս մուրացիկներին, իր համար՝ սեփական ձեռքով, իսկ մարդկանց համար՝ իր ծուխի փոխանորդ արրահոր միջոցով:

Նա հաճախ աղոթում էր պարտականությունից դրդված, ինչպես զինվորը ժամապահություն է անում զորավարի դռանը: Երբեմն նա աղոթում էր, որովհետև նրա սիրտը տխուր էր լինում, մանավանդ երբ վախենում էր, որ Օլիվիեն կթողնի իրեն: Այն ժամանակ, չհայտնելով երկնքին իր աղոթքի պատճառը, դիմելով առածուն, ինչպես ամուսնուն, միամիտ երեսպաշտությամբ, նա օգնություն էր հայցում նրանից: Հոր մահից հետո և ապա, վերջերս, մոր մահից հետո, նա ունեցել էր շերմեռանդության բուռն նոպաներ, կրքոտ պաղատանիքներ, սլացքներ դեպի նա, ով պահում ու մխիթարում է մարդկանց:

Եվ ահա այսօր, պատահաբար մտնելով այդ եկեղեցին, նա հանկարծ զգաց աղոթելու խոր պահանջ, աղոթելու ոչ որեւէ մեկի և որևէ բանի համար, այլ իր համար, միայն իր համար, ինչպես արդեն մի անգամ աղոթել էր մոր գերեզմանի

վրա։ Նրան հարկավոր էր որևէ օգնություն, և հիմա նա կանչում էր աստծուն, ինչպես առավույցան կանշել էր բժշկին։

Նա երկար մնաց ծնկների վրա եկեղեցու լուսության մեջ, որ երբեմն խզվում էր քայլերի դոփյունից։ Ապա հանկարծ, ինչպես եթե ժամացույցի զարկերն իր սրտի մեջ հնչեին, նա սթափվեց հուշերից, ժամացույցը դուրս հանեց, դողաց, տեսնելով որ շուտով ժամը շորսը կլինի, և շուապ գնաց աղջկա մոտ, որին Օլիվիեն հավանաբար արդեն սպասում էր։

Նրանք նկարչին գտան արկեստանոցում, կտավի վրա երազող կնոջ դիրքը ուսումնասիրելիս։ Օլիվիեն ուզում էր կտավի վրա ճշտորեն վերաբուղը այն, ինչ տեսել էր Մոնսոյի զբոսայդում։ Աննետի հետ զբոսնելիս, մի շքավոր երազուն աղջիկ՝ ծնկների վրա բացված գրքով։ Նա երկար վարանել էր՝ ինչպես աներ այն, տգե՞ղ, թե սիրուն։ Տգեղի մեջ նա ավելի բնորոշ, ավելի խոհուն կլիներ, ավելի ուժեղ միտք ու զգացում կզարթեցներ։ իսկ սիրունի մեջ ավելի հրապուրի կլիներ, ավելի հմայք կսփռեր, ավելի գուր կգար։

Իր փոքրիկ բարեկամուհուն նկարելու ցանկությունը վրձնեց հարցը։ Երազող կինը սիրուն կլիներ, ուստի և այսօր վազը նա կկարողանար իրականացնել իր պոետական երազը, մինչդեռ տգեղը դատապարտված կլիներ անվերջ ու անհույս երազելու։

Հենց որ երկու կանայք ներս մտան, Օլիվիեն ասաց, ձեռքերը շփելով։

— Դե՛մ, օրիորդ նաներ, ուրեմն մենք միասին կաշխատենք։

Կոմսուհին մտահոգ էր երևում։ Նա նստեց բազկաթոռի վրա և սկսեց նայել, թե ինչպես Օլիվիեն մեղմ լուսավորության մեջ տեղավորեց այզու երկաթե աթոռը։ Ապա նկարից գրքի պահարանը բաց արեց, որպեսզի մի գիրք առներ, և, մի քիչ վարանումից հետո, հարցրեց։

— Ի՞նչ է կարդում ձեր ազջիկը։  
— Ինչ որ կուզեք։ Տվեք նրան Վիկտոր Հյուգոյից մի հատոր։

— Պարերի լեզե՞նքը։

— Համաձայն եմ:

Այն ժամանակ նկարիչը ասաց.

— Փոքրիկ, նստիր և առ ոտանավորների այս հավաքածուն: Թաց արա 336 էջը, ուր դու կդտնես Խեղն մարդիկ վերանագիրը կրող բանաստեղծությունը: Կարդա ուշադիր, կամաց կամաց, բառ առ բառ, ինչպես եթե ամենալավ գինին խմեիր, և դրանով արբիր, հուզվիր: Լսիր, թե քեզ ինչ կասի քո սիրտը: Ապա փակիր գիրքը, բարձրացրու քո աշքերը: Մտածիր ու երազիր... Իսկ ես պատրաստեմ իմ աշխատանքի գործիք՝ ները:

Օլիվիեն մի անկյուն դնաց ներկերը ներկապնակի վրա հավաքելու, բայց, փոքր տախտակի վրա քամելով արճիճն խողովակները, որոնցից, ոլորվելով, նուրբ գույների օձիկներ էին դուրս գալիս, ժամանակ առ ժամանակ վերադառնում էր նայելու ընթերցանության մեջ խորասուզված աղջկան:

Օլիվիեի սիրտը սեղմվում էր, մատները գողում էին, նա այլևս չգիտեր, թե ինչ է անում, և, խառնելով գույները, խճճում էր երանգները, այնքան անհաղթահարելի հուզումը հանկարծ նրան համակել էր տասներկու տարի հետո, նույն տեղում հարություն առած այդ տեսիլքի առջև:

Հիմա Աննետը վերցացրել էր ընթերցումը և նայում էր իր առջև: Օլիվիեն, մոտենալով, նրա աշքերի մեջ նկատեց երկու զինջ կաթիլներ, որոնք հոսում էին այտերն ի վարև Ծվ նկարիչը ցնցվեց այնպիսի մի հուզումից, որ խելահեղում է տղամարդուն, և, դիմելով կոմսուհուն, շշնջաց:

— Աստված, ինչքա՞ն նա գեղեցիկ է:

Թայց նկարիչը ապշեց, տեսնելով տիկին դը Գիլոուայի դալկացած ու այլայլված դեմքը:

Լայն բացած, մի տեսակ սարսափով լցված աշքերով, կոմսուհին նայում էր աղջկան ու Օլիվիեին: Օլիվիեն անհանգըստությամբ համակված, մոտեցավ ու հարցրեց:

— Ի՞նչ է պատահել ձեզ:

— Ես ուզում եմ խոսել ձեզ հետ:

Կոմսուհին վեր կացավ ու շտապ ասաց Աննետին:

— Սպասիր մի բռպե, զավակս, ես մի բան ունեմ ասելու պարոն Բերտենին:

Ապա կոմսուհին արագ անցավ կողքի ընդունարանը, ուր հաճախ սպասում էին Օլիվիեին այցելողները: Նկարիչը նրան հետևեց մտաշփոթ, ոչինչ շնասկանալով: Հենց որ մենակ գտնվեցին, կոմսուհին նկարչի երկու ձեռքերը բոնեց ու թոթովեց:

— Օլիվիե, Օլիվիե, խնդրում եմ ձեզ, այլև մի նկարիք նրան:

Օլիվիեն հուզված շշնչաց.

— Բայց ինչո՞ւ

Կոմսուհին ընդհատվող ձայնով պատասխանեց.

— Ինչո՞ւ ինչո՞ւ Դեռ հարցնում է: Ուրեմն դուք չեք զգում, թե ինչու 0՝, ես պետք է ավելի կանուխ գուշակեի այդ, բայց ես միայն հիմտ հասկացա... Ես ոչինչ չեմ կարող ասել ձեղ հիմա... ոչինչ: Գնացեք աղջկաս մոտ: Ասացեք, որ ինձ վատ եմ զգում, զնացեք մի կառք բերեք, իսկ մի ժամկց հատու եկեք ինձ մոտ: Ես ձեզ առանձին կը նդունեմ:

— Բայց վերջ ի վերջո ի՞նչ է պատահել ձեզ:

Թվում էր թե կոմսուհին հիմա զղային նոպաների մեջ կը նկնի:

— Թողեք ինձ: Ես չեմ ուզում այստեղ խոսել: Գնացեք աղջկանս մոտ և մի կառք բերեք:

Օլիվիեն հարկադրված եղավ հնադանդվել և արվեստանոց վերադառնալ: Աննետը, ոչինչ շկասկածելով, նորից սկսեց կարդալ, սիրտը լցված պոհտական ու ցավալի պատմվածքի պատճառած տիրությամբ: Օլիվիեն ասաց նրան.

— Մայրդ իրեն վատ է զգում: Ընդունարանում քիչ մնաց ուշքը գնար: Գնա մոտք: Ես հիմա էֆիր կբերեմ:

Օլիվիեն վազեց ննջասենյակ սրվակը առնելու և ետ վերադարձավ:

Նա նրանց գտավ մեկը մյուտի գրկի մեջ արտասվելիս: Աննետը, խորապես հուզված Խեղն մարդկանցից, փղձկում էր, իսկ կոմսուհին մի քիչ թեթևացել էր, երբ իր վիշտն ու արցունքները միախառնվել էին աղջկա մեղմ վշտի ու արցունքների հետ:

Զհամարձակվելով խոսել: Օլիվիեն նրանց էր նայամ. նույնպես ընկճված ինչ-որ անհասկանալի թախիծից:

Վերջապես նա ասաց.

— Դե՛հ, հիմա ավելի լա՞վ եք զգում ձեզ:

Կոմսուհին պատասխանեց.

— Այո, մի քիչ: Դա կանցնի: Դուք կառք կանչե՞լ եք:

— Այո՛, հիմա կդա:

— Ենորհակալություն, իմ բարեկամ: Դա ոչինչ բան է: Ես վերջին ժամանակներս շատ վիշտ ունեցաւ:

— Կառքը եկել է, — հայտնեց շուտով ծառան:

Եվ թերտենը, թաքուն անդոհներով լի, մինչև կառքը ուզեկցից գունաթափ ու դեռևս ուժաթափ իր բարեկամուհուն, որի որտի բարախյուններն զգում էր լանջազգեստի տակ:

Երբ թերտենը մենակ մնաց, յուրովի հարցրեց. «Ի՞նչ է պատահել նրան: Ինչի՞ց է այդ նոպան»: Եվ պատասխանը փնտրեց, պտտվելով ճշմարտության շուրջ, բայց շվճոելով այն երեան հանել: Վերջապես նա մոտեցավ ճշմարտության. «Ահա թե ինչ, — ասաց նա յուրովի, — մի՞նչ Անին կարծում է, որ ես դարպասում եմ իր աղջկան: Դա շափազանցություն կլիներ»: Եվ խելացի ու աղնիի փաստարկներով հերքելով այդպիսի ենթադրությունը, Օլիվիեն զայրացավ, թե ինչպես Անին իր առողջ, գրեթե հայրական սերը կարող էր թեկուզ մի բոպե ինչ-որ տարփանքի տեղ ընդունել: Նա աստիճանաբար գըրդը ուղղում էր կոմսուհու դեմ, նա թուզ շեր տա, որ կոմսուհին ։ամարձակվեր իրեն կասկածել այդպիսի պղծության, այդպիսի անորակելի ստորության մեջ, և մատղիր էր նրա հետ խուսակցության ժամանակ ամեննին շծածկել իր վրդովմունքը:

Օլիվիեն դուրս եկավ կոմսուհու մոտ գնալու համար, շտապելով բացատրվել: Ամբողջ ճանապարհին աճող զայրույթով նա պատրաստեց այն փաստարկներն ու խոսքերը, որոնք գետք է արդարացնեին իրեն և փոխհատուցեին նման անփառահության համար:

Նա կոմսուհուն գտավ բազմոցի վրա ընկողմանաժ, մտաւանջությունից այլայլված դեմքով:

— Դե՛հ, սիրելիս, — ասաց Օլիվիեն շոր տօնով, — բացատրեցեք ինձ քիչ առաջվա տարօրինակ տեսարանը:

Կոմսուհին պատասխանեց շարդված ձայնով.

— Ի՞նչ, դուք դեռ չե՞ք հասկացել:

- Խոստովանում եմ, ոչ:
- Դե՛հ, ուրեմն, Օլիվիե, լավ փնտրեցեք ձեր սրտի մեջ:
- Եմ սրտի մե՞ջ:
- Այո, ձեր սրտի խորքում:
- Չեմ հասկանում: Ավելի պարզ ասացեք:

— Լավ փնտրեցեք ձեր սրտի խորքում, արդյոք այնտեղ որևէ վտանգավոր բան չկա՞ծ ձեզ համար:

— Կրկնում եմ ձեզ, որ ես չեմ հասկանում: Գուշակում եմ, որ ինչ-որ բան կա ձեր երևակայության մեջ, բայց իմ խղճի մեջ ոչինչ չկա:

— Ես ձեզ շեմ խոսում ձեր խղճի մասին, ես խոսում եմ ձեր սրտի մասին:

— Ես հանելուկներ գուշակել չգիտեմ: Խնդրում եմ ձեզ, ավելի պարզ խոսեցեք:

Այն ժամանակ կոմսուհին դանդաղորեն բարձրացնելով ձեռքերը, բոնից նկարչի ձեռքերից ու բաց չթողեց, ապա ասաց այնպես, ինչպես եթե յուրաքանչյուր բառը վիշտ պատճառեր նրան.

— Զգուշացեք, իմ բարեկամ, զուք սիրահարվելու եք իմ աղջկան:

Օլիվիեն բրտորեն ետ քաշեց ձեռքերը և ամոթալի կասկածը հերքող անմեղի շտապողականությամբ, բուռն շարժումներով, բորբոքումով սկսեց պաշտպանվել և, իր հերթին, կոմսուհուն մեղադրել այդպիսի կասկածներ ունենալուն համար:

Կոմսուհին թույլ տվեց նրան երկար խստել, բայց, համառօրեն շվատահելով, համոզված լինելով իր խոսքերի իրավացիության մեջ, պատասխանեց.

— Բայց ես ձեր վրա շեմ կասկածում, իմ բարեկամ: Դուք չգիտեք, թե ինչ է տեղի ունենում ձեր մեջ, ինչպես ես էլ չգիտեի այսօր առավոտյան: Դուք ինձ հետ այնպես եք խոսում, ուսես ես ձեզ մեղադրել եմ Աննետին հրապուրելու ցանկության մեջ: 0°, ո՛չ: 0°, ո՛չ: Ես գիտեմ, թե ինչքան դուք ազնիվ եք, ինչքան դուք արժանի եք ամեն հարգանքի ու ամեն վրատահության: Ես միայն ձեզ խնդրում եմ, ձեզ աղաշում եմ նայել ձեր սրտի խորքում և ձեզ հարց տար, թե իմ աղջկա

նկատմամբ ձեր մեջ ծագող զգացումը արդյոք չի կրում, հակառակ ձեր կամքի, մի քիչ այլ բնույթ, քան պարզ բարեկամությունը:

Օլիվիեն վրդովվեց, և հետզհետե ավելի հուզվելով, նորից կսեց պաշտպանել իր ազնվությունը, ինչպես պաշտպանել էր առաջ, միայնակ, այստեղ գալու ճանապարհին:

Կոմսուհին սպասեց, որ Օլիվիեն վերջացնի խոսքերը, ապա առանց բարկության, առանց տատանվելու իր համոզման մեջ, բայց ահավոր կերպով գունաթափ, շշնչաց.

— Օլիվիե, ես լավ գիտեմ այն ամենը, ինչ դուք ասում եք, և մտածում եմ այնպես, ինչպես դուք: Բայց ես վստահ եմ, որ չեմ սխալվում: Լսեցեք, խորհեցեք, հասկացեք: Իմ աղջիկը շափազանց նման է ինձ, նա ամեն ինչում ճիշտ այնպես է, ինչպես ես էի անցյալում, երբ ինձ սկսեցիք սիրել, ուստի դուք անպայման կսիրեք նրան:

— Ուրեմն,— բացականչեց Օլիվիեն,— դուք համարձակում եք իմ երեսին նման մեզադրանք նետել միայն այդ պարզ ենթադրության և այդպիսի ծիծաղիլի պատճառաբանության հիման վրա—նա սիրում է ինձ, իմ աղջիկը նման է ինձ, հեռաբար կսիրի իմ աղջկան:

Բայց տեսնելով, որ կոմսուհու դեմքը հետզհետե ավելի էր այլայլվում, Օլիվիեն շարունակեց ավելի մեղմ ձայնով:

— Ահա թե ինչ, սիրելի Անի, այդ աղջնակը ինձ այնպես գուր է գալիս հենց այն պատճառով, որ նրա մեջ ես նորից գտնում եմ ձեզ: Զեզ, միայն ձեզ եմ ես սիրում, երբ նայում եմ նրան:

— Այս, հենց դրանից է, որ ես սկսում եմ այդպես մտառանջվել, հենց այդ է, որ ինձ այնքան սաստիկ վախեցնում է: Դուք դեռ չեք հասկանում, թե ինչ եք զգում: Որոշ ժամանակ հետո դուք այլքս չեք սխալվի այս խնդրում:

— Անի՛, վստահեցնում եմ ձեզ, որ դուք խելագարվում եք:

— Ուզո՞ւմ եք ապացույցներ:

— Այո՛:

— Դուք երեք տարի չեկաք Ռոնսիեր, հակառակ իմ թա-

խանձանքներին։ Բայց դուք հապշտապ եկաք, երբ ձեզ առաջարկեցին դնալ այստեղ, մեր երկուսի ետևից։

— Ա՞հ, ա՛յ թե ինչ։ Դուք ինձ մեղադրո՞ւմ եք, որ ես ձեզ շեմ թողել մենակ, իմանալով, որ դուք հիվանդ եք ձեր մոր մահից հետո։

— Դիցուք։ Չեմ պնդի։ Բայց ձեզ մոտ Աննետին տեսնելու այնպիսի բուռն պահանջ կար, որ դուք չկարողացաք բաց թողնել այսօրվա օրը և ինձ խնդրեցիք նրան ձեզ մոտ բերել նկարելու պատրիակի տակ։

— Իսկ դուք չե՞ք ենթադրում, որ այդ ձե՛զ էի ուզում ես տեսնել։

— Այս բոպեիս դուք ձեր դեմ եք փաստարկում։ Դուք աշխատում եք համոզել ձեզ, բայց ինձ չեք խաբի։ Նորից լսեցեք։ Ինչո՞ւ դուք անցյալ օրը երեկոյան դուրս եկաք հանկարծակի, երբ ներս մտավ մարկիզ որ ժարանդալը։ Դուք այդ դիտե՞ք։

Այս դիտողությունից զարմացած, անհանգստացած, զինաթափած՝ Օլիվիեն շփոթվեց։ Ապա դանդաղորեն ասաց.

— Բայց... ես չգիտեմ... ես հոգնել էի... և հետո, անկեղծորեն ասելով, այդ ապուշը ազդում է իմ զղերի վրա։

— Այդ երբվանի՞ց։

— Վաղոց։

— Ներեցեք։ Ես ձեր գովասանքն եմ լսել նրա մասին։ Առաջ նա ձեզ դուր էր գալիս, լիովին անկեղծ եղեք, Օլիվիե։

Օլիվիեն մի քանի բոպե մտածեց և ապա, բառեր փնտրելով, ասաց.

— Այո, հնարավոր է, որ ձեր հանդեպ ունեցած իմ խոր սերը ինձ ստիպում է այնպես սիրել բոլոր ձերոնց, որ ես փոխած լինեմ իմ կարծիքը այդ հիմարի մասին։ Ինձ համար միենույն է, ես նրան երեմն կհանդիպեմ թե ոչ։ բայց ինձ համար նեղացուցիչ է նրան գրեթե ամեն օր տեսնել ձեզ մոտ։

— Իմ աղջկա տունը իմ տունը չի լինի։ Բայց բավական է այդ մասին։ Ինձ հայտնի է ձեր սրտի շիտակությունը։ Ես գիտեմ, որ դուք լավ կմտածեք իմ ասածների մասին։ Երբ դուք կկշռադատեք, ապա կհասկանաք, որ ես ձեզ մի մեծ վտանգ իմ ցույց տվել, բայց առայժմ դեռ ուշ չէ դրանից խուսափել։

Եվ դուք պետք է զգուշանաք: Հիմա խոսենք ուրիշ բանի մասին. համաձա՞յն եք:

Օլիվիեն շառարկեց: Հիմա նա անտրամադիր էր, չգիտեր ինչի մասին մտածեր, թեև իրապես խորհրդածելու պահանջ էր զգում: Եվ նա դուրս եկավ զանազան բաների մասին քառորդ ժամ զրուցելուց հետո:

#### IV

Դանդաղ քայլերով Օլիվիեն տուն էր վերադառնում, ճընշված, ասես հենց նոր ընտանեկան ամոթալի մի գաղտնիք էր իմացել: Նա փորձում էր հետազոտել իր սիրտը, թափանցել նրա մեջ, կարդալ ներքին կյանքի գրքի այն ինտիմ էջերը, որոնք ասես կպած են մեկը մյուսին, այնպես որ երբեմն միայն մի օտար ձեռք կարող է դրանք բաժանել և շուր տար: Անշուշտ, նա չէր կարծում, որ ինքը սիրահարված է Աննետին: Կոմսուհին, որի խանդոտ կասկածանքը չէր դադարում զգաստ լինել, հեռվից զգացել էր վտանգը և ցույց էր տվել նրան ավելի շուր, քան այն երեացել էր: Բայց մի՞թե այդ վտանգը չարող էր երեալ վազը, մյուս օր, մի ամիս հետու Այդ անկեղծ հարցին էլ նա աշխատում էր անկեղծորեն պատասխանել: Իհարկե, փոքրիկ աղջիկը Օլիվիեի մեջ արթնացնում էր գորովանքի բնազդ, բայց տղամարդու մեջ այնքան շատ են այդ բնազդները, որ չպետք է վտանգավորները խառնել անվնասների հետ: Օրինակ, Օլիվիեն շատ էր սիրում կենդանիներին, մանավանդ կատուներին, և չէր կարող նրանց մետաքսե մորթը տեսնել ու շհամակվել նրանց գալարուն, փափուկ կոնակը շոյելու, նրանց էլեկտրական բուրդը համբուրելու անհաղթահարելի, զգայական ցանկությամբ: Այն հակումը, որ նրան քաշում էր դեպի երիտասարդ աղջիկը, որոշ շափով նման էր այն անորոշ ու անմեղ ցանկություններին, որոնք ձնվում են մարդկային նյարդերի շղաղարող ու շթուշացող թրթիռներից: Նրա աշքերը, նկարչի ու տղամարդու աշքերը: Իրապուրված էին Աննետի թարմությամբ, գեղեցիկ, լուսաշող կյանքի ալդ ընձյուղով, նրա մեջ շողացող ջահելության այդ ավիշով. և Օլիվիեի սիրտը, որ լի էր կոմսուհու հետ երկարա-

տե կապի հուշերով, Աննետի ու մոր արտասովոր նմանության մեջ գտել էր անցյալ զգացումների վերհիշում, զգացումներ, որոնք քնել էին նրա սիրո առաջին օրերից հետո, և, թերևս, թեթևորեն դողացել էր զարթնումից: Զարթնումից: Այս Այգակես էլ էր: Այդ միտքը լուսավորեց Օլիվիեին: Նա իրեն զարթնած էր զգում տարիների քնից հետու եթե նա, առանց այդ մասին կասկածելու, սիրեր Աննետին, նա աղջկա մոտ կզգար ամբողջ էության այն ջահելացումը, որ բարեփոխում է մարդուն, նոր կրքի բոց արծարծելով նրա մեջ: Ոչ, այդ աղջիկը լոկ բորբոքել էր հին կրակը: Օլիվիեն շարունակում էր սիրել հենց մորը, բայց, անկասկած, նախկինից ավելի ուժեղ, շնորհիվ աղջկան, որի մեջ մայրը վերածնվել էր: Եվ Օլիվիեն այդ եզրակացությունը ձևակերպեց այսպիսի հանգստացուցիչ սովեստությամբ. սիրել կարելի է միայն մի անգամ: Իսկ սիրող կարող է հաճախ հուզվել որևէ ուրիշակի հանդիպումից, որովհետև մարդիկ միմյանց նկատմամբ կրում են կամ ձգողական, կամ վանողական զգացումներ: Այդ բոլոր ազդեցություններից ծնվում է բարեկամություն, կիրք, տիրապետության ծարավ, վառ ու կենդանի բռնկումներ, բայց ամեննեին ոչ իսկական սեր: Որպեսզի իսկական սեր լինի, երկու էակներ պետք է այնպես ծնված լինեն միմյանց համար, միացած լինեն հայացքների ու ճաշակների այնպիսի ընդհանրությամբ, մարմնական ու հոգեկան այնպիսի նմանությամբ, փոխադարձ այնպիսի կապերով, որ արդեն անբաժանելի լինեն մեկը մյուսից: Հստ էության, մենք սիրում ենք ոչ այնքան տիկին X-ին կամ պարոն Z-ին, որքան կնոջ կամ տղամարդուն, բնության—այդ մեծ էգի—ստեղծած անանուն էակին, էակ, որ ունի այնպիսի օրգաններ, ձև, սիրու, միտք, ընդհանուր կերպարանք, որոնք, ինչպես մագնիս, քաշում են մեր օրգանները, մեր աշքերը, շրթները, սիրու, միտքը, մեր բոլոր զգայական ու հոգեկան ցանկությունները: Մենք սիրում ենք տիպարը, այսինքն՝ մի անձի մեջ կենտրոնացումը բոլոր մարդկային հատկությունների, որոնք կարող են մեզ հրապուրել ուրիշների մեջ առանձին:

Օլիվիեի համար տիկին գը Գիլռուան եղել էր այդ տիպա-

ըր. տեսականությունն իրենց կապի, որից Օլիվիեն չէր ձանձրացել, ստուգապես այդ էր ապացուցում։ Իսկ Աննետը ֆիզիկապես այնքան նման էր երիտասարդ ժամանակվա իր մուբեր, որ այդ նմանությունը խարում էր, և զարմանալի ոշինչ չկա, որ նրա սիրտը, տղամարդու սիրտը, մի քիչ խլրտել էր թեև չէր ենթարկվել հրապուրանքի։ Նա պաշտել էր մի կնոջ նրանից ծնվել էր մի ուրիշ կին, զրեթե նման։ Օլիվիեն իրոք չէր կարողանում իրեն զսպել, որպեսզի երկրորդի նկատմամբ չկրեր որոշ համակրանք, մնացորդը կրքոտ սիրո, որ նա տածել էր առաջինի նկատմամբ։ Դրա մեջ ոչ մի վատ բան չկար, դրա մեջ ոչ մի վտանգ չկար։ Միայն թե նրա տեսողությունն ու հիշողությունը ենթարկվում էին այդ երևութական վերահնության պատրանքին, բայց նրա բնաղղը չէր մոլորվում։ Չանի որ երիտասարդ աղջկա նկատմամբ նվազագույն խռովիշանկություն իսկ չէր ունեցել։

Սակայն կոմսուհին Օլիվիեին մեղադրում էր, որ նա խանգում է մարկիզին։ Մի՛թե դա ճիշտ էր։ Օլիվիեն նորից խըսուուրեն քննեց իր խիղճը և համոզվեց, որ իրոք մի քիչ խանգում է։ Բայց ի՞նչ զարմանալի բան կա դրա մեջ։ Մի՛թե մենք շարունակ չենք խանգում այն տղամարդկանց, որոնք դարձաւում են որևէ կնոջ։ Մի՛թե մենք փողոցում, ուստորածում, թատրոնում որոշ թշնամանք չենք տածում այն պարոնի նկատմամբ, որ անցնում կամ մտնում է մի գեղեցիկ սղջկա թևանցուկ արած։ Կնոջ ամեն մի տիրապետող մրցանից է։ Նա գոհացած արու է, մի հաղթանակող, որին նախանձում են ուրիշ արուներ։ Եվ վերջապես, զանց առնելով Փիզիուզիական այս նկատառումները, եթե բնական է, որ Օլիվիեն չենետի նկատմամբ մի քիչ ուժեղ համակրանք տածի նրա Տոր հանգեալ զգացած սիրո շնորհիվ, ապա մի՛թե բնական չեն որ Օլիվիեի մեջ որոշ անասնական ատելություն զարթնի Անհետի ապագա ամուսնու նկատմամբ։ Օլիվիեն առանց դժվարության կհաղթահարեր այդ ստոր զգացումը։

Սակայն Օլիվիեի հոգու խորքում դառնություն, գժկոհություն էր մնացել հենց իր և կոմսուհու նկատմամբ։ Մի՛թե նրանց ամենօրյա փոխհարաբերությունները չէին բարդանալու այն անվտահությամբ, որ Օլիվիեն զգալու էր կոմսուհու

կողմից։ Միթե Օլիվիեն ստիպված չպիտի լիներ խիստ, հոգնեցուցիչ ուշադրությամբ հետեւլու իր յուրաքանչյուր խոսքին, յուրաքանչյուր արարքին, յուրաքանչյուր նայվածքին. երիտասարդ աղջկա հետ վերաբերմունքի ամենաշնչին մանրուքին, որովհետև այն բոլորը, ինչ նա անելու էր, այն բոլորը, ինչ նա ասելու էր, կասկածելի էր երեալու մորը։ Օլիվիեն տուն վերադարձակ վատ տրամադրությամբ և սկսեց իրար ետեից ծխել այն ջղայնացած մարդու մոլեգնությամբ, որ իր ծխախոտը վառելու համար տասը լուցկի է ծախսում։ Նա իզուր փորձեց աշխատել։ Թվում է թե նրա ձեռքը, աշքը, միտքը կորցրել էին նկարչության վարժությունը, ասես մոռացել էին այն, ասես երբեք չէին իմացել ու կիրառել այդ արհեստը։ Նա վերջացնելու համար վերցրեց սկսած մի փոքր կտակ՝ փողոցի անկյունում երդող կույրը, և նրան նայեց անհաղթահարելի անտարրերությամբ և զգաց այնպիսի անգորություն, որ ներկասնակը ձեռքում նստեց ու մոռացակ նրա մասին, թեև շարունակում էր նայել սեեռուն ու թարթափուն հայացքով։

Ապա հանկարծ Օլիվիեին սկսեց կրծել անտանելի տենդագին սրտնեղուքը, որ ժամանակը շի շարժվում, վայրկյանները չեն վերջանում։ Մինչև ճաշը, որի համար ակումբ էր գնալու, ի՞նչ պիտի աներ, քանի որ չէր կարողանում աշխատել։ Փողոց դուրս գալու միտքը նրան առաջուց հոգնեցնում էր, զզվանքով լցնում դեպի մայթերը, անցորդները, կառքերն ու խանութները. իսկ երբ մտածեց այսօր այցելության դնալ որեւէ մեկի մոտ, նրա մեջ հանկարծ ատելություն ծագեց այն բոլոր մարդկանց նկատմամբ, որոնց ճանաչում էր։

Ռվեմն ի՞նչ պիտի աներ։ Նա իր արվեստանոցում կճեմեր ետ ու առաջ, յուրաքանչյուր շրջադարձին նայելով պատի ժամացուցին, իմանալու թե արդյոք նրա սլաքը մի քանի վայրկյան առաջ չի՝ շարժվել։ Ա՞հ, նա ծանոթ էր դոնից մինչև գեղորներով զարդարված պահարան կատարվող այդ երթերին։ Եռանդի, խոյանքի, ներշնչման այն ժամերին, երբ աշխատանքը բեղմնավոր ու թեթև է, ստեղծագործությունից կենդանացած, զվարթացած, զերմացած ընդարձակ սենյակում այդ ետ ու առաջ քայլելը հաճելի ընդմիջում էր, իսկ անզո-

բոթյան ու զզվանքի ժամերին, այդ դժբախտ ժամերին, երբ նրան թվում էր, թե աշխարհում ոչինչ չկա, որի համար արժինար որևէ ճիգ գործ դնել, դա բանտարկյալի զազրելի զբոսանքն էր իր զնդանում։ Եթե նա զոնե մի ժամ կարողանար ընել բազմոցի վրա։ Բայց ոչ, նա չէր քնի, նա գեսուղեն կրնկներ, մինչև հասներ լիակատար վհատության։ Որտեղից էր հանկարծ հկել այդ մռայլ տրամադրությունը, նա մտածեց. «Ես ահավոր կերպով ջղային եմ դառնում, եթե ինչ-որ անհան պատճառից նման վիճակի մեջ եմ ընկնում։

Այն ժամանակ Օլիվիեն վերցրեց՝ մի զիրք։ Դարերի լեզենդը գեռես մնացել էր երկաթե աթոռի վրա, ուր թողել էր Աննետը։ Օլիվիեն բաց արեց հատորը, երկու էջ ոտանավոր կարդաց և շհասկացավ։ Զհասկացավ, ասես դրանք օտար լեզվով էին գրված։ Նա ջղայնացավ և սկսեց նորից կարդալ, որպեսզի նորից համոզվի, որ իրոք չի թափանցում նրանց իմաստի մեջ։ «Դի՛ք, — ասաց նա յուրովի, — ես կարծես ցնդել եմ։» Բայց հանկարծ, ասես ներշնչումով, նա գլխի ընկավ։ Թե ինչի վրա կարելի էր սպանել երկու ժամը, որ մնում էր մինչև ճաշ։ Նո հրամայեց տաքացնել լոգարանի ջուրը և նրա մեջ պառկած մնաց, դադչ ջրից փափկած ու հանգստացած, մինչև այն ժամանակ, երբ ծառան բերելով սպիտակեղենը, նրան արթնացրեց կիսաքնից։ Այն ժամփնակ նա զնաց ակումբ, ուր հավաքվել էին նրա սովորական բարեկամները։ Նրան ընդունեցին կրաքարաց ու բացականշություններով, որովհետեւ արդեն մի քանի օր նրան չէին տեսել։

— Գյուղից եմ վերադարձել, — ասաց Օլիվիեն։

Այդ բոլոր մարդիկ, բացառությամբ բնանկարիչ Մալդանի, խոր արհամարհանք էին տածում գյուղի նկատմամբ։ Ռոկդիանն ու Հանդան, ճիշտ է, որսի էին գնում այնտեղ. բայց դաշտերում ու անտառներում նրանց գութ էր գալիս միայն նայել, թե ինչպես իրենց կրակոցից փետրագնդի նման ընկնում են փասիանը, լորը կամ կաքավը կամ կլոունի նման հինգ—վեց անգամ գլուխկոնձի է տալիս խփված նապաստակը. որի յուրաքանչյուր թափալման ժամանակ երեսում է պոչի սպիտակ մաղերի փունջը։ Զհաշված աշնանային ու ձմեռային այս բավականությունները, նրանք գյուղը սպանիչ կերպով ձանձ-

քալի էին համարում։ Խոկդիանը ասում էր. «Ես ջահել կանաց գերադասում եմ ջահել կանաչից»։

Ճաշը, ինչպես միշտ, անցավ աղմկալի ու զվարթ, աշխուժացած վեճերից, որոնց մեջ ոչ մի նորություն չկար։ Թերտենը, իրեն ոգևորելու համար, շատ խոսեց։ Նրան գտան ջահելացած. բայց նա, հենց որ սուրճը խմեց և բանկիր լիվերդիի հետ վաթսուն միավոր բիլիարդ խաղաց, դուրս եկավ։ Նա մի քիչ սլքուաց Մաղեն եկեղեցու և Թերու փողոցի միջև, երեք տնգամ անցավ Վոդվիլի տոքեից, մտածելով՝ շգնա՞ այնտեղ։ Կառք շվարձի՞ Հիպաղողոմ գնալու համար, բայց միտքը փոխեց և ուղղվեց դեպի նոր կրկես, ապա հանկարծ շուր եկավ նու և առանց նպատակի, առանց դրդապատճառի, առանց ծրագրի բարձրացավ Մալզերը բուզվարով և քայլերը դանգաղեցրեց կոմսուհի զը Գիլուռայի տանը մոտենալիս։ «Նա գուցե տարօրինակ գտնի, եթե ինձ նորից տեսնի այսօր», — մտածեց Օլիվիեն։ Բայց նա իրեն հանգստացրեց մտածելով, որ ոչ մի տարօրինակ բան չի լինի, եթե ինքը երկրորդ անգամ այցելի նրա առողջության մասին տեղեկանալու։

Կոմսուհին Աննետի հետ մենակ էր փոքր հյուրասենյակում և առաջվա նման ծածկոց էր գործում աղքատների համար։

ԵՐՐ Օլիվիեն ներս մտավ, կոմսուհին պարզապես ասաց։

— Օ՛, այդ դո՞ւք եք, բարեկամու։

— Այո, ես անհանգստանում էի, ուզեցի ձեղ տեսնելուն պես ա եք ձեզ դդում։

— Ենորհակալություն, բավական լավ...

Կոմսուհին մի քիչ սպասեց, ապա ավելացրեց, շեշտված գիտավորությամբ։

— Իսկ դո՞ւք։

Անբոնազբոսիկ կերպով ծիծաղելով, Օլիվիեն պատասխանեց։

— Օ՛, շատ լավ, շատ լավ։ Զեր երկյուղները ոչ մի հիմք չունեին։

Կոմսուհին, դադարելով ծածկոցը գործել, դանդաղորեն աշքերը բարձրացրեց Օլիվիեի վրա։ Նրա այրող հայացքի մեջ աղերսանք ու կասկածանք կար։

— Ճիշտ եմ ասում, — ավելացրեց Օլիվիեն:

— Ավելի լավ, — պատասխանեց Կոմսուհին մի քիչ բռնագործութիւնով:

Օլիվիեն նստեց և առաջին անգամ այս տանը նրան համակեց անհաղթահարելի մի տրտմություն, մտքի յուրահառուկ կաթվածահարություն, շատ ավելի ուժեղ, քան այն, որ անեցել էր ցերեկով՝ կտավի առջև:

Կոմսուհին ասաց ազդկան:

— Կարող ես շարունակել դավակաւ: Այդ նրան չի խանգարի:

Օլիվիեն հարցրեց:

— Ի՞նչ էր անում աղջիկու:

— Մի ֆանտազիա էր սովորում:

Աննետը վեր կացավ ու մոտեցավ դաշնամուրին: Ինչպես միշտ, Օլիվիեն հայացքով հետեւեց Աննետին, առանց մտածելու, նրան սիրուն գտնելով: Բայց այդ միջոցին նա իր վրացաց մոր հայացքը և մեկեն գլուխը շուռ տվեց ուրիշ կողման: Ինչոր բան էր որոնում հյուրառենյակի մութ անկյունում:

Կոմսուհին գործասեղանի վրայից վերցրեց մի փոքրիկ սակե ծխախոտատուփ, որ Օլիվիենից էր ստացել, բաց արեց ենթան ծխախոտ առաջարկեց.

— Ծիսեք, իմ բարեկամ: Դուք գիտեք, որ ես սիրում եմ երր մենակ ենք լինում:

Օլիվիեն ծխեց: Սկսեց հնչել գաշնամուրի նվազը: Դա հիենաշակի, սիրուն ու թեթև մի կտոր էր, թվում էր թե նրա մեջողիան մեղմ, լուսնյակ, գարնանային երեկոյից էր ներշընչված:

Օլիվիեն հարցրեց:

— Այդ ո՞ւմն է:

Կոմսուհին պատասխանեց:

— Շումանին: Սա քիչ է ծանոթ, բայց հրաշալի է:

Օլիվիենի մեջ աճում էր Աննետին նայելու ցանկությունը: Բայց նա չէր համարձակվում: Հարկավոր էր միայն մի փոքր բիկ շարժում անել, վզի մի թեթև շարժում, և կողքից նրանկերեային նոտաները լուսավորող մոմերի հրեղեն լեղուները:

քայց նա այնքան լավ էր գուշակում, այնքան պարդ էր նկատում կոմսուհու հետապնդող ուշադրությունը, որ անշարժ նստել էր, նայելով իր առջև, և ասես, հետաքրքրությամբ հետեւում էր ծխախոտի ծխի մոխրագույն քուշաներին:

Տիկին զը Գիլուռան շշնչաց.

— Ա՞յդ է ձեր բոլոր փակիքը:

Օլիվիեն ժպտաց.

— Զպետք է բարկանալ: Դուք դիանք, որ երաժշտությունը հիպնոսացնում է ինձ և կլանում իմ բոլոր խոհերը: Ես ձեզ կասեմ քիչ հետո:

— Ա՞հ, — ասաց կոմսուհին, — մայրիկի մահից առաջ ես ինչ-որ բան էի սովորել ձեզ համար: Ես այդ երբեք ձեզ չեմ նվազել և հիմա կնվազեմ, երբ փոքրիկը կվերջացնի. դուք կտեսնեք, թե դա ինչ տարօրինակ բան է:

Կոմսուհին իսկական տաղանդ և երաժշտության մեջ ներդրված զգացումների նուրբ ըմբռնում ուներ: Դրա մեջ էլ թաքնված էր նրա հմայքի տիրական ուժը, որ այնպես ներգործում էր նկարչի զդայության վրա:

Հենց որ Աննետը վերջացրեց Շումանի դյուզական սիմֆոնիան, կոմսուհին վեր կացավ ու նրա տեղը նստեց: Արտասովոր մի մելոդիա զարթնեց նրա մատների տակ, մի մելոդիա, որի բոլոր Փրազները գանգատներ էին թվում, միշտ նոր, միշտ փոփոխական, անվերջանալի գանգատներ. անընդհատ կրկնվող մի նոտան ներխուժում էր մելոդիայի մեջ, հատելով, անշամահատելով, տրոհելով այն, ինչպես միալար, անդադրում, տեսական ձիչ, ինչպես տեսիլքի անլոելի կոչ:

Բայց Օլիվիեն նայում էր իր դիմաց նստած Աննետին, և ոչինչ չէր լսում, ոչինչ չէր հասկանում:

Նա նայում էր Աննետին, ոչնչի մասին չմտածելով, հաճույք ստանալով նրա տեսքից, ինչպես սովորական ու հաճելի մի բանից, որից զրկվել էր, և հիմա արբում էր նրանով, ինչպես ըմպում են զուրը՝ ծարավ ժամանակ:

— Է՞հ, ինչպե՞ս է, — ասաց կոմսուհին: — Մի՞թե սա գեղեցիկ չէ:

Օլիվիեն, սթափված, բացականչեց.

— Հրաշալի՛, հոյակա'պ է: Ո՞ւմն է դա:

— Դուք չգիտե՞ք:

— Ոչ:

— Ինչպես, դուք այդ չգիտե՞ք:

— Բայց ոչ:

— Դա Շուրերտից է:

Օլիվիեն ասաց խոր համողման տոնով.

— Ամենեին չեմ դարմանում: Դա հոյակապ է: Խնդրեմ, մի անգամ էլ նվագեք:

Կոմսուհին նորից նվագեց, իսկ Օլիվիեն գլուխը շուռ տվեց և գարձյալ սկսեց ակնապիշ նայել Աննետին, բայց լսում էր նաև երաժշտությունը, որպեսզի միանգամից երկու հաճույր ներ ճաշակեր:

Երբ տիկին դը Գիլուուան իր տեղը վերադարձավ, Օլիվիեն, տղամարդուն հատուկ խորամանկությամբ, հայացքը հեռաց շիկահեր գլխից երիտասարդ աղջկա, որ գործում էր, նրա տած մոր դիմաց, լամբարի մյուս կողմում:

Բայց եթե Օլիվիեն Աննետին չէր տեսնում, նա զգում էր նրա ներկայության քաղցրությունը, ինչպես մենք դում ենք տաք օջախի մերձավորությունը. և նա թեկուզ թուցիկ կերպով ուզում էր նայել Աննետին, ապա իսկույն աշքերը տանել կոմսուհու վրա, նման աշակերտին, որ ուզում է պատուհանի մեջ մտնել, հենց որ ուսուցիչը շուռ է գալիս:

Նա վաղ դուրս եկավ, որովհետեւ ոչ կարողանում էր խոսել, ոչ մտածել, իսկ նրա տեսական լուսիցունը կարող էր վասմեկնաբանվել:

Հենց որ փողոցում գտնվեց, թափառելու պահանջ զգաց, որովհետեւ լսած երաժշտությունը դեռ երկար շարունակվում էր նրա մեջ և նրան խորասուղում անուրջների մեջ, որոնք ցանկալի և ավելի պայծառ մելոդիաների շարունակությունն էին թվում:

Երաժշտական եղանակը, անկապակից ու խուսափուկ, վերադառնում էր և յուրաքանչյուր անգամ բերում էր հեռավոր արձագանքի նման թուլացած առանձին տակտեր, ապա լուսում էր, ասես գիտակցությանը թողնելով իմաստավորելու մելոդիան և սավառնում էր եթերում՝ ի խնդիր ինչ-որ ներդաշնակ

ու քնքուշ իպեալի: Տեսնելով հերիաթայնորեն լուսավորված Մոնսոյի զբոսայգին, Օլիվիեն արտաքին բուզվարով ձախ կողմ դարձավ ու մտավ էլեկտրական լուսինների լույսով ողոզված կենտրոնական կլորացված ծառուղին: Մի պահապան դեգերում էր դանդաղ քայլերով, երբեմն անցնում էր ուշացած մի կառք. մի մարդ լրագիր էր կարդում, նստած նստարանի վրա՝ պայծառ լույսի կապտավուն հեղեղի մեջ, շողշողուն մի գունու կրող բրոնզե սյան տակ: Մարգերի վրա, ծառերի մեջ, ուրիշ զապտերներ իրենց սառն ու շլացուցիչ լույսն էին սփոռում տերևների ու դալարների վրա, քաղաքային այս մեծ զբոսայգին մարմրուն կյանքով կենդանացնելով:

Զեռքերը ետեսում դրած, Բերտենը գնում էր շավիղով և հիշում էր Աննետի հետ իր զբոսանքը այս նույն զբոսայգում, երբ նրա բերանից լսել էր մոր ձայնը:

Նա նստեց մի նստարանի վրա, շնչելով ոռոգված մարգերի թարմ տամկությունը. և հանկարծ նրան տիրապետեց կրօս-սպասման այն զգացումը, որ պատանեկան հոգին դարձնում է անվերջանալի սիրո ոռմանի անկապակից կանվան: Մէ ժամանակ նրան ծանոթ էին այդպիսի երեկոները, երբ նրա ֆանտազիան ազատորեն թափառում էր երեակայական արկածների մեջ. նա զարմացավ իր մեջ գտնելով վերադարձը այնպիսի զգացումների, որոնք այլևս հատուկ չէին իշխանակին:

Բայց ինչպես Շուրերտի մելոդիայի համառ նոտան, Աննետի մասին հուշը, լամբարի տակ հակված նրա դեմքի գծերը և կոմսուհու տարօրինակ կասկածանքները ամեն բուկե անհանգստացնում էին Օլիվիե Բերտենին: Նա ակամա շարունակում էր մտազբազվել այս հարցով, հետազոտելով անթափանցելի խորքերը, ուր սաղմնավորվում են մարդկային զգացումները, նախքան ծնվելը: Այդ համառ հետազոտությունը հուզում էր նրան, իսկ երիտասարդ աղջկա մասին մշտական մտախոհությունը ասես նրա հոգու առջև բաց էր անում քընքուշ երազների ճանապարհը: Նա Աննետին այլևս չէր կարողանում վանել հիշողությունից, նա իր մեջ մշտապես կրում էր նրա պատկերը. ինչպես մի ժամանակ, երբ կոմսուհին թողել էր նրան, նրա մոտ պահպանվել էր իր արվեստանոցի

պատերի մեջ կոմսուհու ներկայության յուրատեսակ գպացուղությունը:

Հուշերի այդ տիրապետությունից խոռված՝ Օլիվիեն չշընչաց, վեր կենալով.

— Անին հիմարություն արեց ինձ այդպիսի բան ասելով։ Հիմա նրա պատճառով ես պիտի մտածեմ աղջկա մասին։

Ինքն իր մեջ անհանգստացած՝ Օլիվիեն վերադարձակ տուն։ Անկողնում պառկելով նա զգաց, որ քունը չի տանելու իր երակներում տենդագին տաքություն էր հոսում, իսկ սըրտում խմորվում էր երազի ավիշը։ Վախենալով անքնությունից, անքնություն, որ առաջանում է հոգեկան հուզումից, նա փորձեց մի գիրք վերցնել։ Ինչքան անգամ կարճատե մի ընթերցում թմրեցուցիչ միջոց էր ծառայել նրան։ Նա վեր կացավ ու մոտեցավ գրքի պահարանին, որպեսզի ընտրի մի հարմար քնարեր գիրք, բայց նրա միտքը, որ արթուն էր մնացած հակառակ նրա կամքի, ծարավի էր ուժեղ տպավորությունների, և նա դարակներում որոնեց այնպիսի մի գրողի անուն, որ համապատասխաններ նրա տենդագին և սպասողական տրամադրության։ Բալզակը, որին պաշտում էր, ոչինչ չէր ասում նրան։ Նա մերժեց Հյուզոյին, արհամարհեց կամարտինին, որը, սակայն, միշտ հուզել էր նրան, և ազահորեն կպակ Մյուսեին, բոլոր երիտասարդների պոետին։ Նա վերցրեց նրա մի հատորը և որոշեց կարդալ պատահական էջեր։

Երբ նորից պառկեց, զինովի ծարավով սկսեց արբել ոգեշնչված պոետի այդ թեթև տաղերով, պոետ, որ թոշունի նման երգեց կյանքի արշալույսը և, արդեն նրա առավոտյան, շումչն սպառելով, լոեց բիրտ ցերեկվա առջե, պոետ, որ ամենից առաջ կյանքից արբած մարդ էր, և իր արբեցությունը զեզեց սիրո փողային հնչյունների մեջ, որոնք արձագանք են գտնում կրքից խելագարված բոլոր երիտասարդ սրտերում։

Բերտենը դեռ երբեք այսպես չէր հասկացել ֆիդիկական հմայքը այս պոեմների, որոնք հուզում են զգայարանները և հազիվ են խլրտում միտքը։

Աշքերը պահած այդ թրթուն տողերի վրա, նա զգում էր, որ իր հոգին քսան տարեկան է և լի է հույսով, և նա գրեթե ամբողջ հատորը կարդաց պատանեկան արբեցությամբ։

**Ժամը երեքը խփեց, և թերտենը զարմացավ, որ գունը դեռ չի գալիս: Նա վեր կացավ, որպեսզի բաց մնացած պատուհանը փակեր և գիրքը դներ սեղանի վրա՝ սենյակի մեջտեղ. սակայն գիշերային օդի դովությունը մեջքի սուր ցավեր էր տվել, որոնք դեռևս վերադառնում էին, չնայած էքսում ստացած շրային բուժումներին. այդ ցավերը թափանցել էին նրա մեջ, ինչպես հիշեցում, նախազգուշացում, և նա վրդովմունքով դեռ շպրտեց պոետի գիրքը, շշնչալով. «Կորի՛ր, հիմա՛ր ծերուկ»: Ապա նորից պառկեց ու լույսը մարեց:**

Մյուս օրը Օլիվիեն շգնաց կոմսուհու մոտ և նույնիսկ հաստատ որոշեց նրան այցելել երկու օրից ոչ շուտու Բայց ինչ էլ որ աներ, վրձինը վերցներ, դրունելու գնար, թե տնից տուն քարշ գար իր մելամաղձությամբ, ամենուրեք նրան հետապընդում էր այդ երկու կանանց մասին անհանգստացնող միտքը:

Ինքն իրեն արգելելով գնալ նրանց մոտ, Օլիվիեն իրեն սփոփում էր մտածելով նրանց մասին և իր մտքին ու սրտին էր թողնում՝ ուղածին շափի արբենալ նրանց հուշով: Հաճախ, իր միայնությունից առաջացած այդ արտասովոր երազանքների մեջ, երկու դեմքերը, մեկը մյուսից տարբեր, ինչպես նրանց ճանաշել էր, մոտենում էին, ասկա մեկն անցնում էր մյուսի վրա, և նրանք միախառնվում, միաձուլվում էին, կազմելով միայն մեկ մշուշում դեմք, որն արդեն մոր դեմքը չէր, բայց դեռ բոլորովին աղջկա դեմքն էլ չէր. զա մի կնոջ դեմք էր. խելահեղորեն սիրված անցյալում, այժմ, միշտ:

Օլիվիեն սկսում էր իրեն մեղաղրել, որ անձնատուր է լինում այդ սիրային զգացումներին, որոնց ուժն ու վտանգը ոիտակցում էր: Որպեսզի դրանցից խուսափեր, դեն վաներ դըրանք, ազատվեր այդ հմայիչ ու քաղցր երաղից, նա փորձեց իր միտքը ուղղել դեպի այլ խոհեր, խորհրդածության ու մտորման այլ առարկաներ: Զո՞ւր զանքեր: Ինչքան էլ զանում էր իր միտքը հեռու տանել, նա շարունակ վերադառնում էր այն նույն տեղը, ուր հանդիպում էր երիտասարդ շեկ գլխին, որ կարծես դարանակալած սպասում էր նրան: Դա շփոթ ու անխուսափելի տեսիլք էր. նա ծփում էր Օլիվիեի վրա, պտտվում նրա շուրջը և բաց չէր թողնում նրան, փախչելու ինչպիսի հնարքների էլ դիմում էր նա:

Այդ երկու էակների միաձուլման միտքը, որ Օլիվիեին այնքան սաստիկ շփոթեցրել էր այն երեկոյան, երբ նրանք զբունում էին Ռոնսիերի զբոսալգում, նորից էր հառնում նրա հիշողության մեջ, հենց որ նա դադարում էր մտորել ու դատել, և նա աշխատում էր պատկերացնել երկու կանանց և հառկանալ, թե ինչպիսի արտասովոր զգացում էր հուղում իրեն։ Օլիվիեն ասում էր յուրովի. «Մի՛թե Աննետի նկատմամբ իմ հակումը դուրս է գալիս պատշաճության սահմաններից»։ Հետաքննելով իր սիրտը, նա հասկացավ, որ սիրտը տոշորվում է կրքով մի երիտասարդ կնոջ նկատմամբ, որ ուներ Աննետի բոլոր գծերը, բայց Աննետը չէր։ Եվ Օլիվիեն երկշուր կերպով իրեն հանգստացնում էր, մտածելով. «Ոչ, փոքրիկին չեմ սիրում, ես գոհն եմ մոր հետ ունեցած նրա նմանության»։

Սակայն Ռոնսիերում անցկացրած երկու օրերը Օլիվիեի հոգու մեջ առաջվա նման չերմության, երջանկության, արբեցության աղբյուր էին, նա մեկ առ մեկ հիշում էր ամենափոքրիկ մանրամասնությունները և դրանք ըմբոշխնում էր նույնիսկ ավելի, քան այն ժամանակ։ Հետեւելով իր հիշողությունների ընթացքին, նա նորից տեսավ այն ճանապարհը, որով նրանք գնացել էին գերեզմանից վերադառնալիս, աղջկան, որ ծաղիկներ էր քաղում, և հանկարծ հիշեց, որ նրան խոստացել էր շափուղաներից պատրաստված մի կապույտ տերեփուկ, հենց որ վերադառնային Փարիզ։

Օլիվիեի բոլոր որոշումները միանգամից հօգս ցնդեցին, և, այլևս չպայքարելով իր հետ, նա վերցրեց գլխարկն ու դուրս եկավ, հուղումով մտածելով այն հաճույքի մասին, որ պիտի պատճառեր Աննետին։

Երբ Օլիվիեն Գիլուուանների տունը եկավ, ծառան ասաց նրան.

— Տիկինը դուրս է եկել, բայց օրիորդը տանն է։

Օլիվիեն ուրախացավ։

— Հայտնեցեք նրան, որ ուղում եմ նրա հետ խոսել։

Եվ թեթև քայլերով, ասես վախենալով, որ իրեն կլսեն, Օլիվիեն սողոսկեց հյուրասենյակ։

Աննետը ներս մտավ գրեթե անմիջապես հետու

— Բարե ձեզ, սիրելի վարպետ,— ասաց օրիորդը լրջությամբ:

Օլիվիեն ծիծաղեց, սեղմեց աղջկա ձեռքը և կողքին նստեց:

— Գուշակիր, թե ինչու եմ եկել:

Աննետը մի քիչ մտածեց:

— Չդիտեմ:

— Եկել եմ, որ քեզ մայրիկի հետ միասին տանեմ ոսկեբշի մոտ և ընտրենք շափյուղաներից պատրաստված մի կապույտ տերեփուկ, որ քեզ խոստացել եմ Ռոնսիերում:

Օրիորդի դեմքը շողաց երջանկությունից:

— Ո՞—, ասաց նա, — իսկ մայրիկը դուրս է եկել: Բայց նա հիմա կվերադառնաւ: Դուք նրան կսպասեք, այնպես չէ՞»

— Այո, եթե շատ երկար չի տեսի:

— Ո՞, ի՞նչ անշնորհքն եք, շատ երկա՞ր: Չէ որ ես այստեղ մաս Դուք ինձ փոքրիկ աղջիկ եք համարում:

— Ոչ, — ասաց Օլիվիեն, — ոչ այնքան, ինչքան կարծում ես:

Օլիվիեն իր սրտում դուր գալու, կնաճաճո ու սրամիտ լինելու ցանկություն զգաց, ինչպես իր երիտասարդության այնազվարթ օրերին, այնպիսի մի բնադրական ցանկություն, որ սաստիկ գրգռում է հրապուրանքի բոլոր ընդունակությունները, ստիպելով սիրամարդին պոշը բանալ, իսկ բանաստեղծին՝ ոտանագորներ հորինել: Խոսքերն արագ ու թեթև գալիւ էին Օլիվիեի լեզվին, և նա խոսեց, ինչպես գիտեր խոսել այդպիսի պատեհություններին: Աղջիկը, որին փոխանցվել էր այդ տրամադրությունը, նրան պատասխանեց իր մեջ աճող ամբողջ խորամանկությամբ, ամբողջ շարաճճի սրամտությամբ:

Հանկարծ, առարկելով օրիորդի հայտնած ինչ-որ կարծիքի դեմ, Օլիվիեն գոշեց.

— Բայց դուք արդին մի քանի անդամ ինձ ասել եք այդ, իսկ ես պատասխանել եմ ձեղ...

Օրիորդը քրքջալով ընդմիջեց նրան.

— Այդ ի՞նչ է: Դուք այլևս ինձ հետ «զուռ-ով շեք խոսում» Փուք ինձ մայրիկի տեղն եք դնում:

Օլիվիեն կարմրեց, լռեց և ապա թոթովեց.

— Այդ նրա համար է, որ քո մայրն արդեն հարյուր անգամ ինձ ապացուցել է այդ բանը:

Օլիվիեի պերճախոսությունը հանգեց. նա չգիտեր, թե եւ ի՞նչ ասեր, և հիմա վախենում էր, անհասկանալիորեն վառ խենում էր այդ աղջկանից:

— Ահա մայրիկը, — ասաց Աննետը:

Աննետը լսել էր մեծ հյուրասենյակի դռան բացվելը, և Օլիվիեն, շփոթվելով, ասես հանցանքի մեջ բռնվելով, սկսեց բացատրել, որ հանկարծ հիշել էր իր խոստումը և եկել էր: որ երեքով միասին գնային ոսկերչի մոտ:

— Իմ կառքը երկուտեղանի է, — ասաց Օլիվիեն: — Ես կնսում հարադիր նստարանի վրա:

Նրանք մեկնեցին և մի քանի բոպեից հետո եղան Մոնտուրայի խանութում:

Ամբողջ կյանքը անցկացնելով կանանց հետ սերտ հարաբերության մեջ, նկարիչը դիտել, ուսումնասիրել, սիրել էր նրանց, միշտ զբաղվել էր նրանցով, հետազոտել էր նրանց ճաշակները, ճանաչել արդուզարդերը, մոդայի հարցերը, հաճախ նրանց հետ միասին ապրել էր նրանց զգացողությունները. և, մտնելով խանութ, ուր վաճառվում էին կանանց գեղեցկությունը ընդգծող հիանալի ու նուրբ դարդեր, նա միշտ զգում էր դրեթե նույնքան հուզիչ ու թրթուն ուրախություն, որքան զգում էին նրանք: Կանանց նման նա հետաքրքրվում էր ամեն տեսակ պշրուն ոչնչություններով, որոնցով նրանք պճնում են իրենց. կերպասները հրապուրում էին նրա տեսողությունը, ժանյակները դեպի իրենց էին քաշում նրա ձեռքերը, ամենաաննշան նուրբ գեղորները իրենց վրա էին հրավիռում նրա ուշադրությունը: Ոսկերչական խանութների ցուցափեղկերի առջև նա զրեթե կրոնական պատկառանք էր զգում, ինչպես շքեղ հրապուրանքի սրբարանների առջև, իսկ մուգ գույնի մահուդով ծածկված սեղանը, որի վրա ոսկերչի ճարտար մատները շարում են թանկագին շողջողուն քարերը, հատուկ հարգանք էր ներշնչում նրան:

Երբ Օլիվիեն կոմսուհուն ու աղջկան նստեցրեց այդ խըստաշունչ սեղանի առջև, որի վրա նրանք երկուար անբռնազրուակ կերպով ձեռքերը դրին, նա բացատրեց, թե ինչ էր իր սւպածը. և Օլիվիեին ցույց տվին ծաղիկների նմուշները

Ապա նրանց առջեւ շափյուղաներ շարեցին, որոնցից հարկավոր էր չորսը ընտրել: Դա երկար տևեց: Երկու կանայք եղունգի ծայրով քարերը շուր ու մուռ էին տալիս մահուղի վրա, ապա զգուշորեն առնում էին իրենց ձեռքը, նայում էին լույսի տակ, ուսումնասիրում էին խոհուն ու կրքու ուշադրությամբ: Երբ ընտրված շափյուղաները մի կողմ դրվեցին, հարկ եղավ երեք զմբուխո՞ւ տերեների համար և շատ փոքր մի բրիլյանտ, որ շողալու էր ծաղկի կենտրոնում, ցողի կաթիլի նման:

Այն ժամանակ Օլիվիեն, որ արբշիու էր նվեր անելու ուրախությունից, ասաց կոմսուհուն.

— Խնդրեմ, ընտրեցիք երկու մատանի, դրանով դուք ինձ հաճույք կպատճառեր:

— Ե՞ս

— Այո՛: Մեկը ձեղ համար, մյուսը՝ Աննետի: Ինձ թույլ տվեք ձեզ անել այս փոքրիկ նվերները ի հիշատակ այն երկու օրերի, որ անցկացրինք Ռոնսիերում:

Կոմսուհին մերժեց: Օլիվիեն պնդեց: Մկավեց մի երկար վեճ, ընդդիմաբանությունների ու փաստարկությունների պայքար, որից Օլիվիեն, վերջ ի վերջո, թեև ոչ առանց դժվարության, հաղթող դուրս եկավ:

Մատանիները բերին, ոմանք հաղվագյուտ, հատուկ տուփերի մեջ, ուրիշներ, բայ տեսակների ջոկված, մեծ քառակուսի տուփերի մեջ՝ թավշի վրա շարված, շողում էին իրենց քարերով: Նկարիշը նստեց երկու կանանց միջեւ և նույնպիսի բուռն հետաքրքրությամբ սկսեց զննել ոսկե մատանիները, մեկ առ մեկ դուրս հանելով իրենց անձուկ պատյաններից, որոնց մեջ էին դրված դրանք:

Նա դրանք դնում էր իր առջեւ վաճառասեղանի մահուղի վրա երկու կուլտերով, մի կուլտը՝ առաջին հայացքից մերժվածները, մյուսը՝ որոնցից հարկավոր էր ընտրել:

Ժամանակն աննկատելիորեն ու մեղմորեն անցնում էր ընտրանքի այդ հաճելի դրաղումով, աշխարհի ամենազբավիշ քավականությամբ, նույնքան հետաքրքրական ու բազմազան: որքան թատրոնը, հուղիչ, գրեթե զգայական, մեծագույն վայելքը կնոշ սրտի համար:

Ապա համեմատեցին, վիճեցին, և որոշ տատանումներից հետո երեք դատավորների ընտրությունը կանգ առավ ոսկե օձիկի վրա, որի բարակ բերանի և գալարված պոչի միջև կարմի գեղեցիկ սուտակի:

Օլիվիեն վեր կացավ, ուրախությունից շողալով:

— Իմ կառքը թողնում եմ ձեզ, — ասաց նաւ — Ես տեղունեմ գնալու, ևս զնում եմ:

Թայց Աննետը մորը խնդրեց, որ այս գեղեցիկ եղանակին ստրով տուն վերադառնան: Կոմսուհին համաձայնեց և, շնորհակալություն հայտնելով Բերտենին, զնաց աղջկա հետ:

Որոշ ժամանակ երկու կանայք քայլեցին լուս ու մունջ, ուրախանալով իրենց ստացած նվերներով, ապա սկսեցին խոսել ամեն տեսակ թանկարժեք զարդերի մասին, որոնք հենց նոր տիսել ու շոշափել էին: Նրանց գիտակցության մեջ գեռ մնացել էր ինչ-որ փայլի, զնզոցի, ուրախության տպավորություն: Նրանք զնում էին արագ, ամբոխի միջով, որը ամառ ժամանակ, երեկոյան ժամը հինգին, միշտ խոնվում է մայթերի վրա: Տղամարդիկ նայում էին Աննետին և, կողքից անցնելով, հիացմունքի խոսքեր էին շշնջում: Նրանց սպի օրվանից, այն օրվանից, երբ սկ գույնը այնպես վառ կերպով ընդդեմ էր Աննետի գեղեցկությունը, կոմսուհին նրա հետ առաջին անգամ էր դուրս գալիս Փարիզում. և ի տիս այդ փողոցային հաջողության, ընդհանուր ուշադրության, զմայլանքի շշունջների, այդ շողոքորթիշ հուզմունքի փոքրիկ ծփանքի, որ սիրուն կինը թողնում է իր ետև, անցնելով տղամարդկանց բազմության միջով, կոմսուհին զգում էր, որ իր սիրու սեղմում է, որ նրան ձնշում է այնպիսի մի ծանր վիշտ, ինչպիսին այն երեկոյան, իր հյուրասինյակում, երբ աղջկան համեմատում էին իր սեփական պատկերի հետ: Կոմսուհին ակամա հետեւում էր Աննետին ուղղված այդ հայացքներին, դրանք զգում էր գեռ հեռվից, երբ, սահելով իր գեմքի վրա և շմայով այնտեղ, նրանք հանկարծ կանգ էին առնում իր ուղեկցունուշեկ գլխի վրա: Նա հայացքների մեջ գուշակում, տեսնում էր հարգանքի վայրկենական ու լոին տուրքը այգ ժաղկուն շահելությանը, այդ թարմության հրապուրիշ հմայքին և մտածում էր. «Ես էլ նրա նման այդպես լավ էի, եթե ոչ ավելի

զավաճ Բայց հանկարծ նա հիշեց Օլիվիեին, և, ինչպես Ռոն-  
սիերում, Փախչելու տիրական ցանկությամբ համակվեց:

Կոմսուհին այլնս շէր ուզում մնալ այդ պայծառ լուսի  
տակ, այդ հոսուն ամբոխի մեջ, աշքերի առաջ այդ բոլոր  
ողամարգկանց, որոնք իրեն շէին նայում: Արդեն հեռու էին  
այն օրերը, երբ նա ինքն էր առիթ փնտրում աղջկա հետ հա-  
մեմատվելու: Բայց այժմ անցորդներից ո՞վ կմտածեր համե-  
մատել նրանց: Գուցե միայն մի մարդ մտածել էր այդ մասին  
սոկերշական խանութում: Օլիվիե՞ն: Օ՛, ի՞նչ մտատանջու-  
թյուն: Հնարավո՞ր էր, որ նա այդ համեմատությունը միշտ  
շունենար իր մտքի մեջ: Իհարկե, նրանց միասին տեսնելով:  
Օլիվիեն շէր կարող շմտածել և շհշել այն ժամանակվա մա-  
սին, երբ կոմսուհին մտնում էր իր մոտ այնքան թարմ, սի-  
րուն, իր սիրույն վստահ:

— Ես ինձ վատ եմ զգում,—ասաց կոմսուհին,—մի կառք  
վերցնենք, զավակս:

Աննետը անհանգատացած հարցրեց:

— Ի՞նչ ունես, մայրիկ:

— Թշինչ, դու գիտես, որ քո տատիկի մահից հետո ես  
հաճախ ունենում եմ թուլության այսպիսի նոպաներ:

## V

Սկսուն գաղափարները այնպես համառորեն են կրծում,  
ինչպես անրուժելի հիվանդությունները: Մի անգամ մտնելով  
հոգու մեջ, նրանք ծվատում են այն, նրան շեն թողնում որեւէ  
քանի մասին մտածել, որևէ քանով հետաքրքրվել: Կոմսուհին,  
ինչ էլ աներ տանը կամ այլուր, մենակ կամ մարդկանց մեջ,  
արդեն շէր կարողանում իրենից վանել այն միտքը, որ իրեն  
տիրել էր, երբ վերագառնում էր աղջկա հետ. «Հնարավո՞ր է,  
որ Օլիվիեն, որ իրենց տեսնում է զրեթե ամեն օր, անընդհատ  
պաշարված լիներ իրենց համեմատելու մտքով»:

Անշտաշտ, Օլիվիեն պետք է համեմատեր անգիտակցաբար,  
անդադար. քանի որ նրան հետապնդում էր ոչ մի բուլե շմո-  
ռացվող այդ նմանությունը, որը առավել ևս շեշտվել էր այն  
օրից, երբ Աննետի ձայնն ու շարժուձևերը սկսել էին նմանվել

Տոր ձայնին ու շարժուձեկերին։ Ամեն անգամ, երբ Օլիվիեն  
ներս էր մտնում, կոմսուհին անմիջապես սկսում էր մտածել  
այդ զուգադրության մասին, կարդում ու գուշտիում էր այդ  
նկարչի հայացքի մեջ, քննում էր իր սրտի ու մտքի մեջ։ Ծզ  
իրեն տանջում էր թաքնվելու, շքանալու, այլևս իր աղջկա հետ  
չերեալու պահանջը։

Կոմսուհին տանջվում էր և նրանից, որ իր սեփական տանք  
իրեն օտար էր զբում։ Այն Երեկոյան, երբ բոլորը նայում էին  
էր նկարի տակ կանգնած Աննետին, կոմսուհին իրեն մի քիչ  
վշտացած էր զգում, և այդ զգացումը գնալով իր մեջ աճուռ  
էր և երբեմն հոսահատության էր հասցնում իրեն։ Նա շա-  
ռունակ իրեն միզարում էր, որ ազատվելու ներքին պահանչ  
էր զգում, որ ուզում էր թաքուն կերպով տնից հեռացնել  
աղջկան, ինչպես նեղացուցիչ ու անցանելալի հյուրի, և նա  
մնդիտակից ճարակությամբ աշխատում էր այդ ուղղությամբ,  
սորից ցանկանալով պայքարել և, չնայած ամեն ինչի, պահել  
ու բռած մարդուն։

Չկարողանալով շտապեցնել Աննետի ամուսնությունը, որ  
գեռ մի քիչ հետաձգվում էր սգի պատճառով, կոմսուհին վախ  
էր զգում, անհասկանալի ու ձնշող վախ, չինի թե այդ ծրա-  
գիրը խորտակվեր որևէ դիպվածի պատճառով, և, ինքեւ էլ  
գրեթե շնկատելով, աշխատում էր աղջկա սրտում հակուռ  
առաջ բերել դեպի մարկիզը։

Այն բոլոր ճարտար դիվանագիտությունը, որ կոմսուհին  
վաղուց ի վեր կիրառում էր Օլիվիեին պահելու համար, նրա  
ժողովությունը էր նոր ձև, դարձել էր ավելի նուրբ, ավելի թա-  
քուն և ծառայել էր մի նպատակի, մերձեցնել երկու երիտա-  
սարդներին, միաժամանակ թույլ շտալով երկու տղամարդ-  
կանց հանդիպումը միմյանց։

Նկարիչը, սովոր լինելով առավոտյան ժամերին աշխա-  
տել, ամենեին շեր նախաճաշում տնից գուրս և սովորաբար  
բարեկամներին էր նվիրում իր երեկոները, ուստի կոմսուհին  
հաճախ նախաճաշի էր հրավիրում մարկիզին։ Մարկիզը գա-  
լիս էր ձիով կատարած զբոսանքից և իր հետ կենդանություն  
էր բերում, ինչպես առավոտյան օդի հոսանք։ Նա դվարի  
կերպով խոսում էր ամեն տեսակ աշխարհիկ նորությունների

**Տասին,** որոնք ասես սակառնում են ամեն օր աշնանային եղանակի սկզբում՝ ձիով զբոսնող փարիղան ազնվականության վրա։ Աննետը հաճուկքով լսում էր մարկիզին, բավականություն էր ստանում օրվա դեպքերից, որոնք մարկիզը Աննետին մատուցում էր դեռ թարմ, ասես ծածկված շիկության փայլով։ Նրանց միջև հաստատվել էին երիտասարդական խորմություն, չերմ, բարեկամական հարաբերություններ, որոնք, բնականաբար, ավելի սերտ էին դառնում ձիերի հանգեցի իրենց տածած ընդհանուր, կրքոտ սիրո պատճառով։ Երբ մարկիզը մեկնում էր, կոմսուհին ու կոմսը սկսում էին ճարտարորեն գովաբանել նրան և նրա մասին խոսում էին այնպես, ինչպես հարկավոր էր խոսել, որպեսզի աղջիկը հասկանար, որ միայն իրենից է կախված մարկիզի հետ ամուսնալը, եթե մարկիզը իրեն գուր է գալիս։

Աննետը շատ շուտով հասկացավ այդ և հոգեկան պարզությամբ դատեց, որ, իհարկե, կամուսնանա այդ սիրուն երիտասարդի հետ, որը ուրիշ շատ բավականությունների հետ իրեն կտա և այն, ինչ ինքը գերազանում է բոլորից, — ամեն առավոտ նրա հետ կողք կողքի արշավել գտարյուն նժոյժի վրա։

Մի օր, իրար ձեռք սեղմելուց ու ժպտալուց հետո, նրանք ամենաբնական ձեռվ նշանածներ դարձան և այդ ամուսնության մասին խոսեցին, ինչպես վաղուց վճռված գործի մասին։ Այն ժամանակ մարկիզը սկսեց ընծաներ բերել, իսկ դքսուհին Աննետի հետ սկսեց վերաբերվել, ինչպես հարազատ աղջկա հետ։ Եվ այսպես, ընդհանուր համաձայնությամբ, այդ գործը եփվում էր մտերմության կրակի վրա՝ ցերեկվա խաղաղ ժամերին։ Իսկ երեկոները մարկիզը հաղվալեց էր գալիս բաղմաթիվ զբաղումների, ծանոթությունների, ծառայությունների ու պարտականությունների պատճառով։

Այն ժամանակ Օլիվիեի հերթն էր գալիս։ Նա կանոնավորապես շաբաթը մեկ անգամ ճաշում էր իր բարեկամ Գիլռուաների մոտ, ինչպես նաև առաջվա նման հանկարծ երեսում էր մի բաժակ թեյ ընդունելու երեկոյան ժամը տասի ու կեսպիշերի միջև։

Հենց որ ներս էր մտնում, կոմսուհին սկսում էր հետեւ

նրան, ցանկանալով իմանալ, թե ինչ է կատարվում նրա սըբառում: Նրա ամեն մի հայացքը, ամեն մի շարժումը կոմսութիւն անմիջապես մեկնաբանում էր յուրովի և տանջվում էր մէտքից. «Անկարելի է, որ Օլիվիեն չսիրի նրան, մեզ տեսնելով մեկը մյուսի կողքին»:

Օլիվիեն նույնպես նվերներ էր բերում: Շաբաթ շէր անցանում, որ նա շերեար երկու փոքրիկ ծրարներով, նրանցից մեկը տալով մորք, մյուսը՝ աղջկան. և երբ կոմսուհին բաց էր անում տուփերը, որոնց պարունակությունը հաճախ թանկարժեք դեք դարդեր էին լինում, նրա սիրտը սեղմվում էր: Նա լավ էր ճանաշում նվեր անելու այդ ցանկությունը, որ նա, որպես կին, երբեք շէր կարողացել գոհացնել, ինչ-որ բան բերելու հաճույք պատճառելու, մեկի համար մի բան գնելու կամ մանր գարզեղենների խանութում ճաշակով մի բան գտնելու այդ ցանկությունը:

Մի ժամանակ նկարիչը արդեն ապրել էր այդ ճգնաժամք, և կոմսուհին բազմիցս տեսել էր, թե ինչպես նա ներս էր մտնում, նույնպես ժպտալով և նույնպես ձեռքերի մեջ մի փոքրիկ ծրար բռնելով: Ապա այդ մեղմացել էր, իսկ հիմա նորից էր սկսվում: Ո՞ւմ համար, կոմսուհին ոչ մի կասկած չուներ: Ոչ իր համար:

Օլիվիեն հոգնած, նիհարած էր երևում: Կոմսուհին եղբակացրեց, որ նա տանջվում էր: Կոմսուհին նրա տեսքը, վարպետական համեմատում էր մարկիզի վարվելակերպի հետ, որի վրա նույնանու սկսվում էր ազդել Աննետի հմայքը: Դա միևնույնը շէր: պարոն Ֆարանդալը սիրահարված էր, իսկ Օլիվիեն Բերտենը սիրում էր: Այսպես էր գոնե կոմսուհին մտածում իր մտատանջության ժամերին, թեև հետո, հանգստացման պահերին, նորից հույս ուներ, որ սիսալվում է:

Ո՞ւ, ինչպես հաճախ, գտնվելով Օլիվիեի հետ միասին, կոմսուհին պատրաստ էր հարցաքննելու նրան, խնդրելու, աղաշելու, որ նա իրեն ամեն ինչ ասեր, ամեն ինչ խոստովաներ, ոչինչ շծածեր: Կոմսուհին կգերադասեր արտասվել, իմանալով ամբողջ ճշմարտությունը, քան այդպես տանջվել կասկածներով, չկարողանալով կարդալ այդ փակ սրտում, ուղղվում էր, որ մի ուրիշ սեր է հասունանում:

Այդ սիրաց իր կյանքից թանկ էր. կոմսուհին արդեն ասաներկու տարի է փայփայել, զնրմացրել, կենդանացրել էր սրան իր սիրով, վատահ էր նրան և կարծում էր, որ վերջնաշանապես տիրապետել էր նրան, հնագանդեցրել ու հնթարկել էր իրեն. և ահա, հիմա, այդ սիրաց, որ կոմսուհին էրքու հերպով իրեն նվիրված էր համարում մինչև իրենց կյանքի վերջը, խույս էր տալիս իրենից անըբռնելի, ահավոր, հրեշտավոր ճակատագրի ուժով։ Այո, նա միանգամբ փակվել էր, ինչ-որ գաղտնիք ծածկելով իր մեջ կոմսուհին այլևս չէր կարող բարեկամական խոսքով թափանցել նրա մեջ և պատրսպարվել այնտեղ, իբրև հուսալի ապաստան, որ բաց է միայն իր համար։ Ի՞նչ օգուտ սիրել և անվերապահութեն իրեն նվիրել, եթե նա, որին մարդ նվիրել է իր սմբռղջ էռլթյունը, իր ամբողջ կյանքը, այն ամենը, ինչ ունի այս աշխալառում, այսպես հանկարծ խույս է տալիս իրենից, որովհետեւ իրեն գուր է եկել ուրիշ մի գեմք, և մի քանի օրում դառնում է գրեթե օտար:

Օտարու նա՞, Օլիվիե՞ն։ Նա խոսում էր կոմսուհու հետ, ինչպես առաջ, նույն բառերով, նույն ձայնով, նույն տոնով։ Եվ սակայն նրանց միջև ինչ-որ անբացատրելի, անորսալի, անհաղթահարելի բան կար, ինչ-որ ոչինչ բան, որ սուագաստը հեռու է տանում, երբ քամին փոխվում է։

Օլիվիեն իրոք հեռանում էր, ամեն օր մի քիչ ավելի էր հեռանում կոմսուհուց, յուրաքանչյուր հայացքով, որ նա նետում էր Աննետի վրա։ Օլիվիեն չէր փորձում թափանցել իր սիրու։ Նա, իհարկե, զգում էր սիրո այդ խմորումը, այդ անհաղթահարելի ձգուումը, բայց չէր ուզում հասկանալ և հանձնվում էր դեպքերին, կյանքի շնախատեսված պատահարներին։

Հիմա նրա միակ հոգն էին ճաշերն ու երեկոները այդ երկու կանանց շրջանում, որոնք իրենց սգի պատճառով կտրվել էին բարձր հասարակության կյանքից։ Նրանց մոտ հանդիպելով միայն անտարբեր մարդկանց, ամենից հաճախ կորբելներին և Մյուզադիեին, Օլիվիեն երեակայում էր, որ ինքը աշխարհում գրեթե մենակ է կոմսուհու ու աղջկա հետ, և որովհետեւ այլևս բոլորովին չէր տեսնում դքսուհուն ու մար-

կիզին, որոնց նվիրված էին առավոտվա ու ցերեկվա ժամեար, նա աշխատում էր մոռանալ նրանց մասին, ենթադրելով, որ ամուսնությունը հետաձգված է անորոշ ժամանակով:

Բացի դրանից, Աննետը Օլիվիեի ներկայությամբ երբեք էր խոսում պարոն դր Ֆարանդալի մասին, Դա մի տեսակ բնագդական ամոթխածություն էր, թե, գուցե, կանացի սրտի ինչ-որ թաքան ներշնչում, որը նրան թույլ է աւալիս գուշակելու այն, ինչ նա չգիտե:

Շաբաթներն անցնում էին շարաթների ետևից, ոչինչ չփախելով այդ կյանքում. աշունը եկել էր, և պառկամենտական հստաշրջանը բացվել էր սովորականից շուտ, քաղաքական տագնապալի դրության \* հետևանքով:

Բացման օրը կոմս դը Գիլռուսն Աննետին և իր մոտ նախաճաշած գքսուհի դը Մորտմենին ու մարկիզին պետք է տաներ պառկամենտի նիստին: Կոմսուհին, գլակվելով հետք-հետե աճող իր վշտի մեջ, հայտարարել էր, որ ինքը կմնա տանը:

Վեր կենալով սեղանից, սուրճը խմեցին մեծ հյուրասինյակում. բոլորի տրամադրությունն էլ լավ էր: Կոմսը, ուրախանալով պառկամենտական աշխատանքների վերսկսումից, որոնք նրա միակ հաճույքն էին կազմում, խելամտորեն խոսեց ներկա կացության և հանրապետության տպրած դժվարությունների մասին. մարկիզը, որ հաստատակես սիրահարվել էր, հոանդով կրկնում էր նրան, աշքերը շհեռացնելով Աննետից, իսկ գքսուհին գրեթե հավասարապես գոհ էր և՝ իր եղբորորդու զգացումից, և՝ կառավարության ծանր դրությունից: Հյուրասինյակը տաք էր ամառվանից հետո առաջին անգամ վառված կալորիֆերներից, ինչպես նաև պաստառներից ու գորգերից, և զգացվում էր թառամած ծաղիկների բուրմունքը: Այդ փակ սենյակում, ուր սուրճը նույնպես տարածել էր իր անուշ բուրմունքը, ինչ-որ մտերմիկ, ընտանի, հաճելիք բան կար: Հանկարծ դուռը բացվեց և ներս մտավ Օլիվիե: Բերտենը:

\* Նկատի ունի 1883 թվականի աշնանը Ֆրանսիայի ներքին քաղաքական հակասությունների սրումը, որի հետևանքով երրորդ հանրապետության գրությունը դարձավ երերուս:

Նա կանգնեց շեմի վրա, այնպես զարմացած, որ վարանում էր ներս մտնել, զարմացած ինչպես այն խարված ամուսինը, որ տեսնում է իր կնոջ հանցանքը, նրան համակել էր այնպիսի մի շփոթ բարկություն և այնպիսի հուզում, որ հասկացավ, թե ինչպես սերը կրծում էր իր սիրտը: Այն, ինչ ծածկել էին նրանից, և այն, ինչ ինքը ծածկել էր իրենից: Նրան պարզ դարձավ, երբ տեսավ մարկիզին, որ տեղավորված էր այդ տանը, ինչպես փեսացու:

Հուսահատության մի նոպայի ժամանակ Օլիվիեն հասկացավ այն ամենը, ինչ չէր ուզում իմանալ, և այն ամենը, ինչի մասին չէին համարձակվում նրան ասել: Նա իրեն հարց շովեց, թե ինչո՞ւ իրենից ծածկել էին ամուսնության այդ բոլոր պատրաստությունները: Նա գուշակեց այդ, և նրա աշքերը, որոնք խիստ արտահայտություն էին ստացել, հանդիպեցին կոմսուհին աշքերին. կոմսուհին կարմրել էր: Նրանք հասկացան միմյանց:

Երբ Օլիվիեն նստեց, բոլորը լռեցին մի քանի րոպե, քանի որ նրա անսպասելի մուտքը ջլատել էր ընդհանուրի բարձր տրամադրությունը. ապա դքսուհին սկսեց խոսել նրա հետ և նա պատասխանեց ընդհատ, հանկարծ փոխված, անսովոր հնչող ձայնով:

Նայելով այդ մարդկանց, որոնք նորից էին սկսել զրուցել Օլիվիեն մտածում էր. «Նրանք ինձ խարեցին. Նրանք ինձ կհատուցեն դրա համար»: Նա հատկապես զայրացել էր կոմսուհու և Աննետի վրա, որոնց անմեղ ձեանալը հանկարծ իրեն հասկանալի դարձավ:

Կոմսը, նայելով պատի ժամացուցին, գոշեց:

— Օ՛, օ՛, գնալու ժամանակն է:

Ապա դիմեց նկարչին.

— Մենք գնում ենք պառամենատական նստաշրջանի բացանը: Միայն կինս է մնում տանը: Չէի՞ք ցանկանա մեղադեկցել: Դուք ինձ մեծ հաճույք կպատճառեիք:

- Օլիվիեն շորությամբ պատասխանեց.

— Ո՛չ, շնորհակալ եմ: Զեր պալատը ինձ չի հրապուրում:

Այն ժամանակ Աննետը մոտեցավ Օլիվիեին և զվարթ տեսով ասաց.

— Օ՛, եկեք, սիրելի վարպետ: Ես վստահ եմ, որ դու  
մեզ ավելի կուրախացնեք, քան գեղութատները:

— Ո՛չ: Դուք առանց ինձ էլ կարող եք ուրախանալ:  
Կուտահետվ, որ Օլիվիեն գժգոհ է ու վշտացած, Աննետը  
պնդեց, ուզելով նրան իր համակրանքը արտահայտել:

— Այո, եկեք, պարոն նկարից վստահացնում եմ ձեզ, ու  
ես չեմ կարող յոլա գնալ առանց ձեզ:

Օլիվիեի բերանից մի քանի բառեր դուրս թռան և այնպես  
ընդուած, որ նա չկարողացավ ոչ պահել դրանք, ոչ էլ մեղ-  
մացնել նրանց խիստ շեշտը:

— Ի՞նչ: Դուք յոլա կդնաք առանց ինձ, ինչպիս ուրիշներ:  
Մի քիչ գարմացած Օլիվիեի տոնից, Աննետը բացականչեց:

— Ահա! թե ինչ: Նա նորից դադարեց «դու-ով» խոսեց  
ինձ հետ:

Օլիվիեի շրջների վրա խաղաց հոգու ամբողջ տվյալանու-  
քը մատնող բռնազրութիկ մի ժպիտ: և նա ասաց, թեթևակի՞  
խոնարհվելով:

— Զէ որ մի օր չէ մի օր ես պետք է վարժվեմ դրան:

— Ինչո՞ւ:

— Որովհետև դուք կամուսնանաք, և ձեր ամուսինը, ով էլ  
լինի, իրավացիորեն անտեղի կդտնի «դու-ով» իմ խոսելը:  
Կոմսուհին շտապեց ասել.

— Առաջմ դրա մասին շխոսենք: Բայց եռ հույս ունեմ,  
որ Աննետը չի ամուսնանա այնպիսի մանրախնդիր մարդու  
հետ, որ նա սկսի վիրավորվել հին բարեկամի այդպիսի ըն-  
տանեվարության վրա:

Կոմսը շտապեց ասել.

— Գնա՞նք, գնա՞նք: Կուշանա՞նք:

Նրանք, ովքեր կոմսի հետ էին գնալու, վեր կացան ու  
դուրս եկան սովորական ձեռքսեղմումներից ու համրույրնե-  
րից հետո, որ դրսուհին, կոմսուհին և Աննետը փոխանակու-  
էին ամեն հանդիպման և բաժանման ժամանակ:

Կոմսուհին ու Օլիվիեն մնացին մենակ, փակված դռան  
վարագույրների ետև կանգնած:

— Նստեցեք, իմ բարեկամ,— ասաց կոմսուհին սիրալի-  
րությամբ:

Թայց Օլիվիեն պատասխանեց գրեթե բրտորեն.

— Ո՞ւ, շնորհակալ եմ, ես էլ եմ զնում:

Կոմսուհին աղերսագին շշնչաց,

— Ռ', ինչո՞ւ

— Որովհետեւ հրմա, երեսմ է, իմ ժամանակը չէ: Խնդրում էմ ներեք, որ ես եկել եմ առանց իմաց տալու

— Ի՞նչ է պատահել ձեզ, Օլիվիեն:

— Ոչինչ: Ես միայն ցավում եմ, որ խանգարեցի ձեր ֆրագրած ուրախ զբոսանքը:

Կոմսուհին բռնեց Օլիվիենի ձեռքից:

— Ի՞նչ եք ուզում ասեք: Նրանց գնալու ժամանակն էր, նրանք գնացին ներկա գտնվելու պատճմենու բացմանը: Իսկ ես մնում եմ տանը: Զեզ, ընդհակառակը, ինչոր մի բան ներշնչել է այստեղ դալ այսօր, երբ ես մենակ եմ:

Օլիվիեն ծիծաղեց:

— Ներշնչել է, այս, ներշնչել:

Կոմսուհին բռնեց Օլիվիենի երկու դաստակներից և ուղիգ շայելով նրա աշքերին, շատ ցած ձայնով շշնչաց:

— Խոստովանեցեք, որ դուք սիրում եք նրան:

Օլիվիեն ետ քաշեց ձեռքերը, այլևս չկարողանալով զսպել իր ջղագրգոռությունը:

— Բայց դուք գժվել եք այդ դաղափարով:

Կոմսուհին նորից բռնեց Օլիվիենի բազուկներից և, մատներով կալչելով թեզանիքներին, ազանց նրան:

— Օլիվիեն, խոստովանեցեք, խոստովանեցեք: Ես ուզում եմ հաստատապես իմանալ, ես վստահ եմ դրանում, բայց ես ուզում եմ հաստատապես իմանալ: Ես ուզում եմ... Ռ', բայք շեք հասկանում, թի ինչ դարձավ իմ կյանքը:

Օլիվիեն թոքվեց ուսերը:

— Ի՞նչ եք ուզում, որ անեմ: Ես ի՞նչ հանցանք ունեմ. Ֆիք դուք կորցնում եք ձեր գլուխությունը:

Կոմսուհին բայց չթողեց Օլիվիենին և բաշեց դեպի մյուս հյուրասենյակը, որտեղ նրանց չէին կարող լսել: Կաղչելով նրա բաճկոնի փեշերին, կոմսուհին հևալով քաշեց նրան: Օլիվիենին տանելով մինչև կլոր բազմոցիկը, կոմսուհին նրան ստիպեց նստել, և ինքն էլ նստեց նրա կողքին:

— Օլիվիե, իմ բարեկամ, իմ միակ բարեկամ, խնդրում ամ ձեզ, ասացեք ինձ, որ դուք սիրում եք նրան։ Ես այդ գիշեամ, զգում եմ ձեր յուրաքանչյուր արարքի մեջ, շեմ կարող կասկածել դրանում, կմեռնեմ դրանից, բայց ուզում եմ այդ հմանալ ձեր բերանից։

Որովհետև Օլիվիեն դեռ առարկում էր, կոմսուհին ընկապ որա ծնկների առջե։ Նրա ձայնը խոպոտել էր։

— Օ՛, իմ բարեկամ, իմ բարեկամ, իմ միակ բարեկամ, ձի՞շու է, որ դուք սիրում եք նրան։

Օլիվիեն գոշեց, փորձելով վերիացնել կոմսուհուն։

— Բայց ո՛չ ո՛չ։ Ձեզ երդվում եմ, որ ո՛չ

Կոմսուհին ձեռքով փակեց Օլիվիեի բերանը և թոթովեց։

— Օ՛, մի՛ ստեք։ Ես սաստիկ տանջվում եմ։

Ապա, գլուխը դնելով Օլիվիեի ծնկների վրա, հեծկլտաց։

Հիմա Օլիվիեն տեսնում էր միայն կոմսուհու ծոծրակը, չեկ մազերի թափ կուլտը, որի մեջ երեսում էին շատ սովորակ ձագեր, և նա անհուն կարենեցությամբ, անհուն վշտով համակվնց։

Ձեռքով բռնելով այդ ծանր վարսերի գանգվածը, Օլիվիեն բռնությամբ բարձրացրեց, գեպի իրեն քաշեց կոմսուհու խելագարկած աշքերով դեմքը, ուր արցունքի կաթիլներ էին նրեւուն։ Ապա սկսեց համբուրել նրա արտասվակալած աշքեր, կրկնելով։

— Անի՛, Անի՛։ Իմ սիրելի՛, իմ սիրելի՛ Անի։

Փորձելով ժաղտաւ, կոմսուհին ցավից տանջվող երիխայի ձայնով ասում էր։

— Օ՛, իմ բարեկամ, ինձ միայն ասացեք, որ դուք դեռ էի քիշ սիրում եք ինձ։

Օլիվիեն նորից սկսեց համբուրել նրան։

— Այո, ես սիրում եմ ձեզ, իմ սիրելի Անի։

Կոմսուհին վեր կացավ, Օլիվիեի կողքին նստեց, նրա ձեռքերը իր ձեռքերի մեջ առավ, նրան նայեց և քնքշորեն ասաց։

— Բայց արդեն վաղուց մենք սիրում ենք իրար։ Մեր սերը շպետք է այսպես վերջանար։

Օլիվիեն կոմսուհուն կրծքին սեղմելով հարցրեց։

— Իսկ ինչո՞ւ պետք է վերջանար։

— Որովհետեւ ես պառավ եմ, և որովհետեւ Աննետը շափազանց նման է նրան, ինչ ես եղել եմ, երբ դուք ինձ ճանաշեցիք:

Այն ժամանակ Օլիվիեն ձեռքով փակեց այդ ցավագին բերանը և ասաց.

— Նորից հնդրում եմ, այլևս մի խոսեք դրա մասին: Երդվում եմ ձեզ, որ դուք սխալվում եք:

Կոմսուհին կրկնեց.

— Միայն թե դուք գոնե մի քիչ սիրեիք ինձ:

Օլիվիեն նորից ասաց.

— Այո, ես սիրում եմ ձեզ:

Ապա նրանք երկար նստեցին առանց խոսելու, մեկը մշուսի ձեռքից բռնած, սաստիկ հուզված ու սաստիկ տիրած: Վերջապես կոմսուհին լուսթյունը խզեց, շշնչալով.

— Օ՛, ուրախ շնորինի այն օրերը, որ զեռ ինձ մնում են ապրելու:

— Ես կաշխատեմ ուրախացնել:

Մայրամուտին նախորդող ամպամած երկնքի ստվերը տարածվում էր հյուրասենյակում, և աշնանային երեկոյի մոխրագույն մշուշը աստիճանաբար ծածկում էր այն:

Պատի ժամացույցը հնչեց:

— Մենք արդեն վաղուց ենք նստած այստեղ, — ասաց կոմսուհին: — Դուք պետք է գնաք, որովհետեւ կարող են գալ, իսկ մենք հուզված ենք:

Օլիվիեն վեր կացավ, կոմսուհուն գրկեց, կիսաբաց բերանով համբուրեց, ինչպես մի ժամանակ, և նրանք, ինչպես ամուսիններ, թե թերի մտած անցան երկու հյուրասենյակներով:

— Գնաք բարով, իմ բարեկամ:

— Մնաք բարով, իմ բարեկամուհի:

Եվ դուն վարագույրը իշավլ Օլիվիեի ետևից:

Օլիվիեն սանդուղքից իշավլ, շուռ եկավ դեպի Մադլեն եկեղեցին և սկսեց քայլել, շիմանալով ինչ է անում, ասես շշմել էր հարվածից, զգալով, որ ոտները թուկանում են, իսկ սիրտը այրվում ու բարախում է, կարծես կրծքի մեջ մի այրվող ծվեն է շարժվում: Երկու կամ երեք, կամ գուցե շորս ժամ նա

գնաց առաջ, այնպիսի հոգեկան վհատության ու ֆիզիկական ուժասպառության մեջ, որ նրա ուժը բավականանում էր միայն ոտները շարժելու Ապա վերադարձավ տուն խորհրդածելու համար:

Եվ այսպես, նա սիրում էր այդ աղջկան: Հիմա նա համականում էր այն ամենը, ինչ զգացիլ էր այդ աղջկա կողքին, Մոնսոյի այգում զրոսնելու օրվանից, երբ նրանից լսել էր հնչյունը մի ձայնի, որ հազիվ էր ճանաշել, այն ձայնի, որ մի ժամանակ արթնացրել էր իր սիրտը. Օլիվիեն հասկանում էր իր մեջ դեռ բոլորովին շհանգած, դեռ չսառած սիրո այդ գանգաղ, անխուսափելի վերածնությունը, որ համառորեն չէր ուզում խոստովանել:

Ի՞նչ աներ Օլիվիեն: Ի՞նչ կարող էր անելու երբ Աննետը կամուսնանա, Օլիվիեն կխուսափի նրա հետ հաճախակի տեսակցելուց, ահա բոլորը: Իսկ մինչ այդ նա կշարունակի հաճախել այդ տունը, որպեսզի ոչ ոք ոչինչ շկասկածի, բոլորից ծածկելով իր դադտնիքը:

Նա ճաշեց տանը, մի բան, որ երբեք չէր պատահել: Ապա վառել տվեց արվեստանոցի մեծ վառարանը, որովհետև երեսվում էր, որ գիշերը շատ ցուրտ էր լինելու: Նա նույնիսկ հրաժայեց զահը վառել, ասես վախենում էր մութ անկյուններից, և փակվեց: Ի՞նչ արտասովոր, խոր, ահավոր տիրության զգացում էր համակել նրան: Նա այդ զգում էր իր կոկորդի մեջ, իր կրծքի մեջ, իր բոլոր թուղացած մկանների մեջ այնպես, ինչպես զգում էր իր ջլատված հոգու մեջ: Սենյակի պատերը ճնշում էին նրան. Նրա ամբողջ կյանքը, նկարչի ու տղամարդու կյանքը, փակվել էր այդ պատերի մեջ: Պատից կախված յուրաքանչյուր էտյուդ նրան մի հաջողություն էր հիշեցնում, յուրաքանչյուր կահավորանք կապված էր մի հիշողության հետ: Բայց հաջողություններն ու հիշողությունները արդեն անցած բաներ էին: Նրա կյանքը: Ինչքան դա իրեն թվաք կարճ, դատարկ և միաժամանակ հագեցած: Նա նկարել էր պատկերներ, նորից պատկերներ, շարունակ պատկերներ և սիրել էր մի կնոջ: Նա հիշում էր ոգեստության երեկոները հենց այս արվեստանոցում տեղի ունեցած տեսակցություններից հետու իր բովանգակ էությունը համակած տենդագին

եռանդով նա քայլել էր այսակղ ամբողջ գիշերներ։ Երջանիկ սիրո բերկրանքը, հասարակության մեջ հաջողության բերկրանքը, փառքի անօրինակ արքեցությունը նրան ըմբռշխնել էին տվել ներքին հաղթանակի անմոռանալի ժամեր։

- Օլիվիեն սիրել էր մի կնոջ, և այդ կինը սիրել էր նրան։ Շնորհիվ այդ կնոջ Օլիվիեն ստացել էր այն մկրտությունը, որը տղամարդու առջև բաց է անում հուզումների ու կրքերի խորհրդավոր աշխարհը։ Այդ կինը գրեթե բռնությամբ բացել էր Օլիվիեի սիրու, իսկ հիմա Օլիվիեն այլևս չէր կարողանու փակել այն։ Եվ Օլիվիեի կամքից անկախ՝ այդ ճեղքվածքի մեջ մտել էր մի ուրիշ սեր։ Մի ուրիշ, կամ, ավելի ճիշտ, նույն սերը, որ բռնկել էր մի նոր դեմք տեսնելով, նույնը, բայց ուժեղացած ծերության հասակում պաշտելու պահանջով։ Եվ այսպես, Օլիվիեն սիրում է այդ աղջնակին։ Կարիք չկա այլևս պայքարել, դիմադրել, ժխտել, Օլիվիեն սիրում է նրան, հուսահատորեն գիտակցելով, որ նա նույնիսկ չի խըդճում իրեն, որ նա ամենեին շգիտե իր սոսկալի տանջանքի մասին և որ նրա հետ ամուսնանում է մի ուրիշը։ Այդ մըտքից, որին Օլիվիեն վերադառնում էր շարունակ, որից երրեք չէր կարողանում ազատվել, նա ուզում էր անասունի պետունալ, ինչպես ոռնում են շղթայակապ շները, որովհետև նա իրեն զգում էր անգորացած, ստրկացած, շղթայակապված, ինչպիս նրանք։ Օլիվիեն ինչքան ավելի էր մտածում դրա մասին, այնքան ավելի էր շղայնանում, մեծ-մեծ քայլերով քայլելով տոնականորեն լուսավորված ընդարձակ սենյակում։ Վերջապես, շկարողանալով այլևս տանել այդ բորբոքված վերքի ցավը, նա փորձեց այն հանգստացնել իր նախկին սիրո հիշողությամբ, այն ամոքել իր առաջին ուժեղ կրքի հիշատակով։ Նա պահարանից դուրս հանեց կոմսուհու դիմանկարի պահված պատճենը, որ Օլիվիեն մի ժամանակ արել էր իր համար, այն դրեց պատկերակալի վրա և, նստելով դիմացը, սկսեց նայել։ Օլիվիեն ուզում էր նորից տեսնել կոմսուհու պատկերը, նորից նրան գտնել այնպես, ինչպես նրան սիրել էր անցյալում։ Բայց միշտ Աննետն էր հառնում կտավի վրա։ Մայրը անհետացել, չքացել էր, իր տեղը զիշելով մյուս դեմքին, որ տարօրինակ կերպով նման էր նրան։ Դա Աննետն էր։

գրանք նրա մազերն էին, մի քիչ ավելի փայլուն, քան մոր ճոտ, նրա մի քիչ ավելի շարաձմի ժպիտը, նրա մի քիչ ավելի ժաղբական արտահայտությունը, և Օլիվիեն պարզ զգում էր, որ հոգով ու մարմնով պատկանում է այդ երիտասարդ էակին, ինչպես նրբեք շէր պատկանել մյուսին, ինչպես ընկղմվող ժակույկը պատկանում է ալիբներին:

Այն ժամանակ Օլիվիեն վեր կացավ և, որպեսզի տյլես տեսներ այդ տեսիլքը, շուռ տվեց կտավը. ապա, խոր թակնիծով համակված, գնաց ննջասենյակ և այնտեղից արվեստանոց բերեց իր գրասեղանի զգրոցը, ուր հանգչում էին իր պիրույտ բոլոր նամակները. Նրանք պառկած էին այստեղ. Ինչպես անկողնում, մեկը մյուսի վրա, կազմելով քարակ ժղթիկների մի հաստ խավ: Օլիվիեն ձեռքերը խրեց նրանց մեջ, իրենց մասին խոսող խոսքերի այդ ամբողջ կույտի մեջ, նրենց երկարատև սիրո այդ ավազանի մեջ: Օլիվիեն նայում էր այդ նեղ, տախտակե դագաղին, ուր հանգչում էին բազմաթիվ ծրարներ, որոնց վրա զրված էր իր անունը, միայն իր անունը: Նա մատածում էր, որ այստեղ, կարմիր կնիքներու ժամկված այս դիկնած թղթերի դեղի մեջ պատմված էր սիրո յասին, երկու էակների փոխադարձ քնքուշ գորովանքի մատին, երկու սրտերի պատմության մասին, և, հակվելով գզրուի վրա, ներշնչում էր անցյալի շունչը, երկար ժամանակ հակված նամակների մեջամաղձիկ բույրը:

Օլիվիեն ուզեց նորից կարդալ դրանք. ավելի խոր քրքրեցի, նա գտավ մի քանի ավելի հին նամակներ: Ինչքան շատ էր բաց անում զրանք, այնքան ավելի որոշակի հիշողությունները հուզում էին նրա հոգին: Նամակների մեջ նա ճանաշում էր շատ այնպիսիներ, որոնք նա իր մոտ կրել էր ամբողջ շաբաթներ և իրեն այնքան քաղցր խոսքեր տսող մանրիկ ձեռագրի մեջ անցյալի մոռացյլած հուզումներն էր վերագրունում: Հանկարծ նա իր մատների տակ շոշափեց նրբորեն ասեղնագործված մի թաշկինսուկ: Ե՞նչ էր դա: Նա մի բոպե յտածեց, ապա հիշեց: Մի օր կոմսուհին իր մոտ արտասվե, էր, որովհետև մի քիչ խանդել էր, և Օլիվիեն նրանից գողագել ու պահել էր արցունքներով թրչված այդ թաշկինակը:

Ա՛Հ, ինչքա՞ն տխուր է այդ բոլորը ինչքա՞ն տխուր ես՝ դժկին:

Գզրոցի հատակից, անցյալի հատակից այդ բոլոր հիշողությունները բարձրանում էին, ինչպես գոլորշի. այո՛, դրանք սոսկ ցամաքած իրականության անշոշափելի դոլորշիներն էին: Եվ սակայն Օլիվիեն տանջիվում ու արտասվում էր այդ նամակների վրա, ինչպես արտասվում են մեռածների վրա, որովհետև նրանք այլևս չկան:

Բայց հին սիրո այդ ամբողջ խլրտումը Օլիվիեի մեջ առաջացնում էր նոր, երիտասարդական եռանդ, անհաղթահարելի կրքի ավիշի խմորում, որ ստիպում էր հիշել Աննետի ճառագայթող դեմքը: Օլիվիեն սիրել էր նրա մորը կամավոր ստըրկության կրքոտ թափով, իսկ այդ աղջկան սկսում էր սիրել ինչպես ստրուկ, ինչպես ծեր, դողդոջուն ստրուկ, որին զարնում են շղթաների, որոնք երբեք չի խորտակելու:

Օլիվիեն հոգու խորքում զգում էր այդ և սարսափում էր: Նա փորձում էր հասկանալ, թե ինչպե՞ս և ինչո՞ւ Աննետը այդպիսի իշխանություն ունի իր վրա: Զէ՞ որ ինքը այնքան քիչ էր ճանաչում Աննետին: Նա դեռ հազիվ կին էր, որի սիրտն ու հոգին տակավին քնում էին դեռատիության քնով:

Իսկ Օլիվիեն գրեթե հասել էր իր կյանքի վերջին: Ուրեմն ինչպես այդ աղջիկը կարողացել էր նրան նվաճել մի քանի ժպիտներով ու վարսերի խոպոպներով: Ա՛Հ, այդ խարտիշագեղ աղջկա ժայիտները, վարսերը շատ անգամներ ծնկի գալու և ճակատը գետնին զարնելու ցանկություն էին ներշնչել Օլիվիեին:

Մի՞թե մենք կարող ենք իմանալ, մի՞թե մենք կարող ենք երբեք իմանալ, թե ինչու որնէ կանացի դեմք հանկարծ մեր վրա թույնի նման է ազդում: Որպես թե մենք նրան խմել ենք աշքերով, և նա դարձել է մեր միտքն ու մեր միսը: Մենք արրում, մենք գժվում ենք նրանով, մենք ապրում ենք մեր կուլ տված այդ պատկերով և կուզենայինք մեռնել նրանից:

Երբեմն ինչքա՞ն է տառապեցնում որնէ դիմապատկերի այդ վայրադ ու անհասկանալի իշխանությունը տղամարդու սրտի վրա:

**Օլիվիկե թերածնը նորից սկսել էր ճեմել արվեստանոցում»** Քիշերը առաջացել էր, վառարանը՝ հանգելու Պատուհանների ապակիներից ցուրտը ներս էր թափանցում։ Նա պառկեց անկողնում և շարունակեց մտախոհել ու մտատանջվել մինչև առավոտ։

Նա կանուխ վեր կացավ, ինքն էլ շիմանալով ինչու, շիմանալով ինչ անել, գրգոված նյարդերով, կամազուրկ, ինչպես պատվող հողմացուց։

Նա մի բան փնտրեց իր միտքն ու մարմինը զբաղեցնելու համար և հիշեց, որ շաբաթվա հենց այդ օրը իր ակումբի մի քանի անդամներ հավաքվում էին Արևելյան բաղնիքում, ուր նրանք նախաճաշում էին մասսաժից հետո։ Օլիվիկեն շտապ հագավ հագուստները, հուսալով որ լոգանքն ու դուշը կհանգրստացնեն իրեն, և դուրս եկավ տնից։

Հենց որ ոտքը դուրս դրեց, սաստիկ ցուրտ զգաց, առաջին սառնամմանիքի այնպիսի թափանցող ցուրտ, որ մի գիշերվա մեջ ոշնչացնում է ամառվա վերջին հետքերը։

Շուկարների երկայնքին տեղում էր խիտ անձրեր լայն գեղին տերենների, որոնք թափվում էին հանդարտ ու շոր շրջյունով։ Լայն պողոտաների ծայրից ծայր, տների ճակատների միջև նրանք թափվում էին ու թափվում, ասես նրանց բոլոր ցողունները ճյուղերից հենց նոր էին պոկվել նուրբ ու սուր սաղցե շեղբով։ Սալահատակներն ու մայթերը, որոնք արդեն ծածկված էին նրանցով, մի քանի ժամում նման էին գարձել անտառային բացատներին՝ ձմեռվա սկզբում։ Այդ մեռած տերենները խշշում էին ոտքերի տակ և հողմերի սաստկության ժամանակ երբեմն հավաքվում էին ալիքածե կույտ տերով։

Դա մեկն էր այն անցումնային օրերից, որոնցով վերջանում է տարվա մի եղանակը և սկսվում է մյուսը, օրեր, որոնք առանձին քաղցրություն կամ տիրություն ունեն, հոգեվարքի տիրություն կամ վերածնվող կյանքի քաղցրություն։

Անցնելով Արևելյան բաղնիքի շեմից ներս, Օլիվիկեն իր տիրու սրաի մեջ գոհունակության դող զգաց այն ջերմության մտքից, որ հիմա, փողոցի ցրտից հետո, կտաքացնի իր մարմինը։

**Նա** շտապ հանեց հագուստները, իրանի շուրջ փաթաթեք բաղնեպանի տված թեթև փաթաթանը և անհետացակ իր առջե բացված թաղիքապատ դռան ետև:

Անցնելով երկու արևելյան լապտերներով լուսավորված մավրիտանական գալերեայով, նա դժվարությամբ շնչեց հեղձուցիչ, տաք օղը, որ կարծես փշում էր ինչ-որ հեռավոր հնոցից: Գանգրահիր, փայլուն իրանով, մկանուա անդամներոց մի նեկր, մեջքին միայն մի լաթ կապած, առաջ նետվեց, նրա առջե բարձրացրեց գալերեայի մյուս ծայրի դռան վարագուցրը: և Օլիվիե Բերտենը մտավ մեծ, կլոր, բարձր լոգարանը, ուզություն էր տիրում, գրեթե նույնքան խորհրդավոր, որքած տաճարի լուսությունը: Վերևից, դմբիթից, գունավոր ապակիների առվույտների միջով լույսը ընկնում էր ընդարձակ կլոր սրահը, որի հատակը սալարկված էր, իսկ պատերը ծածկված էին արարական ճաշակի գույնղգույն հախճառալերով:

Ամեն հասակի կիսամերկ տղամարդիկ քայլում էին լուսամբ, դանդաղորեն ու ծանրորեն, ոմանք, ձեռքերը խաշածնած, նստել էին մարմարե նստարանների վրա, ուրիշներ ցած ձայնով զրուցում էին:

Տաք օղը հենց մուտքի մոտ շունչը բռնում էր ինչ-որ հնադարյան, ինչ-որ խորհրդավոր բան կար գունագեղ, կրկեսի նման կլոր լոգարանում, ուր մարդկային մարմինը տաքանում էր, ուր շրջում էին սեամորթ մարձողները կամ պղնձագույն սրունքներով մավրերը:

Ամենից առաջ նկատեց կոմս դը Լանդային: Լանդան ետ ու առաջ էր քայլում, ինչպես հոռմայեցի ըմբշամարտիկ, հպարտ իր վիթխարի կրծքով և նրա վրա խաշածեած հաստ բազուկներով: Լոգարաններ հաճախելու վարժված, նստեմի վրա և փորձագիտությամբ էր դատում փարիզեցի ուժեղ մարդկանց մկանունքի մասին:

— Բարե, Բերտեն, — ասաց նա:

Նրանք միմյանց ձեռք սեղմեցին. ապա Լանդան շարունակեց:

— Լավ եղանակ է քրտնելու, չէ՞:

— Այո, հիանալի:

— Գուք տեսե՞լ եք Ռոկդիանին։ Նու այնտեղ էւ Ես նրան ուղղակի անկողնից եմ լուրս քաշել։ Յ', սրա կերպարանքին նայեցեք։

Մոտից կարճահասակ, ծուռոտանի, վտիտ բազուկներով։ Աիհար սրունքներով մի պարոն էր անցնում, և առնական ցեղի այդ երկու տարեց տիպարները արհամարհանքով ժբարացին։

Ռոկդիանը, տեսնելով նկարչին, մոտեցավ նրանց։

Նրանք նստեցին մարմարի երկար սեղանի վրա և սկսեցին զրուցնել, ինչպես սրահում։ Սպասակորները շրջում էին խմիչքներ առաջարկելով։ Լսվում էին մերկ մարմնի վրա մարձողների շփոցները և դուշերի հանկարծական ցայտուքը։ Զրերի անընդհատ ճղփյունը հասնում էր ընդարձակ ամֆիթատրոնի բոլոր անկյուններից, այն լցնելով անձրնի թիթե խըշշոցով։

Ամեն բոպե որևէ նոր այցելու ողջունում էր երեք բարեկամներին կամ մոտենում էր նրանց ձեռքերը սեղմելու ժրանք էին գեր զուրս Հարիսոնը, կարճահասակ իշխան էպիտափին, բարոն Ֆլակը և ուրիշներ։

Հանկարծ Ռոկդիանը ասաց։

— Ահա Յարանգալը։

Մարիիկը ներս էր մանում, ձեռքերը աղղորերին դրած, քայլով բարեկազմ տղամարդու անբոնազրոսիկ թնքնակամունքությամբ։

Լանդան շշնչաց։

— Այդ անպիտանը իսկական գլադիատոր է։

Ռոկդիանը Բերսանին դառնալով հարցրեց։

— Ճի՞շտ է, որ նա ամուսնանում է ձեր բարեկամների սղկա հետ։

— Կարծում եմ, որ այո,—ասաց նկարիչը։

Բայց այդ մարդու ներկայությամբ այդ պահին այդ տեղում տրված հարցից Օլիվիեի սիրտը ահոելիորեն ցնցվեց։ Տուսահատությունից ու խոռվությունից։ Ամբողջ իրականության ահավորությունը նա մի բոպեում այնպիսի սրությամբ զգաց, որ մի քանի վայրկյան պայքարեց մարկիզի վրա նետելու անասնական ցանկությունը հաղթահարելու համար։

**Ապա Օլիվիեն վեր կացավ:**

— Ես հոգնել եմ, — ասաց նա: — Գնամ մասածի:

**Մոտից մի արաբ անցավ:**

— Աչմեղ, զու ազա՞տ ես,

— Այո, պարոն Բերտեն:

Եվ Օլիվիեն շտապ հեռացավ, որպեսզի խուսափեր ֆառանդալի ձեռքսեղմումից, որ դանդաղորեն շրջագայում էր համամում:

Օլիվիեն հաղիվ մի քառորդ ժամ մնաց հանգստի մեծ սրահում, ուր այնպես խաղաղ էր, ուր պատերի երկայնքին կային խցիկներ անկողիններով, իսկ մեջտեղում կար աֆրիկական բույսերից կաղմված մի ծաղկանոց և մի շատրվան: Նա այն զգացողությունն ուներ, որ իրեն հետեւում են, որ իրեն ժնշուր մեկը սպառնում է, որ ահա մարկիզը ձեռքը պարզած գալիս է և իր հետ բարեկամաբար վարվում, այն ժամանակ, երբ ուզում է սպանել իրեն:

Եվ շուտով նկարիչը նորից գտնվեց մեռած տերեններով ժածկված բուլվարում: Նրանք այլևս չեին թափվում. վերջին տերենները պոկվել էին երկար մոլեգնած մրրիկներից: Կարմիր-դեղին գորդը թրթում, շարժվում, ալիքածե գլորվում էր մի մայթից մյուսը՝ սաստկացող քամու թափի տակ:

Հանկարծ կտուրների վրայով անցավ մի մոնշուն, գաղանային մուռնչը սուրացող մրրիկի. միաժամանակ բուլվարի վրա էր խումում մոլեգին քամին, որ հավանաբար Մադլենից էր փշում:

Տերենները, բուռոր թափված տերենները, բարձրանում էին քամու մերձեցումից, կարծես սպասում էին նրան: Նրանք վագում էին նրա առջենից կուտակվելով, հորձանվելով, պարույրածե բարձրանալով մինչև տների տանիքները: Նա նրանց հալածում էր ինչպես անսունների հոտ, ինչպես զժված անսունների հոտ, որ թոշում-սլանում էր զեպի Փարիզի դըռները, դեպի արվարձանների ազատ երկինքը: Եվ Երբ Մալզերը թաղամասի զարիվերի վրա տերենների հոծ ամպը և փոշին լքացան, սալարկներն ու մայթերը անսովոր կերպով մերկացան ու մտքրվեցին, ասես ավլել էին դրանք:

Բերտենը մտածում էր. «Ի՞նչ պիտի լինեմ հիմա: Ի՞նչ պի-

տի անեմ։ Ո՞ւր պիտի գնամ։ Ոչինչ չկարողանալով վճռելու նա վերադառնում էր տուն։

Նրա ուշադրությունը գրավեց թերթերի մի կիոսկ։ Նա գնեց լոթ կամ ութ թերթ, հուսալով, որ նրանց մեջ մեկ-երկու ժամ կարդալու բան կգանի։

— Կնախաճաշեմ ինձ մոտ,—առաց նա, տուն վերադառնալով։ Եվ բարձրացավ իր արվեստանոցը։

Սակայն նստելով, նա չէր կարողանում տեղում մնալ. նա ամբողջ մարմնով գրդոված էր, ինչու մոլեզնած գազան։

Նա աշքի անցկացրեց թերթերը, բայց նրանք ոչ մի րոպե չզբաղեցրին նրան, և փաստերը, որոնց մասին նա կարդում էր, մնում էին աշքերի մեջ, բայց չէին հասնում մինչև գիտակցությունը։ Մի հոգվածի մեջտեղ, որ Օլիվիեն նույնիսկ չէր աշխատում հասկանալ, «Գիլռուա» անունը ցնցել ավեց նրան։ Խնդիրը վերաբերում էր պալատի նիստին, որի ընթացքում կոմսը մի քանի խոսք էր արտասանել։

Այդ անունով արթնացած նկարչի ուշադրությունն այնուեւետե կանգ առավ նշանավոր տենոր Մոնրոզե<sup>\*</sup> անվան վրա, որը դեկտեմբերի վերջին պետք է մի անգամ հանդես գար Մեծ օպերայի բեմում։ Թերթի խոսքերով, դա կլիներ մի հոյակապ երաժշտական հանդես, քանի որ տենոր Մոնրոզեն, որ Փարիզից հեռացել էր վեց տարի առաջ, աննախադեպ հաջողություն էր ունեցել ամբողջ Եվրոպայում ու Ամերիկայում։ բացի դրանից, նրա հետ պետք է հանդես դար շվեդացի անվանի երգչուհի Հելսոնը<sup>\*\*</sup>, որին Փարիզը նույնպես չէր լսել հինգ տարուց ի վեր։

Հանկարծ Օլիվիեի գլխում, ասես նրա սրտի խորքում, մի միտք ծագեց. Աննետին այդ ներկայացմանը ներկա լինելու հաճույքը պատճառել։ Ապա մտածելով, որ կոմսուհու սուզը արգելք կլինի այդ դիտավորությանը, նա հնարքներ փնտրեց իրականացնելու այն։ Դրանցից միայն մեկը հարմար երևաց։ Հարկավոր է վերցնել մի օթյակ, որ դուրս գա բեմի վրա. այն-

\* 80-ական թվականներին Փարիզում հոշակված էին ֆրանսիացի տենոր Մոնրոզը և շվեդացի երգչուհի Քրիստիանա Նելսոնը։ Մոպասանը միայն մի քիչ փոխել է նրանց անունները։

առեղ նոտողները գրեթե չեն երեա, իսկ եթե կոմսուհին, շնացած դրան, չի ցանկանա զալ, ապա ինքը Աննետին կհրավիրէ և ու դքսուհու հետո Այդ պարագային դքսուհուն կառաջարկի այդ օթյակը։ Բայց այն ժամանակ հարկ կլինի հրավիրել և ժարկիղին։

Օլիվիեն երկար վարանեց ու խորհեց։

Անշուշտ, այդ ամուսնությունը որոշված էր և, անկասկած, շշանակված էր նույնիսկ հարսանիքի օրը։ Օլիվիեն գուշակուած էր, որ իր բարեկամուհին շտապում է վերջացնել այդ և հաւանում էր, որ ամենակարճ ժամկետում աղջկանը տալու է ծարանդալին։ Ինքը ոչինչ չէր կարող անել նա չէր կարող ու խանգարել, ո՛չ փոխել, ո՛չ հետաձգել այդ ահավոր իրադարձությունը։ Իսկ քանի որ հարկավոր է համակերպվել, ավելի շավ չէ՝ փորձել իր հոգին զապել, իր տանջանքը ծաւծկել, գուշիրեալ և այլես ազատ ասպարեզ շտալ իր ջղագրգոռոթյանը։

Այս՝ նա կհրավիրի մարկիզին, դրանով կքննցնի կոմսուհու կասկածները և բարեկամի իրավունքով կմտնի երիտասարդ զույգի տունը։

Հենց որ նախաճաշեց, նա գնաց օսկերա, որպեսզի ապահով վարագույրի ետքի օթյակը։ Նրան խոստացան։ Այն ժամանակ նա շտապեց Գիլուուաների մոտ։

Կոմսուհին գրեթե իսկույն երեաց, դեռևս հուզված երեկով բուզի բացատրությունից։

— Ինչքա՞ն լավ է, որ դուք եկել եք այսօր, — տուայ կոմսուհին։

Օլիվիեն թոթովեց։

— Ես մի քան եմ բերել ձեզ համար։

— Ի՞նչ քան։

— Օպերայի մի օթյակ Հելսոնի և Մոնրոզի բացառիկ մրցերկայացման համար։

— 0', շա՞տ ափսոս, իմ բարեկամ։ Զէ որ ես սպի մեջ եմ։

— Զեր սուզը շուտով արդեն շորս ամիս կլինի։

— Հավատացնում եմ ձեզ, որ ես չեմ կարող։

— Իսկ Աննետը։ Մտածեցեք, որ այսպիսի առիթ գուցօքքեք չի ներկայանա։

— Ո՞ւմ հետ նա կգաւ։

— Հոր հետ և դքսուհու հետ, որին ես կհրավիրեմ։ Եւ յտադիր եմ տեղ առաջարկել և մարկիզին։

Կոմսուհին սենոուն աչքերով նայում էր Օլիվիեին, նրան համբուրելու անմիտ ցանկություն զգալով։ Զհավատալով իր շկանջներին կոմսուհին կրկնեց։

— Մարկիզի՞ն,

— Այո։

Եվ կոմսուհին իսկույն համաձայնեց այդ առաջարկությանը։

Օլիվիեն շարունակեց անտարբեր տոնով։

— Դուք արդեն նշանակե՞լ եք նրանց հարսանիքի ժամակը։

— Այո, գրեթե։ Մենք պատճառներ ունենք հարսանիքը յտապեցնելու, մանավանդ որ դա արդեն որոշված էր մայրիկի ժամանակը առաջ։ Դուք հիշո՞ւմ եք։

— Այո, հիշում եմ։ Ուրեմն ե՞րբ սկզի կունենա հարսանիքը։

— Հունվարի սկզբին։ Կներեք, որ ես ձեզ ավելի շուտ շեմ հայտնել այդ մասին։

Աննետը ներս մտավ։ Օլիվիեն զգաց, թե ինչպես իր սիրությունակի պես վեր թռավ կրծքի մեջ և ամբողջ խանդաղատանքը, որ տածում էր Աննետի նկատմամբ, հանկարծ փոխվեց դառնության, ժնելով այն անսովոր ու կրքոտ թրշամանքը, որ վերածվում է սիրո, երբ նրան մտրակում է նանդը։

— Ես ձեզ համար մի բան եմ բերել, — առաջ Օլիվիեն։

Աննետը պատասխանեց։

— Ուրեմն մենք ձեզ հետ հաստատապես խոսում ենք ։ Դուք ովագություն։

Օլիվիեն հայրական տոն ընդունեց։

— Լսեցեք, զավակու ես տեղյակ եմ, թե ինչ իրադարձություն է տեղի ունենալու։ Հավատացնում եմ ձեզ, որ կարճ ժամանակում դա անհրաժեշտ կլինի։ Դա ավելի լույլ է հիմա, քան հետո։

Աննետը դժգոհ դեմքով ուսերը թոթվեց, իսկ կոմսուհին լուսվ էր, հեռունայելով և ինչ-որ բանի մասին լարված մտածելով։

### Աննետը հարցրեց.

— Իսկ ի՞նչ եք դուք բերել?

Օլիվիեն պատմեց ներկայացման մասին և այն մասին, թե  
որո՞նց էր մտադիր հրավիրել։ Աննետը հրճվեց և, երեխայա-  
կան շերմությամբ նետվելով Օլիվիեի վիզը, համբուրեց նրա  
երկու այտերը։

Օլիվիեն քիչ մնաց ուշաթափվեր և, զգալով այդ թարժ  
շրթների հպումը, հասկացավ, որ ինքը երբեք չէր բուժվի։  
Կոմսուհին ջղայնությամբ ասաց աղջկան։

— Դու գիտե՞ս, որ հայրդ քեզ է սպասում։

— Այո, մայրիկ, գնում եմ։

Աննետը փախավ, շարունակելով ուղարկել օդային համ-  
բույրներ։

Երբ Աննետը դուրս եկավ, Օլիվիեն հարցրեց։

— Նրանք ճանապարհորդելո՞ւ են։

— Այո, երեք ամսով։

Օլիվիեն ակամա շշնչաց։

— Ավելի լավ։

— Մենք կապրենք նախկին կյանքով, — ասաց կոմսու-  
հին։

Օլիվիեն թոթովեց։

— Հույս ունեմ։

— Իսկ առայժմ մի թողեք ինձ։

— Ոչ, սիրելիս։

Օլիվիեի երեկվա հուզմունքը կոմսուհու արցունքներին ի-  
տես և այդ ներկայացմանը մարկիզին հրավիրելու նրա հենց  
նոր հայտնած մտադրությունը նորից մի քիչ հույս էին տվել  
կոմսուհուն։

Բայց դա կարճ տեսք։ Մի շաբաթ չէր անցել, երբ կոմսու-  
հին նորից, տանջալի ու խանդու ուշադրությամբ, սկսել էր  
հետեւ այդ մարդու դեմքի, նրա ապրած տանջանքի բոլոր  
ֆուզերին։ Կոմսուհին ոչինչ չէր կարող անդիտանալ, քանի  
որ ինքն անցել էր բոլոր տանջանքների միջով, որոնք գուշա-  
կում էր Օլիվիեի մեջ, և Աննետի մշտական ներկայությունն  
ամեն բովե իրեն հիշեցնում էր իր շանքերի ունայնությունը։  
Ամեն ինչ կոմսուհուն ճնշում էր միաժամանակ — և՝ տարի։

ները, և՝ սուզը: Նրա գործոն, խելացի, հնարամիտ կոկետությունը, որ ամբողջ կյանքում իրեն օգնել էր հաղթանակ տանելու, հիմա զլատված էր այս սև զգեստով, որն այնպես էր ընդգծում նրա գունաւառությունն ու դիմագծերի աչլափոխությունը, ինչպես ընդգծում էր նրա աղջկա երիտասարդական փայլը: Ինչքան հեռու էր հիմա այն, ինչ դեռ մոտիկ անցյալ էր, երբ Աննետի վերագարձին Փարիզ՝ կոմսուհին շանում էր աղջկա հետ միատեսակ հագնվել և իրենց նմանությունը այն ժամանակ նպաստավոր էր իր համար: Հիմա կոմսուհին երբեմն մոլեգին ցանկություն էր զգում իր մարմնից պոկելու մահվան այդ զգեստը, որը իրեն տգեղացնում ու տանջանք էր պատճառում: Եթե իր տրամադրության տակ լինեին վայելլության բոլոր միջոցները, եթե նա կարողանար ընտրել ու հագնել նրբերանգ կերպասներ, որոնք կներդաշնակեին իր դեմքի գույնին, որոնք կտային իր մահացող գեղեցկությանը նրբորեն հաշվված ուժ, նույնքան դյութական, ինչքան աղջկա բնական հմայքը, նա, անկասկած, դեռ կարող էր պահպանել իր հրապուցքը:

Նա այնքան լավ գիտեր երեկոյան գրգորի արգուզարդերի և առավոտյան ցանկահարուց թեթև խալաթների աղղեցությունը, որոնց մեջ կինը մնում է նախաճաշին՝ մտերիմ բարեկամների հետ և որոնց շնորհիվ մինչև օրվա մեջտեղ պահում է իր արթնության բույրը, իր թողած անկողնի ու բուրավետված սենյակի նյութական ու շերմիկ տպավորությունը:

Բայց ի՞նչ կարող էր կոմսուհին անել այդ գերեզմանային զգեստով, այդ կալանավորական տարազով, որ իրեն ծածկելու էր մի ամբողջ տարի: Ամբողջ տարի: Նա մի տարի պիտի բանտարկված մնար այդ սև զգեստի մեջ, անգործության ու անզորության մատնված: Մի տարի պիտի դգար, թե ինչպես ինքը օր առ օր, ժամ առ ժամ, բոպե առ բոպե ծերանում է այդ սև շղարշե պատյանի մեջ: Ի՞նչ կդառնար մի տարում, եթե իր խեղճ, հիվանդ մարմինը շարունակեր այսպես թառամել հոգեկան տվայտանքներից:

Այս խոհերն այլիս չէին բաց թողնում կոմսուհուն, փշացընում էին այն ամենը, ինչ նա ուզում էր ճաշակել, դառնացնում էին այն ամենը, ինչ կարող էր ուրախություն լինել, խա-

թարում էին նրա ամբողջ խնդությունը, գոհունակությունը, պվարթությունը: Նա անընդհատ զողղողում էր, հուսահատորեն շանալով իրենից գեն գցել իրեն ճնշող տանջանքների այդ բեռը. քանի որ եթե Ախներ իրեն մշտապես հետապնդող այդ տեսիլը, նա իրեն դեռ կզգար երջանիկ, կայտառ և առողջ: Նա առաջվա պես իր մեջ զգում էր կենդանի ու թարմ հոդի, առաջվա պես երիտասարդ սիրտ, դեռ նոր ապրել սկսող էակի եռանդ, երջանկության անհագ ծարավ, նույնիսկ ավելի ագաճ, քան առաջ, և սիրո անկշտում պահանջ:

Եվ ահա, բոլոր լավ, քաղցր, քնքուշ, պոետական բաները, որոնք գեղեցկացնում են կյանքը և մեզ ստիպում են գնահատել այն, հեռանում էին կոմսուհուց, որովհետև նա ծերացե՞ր էր: Դա վե՞րջն էր: Սակայն նա դեռևս իր մեջ զտնում էր երիտասարդ աղջկա քնքություն և երիտասարդ կնոջ կրքոտ եռանդու Ծերացել էր միայն մարմինը, նրա խեղճ մաշկը, ու քիչ-քիչ խունացել, մաշվել էր, ինչպես կահուզքի մահուդե ծածկոց: Այդ անկման միավոր հետապնդում, բաց չէր թողնում նրան, գրեթե ֆիզիկական տանջանք էր դարձել: Այդ սկեռուն գաղափարը նրա մեջ առաջ էր բերել վերնամաշկի առանձին զգայնություն, ծերության զգացողություն, մշտական ու որոշակի, ինչպես ցրտի կամ տաքի զգացողությունը: Նրան թվում էր, թե ինքը իրոք ինչ-որ անորոշ քոր է զգում, զգում է, թե ինչպես կնճիռները դանդաղորեն տարածվում են ճակատի վրա, ինչպես փոխվում է այտերի ու կոկորդի հյուսվածքը և բազմապատկվում են այն անհամար մանր ծալքերը, որոնցից հոգնած մաշկը ասես ճխլտվում է: Ինչպես տանջալի քորը մաշկային հիվանդությամբ տառապողին ստիպում է անընդհատ քորել իրեն, այսպես արագ վազող ժամանակի քայլայիշ ու նուրբ աշխատանքի գիտակցությունն ու վախը կոմսուհու մեջ առաջ բերին հայելիների մեջ իրեն նայելու անհաղթահարելի պահանջ: Այդ գիտակցությունը, այդ վախը նրան կանչում, քաշում, հրում էին դեպի հայելիները, և նա, պոկ շգալով, նայում էր նրանց մեջ և անվերջ զննում, շոշափում էր, ասես ուզելով ավելի լավ նկատել ժամանակի պատճառած վնասի անշնչելի հետքերը: Սկզբում այդ վախը երթեմն անցնում էր, բայց նորից էր երեան գալիս ամեն անզամ,

Երբ կոմսուհին տանը կամ այլուր տեսնում էր ահավոր ապակու հարթ մակերեսը։ Նա կանգ էր առնում մայթերի վրա, որպեսզի իրեն նայեր հայելավոր ցուցափեղերի մեջ, ասես ինչոք ձեռք նրան մեխում էր բոլոր ապահի շերտերին, որոնցով առևտրականները զարդարում են իրենց խանութների ճակատները։ Դա նրա մոտ զարձավ հիվանդություն, մտամոլություն։ Նա գրանում կրում էր պուղբայի փոքրիկ, ընկույզի մեծությամբ փղոսկրե մի տուփ, որի կափարիչի ներսի կողմում կար շատ փոքրիկ մի հայելի, և հաճախ, քայլելիս, նա բաց էր անում այդ տուփը և մոտեցնում էր աշքերին։

Երբ կարդալու կամ գրելու համար նստում էր գորգերով զատած հյուրասենյակում, այդ զբաղումները մի բոպե մտաշրում էին նրան, բայց շուտով նա նորից անձնատուր էր լինում նախկին մտապատրանքին։ Նա պայքարում էր, աշխատում էր ուշադրությունը հեռացնել, ուրիշ բանի մասին մտածել, աշխատանքը շարունակել թայց իզուր, սուր ցանկությունը շուտով նրան ստիպում էր ձեռքից թողնել գիրքը կամ գրիչը, և նա անզսպելիորեն ձգվում էր սեղանի վրա դրված արծաթե քոնակով հայելուն։ Զվածե ու դրվագված շրջանակի մեջ նրա գեմքը երկում էր ինչպես անցյալ դարում նկարված մի դիմանկար, ինչպես մի ժամանակ թարմ, բայց արևից խունացած մի պաստելանկար։ Նա երկար նայում էր իրեն, ապա հոգնած շարժումով հայելին նորից էր զնում սեղանի վրա, որպեսզի նորից սկսեր աշխատել, բայց հազիվ էր երկու էջ կարդում կամ քսան տող գրում, երբ նրա մեջ նորից էր ծնվում իրեն նայելու անհաղթահարելի ու տանջալի պահանջը, և նա մի անգամ էլ ձեռքը մեկնում էր ու վերցնում հայելին։

Հիմա կոմսուհին շարունակ զբաղվում էր նրանով, ինչպես ձանձրացուցիչ ու սովորական մի գեղորով, որից ձեռքը երբեք չի կարող անջատվել, և, իր բարեկամներին ընդունելիս, ամեն բոպե ձեռքն էր առնում այն. դա այնքան էր գրգռում կոմսուհուն, որ նա ուզում էր ճշալ, և հայելին ձեռքերի մեջ պտտեցնելով, նա տուռմ էր նրան, ինչպես կենդանի էակի։

Մի օր, հուսահատության հասնելով ապակու կտորի հետ այդ պայքարից, կոմսուհին այն շպրտեց պատին, ուր նա շարդպեց ու փշրվեց։

Բայց ամուսինը հայելին նորոգել տվեց, և որոշ ժամառ նակ անց նա դարձավ ավելի պայծառ, քան երբեք։ Կոմսուն հուն հարկ եղավ վերցնել հայելին, շնորհակալություն հայտ նել և հաշտվել այն բանի հետ, որ նա կմնա իր մոտ։

Ամեն առավոտ և ամեն երեկո, իր ննջասենյակում փակէ ված, կոմսուհին իր կամքին հակառակ, վերսկսում էր այդ սոսկալի ու հանդարտ ավերածության մանրակրկիտ ու համրերատար ուսումնասիրությունը։

Պառկելով անկողնում, նա չէր կարողանում քնել, նորից մոմը վառում էր և երկար, աչքերը բաց, մտածում էր, որ անքնությունն ու վիշտը լոկ արագացնում են սրընթաց ժամանակի այդ ահավոր աշխատանքը։ Գիշերային լուսության մեջ նա լսում էր պատի ժամացույցի ճոճանակի միալար ու համաշափ թխկթխկոցը, որ ասես իրեն շշնչում էր. «Գնում է, գնում է, գնում է», և նրա սիրտը ճմլվում էր այնպիսի տանջանքի մեջ, որ նա, սավանով փակելով բերանը, հիծկլտում էր հուսահատությունից։

Մի ժամանակ կոմսուհին, ինչպես բոլոր մարդիկ, զգուշ էր, որ տարիներն անցնում են ու իրենց հետ փոփոխություններ բերում։ Ինչպես բոլոր մարդիկ, նա ամեն ձմեռ, ամեն դարնան, ամեն ամռան ուրիշներին և իրեն ասում էր. «Ես շատ եմ փոխվել անցյալ տարվանից»։ Բայց գեռևս գեղեցիկ, թեև մի քիչ տարրեր գեղեցկությամբ, նա դրանից չէր անհանգըտանում։ Իսկ հիմա, փոխանակ առաջվա նման խաղաղ կերպով նայելու տարվա եղանակների դանդաղ երթին, նա հանկարծ հայտնաբերել ու հասկացել էր, թե ինչպես ահռելիորեն արագ են վազում րոպեները։ Նրա համար զգալի էր դարձել ժամանակի հոսանքը, աննկատելի վազքը, որ կարող է խելահեղության հասցնել, եթե մարդ մտածի շտապող վայրկյանների այդ անընդհատ տոգանցի մասին, որ կրծում է մարդու մարմինն ու կյանքը։

Այդ տանջալի գիշերներից հետո նա մի քիչ հանգստանում էր և անկողնի տաքության մեջ երկար նիրհում, մինչ այն ժամանակ, երբ սպասուհին վարագույրները բաց էր անում և վառարանը վառում։ Նա պառկած էր լինում հոգնած, թմրած, կիսաքուն, կիսարթուն, և նրա ընդարմացած ուղեղի

մեջ նորից ծնվում էր բնաղղական՝ ու նախախնամական հույսը, որով լուսավորվում ու ապրում են մարդկանց սիրտն ու ժպիտը մինչև նրանց վերջին օրը:

Հիմա ամեն առավոտ, երբ վեր էր կենում անկողնից, բուռն ցանկություն էր ունենում աղոթելու աստծուն, որպեսզի նրան նից մի քիչ թեթևացում ու մխիթարանք ստանար:

Նա ծնրադրում էր մեծ կաղնե խաչելության առջև—Օլիվիեի նվերը, ինչոր տեղ գտած հազվագյուտ մի բան—և հոգու այն ձայնով, որով մարդը խոսում է իր հետ, լուր ու մունջ աստավածային տառապալին էր ուղարկում վշտալի պաղատանքը: Հսկի լինելու և օգնություն ստանալու պահանջից խելացնորդած, միամիտ իր վշտի մեջ, ինչպես բոլոր ծնրադրած հավատացյալները, կոմսուհին շէր կարող կասկածել, որ նա լսում է իրեն, ունկնդրում է իր աղաշանքը և գուցե, հուզված է իր տառապանքով: Կոմսուհին աստծուց շէր խնդրում իր համար անել այն, ինչ նա երբեք շէր արել որևէ մեկի համար—մինչև մահը իրեն թողնել հրապույրը, հմայքը, թարմությունը. Նա միայն խնդրում էր մի քիչ հանգստություն, մի քիչ հետաձգում: Այս, նա պետք է ծերանար, պետք է և մեռներ: Բայց ինչո՞ւ այդքան շուտ: Ուրիշ կանայք այնքան երկար են պահում իրենց գեղեցկությունը: Մի՞թե աստված շի կարող այնպես անել, որ ինքը լինի նրանցից մեկը: Ինչքա՞ն նա բարի կլիներ, նա, որ նույնպես այնքան տառապել էր, եթե զեռ երկու կամ երեք տարի իրեն թողներ հրապուրանքի այն մնացորդը, որ իրեն հարկավոր էր՝ դուր գալու համար:

Կոմսուհին այդ շէր ասում ուղղակի, բայց ուղարկում էր աստծուն իր հեծեծանքները՝ իր հոգու շփոթ աղերսանգի մեջ:

Ապա նստում էր տուալետի սեղանի առջև և նույնպիսի եռանդով, ինչպես աղոթքի մեջ, մտքի լարումով սկսում էր զբաղվել պուգրաներով, սնգույրներով, մատիտներով, շպառցներով, խոզանակներով, որոնք մի օրվա համար վերականգնում էին նրա շինծու, փիրուն գեղեցկությունը:

## VI

Թուլվարների վրա բոլորի բերաններում երկու անուններ էին. կմմա Հելսոն և Մոնրոզի: Ինչքան մոտենում էին օպերային. այնքան ավելի էին լսվում այդ անունները: Նրանք անցորդ ների աշքին էին զարնում պատերին կպցված հսկայական աֆիշներով, և երեկոյան օգի մեջ ինչ-որ մեծ դեպքի պացողություն կար:

Ծանրակշիռ շենքը, որ «Երաժշտության ազգային ակադեմիա»\* անունն էր կրում, ասես կուշ եկած սեամած երկնքը տակ, իր առջև հավաքված հասարակությանը ցույց էր տալիւրը—սպիտակ ճակատը, և մարմարե սյունաշարով գալերեան, որ դեկորացիայի նման լուսավորված էր անտեսանելի էլեկտրական լապտերներով:

Օպերայի առջևի հրապարակի վրա հանրապետության ձիավոր ոստիկանները կարգավորում էին փողոցային երթևեկություններ: Փարիզի բոլոր ծայրերից այստեղ էին գալիս անհամար կառքեր, որոնց մեջ, իշեցված ապակիների շնորհիկ. կարելի էր տեսնել պայծառ գործվածքների ու դժգույն դերերի փրփուրը:

Երկանիվ ու քառանիվ կառքերը շարքով մտնում էին կամարների տակ, կանգ էին առնում մի քանի վայրկյան, և նրանցից գուրս էին գալիս մուշտակներով, փետուրներով, անգին ժանյակներով զարդարված վերարկուների մեջ բարձրաշխարհիկ և այլ կարգի կանայք, թանկարժեք, աստվածայնորեն պճնված մարմիններ:

Ներքնից վերև նշանավոր սանդուղքով շարժվում էր կախարդական թափորը թագուհիների նման հագնված կանանց. որոնց կրծքերն ու ականջները փայլվիլում էին աղամանդների շողերով և որոնց քղանցքները քարշ էին գալիս աստիճան ներով:

Դահլիճը լցվել էր ժամանակից շուտ, որովհետեւ ոչ ոք չէր ուզում բաց թողնել նշանավոր արտիստների ոչ մի նոտանը. ընդարձակ ամֆիթատրոնի շլացուցիչ էլեկտրական ջահի տակ

\* Պաշտոնապես այսպես է կոչվում Փարիզի Մեծ օպերան (Պրանդ օպերան):

ռեղավորված էր ծփացող հասարակությունը. ձայների մի մեծ ժխոր կար:

Օթյակից մինչև թեմը, ուր արդեն գտնվում էին դքսուհին, Աննետը, կոմսը, մարկիզը, թերտենը և պարոն գը Մյուլագիեն, երեսում էին միայն կուլիսները, ուր խոսում, վագում, գոշում էին մարդիկ—բլուզավոր մաշինիստներ, ֆրակով պարոններ, կոստյումով արտիստներ: Իսկ իշեցված հսկայական վանագույրի ետև լսվում էր ամրոխի խոր ժխորը, զգացվում էր Խլուտացող ու գրգոված կենդանի զանգվածի ներկայությունը, որի հուզումն ասես թափանցում էր կտավի միջով, տարածվելով մինչև գեկորները:

Ներկայացվելու էր «Ֆառատը»:

Մյուլագիեն անեկդոտներ էր պատմում լիրիկական թատրոններում այդ գործի առաջին ներկայացումների մասին, ոկրում նրա կրած գրեթե անհաջողության և հետագայում ունեցած փայլուն հաջողության մասին, նրա առաջին գերազատարների մասին, յուրաքանչյուր կտոր երգելու նրանց եղանակի մասին: Աննետը, կիսով շաք շուր դալով դեպի Շյուլագիեն, նրան լսում էր անկուշու, երիտառարդական, անենակով հետաքրքրությամբ և երբեմն իր նշանածի վրա, որ նի քանի օրից իր ամուսինն էր դառնալու, գորովալի հայացք էր նետում: Աննետը հիմա նրան սիրում էր, ինչպես սիրում էն անկեղծ սրտերը, այսինքն նրա մեջ սիրում էր բոլոր վաղ ժա հույսերը: Կյանքի առաջին տոների արթեցությունը և երանկության բուռն պահանջը նրան ստիպում էին թրթուալ ու ախտությունից ու սպասումից:

Իսկ Օլիվիե Բերահնը, որ ամեն ինչ տեսնում էր, ամեն ինչ իմանում, որ իշել էր թաքուն, անզոր ու խանգուտ սիրութուր աստիճաններով, ընդհուպ մինչև մարդկային տառապանքի հնոցը, ուր սիրու ասես թշշում է, ինչպես միսը շիկացած ածուխների վրա, կանգնել էր օթյակի խորքում և երկուսի վրա էր նայում տանշահար մարդու հայացքով:

Հնչեցին երեք հարվածները\*, և դրանից հետո նվագա..

\* Ֆրանսիական թատրոններում դանգ չի գործածվում. վարագույրի քարձրանալը հասարակությանը ազդարարվում է ձողիկի երեք կարճ թխկոցներով:

խմբի գիրիժյորի ձողիկի թակոցը գրակալի վրա՝ դադարեց-  
րեց բոլոր շարժումները, հազերն ու շշնջոցները. այնուհետեւ  
կարճատև ու խոր լոռությունից հետո հնչեցին նախերգանքի  
առաջին տակտերը, դահլիճը լցնելով երաժշտության անտես-  
անելի ու անդիմադրելի խորհուրդով, որ տարածվում է մեր  
մարմնի մեջ, մեր նյարդերն ու հոգին համակում պոետական  
ու զգայական թրթիռով և թափանցիկ օդի մեջ ներհոսում  
հնչուն մի ալիք, որ որսում է մեր ականջը:

Օլիվիեն նստեց օթյակի խորքում, ցավագինորեն հուզ-  
ված, ասես այդ հնչյունները դիպչում էին նրա սրտի վերքե-  
րին:

Բայց երբ վարագույրը բարձրացավ, նա նորից վեր կացաֆ  
և ալքիմիկոսի կաքինետը պատկերող դեկորացիայի մեջ տե-  
սավ Ֆառատին՝ մտախոհությունների մեջ սուզված:

Արդեն քսան անգամ Օլիվիեն լսել էր այդ օպերան, որ գրե-  
թե անգիր դիտեր, և նրա ուշադրությունը իսկույն փոխադրվեց  
հանդիսարահի վրա: Նա լոկ տեսնում էր սրահի մի անկյունք-  
իրենց օթյակի առաջը փակած բեմի ետև, բայց այդ ան-  
կյունը, որ նվազախմբարանից տարածվում էր մինչև վերնա-  
սրահ, նրան պարզում էր հասարակության մի ամբողջ հատ-  
ված, ուր նա նկատեց բազմաթիվ ծանոթ դեմքեր: Ներքնում  
սպիտակ փողկապով տղամարդկանց շարքը մի ցուցահանդեւ  
էր թվում ծանոթ դեմքերի, բարձր խավի մարդկանց, արվես-  
տագետների, ժուռնալիստների, մի խոսքով բոլոր այն մարդ-  
կանց, որոնք երբեք առիթը բաց շեն թողնում լինելու այնտեղ,  
ուր գնում են բոլորը: Նա մառվին նշում և յուրովի անուններն  
էր տալիս բալկոնում ու օթյակներում նստած կանանց: Կոմ-  
սուհի Լոկրիստը, նախարեմի մոտի օթյակում նստած, իրոք  
զմայլելի տեսք ուներ, իսկ մի քիչ հեռու, նոր ամուսնացած  
մարկիզուհի դ'Էրլենը, արգեն բարձրացնում էր փոքրիկ դի-  
տակը: «Լավ սկիզբ է»—մտածեց Բերտենը:

Հասարակությունը մեծ ուշադրությամբ ու բացահայտ հա-  
մակրանքով էր լսում տենոր Մոնրոզեն, որ ողբում էր իր  
կյանքի վրա:

Օլիվիեն մտածում էր. «Ի՞նչ ժաղը ու ծանակ: Ահա Ֆառա-  
տը, խորհրդավոր ու վսեմ Ֆառատը, երգում է կյանքի ահա-

վոր զզվանքի և ամեն ինչի ունայնության մասին, իսկ այս տմբոխը միայն անհանգստանում է, թե արդյոք չի՞ փոխվել Մոնրողնի ձայնը»:

Օլիվիեն ուրիշների հետ միասին սկսեց լսել, և լիբրետո-ի հասարակ խոսքերի ետե, հոգիների խորքում խոր զգայնու-ժյուններ արթնացնող երաժշտության միջով ասես նրան բաց-ւեց ֆառւստի սիրտը, ինչպես այն Գյոթեն էր երազել:

Մի ժամանակ Օլիվիեն կարդացել էր այդ պոեմը ու շատ չեղեցիկ էր գտել, բայց դա շատ չէր հուզել իրեն, և ահա հի-ժա, նա հանկարծ հասկացավ նրա անշափելի խորությունը, քանի որ այս երեկոյան իրեն թվում էր, թե հենց ինքն է ֆա-ռւստ դառնում:

Մի քիչ հակված օթյակի առաջակալի վրա, Աննետը լսում էր լարված ուշաղրությամբ, իսկ հասարակության մեջ արտա-բերվում էին զոհունակության շշունջներ, քանի որ Մոնրոզեի ձայնը ավելի լավ էր թրթում և ավելի լավ էր հնչում, քան առաջ:

Եերտենը փակել էր աշքերը: Ահա արդեն մի ամիս է, որ այն ամենը, ինչ նա տեսել, զգացել էր, այն ամենը, ինչին հանդիպել էր կյանքում, նա անմիշականորեն կապում էր իր կրքի հետ: Ամբողջ աշխարհն ու հենց իրեն նա զոհաբերում էր այդ սենոռուն գաղափարին: Ամեն գեղեցիկ, գողտրիկ, հրա-պուրիչ բան, որ նա տեսել կամ պատկերացրել էր, իսկուն մտքով մատուցում էր իր փոքրիկ բարեկամուհուն. և նրա մոտ ոչ մի իոհ չէր մնացել, որ նա շմիացներ իր սիրո հետ:

Հիմա Օլիվիեն իր հոգու խորքում լսում էր ֆառւստի տըր-տունչի արձագանքը և նրա մեջ ծագում էր մեռնելու բաղձանք, իր վշտերին, իր անդարմաննի սիրո տվայտանքներին վերջ տալու ցանկություն: Նա նայում էր Աննետի նուրբ պրոֆիլին և նրա ետև տեսնում էր մարկիդ զը ֆարանդալին, որ նույն-պես ակնապիշ նայում էր նրան: Օլիվիեն զգում էր, որ ինքը ծերացած, վերջացած, կորած մարդ է: Ա՛հ, այլևս ոչինչ չսպասել, ոչինչ չհուսալ, իրեն շարքից գուրս եկած, կյան-քին հրաժեշտ տված զգալ, ինչպես հասակն առած պաշտոնյա, որի կարիերան ավարտված է. ինչպիսի՞ անտանելի տանջանք: Գահիճում ծափահարություններ թնդացին. Մոնրոզեն

արդեն հիացրել էր հասարակությանը: Եվ պետնի տակից գուրա-  
շատկեց Մեֆիստօֆել-Լաբարիերը:

Օլիվիեն, որ նրան երբեք չէր լսել այդ գերում, ուշաղիք  
լսում էր: Օքենի \* մասին հուշը, որի բասը հնչում էր այնպէս  
զրամատիկորեն, ապա Ֆորի \*\* մասին հուշը, որ այնքան գրա-  
վիչ բարիտոն ձայն ուներ, մի քանի րոպե վերացըին նրե-  
միտքը:

Բայց հանկարծ Մոնրովի անդիմադրելի ուժով երգած մշ-  
ֆրազ հուզեց Օլիվիեի սիրտը մինչև խորքը: Ֆառուստը ասու՞-  
էր Մեֆիստօֆել-Սատանային.

Ես ցանկանում եմ թանձագին մի գանձ,  
Ես ցանկանում եմ երիտասարդություն \*\*\*.

Եվ տեսնորը ներկայացավ մետաքսե բաճկոնով, մեշքի:  
Կապած որով, փետրագարդ փեղուցրով, վայելչաշուք, երի-  
տառարդ և գեղեցիկ՝ եղանակ իր սեթնեթյալ դեղեցկությամբ:

Ամեն կողմերից շատ բարձրացավ: Երկիշը շատ բարձ-  
րագմ էր և շատ գուր էր գալիս կանանց: Օլիվիեն, լնդակա-  
ռակը, ցնցվեց հիասթափությունից, քանի որ այդ կերպարա-  
նափոխության մեջ Գյոթեի կրամատիկական պոեմի սրությու-  
նը անհետացել էր: Հիմա նրա աշքերի առջև լոկ երաժշտա-  
կան գեղեցիկ կտորներով լի մի կախարդանք էր տաղանդա-  
վոր դերակատարներով, որոնց միայն ձայներն էր նա լսում:  
Այդ բաճկոնով մարդը, այդ սիրուն տղան, որը, գեղգեղիով-  
եր ազդրերն ու նոտաներն էր ցուցադրում, իրեն գուր չէր գա-  
լիս: Փա ամենեին այն իսկական, հմայիլ ու մուայլ ասպեր-  
ֆառուստը չէր, որ հրապուրելու էր Մարգարիտին:

Օլիվիեն նորից նստեց և հենց նոր լսած ֆրազը դարձաւ  
հիշեց:

Ես ցանկանում եմ թանձագին մի գանձ,  
Ես ցանկանում եմ երիտասարդություն:

\* Մեծ օպերայի երգիշներից մեկը 1860-ական թվականներին:

\*\* Նույն ժամանակի նշանավոր երգիշ Մեծ օպերայում և կոմպոզիտոր:

\*\*\* Այստեղ և հետագայում բերված տողերը Մոպասանը վերցրել է  
«Ֆառուստ» օպերայի այն լիբրետոյից, որ կազմել էն ֆրանսիացի դրա-  
մատուրիներ Միշել Կարրեն և Փյուլ Բարբիեն:

Նա այդ մրմնջում էր ատամների միջով, թախժով երգում էր հոգու խորքում և, աչքերը միշտ հառած շեկ ծոծրակին Աննետի, որ գծագրվում էր օթյակի քառակուսի բացվածքում, իր մեջ զգում էր ամբողջ զառնությունն այդ անիրագործելի ցանկության:

Մոնրողեն առաջին արարվածը վերչացրեց այնպիսի կատարելությամբ, որ ոգեսորություն առաջ բերեց հանդիսականների մեջ: Մի քանի րոպե գահին դղրդաց բուռն ծափահարություններից, ոտքերի գոփյուններից: Բոլոր օթյակներում կանայք իրար էին զարնում իրենց ձնոնոց գրած ձնոքերը, իսկ աղամարգիկ, նրանց ետև կանգնած, ծափահարում ու ձըշում էին:

Երկու անգամ բարձրացավ ու իջավ վարագույրը, իսկ խանդավառությունը շանդարաւվեց: Ապա, երբ վարագույրը երրորդ անգամ իջավ և հանդիսարահից բաժանեց բեմն ու այնտեղ գտնվող օթյակները, դքսուհին ու Աննետը զեռ շարունակում էին ծափահարել մի քանի վայրկյան և զրա համար հատկապես վարձատրվեցին տեսնորի հազիվ նկատելի ողջույնով:

— Օ՛, նա մեզ նկատեց, — ասաց Աննետը:

— Ի՞նչ հիանալի արտիստ է, — բացականչեց դքսուհին:

Իսկ Բերտենը, որ առաջ էր թեքվել, չղագրդության ու արհամարհանքի խառն զգացումով նայում էր, թե ինչպես երգիշը ծափահարությունների տակ դուրս է գալիս կողմնակի դռնով, թեթերեն օրորվելով, սրունքը ձգելով և ձեռքը դնելով ազդրի վրա, ինչպես իսկական թատերական հերոս:

Սկսեցին խոսել Մոնրոզեի մասին: Նրա հաջողությունները նույնքան աղմուկ էին հանել, որքան նրա տաղանդը: Նա հանդես էր եկել բոլոր մայրաքաղաքներում, հիացում պատճառելով կանանց, և բավական էր, որ նա գուրս գար բեմի վրա, նրանք, նախապես սիրենալով, թե ինչպես նա կախարդող է, արդեն զգում էին, որ իրենց սիրտը ավելի արագ է բարախում: Այնուամենայնիվ, նաև, ինչպես հազորդում էին, իբր այնքան ուշագրություն չէր գարձնում այդ հիացական արտահայտություններին և զոհանում էր երաժշտական հաղթանակներով: Մյուզագիկն, Աննետի ներկայությամբ շանալով որքան կարելի է զգույշ արտահայտվել, այդ գեղեցիկ երգչի կյանքի մա-

սին էր պատմում, իսկ դքսուհին, զմայլված, հասկանալի ու ներելի էր գտնում այն բոլոր հիմարությունները, որ կարող էին տեղի ունենալ նրա պատճառով, այնքան նա Մոնրոզեին համարում էր դյութիշ, փայլուն, նրբագեղ ու բացառիկ երաժիշտ: Եվ նա ժպտալով եզրակացրեց:

— Միթե կարելի է անդրդվելի մնալ այդ ձայնի առաջ:

Օլիվիեն սրտնեղվեց ու մաղձոտ դարձավ: Արդարև նա չէր հասկանում, թե ինչպես կարելի է հրապուրվել ինչոր խեղկատակով, որ շարունակ ներկայացնում է մարդկային տարբեր տիպեր, այդ շպարզած դիշերային մանեկենով, որ պատրաստ է որոշ վճարով ամեն երեկո նոր դեր խաղալ:

— Դուք նախանձում եք նրանց, — ասաց դքսուհին: — Դուք բոլորդ, աշխարհիկ մարդիկդ և արտիստներդ, չեք կարողանում տանիլ դերասաններին, որովհետև նրանք ավելի հաջողություն են ունենում, քան դուք:

Եվ դքսուհին դարձավ Աննետին.

— Լսիր, փոքրիկ, դու, որ նոր ես կյանք մտնում և ամեն ինչի վրա առողջ աշքերով ես նայում, ասա՝ ինչպե՞ս ես գլունում այդ տեսնորդ:

Աննետը համոզված տեսքով պատասխանեց:

— Ես գտնում եմ, որ նա շատ լավ է:

Երեք հարվածները ազդարարեցին երկրորդ զործողության մասին, և վարագույրը լարձրացավ, բաց անելով դյուղական տոնախմբության տեսարանը:

Հելսոնի դուրս գալը հոյակապ եղավ: Նրա ձայնը նույնպես, ըստ երևույթին, ամրացել էր, և նա առաջվանից ավելի էր տիրապետում ձայնին: Նա իրոք դարձել էր մեծ, գերազանց, հիանալի երգչուհի, որի համբավը հավասարվում էր Բիսմարկի ու Լեսեպսի \* համբավին:

Երբ Ֆառւստը նետվեց գեսի նա, երբ Ֆառւստը իր դյութական ձայնով նրան երգեց այնքան զմայլելի ֆրազը:

Խնդրեմ թուլ տվեք, իմ չքնազ օրիորդ,  
Զեր թնդց բռնել և ձեղ ուզեկցել.

\* Ֆրանսիացի ինժեներ և գիվանագետ, Սուեզի ջրանցքի կառուցողը (1805—1894):

Եվ երբ շեկ Մարդարիտը, այնքան սիրուն ու այնքան հուզիչ, նրան պատասխանեց.

Բայց ևս ոչ օրիսրդ, ոչ էլ չքնաղ եմ  
Եվ Հարկ չկա, որ իմ թերք բռնեք,—

ամբողջ դահլիճը անհուն հրճվանքով տոգորվեց:

Երբ վարագույրը իջավ, ուժգին ճիշեր հնչեցին: Անհետք այնքան երկար ծափահարեց, որ Բերտենը ուզեց բանել նրա ձեռքիրը, որպեսզի նա դադարեցներ: Բերտենի սիրութ գալարվում էր նոր տանջանքից: Ամբողջ ընդմիջման ժամանակ նա լուս էր: Նրա սեհուուն միաքը նույնիսկ կուկիսների ետև շարակամությամբ հետեւում էր ատելի երգչին, որ այնպիսի գերագության էր Հասցրել այդ աղջկան և հիմա նորից այտերը ներկում էր սպիտակ ներկով:

Վարագույրը նորից բարձրացավ և երկաց պարտեզի տեսարանը:

Դահլիճը իսկույն ողողվեց յուրատեսակ սիրո տենդով, դեռ երբեք այդ երաժշտությունը, որ համբուլը շունչ էր թվում, չէր ունեցել նման կատարողներ: Դրանք արդին նշանավոր դերակատարներ Մոնրոզն և Հելսոնը չէին, դրանք իդեալական աշխարհի երկու էակներ էին, նույնիսկ ոչ երկու էակներ, այլ միայն երկու ձայներ, հավերժական ձայնը տղամարդու, որ սիրում է, հավերժական ձայնը կնոջ, որ զիջում է, և նրանց ձայները հնչում էին ինչպես հառաշանք, որի մեջ զեղում էր մարդկային խանդաղատանքի ամբողջ պոեզիան:

Երբ Ֆառուստը երգեց.

Թույլ տուր, թույլ տուր ինձ նայել քո գեմքին,—

Նրա բերանից թուած հնչյունների մեջ այնպիսի պաշտում, ոքանշացում ու պաղատանք կար, որ մի բոպե սիրելու ցանկությունը, հիրավի, հուզեց բոլոր սրտերը:

Օլիվիեն հիշեց, թե ինչպիս ինքը մեղմորեն շշնչացել էր այդ ֆրազը Ռոնսոֆերի զբոսայգում, դաստակերտի պատուհանների տակ: Մինչև այդ ժամանակ այդ ֆրազը իրեն մի քիչ գոեհիկ էր թվացել, իսկ հիմա գալիս էր բերանին, ինչպես կրքի վերջին ճիշ, ինչպիս վերջին աղոթք, վերջին հույս

և վերջին շնորհ, որ նա կարող էր դեռ սպասել այս կյանքում:

Ապա նա այլևս ոչինչ չսեց, ոչինչ չսեց: Նա տեսավ, որ Աննետը բաշիխնակը մոտեցրեց աշքերին, և խանդի սուր նոպա զգաց:

Աննետը արտասվում էր: Ուրեմն նրա սիրտը, նրա կանացի սրտիկը, որ դեռ ոչինչ չդիտեր, արթնանում, կենդանանում, հուղվում էր: Այստեղ, Օլիվիեին այնքան մոտ, ամենին շմտածելով նրա մասին, Աննետը հայտնագործեց, թե ինչպես սերը կարող է ցնցել մարդկային էությունը, և այդ հայտնագործությունը, այդ խորհրդադպությունը նա պարտական էր ինչ-որ ողորմելի հրդող խեղկատակի:

ԱՇ, Օլիվիեն այլևս չէր զայրանում մարկիզ զը ֆարանդալի վրա, այդ ապօւշի վրա, որ ոչինչ չէր տեսնում, չէր իմանում, չէր հասկանում: Բայց ինչքա՞ն նա նզովում էր պիրկ բատերազգեստով մարդուն, որ լուսավորում էր այդ դեռատի աղջկա հոգին:

Օլիվիեն ուղում էր նետվել դեպի Աննետը, ինչպես նետվում են դեպի նա, ում ահա զախցախելու է սրբնթաց ձին, ուղում էր նրա բազուկից բռնել, նրան տանել, քաշել, նրան ասել. «Գնանք այստեղից: Գնանք այստեղից: Աղաշում և ձձեղում»:

Ինչպես Աննետը լսում էր, ինչպես թբթում էր: Իսկ Օլիվիեն, ինչպես տանջվում էր: Նա արդեն առաջ էլ այդ տանջանքը կրել էր, բայց կրել էր նվազ դաժանությամբ: Նա ճիշեց այդ, որովհետև խանդի բոլոր մտատանջությունները վերանորոգվում են, ինչպես բացված վերքերը Ակզբում դա հրոնսիերում էր, դերեղմանից վերադարձի ճանապարհին, երբ նա առաջին անգամ զդաց, որ Աննետը խույս էր տալիս իրենից, որ ինքը ոչ մի իշխանություն չուներ նրա վրա, այդ աղջկա վրա, որ անհնագանդ էր, ինչպես մատղաշ կենդանի: Բայց այնտեղ, երբ Աննետը փախչում էր իր մոտից, որպեսզի ծաղիներ քաղեր, Օլիվիեն դրդովում էր, նրա եռանդը կանդնեցնելու, նրա մարմինն իր կողքին տահելու կոսկիտ ցանկություն էր ունենում. իսկ հիմա իրենից փախչում էր հենց նրա հոգին, անորսալի հոգին: ԱՇ, հիմա Օլիվիեն նորից ճանա-

յում էր վրավմունքի այդ կբծող զգացումը, որ տրդեն բուզմաթիվ անգամներ կրել էր ամեն տեսակ փոքրիկ, հազիվ նկատելի հարվածներից, որոնք ասես անջնջելի կապտուցներ են թուղնում սիրահարված սրտերի վրա: Նա հիշում էր ամեն օր իր վրա տեղացող փոքրիկ խանդերի բոլոր տանջալի տպավորությունները: Ամեն անգամ, երբ Աննետը որևէ բան հիացումով դիմում էր, որևէ բան սիրում ու տենչում էր, Օլիվիեն խանդում էր, խանդում էր աննկատելիորեն ու անընդհատորեն ամեն ինչի համար, որ կշանում էր աղջկա ժամանակը, ուշադրությունը, հայացքը, զվարքությունը, զարմանքը և համակրանքը, որովհետև այդ բոլորը կամաց-կամաց նրան խլում էին իրենից: Օլիվիեն Աննետին խանդում էր այն ամենի համար, ինչ նա անում էր իր բացակայությամբ, այն ամենի համար, ինչ ինքը շգիտեր, նրա զրուանքների համար, նրա ընթերցումների համար, այն ամենի համար, ինչ նրան, ըստ երկույթին, զուր էր զալիս, խանդում էր Սֆրիկայում վիրավորված հերոս սպայի համար, որով Փարիզը զբաղվել էր մի ամբողջ շաբաթ, շատ ազմուկ հանած մի վեպի հեղինակի համար, ինչ-որ անծանոթ երիտասարդ բանաստեղծի համար, որին Աննետը երբեք չէր սեսել, բայց որի բանասականությունները Մյուլադիեն գովարանել էր, վերջապես այն բոլոր տղամարդկանց համար, որոնց զովում էին Աննետի առջե, թեև զովում էին շատ հասարակ արտահայտություններով, որովհետև, ով սիրում է կնոջ, նա չի կարող շանհանգստանալ, երբ այդ կինը որոշ հետաքրքրություն է ցուցաբերում որևէ մեկի նկատմամբ: Սիրողի սիրու տիրական պահանջ ունի աշխարհում միակը լինելու սիրածի աշքերում: Սիրողն ուզում է, որ սիրածը այլևս ոչ ոքի չտեսնի, շճանաշի, չզնահատի Հենց որ նա նկատում է, որ սիրուհին շուրջ է գալիս, ուզելով մեկին ճանաշել կամ պարզապես նայել, նա ձգտում է բռնել նրա հայացքը և, եթե չի կարող այն շեղել կամ զրավել, տանջվում է սրտի խորքում:

Այսպիս տանջվում էր Օլիվիեն, նայելով երգին, որ, ասես սեր էր ցանում ու քաղում օպերային դահլիճում, և տենորի հաղթանակը Օլիվիեին ստիպում էր շարանալ բոլորի վրա, օթյակներում նստած կանանց վրա, որոնք զմայլելի էին և

տղամարդկանց վրա, որոնք հիմարարար առավածացնում էին այդ թեթևողիկին:

Արտի՛ւտունը նրանք նրան կոչում էին արտիստ, մեծ արտիստ: Եվ այդ խեղկատակը, օտար մտքերի հաղորդիչը այնպէսի հաջողություն էր ունենում, ինչպիսին ոչ մի ստեղծագործող չէր ունեցել: Ա՛հ, ահա թէ ինչն է արդարությունն ու խելամտությունը բարձր խավի մարդկանց, այդ տգեստ ու հավակնութ հետաքրքրասերների, որոնց համար մինչեւ մահ աշխատում են մարդկացին արվեստի վարպետները: Օլիվիեն նայում էր, թէ ինչպես նրանք ծափահարում, ճշում, հիանում նն, և վաղուցված թշնամությունը, որ միշտ խմորվել էր նրա, նորելուկ մարդու, հպարտ ու մեծամիտ սրտի խորքում, սասակացել էր, վերածվել էր կատաղության բնդղեմ այս ապուզների, որոնք ամենավոր են միայն իրենց ժագման ու հարդատության իրավունքով:

Մինչեւ ներկայացման վերջը Օլիվիեն լուր էր ու մտատանջվում էր, իսկ երբ վերջին հիացումների փոթորկէկը հանդարտվեց, նա իր թեր առաջարկեց դքսուհուն, մինչդեռ մարկիզը բռնեց Աննետի թնից: Նրանք իջան մեծ սանդուղքով կանանց ու տղամարդկանց հեղեղի հետ միասին, մնրկ ուսերի, շքեղ զգեստների ու սև ֆրակների այդ հոյակապ, դանդաղ շարժվող սահանքի մեջ: Ապա գրսուհին, Աննետը, նրա հայրը և մարկիզը կառք նստեցին, իսկ Օլիվիենը թերտենը Մյուլաղիեի հետ մնաց օպերայի հրապարակում:

Հանկարծ Օլիվիեն այդ մարդու նկատմամբ զգաց մի տեսակ համակրանք, կամ, ավելի ճիշտ, այն բնական հակումը, որ մարդկան զգում է հեռավոր երկրում հանդիպած հայրենակցի նկատմամբ: Քանի որ նա հիմա իրեն կորած էր զգում այդ օտար ու անտարբեր խառնամբոխի մեջ, իսկ Մյուլաղիեի հետ կարելի էր խոսել Աննետի մասին:

Օլիվիեն բռնեց Մյուլաղիեի թնից:

— Դուք դեռ տուն մի գնաք,—ասաց նա: — Եղանակը լավէ, մի քիչ զբունենք:

— Հաճույքով:

Նրանք գնացին դեպի Մագլեն եկեղեցին, գիշերային ամ-

բոխի միջով, որ, թատրոններից դուրս դալով, կեսպիշերին, կարճ ժամանակով կենդանացնում է բովարները:

Մյուզադիեի զլուխը լի էր բազմաթիվ նորգություններով ու այժմեական խոսակցություններով, որոնք Բերտենը անվանում էր «օրվա մենյուն», և նա սովորական զրուցասիրությամբ շոշափեց երկու-երեք թեմա, որոնք հետաքրքրում էին իրեն: Նկարիչը նրա թեմից բռնած դնում էր, բայց չէր լսում նրան, հաստատ իմանալով, որ շուտով նա կսկսի խոսել Աննեաի մասին, և քայլում էր, ոչինչ շտեսնելով իր շուրջը, ամրողովին փակլիլով իր սիրո մեջ: Նա քայլում էր ուժասպառած խանդի նոպայից, որ իրեն խորտակել էր, ինչպես անկումը, ճնշված այն համոզումից, որ ինքն ոյլես ոչ մի անելիք չուներ աշխարհում:

Այսպիս Օլիվիեն կտանջվի հետղօետե ավելի, ոչինչ շրսպասելով առցնում: Նա կանցկացնի խղճուկ օրեր, հետվից նայելով, թե ինչպես Աննետը կապրի, երջանիկ կլինի, կսիրովի և, իհաբեկ, կսիրի: Սիրո՞ղ: Գուցե և Աննետը մի սիրող կունենա, ինչպես նրա մայրը մի սիրով ունեցել էր: Օլիվիեն իր մեջ զդում էր տանջանքի այնքան բազմաթիվ, բազմատեսակ ու բազմաբարդ աղբյուրներ, դժբախտությունների այնպիսի խոնում, այնքան անխուսափելի մորմոքներ, իրեն զդում էր այնքան կորած, ապրում էր այնողիսի աներեակայելի վիշտ, որ չէր կարողանում պատկերացնել, որ որևէ մեկը տառապած լինի իր նման: Եվ հանկարծ նա հիշեց պոետների տղայամտությունը Սիզիֆի անօդուստ աշխատանքի մասին, Տանտալոսի ֆիզիկական ծարավը, Պրոմեթեոսի ծվառված սիրտը:

Ո՛, եթե նրանք նախաւեսեին, եթե հետախուզեին երիտասարդ աղջկա հանդեպ ծեր տղամարդու խելացնոր սերը, ինչպիսի՝ ուժով նրանք կողատկերացնեին անտանելի ու թաքուն տանջանքները այն էակի, որ այլես չի կարող սիրվել, անօդուստ ցանկության տանջանքները և, ավելի ահավոր, քան անդդի կտուցը, ծեր սիրտը ծվառող շեկ զլուխը:

Մյուզադիեն շաբունակում էր իոսել, և Բերտենը նրան քննոմիջեց, սեեռուն մտքի աղղեցության տակ գրեթե ակամա շշնջալով.

— Այսօր երեկոյան Աննետը զմայլելի էր:

— Այո, հիանալի...

Որոշեսղի Մյուզադիեին խանգարեր իր մտքերի կտրված թելք բռնելու, նկարիչը ավելացրեց.

— Նա ավելի դեղնացիկ է, քան նրա մայրն էր:

Մյուզադիեն մտացրիվ կերպով հավանություն տվեց, մի քանի անգամ իրար ետեից կրկնելով՝ «Այո... այո... այո», — բայց նրա միտքը կանգ չէր առնում այդ նոր մտքի վրա:

Այն ժամանակ Օլիվիեն խորամանկորեն Աննետին կապեց Մյուզադիեին անձնառես զբաղեցրած հարցերից մեկի հետ և շարունակեց.

— Երբ նա ամուսնանա, Փարիզի առաջին սալոններից մեկը կունենա:

Այդ բավական էր, որպեսդի այնպիսի մոլի աշխարհիկ մարդ, ինչպիսին էր գեղարվեստների տեսուչը, գիտակի հեղինակությամբ սկսեր դատել, թե մարդիդ դը Ֆարսոնդալը ինչպիսի տեղ կզրավիր ֆրանսիական բարձր հասարակության մեջ:

Բերտենը լուսմ էր նրան և Աննետին պատկերացնում էր մեծ, պայծառորեն լուսավորված սալոնում՝ կանացով ու տղամարդկանցով շրջապատված: Այդ պատկերը նույնպես խանգ առաջացրեց Օլիվիեի մեջ:

Հիմա նրանք բարձրանում էին Մալզերի բուլվարով: Երբ Գիյունաների տան առաջով անցան, նկարիչը վերև նայեց: Պատուհանների մեջ, վարադույրների ճեղքերի միջով ինչոր լույսեր էին երեսմ: Օլիվիեի մեջ կասկած առաջացավ, թե վինի բքառուհին ու իր եղբորորդին մի բաժակ թեյի են հրավիրվել երեկայացումից հետո: Եվ Օլիվիեն լցվեց կատաղությամբ, որից ահավոր կերպով տանը վեց:

Օլիվիե Բերտենը առաջիւ նման սկսնդ բռնել էր Մյուզադիեի թեյց, ժամանակ առ ժամանակ ինչոր առարկությամբ նրան գրգռում էր, և Մյուզադիեն շարունակում էր իր կարծիքներն արտահայտել ապագա երետասարդ մարկիդուհու մասին: Մյուզադիեի միօրինակ ձայնը, որով խոսում էր Աննետի մասին, արթնացնում էր նրա պատկերը, որ խավարի մեջ ճախրում էր իրենց շուրջը:

Նրանք հասան Վիլյե պողոտայի վրա դանվող նկարչի  
տան առաջ:

- Ներս չե՞ք մտնի, — հարցրեց Բերտենը:
- Ո՛չ, շնորհակալ եմ: Աւշ է, գնում եմ քնելու:
- Դե՛մ, բարձրացեք կես ժամով, մի քիչ էլ շատախոսենք:
- Ո՛չ, ո՛չ: Շատ ուշ է:

Հենց նոր կրած ցնցումներից հետո մենակ մնալու միտքը  
սարսափով լցրեց Բերտենի հոգին: Նա զրուցակից ուներ և  
նրան բաց չեր թողնի:

— Վեր բարձրացեք: Ես վազուց մտադրաթյուն ունեմ ձեզ  
նվիրելու մի էտյուդ և ուզում եմ, որ գուք ինքներդ ընտրեք:

Մյուզաղինն զիտենալով, որ նկարիչները ոչ միշտ տրա-  
մադիր են նվերներ անելու և որ խոստումները շատ են մո-  
ռացվում, օգտվեց այդ առիթից: Իբրև գեղարվեստների տե-  
սուշ, նա ուներ մի ամբողջ գալերեա, որ հավաքել էր մեծ  
հմտությամբ:

- Կհետեմ ձեզ, — ասաց նա:

Նրանք ներս մտան:

Զարթնած ծառան նրանց գրոդ քերեց. որոշ ժամանակ  
զրուցեցին նկարչության մասին: Բերտենը Մյուզաղինն ցույց  
էր տալիս էտյուդները և նրան խնդրում էր իր համար վերցնել  
այն, որ ամենից ավելի էր դուք գալիս իրեն: Բայց Մյուզա-  
ղինն ոչ մեկի վրա չէր կտրողանում կանդ առնել. նրան շվա-  
րեցնում էր գաղի լուսավորությունը, որի ժամանակ նա վատ  
էր զոկում աիրապետող գույնը: Վերջապես նա ընտրեց մայթի  
վրա պարանով ցատկող աղջիկների մի խումբ և գրեթե ան-  
միջապես ուղեց զնալ ու նվերը հետը տանել:

— Ես այդ կուղարկեմ ձեր տուն, — ասաց նկարիչը:

— Ոչ, ես ուզում եմ ունենալ հենց այս երեկո, որպեսզի  
նրանով հիանամ անկողին պառկելուց առաջ:

Ոչինչ չկարողացավ պահել Մյուզաղինն, և Օլիվիե Բեր-  
տենը նորից մենակ մնաց իր առանձնատանը, իր հուշերի ու  
տանջալի հույզերի այդ բանտի մեջ:

Երբ հետեւյալ առավոտ ծառան ներս մտավ, բերելով թեյն  
ու թերթերը, նա իր տիրոջը դտավ անկողնում նստած: Բեր-  
տենն այնքան գունատ էր, որ ծառան վախեցավ:

- Պարոն, անհանդի՞ստ եք, --Հարցրեց ծառայութեան:
  - Չնշին բան է, մի քիչ զլիացավ է:
  - Աւզո՞ւմ եք գնամ դեղ ըերեմ դեղատնից:
  - Իշտ Եղանակը ինչպե՞ս է:
  - Անձրև է:
  - Կավի Կարող եք գնալ:
- Թեյի սպասքն ու թերթերը զնելով փոքր սեղանի վրա, ծառան դուրս եկավ:

Օլիվիեն Ֆիգարոն վերցրեց ու բաց արեց: Առաջնորդող հոգվածը վերնագրված էր՝ «Փամանակակից նկարչությունը»: Գա մի դիմիրամբային գովասանք էր շորս — հինգ նկարիչների մասին, որոնք կոլորիտի ձիրք ունենալով և էֆեկտի համար շարաշահելով այն, իրենց համարում էին հեղափոխիչներ և հանճարեղ նորարարներ:

Ինչպես բոլոր հին սերնդի ներկայացուցիչները, թերտենը գայրանում էր այդ նոր ասպարեզ եկողների վրա, ջղայնանում էր նրանց անհանդուրժողության վրա, վիճարկում էր նրանց տեսությունները: Ուստի, հազիվ սկսել էր կարդալ այդ հոգվածը, դողաց բարկությունից, որ այնպես արագ է բռնկում տանջվող հոգու մեջ: Ապա, ցած նայելով, նա նկատեց իր անունը, և, ինչպես բռունցքի հարկածը կրծքին, նրան ապշեցրեց հետեյալ մի քանի բառերը, որոնցով վերջանում էր ինչ-որ ֆրազ. «Օլիվիե թերտենի մողայից ընկած արվեստը»:

Օլիվիեն միշտ զգայուն էր եղել քննադատության ու գովասանքների նկատմամբ. բայց հոգու խորքում, շնայած օրինական սնամիառությանը, ավելի տանջվում էր քննադատվելուց, քան ուրախանում էր գովաբանվելուց. դա հետեւանք էր իր վրա անվստահության ու իր մշտական տատանումների: Սակայն առաջ, իր հաջողությունների ժամանակ, նրան այնքան շատ էին համարկել, որ նա մոռացել էր գնդասեղի ծակոցները: Հետա, նոր արվեստագետների ու նոր հիացողների անընդհատ հեղեղի առջև, գովասանքը դարձել էր ավելի հազվագեց, իսկ պարսավանքը՝ ավելի խայթող: Օլիվիեն զգում էր, որ իրեն հաշվում ևն հին տաղանդների գումարտակում, որոնց երիտասարդները չեն ճանաշում իրենց ուսուցիչներ. լինելով

խելացի ու խորաթափանց մարդ, նաև հիմա հավասարապես տանջվում էր ոչ միայն ուղղակի հարձակումներից, այլև ամենափոքր ակնաբեկներից:

Սակայն արվեստագետի իր ինքնասիրությանը հասցված ոչ մի վերք դեռ երբեք այնքան սուր չէր եղիլ: Օլիվիեն հեռում էր, նորից էր կարդում հողվածը, հասկանալու համար նրա բոլոր նրբերանգները: Իրենց, իրեն և մի քանի արվեստակիցների, զամբյուղ էին նետել վիրավորական սանձարձակությամբ, և նա անկողնից վեր կացավ, շշնչալով շրթների վրա մնացած այդ բառերը. «Օլիվիե Բերտինի մոգայից ընկած արվեստը»:

Դեռ երբեք նա չէր զդացել այդպիսի տխրություն, այդպիսի վհատություն, ամեն ինչի, նույնիսկ իր ֆիզիկական ու հոգիկան էության վախճանի այդպիսի զգացողություն, դեռ երբեք նա չէր ընկել հոգեկան այդպիսի հուսաբեկության մեջ: Մինչև ժամը երկուսը նա նստեց բաղկաթոռի մեջ բուխարու առջե, ոտները երկարած կրակին, աեղից շարժվելու, որնէ բանով զբաղվելու ուժ շունենալով: Ապա նրա մեջ սփոփանք գտնելու, նվիրված ձեռքեր սեղմելու, հավատարիմ աշքերի նայելու, կարեկցական խոսքեր լսելու, օդնություն ստանալու, բարեկամական խոսքերով շոյվելու պահանջ ծագեց: Եվ, ինչպես միշտ, նա գնաց կոմսուհու մոտ:

Երբ Օլիվիեն հյուրասենյակ մտավ, Աննետը մենակ էր այնտեղ: Կանգնած, կոնակը դռան կողմ դարձրած, նա շտապ հասցե էր դրում մի նամակի վրա: Կողքին, սեղանի վրա դըրված էր բացված ֆիգարոն: Բերտենը միաժամանակ տեսավ թերթն ու աղջկան: Նա շվարած կանգնեց, շհամարձակվելով առաջ շարժվել: Օ՛, եթե Աննետը կարդացած լիներ: Աննետը շուր եկավ, բայց, զբաղված, կանացի հոգսերով տարված լինելով, ասաց շտապով.

— Ա՛հ, բարե՛, պարոն նկարիչ: Ներեցեք, որ ևս ձեզ թողնում եմ: Վերեսում դերձակուհին ինձ է սպասում: Դուք հասկանում եք, դերձակուհին կարեռ է հարսանիքից առաջ: Ես ձեզ մոտ կուղարկեմ մայրիկին, նա բանակցում ու վիճում է վարպետուհու հետ: Իսկ եթե ես մայրիկին կարիք ունենամ, նրան մի քանի բոպեռվ կպահանջեմ ձեզանից:

Եվ Աննետը խույս տվեց, զրեթե վազելով, որպեսզի ցույց  
տա, թե շտապում է:

Այդ հանկարծական մեկնումը առանց մի քնքուշ բառի,  
առանց մի սիրալիր հայացքի ուղղված իրեն՝ Օլիվիեին, որ  
այնքան... այնքան սիրում էր Աննետին, խորապես հուղեց  
Օլիվիեին: Նրա աշքերը նորից ընկան ֆիգարոյի վրա, և նա  
մտածեց. «Աննետը կարդացել է: Ինձ ծաղրում են, ինձ ժըխ-  
տում են: Նա այլևս չի համատա ինձ: Ես արդեն նրա համար  
ոչինչ եմ»:

Օլիվիեն երկու քայլ առաջացավ դեպի թերթը, ինչպես մո-  
տենում են մարդուն՝ ապտակելու համար նրան: Ապա մտա-  
ծեց. «Դուցե Աննետը չի էլ կարդացել: Նա այնքան հողս ունի  
այսօր: Բայց երեկոյան, ճաշին, նրա մոտ անշուշտ կխոսեն  
դրա մասին, և նա կցանկանա կարգալ հոգվածը»:

Հանկարծ, զրեթե անդիտակից շարժումով, Օլիվիեն դույ  
շտապողականությամբ թերթը վերցրեց, փակեց, ծալեց ու  
գրպանը խոթեց:

Կոմսուհին ներս մտավ: Երբ նա տեսավ Օլիվիեի գունա-  
թափ ու այլայլած դեմքը, հառկացավ, որ նա հասել է իր  
տանջանքների ծայրահեղ աստիճանին:

Կոմսուհին զեպի Օլիվիեն նետվեց թափով, իր հեղ, նաև  
ծլատված հոգու, իր հեղ, նաև խոշտանգված մարմնի ամ-  
բողջ թափով: Զեռքերը դնելով Օլիվիեի ուսերի վրա և սեսուն  
նայելով նրա աշքերին, կոմսուհին ասաց.

— Ո՛, ինչքա՞ն դժբախտ եք:

Այս անգամ արդեն Օլիվիեն շժխտեց. Նրա կոկորդը ջղա-  
ձգությումը սեղմէկեց, և նա թոթովեց.

— Այո... այո... այո:

Կոմսուհին զգաց, որ Օլիվիեն ահա արտասվելու է, և նրան  
տարավ հյուրասինյակի ամենամութ անկյունը, ուր հին մե-  
տաքսով պատած փոքրիկ մի շիրմայի ետև երկու բազկաթոռ-  
ներ կային: Նրանք նստեցին այնտեղ, այդ նուրբ ասեղնա-  
գործված միջնորմի ետև, անձրևային օրվա գորշ կիսամթու-  
թյան մեջ:

Այդ վշտից հուղվելով, խորապես կարեկցելով Օլիվիեին,  
կոմսուհին ասաց.

— Իմ խեղճ Օլիվիկ, ինչպես տանջվում եք:  
Օլիվիեն իր ալեհեր գլուխը հենց բարեկամուհու ուսին և  
ասաց.

— Ավելի շատ, քան դուք կարծում եք:  
Կոմսուհին թախծությամբ շշնչաց.

— Ո՞, ես այդ զիտեի: Ես ամեն ինչ զգացի: Ես տեսա,  
թե ինչպես էր այդ սկսվում ու հասունանում:

Օլիվիեն ողատասխանեց, կարծիս կոմսուհին մեղաղրած  
լիներ նրան.

— Ես դրանում մեղք չունեմ, Անի:

— Ես զիտեմ... Ես ձեզ շնմ մեղաղրում...

Եվ, մի քիչ շուռ գալով զեպի Օլիվիեն, կոմսուհին մեղաղրին իր բերանը հպեց նրա մի աշրին, որի մեջ դառն արցունք դդաց:

Կոմսուհին զողաց, ասես հուսահատության մի կաթիլ էր  
խմել, և մի քանի անդամ կրկնեց.

— Ա՛հ, խեղճ բարեկամ... խեղճ բարեկամ... խեղճ  
բարեկամ:

Եվ, մի բոսկ լոռությունից հետո, ավելացրեց.

— Դրանում մեղալոր են մեր սրտերը, որոնք չեն ծերացել: Ես իմ սիրու շատ կննդանի եմ օգում:

Օլիվիեն փորձեց խոսել և շկարողացավ. արցունքները  
խեղզում էին նրան: Սեղմկելով նրան, կոմսուհին հեղձուկի  
ձայներ էր յսում նրա կրծքում: Եվ հանկարծ կոմսուհին նորից համարվեց սիբո էղուստական վշտով, որ այնքան վազուց կրծում էր նրան, և նա առաց այնպիսի սրտաճմլիկ արտահայտությամբ, ինչպիսի արտահայտությամբ մարդիկ խոսում են հենց նոր նկատած ահալոր դժբախտության մասին.

— Աստված իմ, ինչպես դուք սիրում եք Աննետին:

Օլիվիեն մի անդամ նս խոստովանեց.

— Ո՞, այո՞, ես սիրում եմ նրան:

Կոմսուհին մի քիչ մտածեց և ասաց.

— Դուք ինձ երբեք այդպիս շեք սիրել:

Օլիվիեն շժխտեց այդ, նա հիմա ապրում էր այնպիսի մի  
աղաճ, երբ մարդ ասում է ամբողջ ճշմարտությունը, և  
շշնչաց.

- Ո՞չ, ես այն ժամանակ շատ երիտասարդ էի:  
Կոմսուհին զարմացավ:
- Շատ երիտասարդ: Ինչո՞ւ:
- Որսվենու կյանքը շատ քաղցր էր: Միայն մեր համակին կարելի է սիրել ինքնամոռացության աստիճան:
- Կոմսուհին հարցրեց.
- Այն, ինչ դուք զգում եք Աննետի մոտ, արդյոք նմա՞ն է նրան, ինչ դուք զգում էիք ինձ մոտ:
- Ե՛վ այո, և՛ ոչ... Եվ սակայն դա միևնույնն է: Ես ձեզ սիրել հմ գրեթե այնքան, ինչքան կարելի է սիրել մի կնոջ: Իսկ Աննետին ես սիրում եմ, ինչպես ձեղ, որովհետև նա այդ դուք եք. բայց այդ սերը դարձել է ինչ-որ անդիմադրելի, կործանարար բան, ինչ-որ ավելի հղոր բան, քան մահը: Ես պատկանում եմ նրան, ինչպես այրվող տունը՝ կրակին:
- Կոմսուհին զգաց, որ խանդի շունչը իր մեջ չորացրել է խղճահարությունը, և մխիթարական տոնով ասաց.
- Իմ խեղճ բարեկամ: Մի քանի օրից հետո Աննետը կամուսնանա ու կմեկնի: Զտեսնելով նրան, դուք, անշուշտ, կը ուժիկ:
- Օլիվիեն զլուխն օրորեց.
- Օ՛, ես կորած եմ, բոլորովին կորած:
- Բայց ո՛չ, ո՛չ: Թուք նրան չեք տեսնի երեք ամիս: Դա բավական է: Երեք ամիս ձեղ բավական հղալ, որպեսզի նրան ավելի սիրեիք, քան ինձ, իսկ դուք արդեն տասներկու տարի է ինձ ճանաշում եք:
- Այն ժամանակ Օլիվիեն անհուն վշտով համակված՝ աղաշեց կոմսուհուն.
- Անի, մի՛ լքեք ինձ:
- Ի՞նչ կարող եմ ես անել, իմ բարեկամ:
- Մի՛ թողեք ինձ մենակ:
- Ես ձեղ կայցելեմ, ինչքան ցանկանաք:
- Ոչ: Թույլ տվեք ինձ որքան կարելի է հաճախ լինել այստեղ:
- Դուք կլինեք նրա կողքին:
- Եվ ձեր կողքին:
- Դուք նրան չեք տեսնի մինչև ամուսնությունը:

- Օ', Անի:
- Կամ, գոնե, շատ քիչ:
- Այս երեկո կարո՞ղ եմ ձեղ մոտ մնալ:
- Ո՛չ, այս վիճակում չի կարելի: Չեզ հարկավոր է գվար-  
ճանալ, գնալ ակումբ, թատրոն, որևէ տեղ, բայց այստեղ  
շմնալ:
- Ես խնդրում եմ ձեղ:
- Ո՛չ, Օլիվիկ, այդ անկարելի է: Բացի դրանից, ինձ մոտ  
ճաշին լինելու են մարդիկ, որոնց ներկայությունը ձեր տրա-  
մադրությունն ավելի կիշացնի:
- Դքսուհին և... մարկի՞ղը:
- Այո՛:
- Բայց ես երեկ երեկոյան նրանց հետ անցկացրի:
- Ե՛ւ մի խոսեք: Դրանից է, որ այսօր այդպես լավ եք  
զգում ձեզ:
- Ես ձեզ խոստանում եմ հանդիսութիւններ:
- Ո՛չ, այդ անկարելի է:
- Այն ժամանակ ես կզնամ:
- Ո՞ւր եք շտատում այդպես:
- Ինձ հարկավոր է քայլել:
- Այդ լավ է, քայլեցեք շատ, քայլեցեք մինչև գիշեր,  
աշխատեցեք ստուժիկ հոգնել և առա պառկեցեք քնելու:
- Օլիվիեն վեր կացավ:
- Մնաք բարով, Անի:
- Գնաք բարով, սիրելի բարեկամ: Ես ձեղ մոտ կզամ  
վաղը առավոտյան: Աւգո՞ւմ եք ես այնպիսի մի մեծ անխո-  
ճեմություն անեմ, ինչպիս արել եմ մի ժամանակ,—ձեացնեմ,  
որ նախաճաշում եմ տանը կեսօրին, իսկ ժամը մեկ անց քա-  
ռորդ կնախաճաշեմ ձեղ հետ:
- Այո, համաձայն եմ: Ինչքա՞ն դուք բարի եք:
- Բայց չէ որ ես ձեղ սիրում եմ:
- Ես նույնպիս ձեղ սիրում եմ:
- Օ՛, այլևս մի խոսեք դրա մասին:
- Մնաք բարով, Անի:
- Գնաք բարով, սիրելի բարեկամ: Մինչև վաղը:
- Մնաք բարով:

Օլիվիեն համբուրեց կոմսունու ձեռքերը, ապա համբուրեց նրա գունքերը, ապա շրթների անկյունները։ Հիմա Օլիվիեի աշքերը շոր էին, տեսքը վճռական էր։ Հանկարծ նու կոմսունուն բռնեց, դրկեց և, շրթները հողեց նրա ճակատին, ասես խմում, շնչում էր այն ամբողջ սերը, որ նա տաժել էր իր նկատմամբ։

Եվ Օլիվիեն, տոանց ետ նայելու, արագ դուրս եկավ։

Երբ կոմսուհին մենակ մնաց, անզոր ընկավ աթոռի վրա և հեծկյուաց։ Նա այդպես երկար կնսուեր մինչև զիշեր, եթե Աննետը չկար նրա ետեից։ Որպեսզի ժամանակ ունենար իր կարմրած աշքերը սրբելու, կոմսուհին պատասխանեց նրան։

— Ես մի քանի բառ ունեմ զրելու, զավակու։ Վեր բարձրացիր, մի վայրկյանից կզամ։

Մինչև երեկո նրան հարկ եղավ զբաղվել օժիտի կարելոր հարցով։

Դքսուհին ու նրա եղբորորդին ընտանյոք ճաշում էին Գիլուանների մոտ։

Հենց նոր էին սեղան նստել և դեռ երեկվա ներկայացման մասին էին խոսում, երբ ներս մտավ ծառան, բերելով երեք մեծ ծաղկեփնչեր։

Տիկին զր Մորտմենը զարմացավ։

— Աստված իմ, այդ ի՞նչ է։

Աննետը բացականշեց։

— Ռ, ի՞նչ զեղեցիկ են Ռվ կարող է զրանք ուղարկել։  
Մայրը պատասխանեց։

— Ի՞արկի, Օլիվիե Բերտենր։

Այն պահից, երբ Օլիվիեն մեկնեց, կոմսուհին միշտ մտածում էր նրա մասին։ Օլիվիեն կոմսուհուն այնքան մոաց, այնքան ողբերգական երկաց. կոմսուհին այնպես լավ էր հասկանում Օլիվիեի անգարմանելի վիշտը, այնպես տանջալիորեն էր իր մեջ դղում այդ մորմոքի արձագանքը, և այնպես ուժին, այնպես խանդաղատագին, այնպես անհունապես էր սիրում նրան, որ սիրտը ճմլվում էր շարագուշակ նախազգացումներից։

Արդարե, երեք ծաղկեփնչերի մեջ էլ գտնվեցին նկարչի այցետոմսերը։ Յուրաքանչյուր այցետոմսի վրա Օլիվիեն մա-

արիտով գրել էր կոմսուհու, դքսուհու և Աննետի անունները:

Տիկին դը Մորտմենը հարցրեց.

— Արդյոք հիվա՞նդ է ձեր բարեկամ Բերտենը: Երեկ նա շատ վատ տեսք ուներ:

Եվ տիկին դը Գիլռուան պատասխանեց.

— Այո, նա ինձ մի քիչ անհանգստացնում է, թեև ոչ մի բանից չի դանգատվում:

Տիկնոց ամուսինը ավելացրեց.

— Դե՛հ, նա լինում է այն, ինչ մենք լինում ենք բոլորս, — նա ծերանում է: Վերջին ժամանակներս նույնիսկ շատ արագ է ծերանում: Այնուամենայնիվ, ինձ թվում է, որ ամուրիները ընկնում են միանգամից: Նրանք քայլայվում են ավելի արագ, քան ուրիշներ: Նա իրոք որ շատ է փոխվել:

Կոմսուհին հառաջեց.

— 0', այո՛:

Ֆարանդալը հանկարծ դադարեց Աննետի հետ փսփսալ և ասաց.

— Այսօր առավոտյան Ֆիզարո-ում նրա համար շատ տհաճ մի հողված էր տպագրվել:

Իր բարեկամի տաղանդի վրա ամեն հարձակում, ամեն քննադատություն, ամեն անրարյացակամ ակնարկություն համբերությունից հանում էին կոմսուհուն:

— 0', — ասաց նա, — այնպիսի ականավոր մարդ, ինչպիսին Բերտենն է, կարող է կարնորություն շտալ նման հարձակումներին:

Գիլռուան զարմացավ.

— Ինչպես, Օլիվիեի համար տհաճ հողվա՞ծ: Բայց ես չեմ կարդացել: Ո՞ր էջի վրա է:

— Առաջին էջի վրա, — պատասխանեց մարկիզը, — Հենց ակվրում, «Ժամանակակից նկարչությունը» վերնագրով:

Եվ զեպուտատը դադարեց զարմանալ:

— Դեռ, իհարկե, ես չեմ կարդացել նրա համար, որ նկարչության մասին է:

Բոլորը ժպտացին, որովհետեւ գիտեին, որ պարոն դը Գիլռուան, բացի քաղաքականությունից ու զյուղատնտեսությունից, ուրիշ բանով շատ շեր հետաքրքրվում:

Ապա զրոցեցին ուրիշ բաների մասին, հետո անցան հյուրասինյակ՝ սուրճ խմելու: Կոմսուհին չէր լսում, հազիվ էր պատասխանում հարցերին, նրան հետապնդում էր այն միտքը, թե ինչ է անում հիմա Օլիվին: Ո՞ւր է նա: Ո՞ւր է ճաշել: Ո՞ւր է քարշ տալիս այս պահին իր անդարմանելի վիշտը: Կոմսուհին հիմա սաստիկ ցավ էր զգում, որ նրան թողել է գնալ, նրան չի պահել, և պատկերացնում էր, թե ինչորեւ նա թափառում է փողոցներով, տխուր, անտուն, միայնակ, իր վշտից հալածված:

Մինչև զքսուհու ու նրա եղբորսրդու մեկնելը կոմսուհին լուս էր, տանջվելով անորոշ ու սնահավատ երկյուղներից, ապա պասկեց անկողնում, պառկեց մթության մեջ, աշքիրը բաց, մտածելով Օլիվինի մասին:

Շատ ժամանակ էր անցել, երբ կոմսուհին լսեց դրսի սենյակի զանգի զնողոցը: Նա սարսաց, նստեց ու ականջ դրեց: Զանգը երկրորդ անդամ հնչեց դիշելային լուսթյան մեջ:

Կոմսուհին զուրս ցատկեց անկողնից, ամբողջ ուժով սեղմեց էլեկտրական զանգի կոճակը, որպեսզի արթնացնի սպասուհուն: Ապա, մոմի ճրագը ձեռքին, վազեց նախասենյակ:

— Ո՞վ է այնտեղ,— հարցրեց նա զուան ետևից:

Անծանոթ մի ձայն սպատասիանեց.

— Նամակ:

— Նամակ ումի՞ց:

— Բժշկից:

— Ի՞նչ բժիշկ:

— Զդիտեմ, ինչոր դժրախտ պատահարի համար է:

Այլևս շտատանվելով, կոմսուհին բաց արեց զուոր և ինչոր կառքի կառապանի դեմ առ դեմ գտնվեց: Կառապանը ձեռքին բռնել էր մի թուղթ, որ տվեց կոմսուհուն: Կոմսուհին կարդաց, «Շատ շտապ! Կոմս զը Գիլուուային»:

Զեռագիրը անծանոթ էր:

— Ներս մտեք, բարեկամ,—ասաց կոմսուհին,—նստեցեք և սպասեցեք:

Ամուսնու սենյակի զուան մոտ կոմսուհու սիրող այնպիս ուժգին բարախեց, որ նա ուժ շունեցավ նրան կանչելու նա

մոմակալով բախեց դռան։ Կոմսը քնել էր և շէր լսում թակոցը։

Այն ժամանակ համբերությունը հատած, զղայնացած, կոմսուհին սկսեց դուռը սաքով թակել և լսեց քնկոտ մի ձայն, որ հարցնում էր։

— Ո՞վ է այնոնդ։ Ժամը քանի՞սն է։

Կոմսուհին պատասխանեց.

— Այդ ես եմ, ձեզ շուապ նամակ են բերել կառապանի միջոցով։ Ինչոր դժբախտություն է սկսած։

Կոմսը մրթմրթաց վարագւոյրի ետեից.

— Սպասեցեք, Հիմա կէներկենամ։ Գալիս եմ։

Եվ մի բոպեից հետո կոմսը երևաց խալաթով։ Միաժամանակ նրա հետ արագ ներս մտան երկու ծառաներ, որոնք դարձնել էին դանդի ձայնից։ Նրանք սարսափից շփոթվել էին, ուստի ճաշասրահում աթոռի վրա նստած օտար մի մարդ։

Կոմսը նամակը առավ ու սկսեց մատների մեջ պտտացնել մրթմրթալով։

— Այդ ի՞նչ է։ Զեմ կարողանում հասկանալ։

Կոմսուհին ասաց տենդաղին.

— Բայց կարդացեք։

Կոմսը ծրարր պատռեց, նամակը բացեց, զարմանքից բացականչեց և սարսափահար աշքերով նայեց իր կնոջը։

— Աստված իմ, ի՞նչ կա, — ասաց կոմսուհին։

Կոմսը սասափիկ հուզումից շէր կարողանում խռել և թռթովեց։

— Օ՛, մե՞ծ դժբախտություն... մե՞ծ դժբախտություն...

Բերտենը ընկել է կտորի տակ։

Կոմսուհին ճշաց.

— Մահացե՞լ է։

— Ոչ, ոչ, — ասաց կոմսը — ինքներդ կարդացեք։

Կոմսուհին ամուսնու ձեռքից խլեց նամակը, որ նա մեկնել էր, և կարդաց։

«Պարոն, հենց նոր մի մեծ դժբախտություն պատահեց։ Մեր բարեկամ, նշանավոր նկարիչ Օլիվիե Բերտենը ընկավ հանրակառքի տակ, որի անիվը անցավ նրա մարմնի վրայով։

Յս դեռ չեմ կարող որոշակի արտահայտվել այդ պատահարի հնարավոր հետևանքների մասին, դա կարող է առանձնապես ծանր լինել, բայց կարող է ընդհուալ ճակատագրական վախճան ունենալ: Թարոն թերաներ թախանձագին խնդրում է ծեղ և աղաշում է կոմսուհի դր Գիլոուային անմիջապես գալ իր մոտ: Հույս ունեմ, պարոն, որ կոմսուհին և դուք շեք զլանակատարել բաղձանքը մեր ընդհանուր բարեկամի, որ, գուցե, չի ասլրի մինչև առավոտ:

Դոկտոր դը Ռիվիլ»:

Կոմսուհին լայն բացած, սարսափահար աշքերը հառել էր ամուսնու վրա: Ապա հանկարծ, ասես նրա՝ միջով էլեկտրական հոսանք էր անցել, կոմսուհին իր մեջ զգաց արիության հորդում, որ երբեմն, ահավոր ժամերին, կնոջ դարձնում է ամենախիզախը բոլոր էակներից:

Նա դարձավ սովասուհուն.

— Շուտ, հազնվեմ:

— Ո՞ր զգեստն եք ուզում հազնել:

— Մինույն է: Ինչ որ կցանկանաք:

— Ժակ, — շարունակեց կոմսուհին, դիմելով ամուսնուն, — Հինգ բոպեից պատրաստ հղեք:

Խորապես ցնցված, կոմսուհին վերադառնում էր իր սենյակը և, տեսնելով սպասող կառավանին, հարցրեց:

— Զեր կառքն այնտե՞ղ է:

— Այո, տիկին:

— Լավ, դուք մեզ տարեք:

Ապա կոմսուհին վաղեց իր սենյակը:

Խոլաբար, բուռն շարժումներով, ճարմանդները կոճկելով, երիզակները կապելով, կոմսուհին ոնց որ պատահի ընկավ իր զգեստների վրա, մազերը մի կերպ բարձրացրեց ու հարդարեց հայելու առջև, նայելով, և այս անդամ շմտածելով դրա մասին, իր գունաթափ դեմքի ու մոլորուն աշքերի արտացոլմանը:

Ուսերի վրա գցելով վերաբերուն, նա շտապեց գեպի սենյակը ամուսնու, որ դեռ պատրաստ չէր, և քաշեց նրան:

— Գնանք, — ասաց կոմսուհին, — մտածեցիք, որ նա կորող է մեռնել:

Կոմսը, շվարած, հետևում էր կնոջ, սայթաքելով, ոտքերով շոշափելով միջին սանդուղքը, աշխատելով լավ նայել աստիճանները, որպեսզի չընկներ:

Ճանապարհը կարճ տևեց ու լուս անցավ։ Կոմսուհին այնպես էր դողում, որ նրա ատամները իրար էին գարնվում։ Կառքի դռնակի ապակու միջով նա նայում էր, թե ինչպես անձրեի շղարշի ետև խույս էին տալիս զաղացին լապտերները։ Մայթերը փայլում էին, բուլվարը սմայի էր, գիշերը մոայլ էր։ Տեղ հասնելով, նրանք նկարչի տան դուռը գտանքաց, գոնապանի խուզը՝ լուսավորված ու դատարկ։

Նրանց ընդառաջ, սանդուղքի վերին հարթակի վրա, դուրս եկավ բժիշկը, դոկտոր գը Ռիվիլը, ալեխառն մազերով, կարճահասակ, կլորիկ, կոկիկ ու բարեկիրթ մի մարդ։ Նա հարդանքով ողջունեց կոմսուհուն և սեղմեց կոմսի ձեռքը։

Կոմսուհին նրան հարցրեց հեալով, ասես աստիճաններով բարձրանալը սպառել էր իր ամբողջ շունչը։

— Դեհ, ինչպի՞ս, դոկտոր!

— Եհ, տիկին, հույս ունեմ, որ նվազ ծանր է, քան եռկարծում էի առաջին բողիներին։

Կոմսուհին բացականչեց.

— Նա չի՞ մեռնի։

— Ո՛չ, Գոնե Ես այդ չեմ կարծում։

— Դուք երաշխավորո՞ւմ եք։

— Ո՛չ, Ես միայն հույս ունեմ, որ որովայնային սլարդ կոնտուզիա է, առանց ներքին վնասվածքների։

— Ի՞նչն եք դուք անվանում վնասվածքներ։

— Պատովածքները։

— Ինչի՞ց պիտեք, որ դրանք չկան նրա մոտ։

— Ես ենթադրում եմ։

— Իսկ եթե դրանք կա՞ն։

— Ո՛չ, այն ժամանակ գործը ծանր կլինի։

— Նա դրանցից կարո՞ղ է մեռնել։

— Այու։

— Շատ շո՞ւտ։

— Եատ շուտ: Մի քանի րոպեում կամ նույնիսկ մի քանի վայրկյանում: Բայց հանգստացեք, տիկին, ես համոզված եմ, որ նա տասնհինգ օրում կլավանա:

Կոմսուհին լսել էր խոր ուշադրությամբ, աշխատելով ամեն ինչ իմանալ, ամեն ինչ հասկանալ:

Կոմսուհին շարունակեց հարցնել.

— Ինչպիսի՞ պատվածք կարող է լինել նրա մոտ:

— Օրինակ, լյարդի պատվածք:

— Դա շա՞տ վտանգավոր է:

— Այո... Բայց ես շատ կզարմանայի, եթե հիմա որևէ բարդություն առաջանար: Մտնենք նրա մոտ: Դա նրա համար լավ կլինի, նա մեծ անհամբերությամբ ձեզ է սպասում:

Մտնելով սենյակ, կոմսուհին ամենից առաջ տեսավ դժուկն մի դեմք սպիտակ բարձի վրա: Մի քանի մոմեր և բուխարու բոցը լուսավորում էին այն, ուրվագծելով պրոֆիլը, ընդգծելով ստվերները, և այդ կապահած-դժգույն դեմքի վրա կոմսուհին տեսավ երկու աշքեր, որոնք իրեն էին նայում:

Կոմսուհու ամբողջ արիությունը, ամբողջ կորովը, ամբողջ վճռականությունը շքացան, այնքան այդ նիհարած, այլանդակված դեմքը մահամերձի, ուրվականի դեմք էր դարձել: «Օ», ասոված իմ»,—շշնչաց կոմսուհին և առաջացավ դեպի Օլիվիեն, սոսկումից դողալով:

Օլիվիեն փորձնց ժայռով, որպեսզի հանգստացնի նրան, բայց Օլիվիեի դեմքի վրա ժպիտի հետ միասին տանջալի ծածածություն երևաց:

Երբ մոտեցավ նրա անկողնին, կոմսուհին քնքշորեն իր երկու ձեռքերը դրեց Օլիվիեի մարմնի երկայնքով ձգված ձեռքերի վրա և շշնչաց.

— Օ՛, իմ խեղճ բարեկամ:

— Բան չկա.— ասաց ցած ձայնով Օլիվիեն, առանց գլուխը շարժելու:

Հիմա կոմսուհին նայում էր նրան, այդ փոփոխությունից խելացնորված: Օլիվիեն այնքան գունատ էր, որ ասես նրա մաշկի տակ արյան ոչ մի կաթիլ այլևս չէր մնացել: Այտերը փոս էին ընկել, ասես դեմքից ներս էին քաշվել, իսկ աշքերը

այնքան էին խոռոշացել, որ ասես նրանց թելով ներս էին ձգել:

Օլիվիեն հասկացավ իր բարեկամուհու սարսափը և հառաշեց.

— Ահա թե ես ինչքան լավ վիճակ ունեմ:

Սևոռուն հայացքով նայելով նրան, կոմսուհին հարցրեց.

— Այդ ինչպես պատահեց:

Օլիվիեն մեծ ճիգեր արեց խոսելու համար. երբեմն նրա զեմքի վրա ջղային ցնցումներ էին նկատվում:

— Ես չնայեցի շուրջա... մտածում էի ուրիշ բանի մասին... բոլորովին ուրիշ բանի մասին... օ՛, այո՛... և մի հանրակառք ինձ տապալեց ու փորիս վրայով անցավ...

Կաելով Օլիվիեին, կոմսուհին ասես տեսնում էր, թե ինչպես էր զեղքը տեղի ունենում, և, սարսափով համակված, հարցրեց.

— Դուք շատ արյուն կորցրի՞ք:

— Ոչ, ես միայն ձմվածքներ ունեմ... ես մի քիչ ձիրւովել եմ:

Կոմսուհին հարցրեց.

— Այդ որտե՞ղ տեղի ունեցավ:

Օլիվիեն հազիվ լոելի ձայնով ոլատասխանեց.

— Ճշտորեն չգիտեմ: Այստեղից բավական հեռու

Բժիշկը բազկաթոռը կոմսուհու մոտ գլորեց, և կոմսուհին ընկավ նրա վրա: Կոմսը կանգնել էր անկողնու ոտքերի մոտ, առաջների միշտվ կրկնելով.

— Օ՛, իմ խե՞ղճ բարեկամ... իմ խե՞ղճ բարեկամ... Ի՞նչ ահավոր զժբախտություն:

Կոմսը իրոք որ մեծ վիշտ էր ապրում, որովհետեւ շատ էր սիրում Օլիվիեին:

Կոմսուհին նորից հարցրեց.

— Բայց այդ որտե՞ղ պատահեց:

Բժիշկը ոլատասխանեց.

— Ես էլ պարզ չգիտեմ, կամ, ավելի ճիշտ շեմ կարողանում հասկանալ: Գորելինների մոտակայքում, գրեթե Փարիզից դուրս կառապանը, որ նրան տուն էր բերել, պնդում էր,

որ նրան վերցրել է այդ թաղի դեղատնից, ուր նրան փոխադրել էին երեկոյան ժամը իննին:

Եվ, հակիմելով դեպի Օլիվիեն, բժիշկը հարցրեց.

— Ճի՞շտ է, որ դեպքը տեղի է ունեցել Գոքելենների մոտակայքում:

Բերտենը աշքերը փակեց, ասես աշխատելով հիշել, և շշնչաց.

— Զդիռեմ:

— Իսկ ո՞ւր էիր գնում:

— Չեմ հիշում: Դնում էի հենց այնպես:

Կոմսուհին հառաջանք արձակեց, որ նա շկարողացավ զսպել, և մի քանի վայրկյան շունչը այնպես բռնվեց, որ քիչ մնաց խեղզվեր. թաշկինակը հանելով զրովանից, նա աշքերը ծածկեց նրանով և ահավոր կերպով հեկեկաց:

Կոմսուհին ոդիտեր, նա գուշակում էր: Ի՞նչ անտանելի ծանրություն էր ընկել իր սրտի վրա. նա խղճի խայթ զդաց այն բանից, որ իր մոտ չէր պահել Օլիվիեին, նրան դուրս էր արել, փողոց էր շպրտել: Եվ ահա Օլիվիեն, վշտից արբած, ընկել էր այդ հանրակառքի տակ:

Օլիվիեն նույն մեղմ ձայնով ասաց կոմսուհուն.

— Հաց մի լինեք: Դա ինձ վշտացնում է:

Կամքի ուժեղ լարումով կոմսուհին դադարեցրեց իր հեկեկանքը, աշքերը բացեց ու հասեց Օլիվիեին. կոմսուհու դեմքի ոչ մի մկանը չէր շարժվում, միայն դանդաղորեն արցունքներ էին հոսում նրա աշքերից:

Նրանք նայում էին միմյանց, երկուսն էլ անշարժ, ձեռքերը միացրած վերմակի վրա: Նրանք նայում էին միմյանց, մոռանալով, որ այնտեղ կան ուրիշ մարդիկ, և նրանց հայցքի մեջ սրտից սիրտ գերմարդկային հուզում էր հաղորդվում:

Նրանց միջև արագ, լուս ու ահեղորեն հառնում էին բռլոր նրանց հիշողությունները, նրանց ամբողջ խորտակված սերը, նրանց միասին զգացած ապրումները, բոլորը, ինչ միացրել ու միաձուկել էր նրանց կյանքը այն կրքի մեջ, որին նրանք անձնատուր էին եղիլ:

Նրանք նայում էին միմյանց, և խոստովանությունները գալիս էին նրանց շրթներին, անհաղթահարելի էր նրանց ցան-

կությունը պատմելու և լսելու այնքան թաքուն ու այնքան տիսուր գաղտնիքներ, որ նրանց հարկավոր էր հաղորդել։ Կոմսուհին զգաց, որ անհրաժեշտ է ամեն գնով հեռացնել իր ետեկանգնած երկու տղամարդկանց, որ ինքը պետք է որևէ միշոց, որևէ հնարք գտնի, ինքը, որ հնարագետ կին է։

Իր ամուսինն ու բժիշկը ցած ձայնով խոսում էին։ Խոսքը այն մասին էր, թե ինչպիսի խնամք է հարկավոր թերտենին։

Գլուխը շուռ տալով, կոմսուհին հաբորեց բժշկին։

— Դուք հիվանդապահուհի հրավիրե՞լ եք։

— Ոչ, ես դերադասում եմ խնամատած ուղարկել, որն ավելի լավ կհետեւի հիվանդի վիճակին։

— Ուղարկեցեք և՛ մեկին, և՛ մյուսին։ Խնամքի ավելին չկա։ Կարող ե՞ք նրանց կանչել այս դիշեր։ Չեմ կարծում, որ դուք մնաք այստեղ մինչև առավոտ։

— Իրոք ես պետք է տուն վերադառնամ։ Ես շորս ժամ արդեն այստեղ եմ։

— Բայց տուն վերադառնալիս դուք մեղ կուղարկե՞ք հիվանդապահուհուն ու խնամատածին։

— Գիշերով դա բավական դժվար է։ Այնուամենայնիվ, ես կփորձեմ։

— Դա անհրաժեշտ է։

— Նրանք դուցե և կխոստանան, բայց կգա՞ն։

— Ամուսինս ձեզ հետ կդա և նրանց կրերի հոժար կամքով կամ ուժով։

— Բայց դուք, տիկին, մենակ շեք կարող մնալ այստեղ։

— Ե՞ս, — բացականշեց կոմսուհին, և նրա ձայնի մեջ կարմի տեսակ մարտահրավեր, ցասկոտ բողոք իր կամքի որևէ դիմադրության դեմ։ Եվ տիրական, առարկություն շընդունող տոնով նա ցույց տվեց, թե ինչ էր անհրաժեշտ անել։ Մի ժամից ոչ ուշ խնամատածն ու հիվանդապահուհին պետք է այստեղ լինեն՝ ամեն տեսակ պատահականություն կանխելու համար։ Նրանց այստեղ լինելու համար մեկը պետք է նրանց վեր կացնի անկողնից ու հետը բերի։ Միայն իր ամուսինը կարող է այդ անել։ Մինչ այդ հիվանդի մոտ կմնա ինքը, դա իր պարտականությունն ու իրավունքն է։ Ինքը պարզապես կատարում է բարեկամուհու դերը, կնոջ դերը։ Բացի դրանից,

ինքը այդպիս է ցանկանում և ոչ ոք չի կարող տարհամոզել իրեն:

Կոմսուհու փաստարկները ճիշտ էին: Հարկ էր համաձայնել դրանց հետ և այդպիս էլ անել:

Կոմսուհին վեր կացավ, անհամբերությամբ սպասելով նրանց մեկնելուն. նա ուզում էր որքան կարելի է շուտ մնալ մենակ: Որպեսզի որևէ սխալ բան շաներ նրանց բացակայության ժամանակ, նա լսել էր բժշկի ցուցմունքները, շանալով լավ հասկանալ դրանք, ամեն ինչ մտքում պահել, ոչինչ շմոռանալ: Նկարչի ծառան, կոմսուհու կողքին կանգնած, նույնպես լսել էր, իսկ ծառայի ետև, նրա կինը, խոհարարուհին, որ օգնել էր առաջին վիրակապման ժամանակ, պլիսով նշան էր անում, որ ինքը նույնպես ամեն ինչ հասկացել էր: Երբ կոմսուհին, ինչպես սերտած դաս, կրկնեց բժշկի բոլոր ցուցմունքները, շտապեցրեց երկու տղամարդկանց, կրկնելով ամուսնուն:

— Շուտ վերադարձեք, հատկապես շուտ վերադարձեք:

— Ես ձեզ կտանեմ իմ կառքով,—ասաց բժիշկը կոմսին: — Նա ձեզ ավելի շուտ ետ կբերի: Մի ժամկց դուք այստեղ կլինեք:

Ֆնալուց առաջ բժիշկը նորից երկար քննեց վիրավորյալին, որպեսզի հավաստիանա, որ նրա վիճակը առաջվա նման գոհացուցիլ է:

Գիլուուան դեռ վարանում էր: Նա ասաց.

— Դուք չե՞ք գտնում, որ մենք անխռհեմ բան ենք անում:

— Ո՛չ: Վտանգ չկա: Հիվանդին հարկավոր է միայն հանգրստություն ու անդորրություն: Թող միայն տիկին Գիլուուան նրան թույլ շտա խոսել և ինքը նրա հետ որքան կարելի է քիչ խոսի:

Կոմսուհին, սրտաբեկ, նորից հարցրեց.

— Ուրեմն նրա հետ շի՞ կարելի խոսել:

— Օ՛, ոչ, տիկին: Բազկաթոռը վերցրեք ու նստեցեք նրա մոտ: Նա իրեն միայնակ չի զդա և դրանով իրեն լավ կզգա. նա շպետք է հողնի, նրան հարկավոր չէ ոչ խոսել, ոչ նույնիսկ մտածել: Ես կգամ առավոտյան ժամը իննին: Մնաք բարով: Ընդունեցեք իմ հարգանքները:

Խորապես ողջունելով բժիշկը դուրս եկավ ուղեկցությամբ կռմսի, որ կրկնում էր.

— Մի հուզվեք, սիրելիս: Մի ժամ շանցած ես այստեղ կլինեմ, և գուք տուն կվերադառնաք:

Նրանք դուրս եկան. կռմսուհին լսեց, թե ինչպես ներքենի գուոք փակվեց նրանց ետև և ինչպես փողոցում թավալվեց հեռացող կառքը:

Սպասավորն ու խոհարարուհին մնացել էին սենյակում, սպասելով հրամանների: Կռմսուհին նրանց հեռացըց:

— Գնացեք, — ասաց նա, — ես զանգ կտամ, եթե որևէ բանի կարիք ունենամ:

Նրանք նույնպես գնացին, և կռմսուհին մենակ մնաց թերառենի հետ:

Նա նորից մոտեցավ թերտենի անկողնին և, ձեռքերը զնելով սնարի ծայրերին, սիրած գլխի երկու կողմերին, թեքվեց ու սկսեց նրան նայել: Ապա հարցրեց, այնպես մոտենալով Օլիվիեի դեմքին, որ իր բառերը ասես հոգում էին նրան իր շնչի հետ միասին.

— Դուք ինքնե՞րդ նետվեցիք այդ հանրակառքի տակ: Օլիվիեն պատասխանեց նորից փորձելով ժպտալ.

— Ո՛չ, նա' նետվեց իմ վրա:

— Ճիշտ չէ, այդ դո՛ւք եք:

— Ո՛չ, հավատացնում եմ ձեզ, որ այդ նա' է:

Մի քանի րոպէ լոռությունից հետո, մի քանի այնպիսի րոպէ, երբ հողիներն ասես միահյուսվում են հայացքներով, կռմսուհին շշնչաց.

— Ո՛չ, իմ սիրելի, իմ սիրելի Օլիվիե: Եվ մտածել, որ ես ձեզ թողեցի դուրս գալ, որ ես ձեզ շպահեցի:

Օլիվիեն համոզմունքով պատասխանեց.

— Միենույն է, զա ինձ կալատահեր վաղ կամ ուշ:

Նրանք նորից նայեցին միմյանց, ջանալով կարդալ մեկը մյուսի ամենաթաքուն մտքերը: Օլիվիեն նորից խոսեց.

— Ես չեմ կարծում, որ կենդանի մնամ: Ես շատ եմ տանջվում:

Կռմսուհին թոթովեց.

— Շատ եք տանջվո՞ւմ:

— 0°, այսուհետեւ:

Մի քիչ ավելի թերվելով, կոմսուհին Օլիվիեի ճակատին, ապա աշքերին, ասլա այտերին դիպավ դանդաղ, թեթև, քըն-քուզ համբույրներով, նա հազիվհազ Օլիվիեին դիպշում էր շրթների ծայրով, զրեթե անձայն շնչով, ինչպես համբուրում են երեխաները: Եվ այդ տևեց երկար: Օլիվիեն հլու-հնազանդ անձնատուր եղավ այդ քաղցր ու քնքուզ փաղաքշանքների տարափին, որոնք ասես հանգստացնում ու թարմացնում էին իրեն, որովհետեւ իր այլայլված դեմքը առաջվանից քիչ էր ցնցումներ ունենում:

Ապա Օլիվիեն ասաց.

— Անի:

Կոմսուհին դադարեց Օլիվիեին համբուրել՝ ունկնդրելու համար:

— Ի՞նչ, իմ բարեկամ:

— Դուք սկեսոք է ինձ մի խոստում տաք:

— Ես ձեղ կիսուտանամ, ինչ որ կցանկանաք:

— Եթե ես շմեռնեմ մինչև առավտու, երդվեցեք ինձ մուքերել Աննետին մի անգամ, միայն մի անգամ: Ես այնպես չէի ուզենա մեռնել առանց նրան տեսնելու... Մտածեցեք... որ վաղը... այս ժամին... ես, գուցե... ես, հավանաբար, աշքերս կփակեմ ընդմիշտ... և այլևս երբեք չեմ տեսնի ձեզ... ոչ ձեզ... ոչ նրան...

Կոմսուհին մորմոքված սրտով ընդմիշեց նրան.

— 0°, լոեցե՛ք... լոեցե՛ք... լավ, ձեզ խոստանում եմ քերել Աննետին:

— Երդվո՞ւմ եք:

— Երդվում եմ, իմ բարեկամ... Բայց լսեցե՛ք, այլևս միշ խոսեք: Դուք ինձ ահավոր վիշտ եք պատճառում... Լոեցե՛ք:

Օլիվիեի դեմքը կարճատե մի զղաձգություն ունեցավ. երբ այդ անցավ, նա ասաց.

— Եթե մեզ միայն մի քանի րոպե է մնում միասին անցկացնելու, չկորցնենք այդ րոպեները, օգտվենք դրանից մնաց քարով ասելու: Ես ձեղ այնքան սիրել եմ:

Կոմսուհին հառաջեց.

— Իսկ ես... ես ձեղ միշտ սիրում եմ...

Օլիվիեն ավելացրեց.

— Ես երջանկություն գտա լոկ ձեր միջոցով։ Միայն վերշին օրերը ծանր էին... ՞ա ձեր մեղքը չէ... Ա՛հ, իմ խնդիմի, ինչպես երբեմն տխուր է կյանքը... և ինչպես դժվար է մհանել...

— Լոեցե՛ք, Օլիվիե՛՛, Աղաշում եմ ձեզ...

Օլիվիեն շարունակեց, շրակով նրան.

— Ես այնքան երջանիկ կլինեի, եթե դուք աղջիկ շունենացիք:

— Լոեցե՛ք... Աստված իմ... Լոեցե՛ք...

Օլիվիեն ասես ավելի շուտ բարձրաձայն էր մտածում, քան խռութեամբ կոմսուհու հետ:

— Ա՛հ, նա, ով հնարել է այս կյանքը և ստեղծել մարդկանց, կամ կույր է եղել, կամ շատ շար...

— Օլիվիե, աղաշում եմ ձեզ... Եթե դուք ինձ երբեկ սիրել եք, լոեցե՛ք... Մի՛ խռուեք այլիս:

Օլիվիեն նայեց իր վրա հակված կոմսուհուն. կոմսուհու գեմքը ևս այնքան գունատ էր, որ նման էր մահամերձի դեմքին. և Օլիվիեն լոեց:

Այն ժամանակ կոմսուհին նստեց մահիճի մոտ գտնվող բազկաթոսի վրա, և նորից բռնեց սականի վրայով պարզված Օլիվիեի ձեռքը:

— Այժմ ես արգելում եմ ձեզ խռուել,— ասաց կոմսուհին: — Այլևս մի շարժվեք և մտածեցեք իմ մասին, իւկ ես կմըտածեմ ձեր մասին:

Անշարժ, իրենց մարմինների այրող հպումով միմյանց կապված, նրանք նորից սկսեցին իրար նայել: Կոմսուհին բռնել էր Օլիվիեի տեսնդոտ ձեռքը և ամեն բռպե թույլ կերպով սեղմում էր այն, իսկ Օլիվիեն այդ կոշերին ի պատասխան թեթևորեն փակում էր մատները: Այդ սեղմումներից յուրաքանչյուրն ինչոր բան էր ասում, նրանց հիշողության մեջ արթնացնում էր իրենց վերջացած անցյալի մի մասնիկը, կենդանացնում էր իրենց սիրո աղոտացած հուշերը: Յուրաքանչյուր այդ սեղմումը թաքուն մի հարց էր, յուրաքանչյուրը խորհրդավոր մի պատասխան էր, բայց տխուր էին պատասխան-

ները և տիսուր էին հարցերը, հին սիրո այդ «Դուք հիշո՞ւմ եք»-ները:

Մահից առաջ տեղի ունեցող այդ տեսակցության մեջ, որ թերեւս, վերջինն էր, նրանք մտովի տարի առ տարի կրկնում էին իրենց սիրո բովանդակ պատմությունը. և սենյակում լսվում էր միայն վառվող կրակի ճարճատյունը:

Հանկարծ սարսափից դողալով, ասես մղձավանջային քնից զարթնած լիներ, Օլիվիեն ասաց.

— Զեր նամակնե՞րը:

Կոմսուհին հարցրեց.

— Ի՞նչ իմ նամակնե՞րը:

— Ես կարող էի մեռնել, առանց ոչնչացնելու դրանք:

Կոմսուհին բացականշեց.

— Ա՞հ, ի՞նչ փույթ: Ի՞նչ նշանակություն ունի այդ: Թող դրանք գտնեն, թող կարդան, հոգս էլ չէ:

Օլիվիեն պատասխանեց.

— Իսկ ես այդ չեմ ցանկանում: Վե՛ր կացեք, Անի: Բա՛ց արեք իմ դրասեղանի ներքեմի դարակը, մեծ դարակը, նրանք այնտեղ են բոլորը, բոլորը: Նրանք պետք է վերցնել և այրել:

Կոմսուհին շեր շարժվում և նստել էր բոլորովին կուշ եկած, առես Օլիվիեն նրան առաջարկել էր ինչ-որ ստորոտից անել: Օլիվիեն հարեց.

— Անի, աղաշում իմ ձեզ: Եթե դուք այդ շանեք, դուք ինձ կտանջեք, ինձ կվրդովեցնեք, ինձ կգմլացնեք: Մտածեցիք, որ նրանք կարող են որիէ մեկի ձեռքն ընկնել, կարող են նոտարի, ծառայի... կամ նույնիսկ ձեր ամուսնու ձեռքն ընկնել... Ես այդ չեմ ուզում...

Կոմսուհին վեր կացավ, դեռ վարանելով ու կրկնելով.

— Ո՛չ, դա շափազանց ծանր է, շափազանց զժնկակ: Ինձ թվում է, որ դուք ինձանից պահանջում եք այրել մեր սրտերը:

Օլիվիեն աղերսում էր, և նրա դեմքը այլայլվել էր անձկությունից:

Տեսնելով, թե ինչպես է Օլիվիեն հոգեւպիս տանջվում, կոմսուհին հնաղանդվեց ու մոտեցավ գրասեղանին: Բաց անելով դարակը, նա տեսավ, որ այն մինչև բերանը լցված է իրար

վրա դիզված բազմաթիվ նամակներով, և բոլոր ծրարների վրա ճանաշեց երկու տողերն այն հասցեի, որն ինքն այնքան հաճախ էր գրել Այդ երկու տողերը—հասցեատիրոջ անունը և փողոցի անունը նա այնպես լավ գիտեր, ինչպես իր սիփական անունը, ինչպես գիտեն այն մի քանի բառերը, որոնց մեջ կենտրոնացված են կյանքի ամբողջ հույսն ու ամբողջ երջանկությունը: Նա նայում էր այդ փոքրիկ քառակուսիներին, որոնք պարունակում էին այն ամենը, ինչ նա կարողացել էր տսել իր սիրո մասին, այն ամենը, ինչ նա կարողացել էր իրենից պոկել և Օլիվիեին տալ մի քիչ թանաքով, սպիտակ թղթի վրա:

Օլիվիեն փորձեց շուռ տալ պլուխը սնարի վրա, ոչպեսողի կոմսուհուն նայեր, և մի անգամ ևս ասաց.

— Շուտ այրեցե՞ք դրանք:

Այն ժամանակ կոմսուհին երկու կապոց նամակ վերցրեց և մի քանի վայրկյան իր ձեռքերի մեջ պահեց: Նրանք ծանր, վշտալի, կինդանի ու մեռած էին թվում, այնքան նրանց մեջ տարրեր բաներ կային, տարրեր զգացումներ ու երազներ, այնպես քաղցր, որոնք սակայն արդեն վերջացել էին: Իր ձեռքերի մեջ հիմա իր հոգու հոգին էր, իր սրտի սիրտը, իր սիրող էության էությունը, և նա հիշում էր, թե ինչպիսի ոգեսորությամբ ու հափշտակությամբ էր ինքը դրել այդ նամակներից մի քանիսը, ինչպես ցնծացել էր, որ ապրում է, պաշտում է մեկին և նրան ասում է իր պաշտումի մասին:

Օլիվիեն կրկնեց.

— Այրեցե՞ք, այրեցե՞ք դրանք, Անի:

Զեռքերի մեկ շարժումով կոմսուհին բուխարու մեջ նետեց թղթերի երկու կապոցները, որոնք ցրիվ եկան, ընկնելով փայտի վրա: Ապա դարձակից ուրիշ նամակներ հանեց և նետեց նրանց վրա, հետո գեռ ուրիշ նամակներ, արադորեն կոանալով ու վայրկենաբար ուղղվելով, որպեսզի շուտ վերջացներ այդ ահավոր գործի:

Երբ բուխարին լցվեց, իսկ դարձակվեց, կոմսուհին կանգնած մնաց, սպասելով, նայելով թե ինչպես կիսահանգած բոցը սողում է ծրարների այդ լեռան ժայրերով: Նա նրանց վրա հարձակվում էր կողքերից, կրծում էր նրանց ան-

կյունները, վազում էր թղթերի լուսանցքներով, հանգում էր, նորից էր բռնկվում, ծավալվում: Եռառով այդ ամբողջ սպիտակ բուրդը գոտենորվեց վառ, պայծառ բոցերով, որոնք սենյակը լույսով ողողեցին և այդ լույսը, որ լուսավորել էր անշարժ կանգնած կնոջ և պառկած տղամարդուն, նրանց այրող սերն էր, որ վերածվում էր մոխիրի:

Կոմսուհին շուռ եկավ և այդ բոցավառված լուսավորության մեջ տեսավ իր բարեկամին, որ մոլորուն հայացքովէ հակվել էր մահճի եղբի վրա:

— Բոլո՞րը, — հարցրեց Օլիվիեն:

— Այսո՛: Բոլո՞րը:

Բայց նախքան Օլիվիեի մոտ վերադառնալը, կոմսուհին վերջին մի հայացք նետեց այդ ոչնչացող թղթերի վրա և տեսավ, թե ինչպես կիսայրյաց, արդեն ծոմոած ու սևացած թրղթերի կույտի վրայով ինչ-որ կարմիր բան էր հոսում: Կարելի էր կարծել, որ դրանք արյան կաթիլներ էին: Նրանք պատարա էին նամակների հենց սրտից, յուրաքանչյուր տառից, ինչպես վերքից, և մեղմորեն ծորում էին բոցերի մեջ, իրենց ետև թողնելով ծիրանեգույն հետքեր:

Կոմսուհին ասեա ինչ-որ գերբնական ահով համակվեց և ետ քաշվեց, ինչպես եթե նրա աշքերի առաջ մեկին սպանեին, բայց հետո հասկացավ, հանկարծ հասկացավ, որ դա պարզապես կնքամումն էր, որ հալվում էր:

Այն ժամանակ կոմսուհին վերադարձավ վիրավորի մոտ և, մեղմորեն բարձրացնելով նրա գլուխը, զգուշորեն այն դրեց սնարի մեջտեղ: Բայց Օլիվիեն անհանգստացավ և ցալերլ սաստկացան: Հիմա նա հեռաւ էր, նրա դեմքը զղածդվել էր ահավոր տանջանքներից, և նա կարծես դադարել էր գիտակցել, որ կոմսուհին այստեղ է:

Կոմսուհին սպասում էր, որ Օլիվիեն մի քիչ հանգստանար, ամուր փակված աշքերը բաց աներ ու բարձրացներ, իրենց դեռ որևէ բառ ասեր:

Վերջապես կոմսուհին հարցրեց,

— Եա՞տ է ցալվում:

Օլիվիեն շպատասխանեց:

Կոմսուհին Օլիվիեի վրա հակվեց և մատով դիպավ նրա

Հակատին, որպեսզի նրան ստիպեր իրեն նայել: Օլիվիեն իրոք  
բաց արեց աշքերը, շլմորած, անմիտ աշքերը:

Կոմսուհին, ահարեկ, կրկնեց.

— Շատ է ցավում... Օլիվիե: Պատասխանեք ինձ: Ուզում  
եք մեկին կանչեմ... Ճիգ արեք, մի բան ասացեք:

Կոմսուհուն թվաց, որ Օլիվիեն թոթովում էր.

— Բերեք Աննետին... դուք ինձ երդվել եք...

Եվ Օլիվիեն շարժվեց սավանի տակ, նրա մարմինը գա-  
շարվում էր, դեմքը զղաճգվում ու ծամածուլում:

Կոմսուհին կրկնում էր.

— Օլիվիե՛: Աստվա՛ծ իմ: Օլիվիե՛, ի՞նչ է պատահել ձեզ:  
Ուզում եք կանչեմ...

Այս անգամ Օլիվիեն նրան լսեց ու պատասխանեց.

— Ոչ... դատարկ բան է:

Օլիվիեն ասես իրոք հանգստացավ, նվազ տանջվեց և  
հանկարծ սուզվեց մի տեսակ քնկոտ ընդարմացման մեջ: Հու-  
սալով, որ նա կքնի, կոմսուհին նորից նստեց մահճի մոտ,  
քունեց նրա ձեռքը և սպասեց: Օլիվիեն այլևս չէր շարժվում.  
Նրա կզակը կախվել էր կրծքի վրա, բերանը կիսաբաց էր, նա  
շնչում էր կարճ ու հաճախակի, և թվում էր, թե ամեն շնչա-  
ռության ժամանակ նրա կոկորդը քերթվում էր: Միայն մատ-  
ները երբեմն ակամա շարժվում էին, թեթևակի ցնցվում, և  
յուրաքանչյուր այդպիսի ցնցման ժամանակ կոմսուհու մա-  
զերը ցցվում էին և նյարդերն այնպես լարվում, որ նա ուզում  
էր ճշալ: Դրանք արգեն այն կամավոր քնքուշ սեղմումները  
չէին, որոնք հողնած շրթների փոխարեն պատմում էին իրենց  
սրտերի բոլոր դասնությունների մասին, դրանք հանդարտվող  
զղաճգություններ էին, որոնք խոսում էին միայն մարմնական  
տանջանքների մասին:

Հիմա կոմսուհին երկյուղ էր զգում, ահավոր երկյուղ, խո-  
լական ցանկություն դնալու, զանգ տալու, մեկին կանչելու,  
բայց նա չէր համարձակվում շարժվել, որպեսզի շխոռվի Օլի-  
վիեի հանդիսաւը:

Փողոցներից պատերի միջով հասնում էր կառքերի հեռա-  
վոր դղրդյունը, և կոմսուհին լսում էր, թե արդյոք այդ թավալ-  
վող անիվները կանգ չե՞ն առնում դռան առաջ, արդյոք ամու-

սինը չի՝ գալիս իրեն ազատելու, վերջապես հեռացնելու այս  
մոռայլ տեսակցությունից:

Կոմսութին փորձեց ձեռքը ազատել Օլիվիեի ձեռքից, բայց  
Օլիվիեն ուղարկեց այն, խոր հառաշանք արձակելով։ Այն ժա-  
մանակ կոմսութին որոշեց հլու կերպով սպասել, որպեսզի  
շնուզեր նրան։

Կըակը մեսնում էր բուխարու մեջ՝ նամակների սև մոխրի  
տակ, երկու մոմեր հանդեցին, կահկարասիներից մեկը ճար-  
ճառեցի:

Տան մեջ ամեն ինչ լուր էր, ամեն ինչ մեռած էր թվում, և  
միայն սանդուղքի վրայի բարձր ֆլամանդական ժամացույցը,  
համաշափութեն խփնլով կնո և քառորդ ժամերը, զիշերային  
լուսիան մեջ նվազում էր ժամանակի մարշը իր բաղմածայն  
պանդակների վրա։

Կոմսութին անշարժ նստել էր և զգում էր, թե ինչպես իր  
հոգու մեջ աճում է անտանելի սարսափը։ Մղձավանջներ պա-  
շարեցին նրան, աճալոր խոհեր խոռվել էին նրա միոքը, և  
նրան թվաց, թե Օլիվիեի մատները սառում էին իր ձեռքերի  
մեջ։ Մի՞թե դա ճիշտ էր։ Ոչ, անշուշտ։ Բայց որտեղից էր ան-  
բացատրելի, սառեցնող շփման այդ զգացողությունը։ Սոս-  
կումից խելածեղ՝ կոմսութին վեր կացավ ու նայեց Օլիվիեի  
գեմքին։ Օլիվիեն սլառկել էր անշարժ, անշուշտ, անզգա, ամեն  
մի տանջանքի նկատմամբ անտարբեր, հանկարծ խաղաղված  
Հավիտենական Մոռացությամբ։

## **ԹԱՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**Առաջին մաս . . . . .  
Երկրորդ մաս . . . . .**

Գի գը Մապասն  
Մահվան պես հվոր

Խմբագիր՝ Գ. Ս. Քեշիշյան  
Նկարիչ՝ Վ. Կաժոյան  
Գեղ. խմբագիր՝ Ան. Գասպարյան  
Յեխ. խմբագիր՝ Ա. Սահակյան  
Վերասառւզող սրբագրիչ՝ Ա. Մանվելյան

Պատվեր 2387

Տիրաժ 30000

Հանձնված է արաագրության 23/ VIII 1961 թ.  
Ստորագրված է տպագրության 16/X 1961 թ.  
Թուղթ 84×108<sup>1</sup>/32, ապ. 16,25 մա.մ.=պալմ, 13,32 մամ.  
Հրաա. 11,8 մամ.  
Գինը՝ 45 կ.

Հայկական ՍՍԾ Կուլտուրայի մինիստրության Հրաաարակությունների  
և ողորդաց արդյունաբերության Պլանավոր վարչության և տպարան  
Ծրնան, Լենինի պողոտա 4, 513

9116 45 409.

Digitized by  
Digitized by  
Digitized by